ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Մշկո Մշկոյանի արկածները

DARAK
հրատարակչություն
Երևան 2021

ԱՐԿԱԾՆԵՐ՝ ԳՐՈՂԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԿԵՏԻՑ

Դոստոևսկին ասել է՝ ինչ ապրում ենք, այն էլ գրում ենք: Գրողական առաքելությունն իսկապես գիտակցող գրողների մասին է ասված, գրողների՝ որոնք չեն խուսափում կյանքի հետ առճակատվելուց, լիարյուն են ապրում իրեն բաժին ժամանակը, որովհետև ուզում են հասկանալ, ճանաչել: Եվ ուրեմն՝ սա ասված է նաև Աբել Միքայելյանի համար: Աբելը իսկական արձակագրի համարձակությամբ է ապրում իրեն բաժին հասած ժամանակը, չի խուսափում մխրճվելուց, խրվելուց, ցեխոտվել–արնոտվելուց, որպեսզի ազնվորեն, բաց ճակատով իրացնի իր «ինչ ապրում ենք՝ այն էլ գրում ենք»–ը՝ առանց խուսանավումների, առանց ուրիշ գրականությունների հետևում թաքնվելու ու թաքստոցից չմարսված, կեցվածքային, կեղծ փորձարարական մզվածքներ մատուցելու: Մի այլ իմաստնություն հայտարարում է՝ աշխարհը տեքստ է: Եվ սա նույնպես վերաբերում է Աբել Միքայելյանին, նա իր ապրած ու ճանաչած աշխարհը դարձնում է տեքստ ու առաջարկում՝ վերցրու, գուցե հետաքրքիր լինի, գուցե օգնի քեզ՝ քոնը ապրելու, քոնը ճանաչելու ճամփին, գուցե քեզ մենակ չզգաս, կողքիդ լինեմ: Այս առաքելությամբ՝ բոլոր գրքերը, որոնցից վերջինը՝ այս՝ «Մշկո Մշկոյանի արկածները» վեպն է:

Վերնագիրը հուշում է՝ վեպի հերոսը Մշկո Մշկոյանն է. ուշագրավ, հետաքրքիր կերպար, որ արկածախնդիր է, բայց ազնիվ, երբեմն դիվայինի սահմանին հասնող չարաճճի է, բայց՝ այդ սահմանը չանցնող, և հմայիչ է, առինքնող, որովհետև ազատ խառնվածքով անհատականություն է ու իր ազատության խաղն է խաղում, նրա հմայքն այնքան ձգող է, որ իր խաղի մեջ է

գայթակղում–ներքաշում տարբեր ազգության, տարբեր մենթալիտետի, տարբեր խառնվածքի տեր մարդկանց, իր խաղով ասես միավորելով նրանց: Պակաս հմայք չունի այս պատմության մյուս հերոսը՝ հեղինակը, որ Մշկոյի ընկերն է և նույնպես ներքաշված է Մշկոյի խաղի մեջ, նա ընկերոջը գտնելու խնդիր ունի, գնում է Մշկոյի հետքերով՝ Արևելյան Եվրոպա, Արևմտյան Եվրոպա, Ռուսաստան, սակայն այդպես էլ չի գտնում, Մշկոն անորսալի է:

Վեպը կարդացվում է, ինչպես ասում են՝ մեկ շնչով, առատ հումորով ու երգիծանքով ներծծված դիպաշարի դինամիկ զարգացումը չի թողնում պոկվել ընթերցանությունից: Վեպը պարզապես «վխտում է» հետաքրիր, ինքնատիպ, գունեղ կերպարներով. անուշադրությամբ ուղեկցված կերպար չկա, նույնիսկ սպասավոր, մատուցող կամ դռնապան՝ որ ընդամենը դրվագային մի քանի պահի ներկայություն ունեն Աբելի տեքստաշխարհում, նկարված–կերտված են, ու կերտված են սիրով, Աբելի ու Մշկոյի արտառոց, ես կասեի՝ սիրո հայկական տեսակի մեջ են եփվում վեպի կերպարներն ու գործողությունները, նույնիսկ՝ իրերն ու լանդշաֆտները, կերակուրներն ու խմիչքը:

Սակայն որքան էլ սիրով, որքան էլ հմայիչ ու ուշագրավ՝ հենց միայն արկածներ պատմելը բավարար գայթակղություն չէր լինի՝ Աբել Միքայելյանի գրիչը վեպի մղելու համար: Վեպի խնդիրը, վեպի առանցքը (երբեմն՝ ճակատային, երբեմն՝ տողատակին ու ենթատեքստում) հայ մարդու, հայ գրողի մտահոգությունն է, ցավը՝ իր քաղաքացու, իր երկրի, իր պետության այսօրվա ու վաղվա համար: Ո՞վ էինք, ո՞վ ենք, ո՞վ ենք լինելու, ի՞նչ ենք անում, ի՞նչ ենք փնտրում ամերիկաների, եվրոպաների, ռուսաստանների ու էլի ինչ–ինչ հայտնի ու անհայտ երկրների ճամփեքին: Փնտրում ենք, չենք գտնում: Չէ, մի փոր հաց գուցե գտնում ենք, գուցե՝ մի քիչ էլ ավելի, սակայն ի՞նչ փույթ՝ եթե հացը գտնես, բայց քեզ կորցնես: Մի երկիր իր բարեկեցության մեջ է թմրել–խարխափում, մյուսը՝ իր թերիության, մենք էլ, մեզ կորցրած՝ մեզ փնտրում ենք նրանց ճամփեքին: Մերն ո՞ւմ ենք թողել, ո՞վ է սարքելու մեր փոխարեն: Մեր ամբողջ հանճարը, տաղանդը, հնարամտությունը, եռանդը, սերն ու հմայքը ուրիշին ենք ծառայեցնում, ուրիշի ճամփեքին ենք մսխում: «Կարոտել եմ Արաքս գետը, գետը, որի ափերով երբեք չեմ ճամփորդել»՝ գրում է հեղինակը, ու էլի՝ «Բայց մի՞թե ելք չկա: Ելքը, իհարկե, շատերն են փնտրել, փնտրել են տարբեր ժամանակներում, երբեմն անգամ բարենպաստ ժամանակներում, բայց, դժբախտաբար, միշտ սխալվել են: Սխալվել են, որովհետև այդ ելքը փնտրել են ուրիշ տեղերում»:

Եվ, ահա, աշխարհի ճամփեքին ընկերոջն այդպես էլ չգտած հեղինակը վերադառնում է, վերադառնում է ծանոթ բժշկի հետ, որին պատահաբար հանդիպել է օտար օդանավակայանում: Վերադառնում է և հանկարծ՝ գտնում է ընկերոջը, ավելի ճիշտ՝ ընկերն է գտնում նրան, ամբողջ ընթացքում իրենից խուսափած ընկերն իրեն աղուհացով դիմավորում է Հայաստանում, հարազատ «Զվարթնոց» օդանավակայնում: Բժիշկի իբր պատահական ներկայությունն այստեղ, կարծում եմ, պատահական չէ, որովհետև բժշկվելու կարիք ունենք, ազգովի՛: Ու նաև՝ ինքներս մեզ մեր երկրում աղուհացով դիմավորելու կարիք: Ընդունի՛ր, հայրենի՛ք:

Գուրգեն Խանջյան

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՄՇԿՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Այն մասին, թե ինչպես ես բժշկուհուս հրավիրեցի խմելու

Երբ տեղի ունեցավ այս պատմությունը, ես քառասուն տարեկան էի: Հնարավոր է՝ քառասունմեկ: Կամ գուցե՝ քառասուներկու: Ճիշտ չեմ հիշում: Բայց վստահաբար ոչ ավել, քան քառասուներեք: Համապատասխանաբար, չեմ կարող հստակ ասել, թե ո՞ր թվականն էր. գուցե՝ երկու հազար տասներեք, գուցե՝ տասնչորս, բայց ոչ ուշ, քան՝ տասնհինգ:

Համենայնդեպս, հենց այդ ժամանակ էր, որ սկսվեց հիշողությանս հետ ինչ որ բան կատարվել: Տեսնում էի փողոցում մեկին, գրկախառնվում հետը, համբուրվում, խոսում երկար–բարակ, հրաժեշտ տալիս՝ կրկին գրկախառնվում ու համբուրվում, ու այդպես էլ չէի հիշում՝ թե նա ով էր: Մտածում էի՝ երևի մի տեղ խմել եմ հետն ու այդպես մխիթարում ինձ:

Ինչևէ, հենց այդ ժամանակ էր նաև, որ պարզվեց՝ ինձ խմել չի կարելի:

— Իսկ կարո՞ղ ենք խմելը բացառել,— բժշկուհին ակնոցի վերևից այնպիսի չար հայացքով նայեց ինձ, կարծես վերջին խմելուց իրեն ինչ–որ բան էի արել: Կամ… չէի արել:

Հանուն արդարության պետք է ասել, որ նա հրապուրիչ արտաքին ուներ: Եվ կազմվածք: Բայց հանուն արդարության պետք է նաև ասել, որ խմած ժամանակ ես որևէ մեկին ո՛չ ինչ–որ բան էի անում, ո՛չ էլ չէի անում: Այսինքն՝ խմելն այստեղ ամենևին կապ չուներ: Ու խմում էի ես ոչ շատ հաճախ: Շաբաթն առավելագույնը երեք օր, կամ ծայրահեղ դեպքում՝ չորս, բայց, վստահաբար, ոչ ավել, քան՝ հինգ: Սակայն դա ի՞նչ էր՝ համեմատած իմ ընկեր Մշկոյի խմելու հաճախականության հետ: Նա խմում էր շաբաթը տասնչորս օր:

Վերջին անգամ Մշկոյին տեսել էի երկու օր առաջ: Մինչև լուսադեմ խմել էինք միասին, հետո նա գնացել էր՝ ինչ-որ տեղ շարունակելու: Հենց այդ օրն էր, որ անհասկանալի ծակոցներ էի զգացել գոտկատեղիցս քիչ վերև կամ գուցե ներքև և որոշել էի գնալ բժշկի՝ ստուգվելու: Մշկոյին էլ առաջարկել էի գալ հետս: «Ես որ գնամ ստուգվելու, ինձ կասեն դու արդեն մեկ տարի երկու ամիս մեռել ես»,— լուրջ տոնով պատասխանել էր ընկերս:

Թե ինչո՞ւ հատկապես մեկ տարի երկու ամիս՝ ես չէի հարցրել: Բայց ինքս էլ այդ օրը բժշկի չէի գնացել, որովհետև ցավն հանկարծակի անցել էր: Հետո պարբերաբար նորից էր կրկնվել և ահա եկել էի այս բժշկուհու մոտ:

— Չի կարելի այսպես վարվել լարդի հետ,— չգիտես ինչու ռուսերենով շարունակեց նա,— չեք լսում, հետո ուշ է լինում:

Ես նույնիսկ չփորձեցի առարկել, դարձյալ հիշելով Մշկոյին. տեսնես նրա՞ն ինչ կասեր բժշկուհին:

Մշկոյի ազգանունը Մշկոյան էր: Թե ինչ էր նրա իսկական անունը, կարծեմ շատ քչերը գիտեին: Բոլորի համար նա Մշկոն էր ու վերջ: Կյանքը նրա համար հավերժական քեֆ էր: Տոն, որը երբեք չէր ավարտվում: Ու չնայած այդ տոնը ֆինանսավորվում էր բացառապես ուրիշների գրպանից, դա բոլորովին չէր խանգարում Մշկոյին անհոգ վայելել այն: Իսկ հիմնական ֆինանսավորողը Մոսկվայում բնակվող նրա ավագ եղբայրն էր՝ հայտնի մեդիամագնատ Մշկոյանը, ով ամեն ամսվա վերջին մի կլորիկ գումար էր ուղարկում կրտսեր եղբորը: Վերջինս դրանով փակում էր ամսվա ընթացում կուտակած պարտքերը ու շարունակում քեֆ անել:

Երբ Մշկոյի հետ ծանոթացա, դա կարծեմ այս պատմությունից հինգ կամ վեց տարի առաջ էր, նա ինձ ու էլի մի քանի հոգու մի ամբողջ օր ու գիշեր այնպես հյուրասիրեց, որ, վստահ եմ, ծախսեց մոտավորապես հինգ հազար դոլար: Կամ գուցե տասը: Առավոտյան, երբ հրաժեշտ էինք տալիս, նա շատ խեղճ տոնով դիմեց ինձ՝ կարո՞ղ ես մի քիչ փող տալ: Որքա՞ն՝ անհանգստացա ես: Դե, մի երկու հազար՝ ավելի խեղճացավ Մշկոն: Թարսի պես, քարտիս վրա կար այդքան գումար, մոտ երկու հազար դոլար: Մինչ տարակուսանքով մտածում էի՝ ի՞նչ անել, Մշկոն

շարունակեց՝ հեռախոսս լիցքավորեմ, Մոսկվա պիտի զանգեմ: Պարզվեց՝ երկու հազար դրամ էր ուզում:

— Մեկ ամիս կխմեք այս դեղերը, խիստ դիետա և, բնականաբար, ալկոհոլը մոռացեք,— բժշկուհին նոթատետրից պոկեց թուղթն ու մեկնեց ինձ:

— Այսինքն ընդամենը մեկ ամի՞ս պիտի չխմեմ,— լավ չհասկացա ես:

— Առայժմ մեկ ամիս, հետո կերևա:

— Իսկ կարո՞ղ եմ տասը օրից սկսել բուժումս, ավելի ճիշտ՝ տասնմեկ:

Բանն այն է, որ հաջորդ օրը պետք է մեկնեի Իտալիա՝ եվրոպացի գրող ընկերներիս հետ հանդիպման և տասը օր պետք է անցկացնեի այնտեղ: Չխմել պարզապես չէր լինի: Հենց այդպես էլ ասացի բժշկուհուն:

— Ինչպես կուզեք,— անտարբեր նետեց նա:

Ուրախությունից քիչ էր մնում գրկեի բժշկուհուն: Մի կերպ տիրապետեցի ինձ ու գրպանիցս հանեցի դրամապանակս, որպեսզի վճարեմ խորհրդատվության համար:

— Պետք չէ,— կանխեց ինձ բժշկուհին,— առանձնապես բան չեմ արել: Հետևեք Ձեր առողջությանը ու մի խմեք:

Ես երկրորդ անգամ անակնկալի եկա և անկախ ինձանից հարցրեցի:

— Այդ դեպքում կարո՞ղ եմ Ձեզ երեկոյան հրավիրել մի տեղ:

— Ո՞ւր,— զարմացավ բժշկուհին:

Ես շարունակեցի դարձյալ լրիվ ինքնաբերաբար.

— Դե, մի բաժակ խմելու…

Խմելու ուղեցույց

Մշկոն մի անգամ առաջարկեց ինձ գիրք գրել «Խմելու ուղեցույց» վերնագրով: Խոստացավ, որ կֆինանսավորի մինչև գրել–ավարտելը՝ խմելու ողջ պրոցեսը, այնուհետև թարգմանությունը և հրատարակումը՝ հնդեվրոպական բոլոր լեզուներով, ինչպես նաև շնորհանդեսը՝ աշխարհի առնվազն տասը կարևոր երկրներում, ինչպես նաև Սեյշելյան կղզիներում: Իսկ ինչո՞ւ նաև Սեյշելյան կղզիներում՝ հետաքրքրվեցի ես: Որովհետև այն տարեկան կտրվածքով օգտագործվող ալկոհոլի քանակով զբաղեցնում է աշխարհում առաջին տեղը՝ բացատրեց ընկերս: Հետո հավելեց, որ իր հեռակա պլանների մեջ է մտնում այդ երկրի քաղաքացիություն ստանալը:

Գաղափարն ինձ, իհարկե, դուր եկավ, միայն ստացվեց այնպես, որ Մշկոն ֆինանսավորեց խոստացածի ընդամենը առաջին մասը: Նախ, որովհետև ամբողջը ֆինանսավորել պարզապես չէր կարող, և երկրորդը՝ ես այդպես էլ չավարտեցի այդ գիրքը, թեպետ ամենայն ազնվությամբ պիտի ասեմ, որ սկսել էի:

Ինչո՞ւ է նորին գերազանցություն սպիրտը և այն ամենը, ինչը ստացվում է դրանից և կարելի է կլանել մեկ կամ մի քանի ումպով, այդչափ հրաշալի ու միաժամանակ սարսափելի:

Նախ պետք է հասկանալ, թե ինչն է էականը: Իմ խորին համոզմամբ՝ էականը խմելու փիլիսոփայությունն է: Թե ո՞րն է այդ փիլիսոփայությունը, պիտի խոստովանեմ, որ չգիտեմ, թեպետ վստահ եմ, որ այն կա:

Եթե առաջնորդվենք լյարդով, երիկամներով, ստամոքսով, շագանակագեղձով, թութքով, որոնք, իհարկե, ափսոս են, երբեք չենք առերեսվի որևէ փիլիսոփայության հետ: Չենք առերեսվի, եթե անգամ առաջնորդվենք սրտով և ուղեղով: Երբ սիրտդ

խմել է ուզում, չարժե խմել, որովհետև սիրտդ անընդհատ կարող է խմել ուզել: Երբ ուղեղդ հուշում է, որ պետք չէ խմել, հակառակը՝ խմել է պետք, որովհետև ուղեղդ կարող է միշտ էլ ասել իրենը:

Իսկ ո՞ւր մնաց հոգին:

Գուցե ճիշտ խմելը հենց հոգու բան է: Գուցե ճիշտ խմողները հենց հոգով խմողներն են: Ուզո՞ւմ է հոգիդ խմել՝ խմիր, չի ուզում՝ փախիր:

Ինչո՞ւ են մարդիկ խմում ու ծիծաղում ուրիշների վրա կամ իրենք են դառնում ծիծաղի առարկա: Ինչո՞ւ են մարդիկ խմում ու հայհոյում, կամ թույլ տալիս, որ իրենց հայհոյեն: Ինչո՞ւ են մարդիկ խմում ու մարդ ծեծում կամ թողնում, որ իրենց շանսատակ անեն: Ինչո՞ւ են մարդիկ խմում ու կորցնում իրենց մարդկային կերպարը: Որովհետև նրանք հոգով խմողներ չեն:

Ինչո՞ւ են մարդիկ խմում և ուրախանում և իրենց ուրախությունը տարածում շուրջբոլորը: Ինչո՞ւ են մարդիկ խմում ու երգում, երգում այնպես, որ նրանց հետ երգեն բոլորը: Կամ անգամ հակառակը. ինչո՞ւ են մարդիկ խմում ու տխրում, բայց իրենց տխրությունը չեն պարտադրում ուրիշներին: Ինչո՞ւ են մարդիկ խմում ու արտասվում, արտասվում թաքուն, այնպես, որ ոչ ոք չտեսնի: Որովհետև նրանց հոգին է ասել՝ խմի՛ր:

Գուցե սա՞ է խմելու փիլիսոփայությունը:

Չէ՞ որ, երբեմն լինում է այնպես, որ երկինքը փլվում է գլխիդ կամ հողը փախչում է ոտքերիդ տակից:

Չէ՞ որ, երբեմն լինում է այնպես, որ նայում ես երկնքին ու ուզում ես փարվել նրան կամ այնքան ամուր ես կանգնած հողին, որ զգում ես արմատներդ:

Եվ հոգիդ ասում է՝ խմի՛ր:

Չէ՞ որ, երբեմն լինում է այնպես, որ արթնանում ես ու հասկանում, որ կյանքդ իզուր ես ապրել: Կամ քնում ես ու չես ուզում արթնանալ:

Չէ՞ որ, երբեմն լինում է այնպես, որ առավոտյան ժպտում է արեգակը, իսկ գիշերն աչքով է անում լուսինը:

Եվ հոգիդ ասում է՝ խմի՛ր:

Կամ պարզապես ոչինչ էլ չի լինում, բայց միևնույն է, հոգիդ ասում է՝ խմի՛ր:

Մշկոյի փողերն ու հարսնացուները

Մշկոյի հետ մեր ընկերության հինգ կամ վեց տարիների ընթացքում նա ինձ ծանոթացրել էր բազմաթիվ կանանց ու աղջիկների հետ՝ տարբեր տարիքի, տեսքի ու ծավալի՝ բոլորին ներկայացնելով իբրև իր հարսնացու, ում հետ, վստահաբար, որոշել է ամուսնանալ: Վերջինը Սիրուշն էր:

Նա մնացածներից տարբերվում էր նրանով, որ անկեղծորեն սիրահարվել էր հենց Մշկոյին, ոչ թե՝ նրա ազգանվանը: Մյուսներին, ում հետ ընկերս ինձ ծանոթացրել էր նախկինում, հետաքրքրում էր հիմնականում Մշկոյան ազգանվան հնչեղությունը: Նրանք, ինչպես արդեն ասացի, չափազանց տարբեր էին՝ համակրելի և՝ ոչ այնքան, երիտասարդ և՝ ոչ այնքան, պարզունակ և՝ ոչ այնքան, սակայն բոլորն ունեին մի ընդհանրություն՝ բարձր ու կայուն եկամուտ, ինչն այնքա՛ն անհրաժեշտ էր Մշկոյին՝ միջանկյալ ընթացիկ ծախսերի համար: Գումարը, որ նա ստանում էր մեծահարուստ եղբորից ամեն ամսվա վերջում բավականացնում էր միայն այդ ամսվա ընթացքում գոյացած պարտքերը փակելուն: Պարտքերն այդ կուտակվում էին տարատեսակ էլիտար սրճարաններում, ռեստորաններում, ակումբներում ու հյուրանոցներում, ուր Մշկոյին շատ լավ ճանաչում էին և պատրաստ էին նրա անունով անսահմանափակ հաշիվ բացել՝ համոզված, որ ոչ մի դեպքում չեն տուժի: Բայց, բնականաբար, լինում էին դեպքեր, երբ Մշկոն, ով այդ պահին փող չուներ, հայտնվում էր մի այնպիսի վայրում, ուր իրեն չէին ճանաչում: Ու, քանի որ նրա համար կարևոր չէր ու նա երբեք չէր անդրադառնում՝ դրամապանակը լիքն է, թե՝ դատարկ, պատվիրում էր որքան և ինչ հնարավոր է, հյուրասիրում էր որքան և ում հնարավոր է, իսկ վերջում պարզվում էր, որ փող չունի: Այդպիսի պահերին օգնության էին հասնում կամ «հարսնացուները», կամ

ընկերները, ում, այդ թվում և ինձ, նման վիճակները, պետք է ասել, որ խիստ հոգնեցրել էին: Մշկոն պարզապես զանգում էր և փաստի առաջ կանգնեցնում. այսինչ տեղում եմ, եկեք՝ հաշիվը փակեք: Ու բոլորը, այդ թվում և ես, խելոք ենթարկվում էինք, ոչ թե հանուն ընկերության, այլ որովհետև շատ լավ գիտեինք, որ վաղ թե ուշ՝ Մշկոն անպայմանորեն շռայլորեն փոխհատուցելու է պարտքը:

Այստեղ, իհարկե, կարող է տրամաբանական հարց առաջանալ. եթե Մշկոն կարող էր ամսվա վերջում փակել իր բոլոր պարտքերը կամ շռայլորեն փոխհատուցել իր բոլոր պարտապաններին՝ ստանալով եղբորից անհրաժեշտ գումարը, ապա ինչո՞ւ նախապես չէր վերցնում այնքան գումար, որ պարտքեր չկուտակեր:

Պատասխանն առանձնապես բարդ չէր: Կարևոր չէ, Մշկոյի դրամապանակում կլիներ տասը պայմանական միավոր, հազար, թե տասը հազար: Նա գումարը կծախսեր նույն արագությամբ: Հենց այդ պատճառով հոգատար եղբայրը գերադասում էր ոչ թե նրան կանխիկ գումար տալ կամ լիցքավորել նրա քարտային հաշիվն ամսվա սկզբում, այլ փակել նրա պարտքերն ամսվա վերջում: Այդպես պարզապես ավելի ձեռնտու էր. եղած գումարը միշտ ավելի հեշտ ու արագ է ծախսվում, քան չեղածը:

Բայց վերադառնանք Մշկոյի «հարսնացուներին», ավելի ճիշտ՝ նրանցից վերջինին՝ Սիրուշին: Պետական գերատեսչություններից մեկում բավականին բարձր պաշտոն զբաղեցնող այս տիկինն ինձ հիշեցնում էր փոքրիկ փղիկի. կլոր, փափլիկ ու չափազանց բարի աչքերով: Բարձր պաշտոն զբաղեցնելուց զատ, նա ուներ հանգուցյալ ամուսնուց ժառանգած երկու բնակարան Փարիզի գրեթե կենտրոնում, որոնք վարձով էր տալիս ու անհոգ ապրում իր կյանքի հերթական տասնամյակը: Մշկոյի հետ տիկինը ծանոթացել էր ուղիղ մեկ ամիս առաջ, Հյուսիսային պողոտայի վրա գտնվող իր բնակարանի տակի սրճարանում: Նույն օրը Մշկոն տեղափոխվել էր այդ բնակարանը: Համատեղ կյանքի երեսուն օրերի ընթացքում Սիրուշն առնվազն տասն անգամ ստիպված էր եղել Մշկոյի փոխարեն վճարել իր բնակարանի տակի սրճարանում և էլի ուրիշ վայրերում: Երեսուներորդ օրը

Մշկոյանն անհետացել էր: Եվ, քանի որ դա հենց այն օրն էր, որն ընկերս անցկացրել էր ինձ հետ կամ գուցե ուրիշ պատճառով, որը ես չգիտեմ, Սիրուշը դիմեց հենց ինձ:

Ես նոր էի դուրս եկել բժշկուհու մոտից՝ երբ զանգեց հեռախոսս: Փղիկը խնդրեց շտապ հանդիպել:

— Շատ կարևոր է, հասկանո՞ւմ ես:

Ասել, որ ես անհանգստացա, ճիշտ չի լինի: Հավանաբար Մշկոն մի տեղ խմած պատանդ է մնացել՝ մտածեցի: Կամ զույգը բաժանվել է, և չստացված հարսնացուն որոշել է դիմել ինձ, որ ես խոսեմ ընկերոջս հետ: Այդպես էլի էր եղել: Այնպես որ՝ ես հանգիստ պատասխանեցի.

— Հասկանում եմ:

Այն մասին, թե որքան գումար կար Սիրուշի քարտին

Հանդիպեցինք նույն սրճարանում, ուր զույգը ծանոթացել էր:

Երբ ներս մտա, Սիրուշն արդեն այնտեղ էր: Նստած էր պատուհանի տակի սեղաններից մեկի մոտ և հուսահատ հայացքով նայում էր ամպամած երկնքին: Ամեն ինչ պարզ էր՝ ընկերս լքել էր նրան:

— Կներես, որ քեզ անհանգստացնում եմ, բայց չգիտեմ ուրիշ ում դիմել:

Տիկինը փորձեց ժպտալ, բայց փղիկի աչուկները կարծես չենթարկվեցին նրան ու տխուր նայեցին ինձ:

— Ամեն ինչ լավ կլինի,— ասացի՝ իբրև նախաբան:

— Ինչը լավ կլինի,— չհասկացավ տիկինը:

— Պետք է պարզապես հումորով մոտենալ և թեթև տանել,— շարունակեցի,— կուզե՞ս քեզ մի պատմություն պատմեմ…

— Դու գիտե՞ս նա որտեղ է,— ընդհատեց ինձ Սիրուշը,— խնդրում եմ, ասա՛:

Ու հանկարծ նա սկսեց լաց լինել: Աղերսագին նայում էր ինձ, ու աչքերից թափվում էին արցունքները: Ես փորձեցի հանգստացնել, բայց՝ ապարդյուն: Ջուր լցրեցի բաժակը, մեկնեցի նրան ու արդեն լուրջ՝ ասացի.

— Լավ, պատմիր, թե ինչ է եղել:

Տիկինը մի քիչ էլ արտասվեց, հետո պայուսակից հանեց հայելին ու թաշկինակը, կարգի բերեց իրեն ու պատմեց: Եվ ահա թե ինչ պարզվեց:

Երկու օր առաջ՝ ինձանից բաժանվելուց հետո, Մշկոն հավանաբար ինչ–որ տեղ շարունակել էր խմելը և առավոտյան գնացել տուն, այսինքն՝ Սիրուշի տուն: Տիկինը տանը չէր եղել, վաղուց արդեն աշխատավայրում էր: Ավելին՝ խորհրդակցության էր շեֆի

մոտ: Այդ իսկ պատճառով երկար ժամանակ չէր պատասխանում սիրեցյալի զանգերին: Բայց, քանի որ, վերջինս համառում էր, ստիպված էր դուրս գալ շեֆի աշխատասենյակից և պատասխանել: Մշկոն նախ մի լավ նախատում է՝ հեռախոս չվերցնելու համար, ապա ասում, որ իրեն շտապ գումար է անհրաժեշտ: Ինչպես միշտ՝ մի չափազանց կարևոր գործի համար: Ոչ շատ՝ ընդամենը երկու հարյուր հիսուն հազար դրամ: Այլ տարբերակ չունենալով՝ Սիրուշը ասում է իր այն քարտի տեղը, որի վրա իր խնայողություններն են և որը պահում է տանը: Ասում է նաև քարտի գաղտնաթվերը, որ Մշկոն կարողանա բանկոմատից հանել անհրաժեշտ գումարը: Այնուհետև վերադառնում է խորհրդակցության: Մեկ ժամից զանգահարում է սիրեցյալին, բայց վերջինս չի պատասխանում: Եվ այդպես՝ մինչև երեկո: Երեկոյան Մշկոյանի հեռախոսը դառնում է անհասանելի: Եվ այդպես՝ երկու օր:

Ահա այսքանը՝ արտասովոր ոչինչ: Միակ բանը, որ ես չէի հասկանում, ուրիշ էր: Երկու օր առաջ ընկերոջիցս բաժանվել էի լուսադեմին, հավանաբար ժամը յոթին: Ըստ Սիրուշի՝ Մշկոն իրեն զանգահարել էր առավոտյան ժամը տասին: Ինչպե՞ս էր նա հասցրել երեք ժամվա ընթացքում երկու հարյուր հիսուն հազար դրամ ծախսել: Բայց դա չէր կարևորը: Պետք էր հանգստացնել տիկնոջը:

— Ոչ մի սարսափելի բան չկա,— ասացի՝ ժպտալով,— դու երևի լավ չես ճանաչում Մշկոյանին. նա հաճախ է անհետանում: Բայց մի անհանգստացիր, դա տևում է առավելագույնը մեկ շաբաթ: Մեկ շաբաթից նա անպայման կհայտնվի:

— Մեկ շաբա՞թ,— բացականչեց Սիրուշը:

— Մի՞թե դա շատ է սպասելու համար մեկին, ում անունը Մշկո է:

— Ախր…— նա ուզում էր ինչ որ բան ասել, սակայն ես չթողեցի:

— Մեր բարեկամը բացառիկ կերպար է: Այդպիսի կերպարները յուրահատուկ մոտեցում են պահանջում: Դու պետք է համակերպվես դրան: Ես, օրինակ, համակերպվել եմ:

Սիրուշը ուշադիր նայում էր դեմքիս, կարծես փորձելով հասկանալ՝ հո խմած չե՞մ: Փղիկի աչքերն արդեն տխուր չէին, ոչ էլ աղերսող, ուղղակի՝ ապշած:

Ու հանկարծ մտքովս մի բան անցավ:

— Որքա՞ն գումար կար քարտիդ վրա,— հարցրի:

Տիկինը միանգամից չպատասխանեց: Էլի որոշ ժամանակ նայեց դեմքիս, հետո, երևի հուսալով, որ այնուամենայնիվ սթափ եմ՝ կմկմաց.

— Երեք հարյուր հիսուն հազար: Երեք հարյուր հիսուն հազար եվրո:

Ես, անկախ ինձանից սուլեցի: Ա՜յ քեզ Փղիկ:

— Արագ արգելափակիր քարտդ,— հորդորեցի Սիրուշին,— թե չէ՝ խնայողություններդ կնվազեն ժամը հազար եվրո արագությամբ:

— Ո՛չ,— առանց մեկ վայրկյան մտածելու ասաց տիկինը,— թո՛ղ ծախսի:

Վեցերորդ քոթեջ կամ գետածին ու ջրահարսերը

Կամ աշխարհում որևէ այլ երկիր, ուր ավանդական արժեքները քարոզվում են նույն հաճախականությամբ, ինչ հաճախականությամբ բացվում են պոռնկանոցներ: Պետության հիմքը ավանդական ընտանիքն է՝ ասում է խորհրդարանի պատգամավորներից մեկը և երեկոյան սիրուհուն տանում Ջրվեժում գտնվող մի պոռնկանոց, որն, ի դեպ, պատկանում է խորհրդարանի մեկ այլ պատգամավորի: Այդ պոռնկանոցի վրա իհարկե գրված չէ «պոռնկանոց», այլ գրված է «հյուրանոց», «հոթել» կամ, վատագույն դեպքում՝ «մոթել»: Միայն թե այն, ինչ կատարվում է այդ հաստատությունների ներսում, բոլորովին չի համապատասխանում այն հասարակությանն ու պետությանը, որի հիմքում պիտի ընկած լինեն ավանդական արժեքները:

Դուք երբևէ փորձել եք Երևանից Գառնիի և Գեղարդի պատմամշակութային հուշարձաններ գնալիս հաշվել, թե ձեր ճանապարհին, ասենք՝ Մյասնիկյան պողոտայի, Բագրևանդ փողոցի, Ջրվեժի հատվածի աջ և ահյակ կողմերերում քանի այդպիսի հյուրանոց կա: Այդ հյուրանոցներում, վստահեցնում եմ, երբեք ոչ մի զբոսաշրջիկ ոտք չի դրել: Ուրեմն ինչի՞ համար են դրանք:

Թե ինչպես է մարդը բավարարում իր տարատեսակ, այդ թվում՝ սեռական պահանջներն, անշուշտ, իր գործն է: Մարդը կարող է շաբաթը հինգ անգամ գնալ «ձախ», կինը կարող է ունենալ միաժամանակ հինգ սիրեկան՝ իհարկե ոչ մեկի գործը չէ: Միայն թող պարկեշտության դասեր չտան ու սուրբ չձևանան: Սա է նյարդայնացնում:

Երբ մեկը քարոզում է մի բան, բայց անում է հակառակը, երբ իբր պայքարում է մի բանի դեմ, բայց հենց դա է անում, ինչի՞ են բերելու նրա քարոզն ու պայքարը: Եվ երբ այդպիսիք



մեծամասնություն են կազմում՝ իրար նայելով, իրարից քաշվելով, իրարից վախենալով անում են նույնը, ինչի՞ է վերածվում հասարակությունը: Ինչպե՞ս կարող է շիտակ հասարակություն լինել, երբ կեղծիքը հասարակության մեջ այսչափ շատ է, պարզապես խեղդում է, չի թողնում շնչել: Խեղդում է և չի թողնում շնչել նույն այդ հասարակությանը:

Ինչևէ, այսպիսի բաների մասին էի մտածում ես, երբ մտնում էի Ջրվեժում գտնվող հյուրանոցներից մեկի դարպասներից ներս: Սա այն հյուրանոցն էր, որտեղ սիրում էր լինել Մշկոն, և հենց որտեղ էլ իմ հաշվարկներով պիտի լիներ նա: Եվ քանի դեռ չէր հասցրել ծախսել ամբողջ երեք հարյուր հիսուն հազար եվրոն, պետք էր հանել նրան այստեղից և քարտի հետ միասին վերադարձնել Սիրուշին: Համենայնդեպս, ես այդպես էի խոստացել վերջինիս:

Իջեցրի մեքենայիս ապակին և պահակին հարցրի, այստե՞ղ է Մշկոյանը: Նա մի պահ մտածեց ու գլխով արեց: Հետո նորից մտածեց ու ասաց.

— Վեցերորդ քոթեջ:

Այդ քոթեջն ինձ, անտարակույս, քաջածանոթ էր: Մշկոյանի և այլոց հետ մեկ անգամ չէինք այստեղ ժամանակ անցկացրել: Այն երկհարկանի էր. երկրորդ հարկում ննջասենյակներն էին, լողասենյակներն ու ջակուզին, առաջին հարկում՝ հյուրասենյակը, որի կենտրոնում տեղադրված էր սարսափելի անճաշակ սեղան իր աթոռներով, իսկ ծայրում՝ է՛լ ավելի անճաշակ բազմոց ու երկու բազկաթոռ: Ճաշասեղանին շարված էին տարատեսակ նախուտեստներ, այդ թվում՝ կարմիր ձուկ ու կարմիր խավիար, իսկ դրանց մեջտեղում ցցված էր Մշկոյանի սիրած ֆրանսիական թանկարժեք օղու շիշը: Բազմոցին նստած էին սլավոնական ծագման երկու շիկահեր և գարեջուր էին խմում: Մշկոյանը չկար:

Բայց, քանի որ, այս ամենը նրա ոճով էր, իսկ երկրորդ հարկից լսվում էր ցնցուղից հոսող ջրի խշշոցը, ես՝ համոզված, որ միջոցառման կազմակերպիչն ընկերս է, խրոխտ քայլերով մտա ներս: Պետք է խոստովանել, որ ինձ հավասարապես հետաքրքրեցին թե՛ սլավոնական ծագմամբ գեղեցկուհիները, թե՛

ֆրանսիական ծագմամբ օղին ու ես կանգնեցի լուրջ երկընտրանքի առջև՝ ո՞ւմ հետ առաջինը ծանոթանալ:

Այնուամենայնիվ կանգ առա օղու վրա: Բացեցի շիշը, լցրեցի մի բաժակ և խմեցի ընկերոջս կենացը. նախ՝ որովհետև ուրախ էի, որ գտել եմ նրան, և փաստորեն՝ կատարել Սիրուշին տված խոստումս և երկրորդ՝ որ գտել եմ հենց նման պայմաններում: Երեք հարյուր հիսուն հազար եվրոյից առնվազն հազարը նա իհարկե կվճարեր այս խրախճանքի համար, բայց մնացած երեք հարյուր քառասունինը հազարը դեռ կարելի էր փրկել:

Հանեցի պիջակս, և չէի հասցրել լցնել երկրորդ բաժակը, երբ աղջիկներից մեկը ձայնեց.

— Իսկ մե՞նք:

— Համեցեք,— ասացի ու լցրեցի նրանց բաժակները ևս:

Չգիտեմ որտեղից էր Մշկոյանը գտել այս գեղեցկուհիներին, բայց, որ որոշել էր էգոիստաբար մենակ ժամանակ անցկացնել նրանց հետ, իհարկե, լավ չէր: Ինչ որ պետք է կասեմ նրան՝ մտածեցի ու կրկին լցրեցի բաժակները՝ արձակելով վերնաշապկիս կոճակները:

Աղջիկներից մեկը հացի վրա կարագ ու խավիար քսեց և մոտեցրեց բերանիս.

— Զակուսիվայ, զայկա,— ասաց նա քնքշորեն:

Դատարկեցի բաժակս, մի մեծ կտոր կծեցի բուտերբրոդից, բայց չհասցրեցի ծամել:

— Ա՛յ քեզ բան,— գոռաց մեկը հետևիցս:

Շրջվեցի ու երկրորդ հարկից իջնող աստիճանների վրա տեսա սպիտակ խալաթով մի տղամարդու: Որ Մշկոն չէր՝ հասկացա անմիջապես: Նախ՝ ընկերս բավականաչափ համակրելի արտաքին ուներ և նորմալ կազմվածք, իսկ սա նման էր ջրից նոր դուրս եկած գետաձիու, որն իր տարածքում օտար կենդանու էր հանդիպել:

Ես գիտեի, որ գետաձիերը միայն մուլտֆիլմերում են բարի, իսկ իրականում չափազանց ագրեսիվ են ու վտանգավոր: Օրինակ, Աֆրիկայի գետաձիերը տարեկան ավելի շատ մարդ են սպանում քան կոկորդիլոսները:

— Դու ո՞վ ես,— բացականչեց գետաձին:

Ես ուզում էի քաղաքավարի ներկայանալ, բայց չկարողացա, քանի որ բերանս լիքն էր:

— Ինչ գործ ունես այստեղ,— գետաձին արդեն իջել էր աստիճաններից և գալիս էր դեպի ինձ:

Ակնհայտորեն նա կատաղած էր: Եվ, պետք է ասել, որ կարելի էր նրան հասկանալ: Ես, բավական չէ մտել էի նրա տարածքը, նաև ուտում էի նրա կերը և աչք էի դրել նրա ջրահարսերի վրա:

Ինչևէ, նախ հարմար դիրք բռնեցի, որ պաշտպանվեմ, ապա առանց ծամելու կուլ տվեցի բերանիս պարունակությունը և ասացի.

— Խնդրում եմ հանգստացեք, թյուրիմացություն է եղել:

Իհարկե, ինձանից լուրջ ջանքեր պահանջվեցին՝ բացատրելու թե ինչ թյուրիմացության մասին է խոսքը և թե ինչու և ինչպես եմ հայտնվել այդտեղ, բայց մարդակերության ակտ, բարեբախտաբար, չգրանցվեց:

Բայց որտեղ էր Մշկոյանը և ինչու պահակն ինձ ուղղորդեց այս քոթեջը: Պարզվեց, որ ընկերս իսկապես եղել էր այստեղ և դուրս էր եկել երկու ժամ առաջ: Թե ինչպես էր դուրս եկել, և ինչպես էին ուրիշ մարդիկ մտել Մշկոյի սիրելի վեցերորդ քոթեջը, պահակը չէր տեսել, որովհետև այդ պահին գնացել էր զուգարան:

— Առավոտյան խաշ եմ կերել,— արդարացավ նա,— փորս լավ չէ:

Այն մասին, թե որքան էր սիրում Սիրուշը Մշկոյին

Մինչև ուշ երեկո փնտրեցի Մշկոյին բոլոր հնարավոր վայրերում, նույնիսկ Ծաղկաձոր գնացի, հարցուփորձ արեցի բոլոր ընդհանուր ընկերներին ու նախկին հարսնացուներին, անգամ՝ մարմնավաճառներին: Ապարդյուն, նա չկար ու չկար: Այլևս ոչինչ անել չէի կարող: Պիտի քնեի գիշերը, որովհետև վաղ առավոտյան տոմս ունեի Երևան–Պրահա–Միլան չվերթի համար:

Բայց մինչ այդ զանգահարեցի Սիրուշին և դարձյալ առաջարկեցի արգելափակել քարտը: Նա չհամաձայնվեց, և ես որոշեցի այնուամենայնիվ, հանդիպել ու հասկանալ, թե ինչն է պատճառը: Ու նաև պետք էր հանգստացնել նրան: Տիկինն իսկապես լավ մարդ էր, համ էլ, ես ինձ ինչ–որ չափով մեղավոր էի զգում այս պատմության համար:

— Դու դեռ չես հասցրել լավ ճանաչել Մշկոյին,— բացատրեցի տիկնոջը,— նա իհարկե չափազանց բարի է, բայց անպատասխանատու է, անվստահելի ու անհասկանալի:

Սիրուշը սուրճ էր պատրաստում Հյուսիսային պողոտայի իր տան շքեղ խոհանոցում, բայց դա անում էր ինքնաբերաբար՝ ավելի շատ ինչ–որ բան անելու համար:

— Մշկոն, մինչև հայտնվելը, իսկ նա վաղ թե ուշ կհայտնվի, անպայման կծախսի որոշակի գումար,— շարունակեցի ես,— ու թեև վստահ եմ, որ հայտնվելուց հետո նա կվերականգնի քարտիդ բալանսը, բայց միևնույն է՝ չեմ հասկանում, թե ինչու չես արգելափակում քարտդ, եթե անհանգստանում ես քո խնայողությունների համար:

Սիրուշը սեղանին դրեց սուրճով բաժակները բավականին անհաջող՝ թափելով մի մասը: Նրա փափլիկ թաթիկները դողում էին: Հետո նստեց, փորձեց հավաքել իրեն և ասաց.

— Ո՛չ, դու նրան չես ճանաչում:

Ես հարցական նայեցի նրա աչուկներին:

— Մշկոյի նմանը չկա, հասկանում ես,— երազկոտ ձայնով շարունակեց նա, ապա փախցրեց հայացքը և ամոթխած հավելեց,— ու ես նրան սիրում եմ:

— Շարունակիր սիրել, բայց արգելափակիր քարտդ:

— Այդ դեպքում՝ չեմ կարող գտնել նրան: Իսկ եթե չգտնեմ՝ կկորցնեմ:

Ես դարձյալ չհասկացա, թե նա ինչ նկատի ուներ և խնդրեցի բացատրել: Պարզվեց ամեն ինչ այնքան էլ բարդ չէր: Իր քարտով արված ցանկացած գործարքի դեպքում Սիրուշը բանկից կարճ հաղորդագրություն էր ստանում հեռախոսին և կարող էր իմանալ, թե որտեղ է կատարվել գործարքը, հետևաբար՝ որտեղ է Մշկոն: Վերջին նման գործարքն, օրինակ, կատարվել էր նախորդ առավոտյան, երբ Հյուսիսային պողոտայի բանկոմատներից մեկից կանխիկացվել էր հազար եվրոյին համարժեք դրամ: Մինչդեռ, եթե քարտն արգելափակվեր, հնարավոր չէր լինի գործարք կատարել, և չէր գա ոչ մի հաղորդագրություն:

Բայց որ գլխավորն է, ես ինձ համար պարզեցի մեկ այլ բան: Տիկինն իսկապես սիրում էր Մշկոյին: Եվ, փաստորեն սիրում էր այնքան, որ պատրաստ էր կորցնել խնայողությունները, միայն թե գտներ նրան:

Ինչևէ, կարծես այլևս անելիք չունեի ու կարող էի հանգիստ խղճով հեռանալ: Այդպես էլ արեցի, բաժանվելուց առաջ չմոռանալով ամուր գրկել ու համբուրել Փղիկին: Գնացի տուն, ու պառկեցի քնելու:

Ժամը երկուսին զանգեց հեռախոսս: Սիրուշն էր: Ասաց, որ հենց նոր հաղորդագրություն է ստացել, ըստ որի՝ իր քարտով ռուսական «Աերոֆլոտ» ավիաընկերության տոմս է գնվել: Մշկոն, ուրեմն, պատրաստվում էր մեկնել Հայաստանից: Դա արդեն լուրջ էր: Պետք էր օգնել Փղիկին:

Վեր կացա, լվացվեցի, սուրճ խմեցի ու նոր սկսեցի մտածել, թե ինչ է կարելի անել: Նախ համացանցում փնտրեցի «Աերոֆլոտի» մոտակա չվերթերը: Դրանք երեքն էին՝ ժամը երեքն անց

քառասունհինգ, վեցն անց տասնհինգ և տասին: Երկուսը՝ Մոսկվա, մեկը՝ Դոնի Ռոստով:

Վերցրի կնոջս կողմից ջանասիրաբար հավաքված ճամպրուկս և՝ ուղիղ օդանավակայան: Եթե Մշկոն մեկնում էր առաջին, այսինքն՝ ժամը երեքն անց քառասունհինգի չվերթով, դեռ կարելի էր հասցնել: Եթե մեկնում էր հաջորդով, այսինքն՝ ժամը վեցն անց տասնհինգ, ապա հաստատ նրան կբռնացնեի: Բայց այ տասի չվերթին սպասել չէի կարող, որովհետև ինքս պիտի մեկնեի ժամը յոթին:

Թե ո՞ր ժամի համար և ի՞նչ ուղղությամբ էր Մշկոյի գնած տոմսը, հաղորդագրության մեջ, ցավոք, նշված չէր: Սակայն, բնականաբար, նշված էր գինը՝ մոտ երեք հարյուր եվրո, ինչից կարելի էր ենթադրել, որ տոմսը կամ երկու ուղղությամբ էր, ասենք՝ Երևան–Մոսկվա–Երևան, կամ մեկ ուղղությամբ տրանզիտային՝ ասենք Երևան–Մոսկվա–եվրոպական որևէ քաղաք: Հետևաբար կամ Մշկոն մեկնում էր Ռուսաստան վերադարձի հստակ ժամկետով, կամ մեկնում էր Եվրոպա՝ Փղիկի ամբողջ փողը մսխելու:

Տաքսին չափազանց դանդաղ էր ընթանում, թեպետ ասել էի վարորդին, որ ուշանում եմ: Բայց մինչ այդ կոպիտ սխալ էի արել. միանգամից տաքսի կանչելու փոխարեն՝ զանգահարել էի ընկերոջս, որն ավելի ուշ ինձ պիտի տաներ օդակայան և ասել, որ գա հիմա: Բավականին երկար սպասել էի փողոցում ու զայրացած կանգնեցրել առաջին պատահած տաքսին՝ մի նախնադարյան «Ժիգուլի», որն էլ ահա, հևալով գլորվում էր Իսակովի պողոտայով:

Երբ հասանք օդանավակայան երեքն անց էր: Դեպի Մոսկվա առաջին չվերթի հաշվառումը վաղուց ավարտվել էր: Ավարտվում էր նաև ուղևորների նստեցումը օդանավ: Մշկոն, եթե մեկնում էր այդ չվերթով, պետք է հիմա լիներ կամ դեպի օդանավ տանող դարպասների մոտ, կամ հենց օդանավում: Իմ բոլոր ջանքերը թափանցել այնտեղ՝ իզուր անցան: Նույնիսկ գիշերվա կեսին զանգահարեցի օդանավակայանում աշխատող մի ծանոթ պաշտոնյայի, ում հեռախոսը, թարսի պես անջատված էր:

Մեկ ժամից ավելի անիմաստ թրև եկա օդանավակայանում, մինչև սկսվեց Աերոֆլոտի հաջորդ՝ դեպի Դոնի Ռոստով չվերթի



հաշվառումը: Մշկոն չերևաց: Այլևս ոչինչ անել չէի կարող: Զանգահարեցի Սիրուշին, առաջարկեցի գալ օդանավակայան հետագա չվերթերին հետևելու: Կարող էի, իհարկե, զանգել որևէ ընկերոջ, բայց չէի ուզում ուրիշ մեկին խառնել այս խճճված պատմության մեջ: Ու բացի այդ, չէ՞ որ խնդիրը Փղիկինն էր, թող նա էլ չարչարվեր: Հետո արդեն եկավ իմ չվերթի ժամը, հոգնած մտա օդանավ ու կյանքումս առաջին անգամ քնեցի թռիչքի ժամանակ: Երազումս տեսա Մշկոյին. նա նստած էր օդաչուների խցում և ինքնաթիռի հրամանատարի հետ խմում էր իր սիրած ֆրանսիական օղին: Կամ գուցե դա երազ չէ՞ր:

Իմ գրող բարեկամները

Մի անգամ, կարծեմ՝ այս պատմությունից երկու տարի առաջ, մեր հերթական հավաքներից մեկի ժամանակ իմ բուլղար բարեկամ Գեորգին մի գաղափար հայտնեց, որը, եթե կյանքի կոչվեր, կյանքը Երկիր մոլորակի վրա վստահաբար կդառնար շատ ավելի լավը: Աշխարհի բոլոր պետությունների կրթական համակարգերում պետք է պարտադիր լինի համաշխարհային մշակույթ առարկան: Աշակերտները և ուսանողները պիտի պարտադիր ծանոթանան աշխարհի բոլոր՝ շուրջ երկու հարյուր պետությունների մշակույթներին՝ առանձին–առանձին: Ընդ որում՝ թե՛ դասական, թե՛ ժամանակակից: Միայն այսպե՛ս կարելի է հասկանալ աշխարհը: Իսկ առանց աշխարհն հասկանալու չես կարող արժևորել ու զարգացնել քո ազգայինը: Սա էր Գեորգիի գաղափարը, որը, որքան էլ որ ուտոպիստական էր՝ ինձ չափազանց դուր եկավ:

Առհասարակ, իմ գրող բարեկամների գաղափարները շատ հետաքրքիր էին լինում և դա էր առաջին կարևոր պատճառը, որ ես հաճախ էի մասնակցում նրանց կազմակերպած հավաքներին, չնայած՝ դրանք իմ վրա չափազանց թանկ էին նստում: Երկրորդ պատճառն այն էր, որ իմ եվրոպացի գրող բարեկամների գաղափարական զրույցներն անցկացվում էին առատ խմիչքի ուղեկցությամբ: Բուլղար ընկերս, օրինակ, հյուրասիրում էր իրենց չքնաղ սլիվովա ռակիան, հոլանդացի Դեդրիկը՝ իրենց կախարդական ժենևերը, պորտուգալացի Ժոաոն՝ իրենց արևահամ պորտվեյնը, ուկրաինացի Միկոլան՝ իրենց ատոմային պերցովկան, ես… կռահեք, թե ինչ: Մենք հավաքվում էինք հյուրանոցի մեր համարներից մեկում, խմում մինչ ուշ գիշեր ու զրուցում:

Գեորգիի՝ բուլղար բարեկամիս, աշխարհի բոլոր ազգերի մշակույթներն առանձին–առանձին և հնարավորիս մանրամասն՝

դպրոցների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում պարտադիր ընդգրկելու գաղափարն, օրինակ, ծնվել էր Ամստերդամի Liberary խորհրդանշական անունը կրող հյուրանոցում՝ հոլանդական ժենևեր խմելու երեկոյի ժամանակ. համենանդեպս, նա այդպես էր ասում: Այդ հավաքն, ինչպես արդեն ասացի, այս պատմությունից երկու տարի առաջ էր:

Դրանից ևս երկու տարի առաջ մենք հավաքվել էինք բուլղարական Վելիկո Տիրնովոյի Yantra Grand Hotel հյուրանոցում՝ համանուն Յանտրա գետի ափին և խմում էինք սլիվովա ռակիա: Այդ երեկո մենք քննարկում էինք պորտուգալացի Ժոաոյի մի գաղափարը, որը վերաբերում էր մշակութային քաղաքականությանը կամ քաղաքական մշակույթին: Ժոաոն, բացի գրող լինելուց, նաև քաղաքական գործիչ էր և ներկայացնում էր Պորտուգալիայի սոցիալիստական կուսակցությունը: Իսկ գաղափարի առանցքը մշակույթը քաղաքականության և հակառակը՝ քաղաքականությունը մշակույթի հետ ճիշտ համադրելն էր: Այսինքն՝ քաղաքականության հենքը պիտի լինի մշակույթը, մինչդեռ մշակույթը պիտի հեռու լինի քաղաքականությունից: Այս համադրությունը ճիշտ պահելու դեպքում միայն, ըստ պորտուգալացի սոցիալիստ բարեկամիս, պետությունները կվարեին ազնիվ քաղաքականություն, իսկ ժողովրուդների մշակույթը չէր դառնա անազնիվ:

Մեկ այլ հավաքի ժամանակ էլ, որը երկու հազարականների վերջին էր, թիվը ճիշտ չեմ հիշում, մենք տեղավորվել էինք Լվովի Nobilis շքեղ հյուրանոցի բարում: Թեպետ այդ միջավայրում կվայելեր առնվազն քսանհինգ տարեկան վիսկին՝ սիգարով, մենք խմում էինք «պերցովկա»՝ սալով: Ինչևէ, այստեղ էր, որ իմ գործընկերներից մեկը բողոքեց, թե այդ տարին բոլորովին լավ տարի չէր: Երբ նրան հարցրի, թե ինչ առումով, պատասխանեց՝ ֆինանսական, երբ հարցրի, թե ինչու, պատասխանեց, որ ընդամենը հինգ հարյուր հազար օրինակ գիրք է վաճառել այդ տարի: Պարզվեց, որ մյուսների համար էլ տարին լավը չէր. մեկը վաճառել էր չորս հարյուր հազար գիրք, մյուսը՝ երեք և այլն: Մինչդեռ ինձ համար այդ տարին զարմանալիորեն հաջող էր

եղել. իմ վերջին գրքից վաճառվել էր ուղիղ հարյուր յոթանասունհինգ օրինակ: Բայց ես այդ մասին բնականաբար ոչինչ չասացի եվրոպացի գործընկերներիս: Ոչ թե նրա համար, որ ամոթ էր, որ իմ գրքերը քիչ են վաճառվում, այլ նրա համար, որ ամոթ է, որ իմ հասարակությունը գիրք կամ, առնվազն ժամանակակից գրականություն, չի կարդում, որովհետև, համոզված եմ, որ իմ հայրենակից գրչակից ընկերների մոտ էլ նույնն է պարագան:

Ինչպես արդեն ասացի՝ դա երկու հազարականներ միավոր տարիների վերջին էր, թիվը ճիշտ չեմ հիշում, և հերթականն էր այն հավաքներից, որոնք մենք անցկացնում էինք պարբերաբար: Արդյոք երբևէ կյանքի կկոչվեին այդ հավաքների ժամանակ ու մեր խմելու ընթացքում ծնված գաղափարները, մեզանից ոչ մեկը չգիտեր, բայց մի բան մենք գիտեինք հաստատ, որ դրանց մասին մենք անպայման կգրենք մեր գրքերում:

Եվ ահա, Երևան–Պրահա–Միլան չվերթով ես մեկնում էի մեր հերթական հավաքին, որը տեղի էր ունենալու Կոմո լճի ափին, Villa Flori հյուրանոցում՝ Միլանից հիսուն կիլոմետր հեռու:

Այն մասին, թե ինչպես ստացվեց առաջին տեղեկությունը Մշկոյի գտնվելու վայրի մասին

Քնից արթնացա, երբ ինքնաթիռը վայրէջքի էր գնում Պրահայի «Վացլավ Հավել» օդանավակայանում: Հիշեցի երազս և մտածեցի, որ փաստորեն հրամանատարը նորմալ խմող էր, եթե կարողացել էր դիմանալ Մշկոյի տեմպին և այդքանից հետո փափուկ վայրէջք կատարել:

Սրահից դուրս գալիս՝ աչքով արեցի կապույտ համազգեստով ու կարմիր վզկապով սիրունիկ ուղեկցորդուհուն և անգամ ուզում էի հարցնել, արդյո՞ք Մշկոն դեռ օդաչուների խցում է: Բայց ուղեկցորդուհին փախցրեց հայացքը, և ես ոչինչ չհարցրի:

Հանեցի հեռախոսս ավիառեժիմից և տեսա, որ երեք կարճ հաղորդագրություն ունեմ՝ բոլորը Սիրուշից: «Ես օդանավակայանում եմ, Մշկոն չկա»՝ սա առաջին հաղորդագրությունն էր: «Նա այլևս չի վերադառնա»՝ սա երկրորդն էր: «Խնդրում եմ, մի բան արա»՝ սա էլ երրորդը:

Բայց ի՞նչ անեի: Նույնիսկ չպատասխանեցի Սիրուշին: Անցա անձնագրային ստուգումը և տեղավորվեցի օդանավակայանի տրանզիտային գոտու սրճարաններից մեկում: Մինչև Միլանի չվերթը չորս ժամ կար: Որոշեցի գարեջուր խմել, չնայած դեռ օրը կես էլ չէր եղել, ու չնայած գարեջուր առանձնապես չեմ սիրում:

Հետաքրքիր բան են օդանավակայանները: Թերևս մենք հասկանում ենք միայն դրանց հիմնական նշանակությունը: Մինչդեռ բացի այդ հիմնական նշանակությունից օդանավակայաններն ունեն մի կարևոր առանձնահատկություն, որի մասին մենք հաճախ չենք մտածում:

Սա փաստորեն այն վերջին կետն է, ուր մենք դնում ենք մեր ոտքը հողի վրա՝ աշխարհի մի հատվածում: Հաջորդ կետը, ուր



դարձյալ ոտք կդնենք հողի վրա, աշխարհի մեկ այլ հատվածում է, հազար կամ տասը հազար կիլոմետր այն կողմ: Եվ այդ երկու կետերից մեզ բաժանում է ընդամենը մեկ քայլ: Միթե հետաքրքիր չէ:

Եվ, առհասարակ, ես սիրում եմ օդանավակայանները, մանավանդ միջազգային խոշոր օդանավակայանները, որոնք իրար են կապում աշխարհի մի ծայրը մյուս ծայրի հետ, և որտեղ կարելի է հանդիպել տասնյակ, գուցե հարյուրավոր ազգությունների մարդկանց: Որքան էլ որ տարօրինակ լինի, տրանզիտային տոմս գնելիս ես գերադասում եմ, որ երկու չվերթերի միջև ինտերվալը լինի հնարավորինս երկար: Քայլում եմ ահռելի սպասասրահներով և նայում ուղևորներին՝ փորձելով հասկանալ, թե ովքե՞ր են նրանք, որտեղի՞ց են և ո՞ւր են գնում: Հետո փորձում եմ հասկանալ, թե ինչի՞ մասին են մտածում, ի՞նչ տրամադրություն ունեն, ի՞նչ ծրագրեր ու ի՞նչ երազանքներ:

Ահա պատի տակ, հենց գետնին նստած է ռումինացի մի զույգ՝ գրկախառնված, սիրահարված ու երջանիկ:

Սյուների արանքներով վազվզում է ճապոնացի մի մանչուկ, կամ գուցե կորեացի, ում ոչ մի կերպ չի կարողանում բռնել ճապոնուհի կամ կորեուհի մայրը:

Սպասասրահի հսկա պատուհանի տակ, ձեռնափայտին հենված մի ծերունի նայում է օդանավերին ու երևի մտածում, որ երանի սա իր վերջին ճամփորդությունը չլինի: Նա ամենայն հավանականությամբ ԱՄՆ–ի մի հյուսիսային նահանգից է, կամ գուցե ինձ է այդպես թվում:

Մանրահյուս նարնջագույն մազերով մի սևամորթ գեղեցկուհի գլորում է իր նարնջագույն ճամպրուկը և խոսում հեռախոսով: Նա երևի պատմում է Զամբիայում կամ Փղոսկրի Ափում ապրող իր ընկերուհուն, թե ինչպես է նախորդ գիշեր գլխակորույս պարել Պրահայի ակումբներից մեկում:

Մի խոսքով, հետաքրքիր բան են օդանավակայանները:

Պրահայի ժամանակով ժամը տասնմեկն էր: Ես դուրս եկա սպասասրահի վերջում գտնվող ծխարանից և քայլեցի դեպի այն դարպասը, որտեղից շուտով սկսվելու էր Միլան չվերթի ուղևորների նստեցումը օդանավ: Դեռ չէի հասցրել տեղ հասնել,

երբ զանգեց հեռախոսս: Սիրուշն էր: Ճիշտն ասած՝ չէի ուզում պատասխանել և երևի ավելի լավ կլիներ, որ չպատասխանեի, որովհետև այդ դեպքում, վստահաբար, մեկ հրաշալի շաբաթ կանցկացնեի Կոմո լճի ափին եվրոպացի գրող բարեկամներիս հետ: Բայցևայնպես պատասխանեցի: Պատասխանեցի և արդյունքում շարունակվեց այս պատմությունը. որովհետև, առաջ ընկնելով ասեմ, որ խոստացա գտնել Մշկոյին:

— Ինչո՞ւ չես պատասխանում SMS–ներիս,— հուզված ասաց Սիրուշը,— ես գիտեմ, թե որտեղ է Մշկոն:

— Իսկապե՞ս: Եվ որտե՞ղ է մեր փախստականը:

— Շվեյցարիայում:

— Շվեյցարիայո՞ւմ,— կրկնեցի ես՝ չհավատալով լսածիս:

— Այո՛,— հաստատեց Սիրուշը,— ես հենց նոր հաղորդագրություն ստացա, ըստ որի իմ քարտով վճարում է արվել Շվեյցարիայի Բադ Ռագաց քաղաքի հյուրանոցում:

Մշկոն, իհարկե, կարող էր դա անել: Կարող էր Սիրուշի քարտից հանած հազար եվրոյով երկու օր խմել Ջրվեժի հյուրանոցի վեցերորդ քոթեջում ու նրա սիրտը ձյուն ուզեր: Դուրս գալ ու գնալ Ծաղկաձոր, այստեղ հիասթափվել, քանի որ Ծաղկաձորում, թարսի պես, ձյուն չկար և որոշել գնալ այլ տեղ, օրինակ՝ Շվեյցարական Ալպեր: Թռիչքից երկու ժամ առաջ առցանց և, իհարկե, Սիրուշի քարտով Երևան–Մոսկվա–Ցյուրիխ թռիչքի տոմս գնել և մեկ ժամում Ծաղկաձորից հասնել Զվարթնոց օդանավակայան: Ուշացած անցնել հաշվառումը և վերջինը մտնել օդանավ:

Մշկոն, վստահաբար, կարող էր դա անել: Եվ փաստորեն նա ամեն ինչ հենց այդպես էլ արել էր:

Պարզվում էր, որ, եթե ես Երևանում մի քանի րոպե շուտ հասնեի օդակայան կբռնացնեի ընկերոջս, քանի որ նա Մոսկվա էր մեկնել հենց այն առաջին չվերթով, որի հաշվառումից ես ուշացա: Իսկ թե ինչ էր եղել հետո, կարելի էր կռահել:

Երևանի ժամանակով երեքն անց քառասունհինգի չվերթով օդանավը Մոսկվա էր հասնում տեղի ժամանակով հինգն անց տասնհինգ: Երկու ժամից Մոսկվա–Ցյուրիխ չվերթն էր, որը Ցյուրիխ էր հասնում տեղի ժամանակով՝ իններին: Եվս երկու ժամ

կպահանջվեր, մինչ Մշկոն անցներ սահմանային ստուգումը, գնացք կամ տաքսի նստեր և Ցյուրիխից հասներ Բադ Ռագաց: Այսինքն դա կլիներ ժամը տասնմեկին: Հենց այն ժամանակ, երբ ես պիտի նստեի իմ օդանավը, և հենց այն ժամանակ, երբ ինձ զանգահարեց Սիրուշը:

Ու փաստորեն ամեն ինչ հենց այդպես էլ եղել էր:

Ուրեմն ընկերս հիմա շվեյցարական Բադ Ռագաց քաղաքում էր, որտեղ կային աշխարհահռչակ բնական տաք աղբյուրներ, թանկարժեք առողջարաններ և մի կազինո, ուր ես մի անգամ հարյուր շվեյցարական ֆրանկ էի հաղթել:

Իմ առաջին ծանոթությունը Ջուլիկի հետ ու Գեորգիի պրոստատիտը

Միլանի «Մալպենզա» օդանավակայանի առաստաղից կախված ուղենշաններով գտա ավտովարձույթների սրահը և մոտեցա «Սիքսթ» ընկերության տաղավարին: Աշխատակցուհին, իմանալով, որ ամրագրում չունեմ, նեղսրտած ասաց, որ ընդամենը երկու մեքենա կարող է առաջարկել. «Audi A7»՝ օրը հարյուր եվրոյով և «Alfa Romeo Giulietta»՝ օրը հիսունհինգ եվրոյով: Բնականաբար ընտրեցի երկրորդը՝ յոթ օրվա համար վճարելով մոտ չորս հարյուր եվրո:

Ճամփորդական իմ բյուջեի մեջ իհարկե չէր մտնում ավտոմեքենայի վարձակալությունը, որովհետև Միլանի օդակայանից Կոմո լիճ կարելի էր հասնել գնացքով՝ վճարելով ընդամենը տասներկու եվրո, իսկ այնտեղ արդեն ինձ հաստատ անիվներ պետք չէին գալու, քանի որ երեկոները մենք խմելու էինք, իսկ ցերեկները՝ քայլելու չքնաղ լճի ափերով: Մինչդեռ Շվեյցարիա գնալու և այնտեղ Մշկոյին փնտրելու համար հաստատ մեքենա էր հարկավոր: Ոչինչ, մտածեցի, հետո Մշկոյանի քթից կբերեմ չորս հարյուր եվրոն:

«Alfa Romeo Giulietta»–ն վառ կարմիր գույնի էր՝ նրբագեղ, բայց միաժամանակ ագրեսիվ կերպարով: Զարմանալի զուգադիպություն՝ տարիներ առաջ ես Ջուլիկ անունով մի ընկերուհի ունեի, ով շատ նման էր այս մեքենային:

Անունդ մնաց Ջուլիկ՝ մտածեցի ես, մեքենայի նավիգատորի վրա հավաքեցի հյուրանոցի հասցեն և դուրս եկա «Մալպենզա» օդանավակայանի կայանատեղիից: Չնայած շտապում էի, բայց պետք էր նախ մտնել հյուրանոց, տեսնել գրող բարեկամներիս, բացատրել նրանց, որ ստիպված եմ որոշ ժամանակով բացակայել, հետո նոր ուղևորվել Շվեյցարիա:

Քառասուն րոպեից Կոմոյի ափին էի: Այս լճի գեղեցկության մասին շատ էի լսել, միայն թե նրանք, ովքեր պատմել էին հաստատ ըստ արժանվույն չէին գնահատել այն: Լիճն այնքան սիրուն էր, որ քիչ էր մնում մոռանայի Մշկոյին էլ, Սիրուշին էլ, խոստումս էլ ու մնալ այստեղ:

Ցերեկվա ժամը երեքն էր: Պարզվեց՝ մեր հավաքի մասնակիցները դեռ չէին ժամանել. այստեղ էր միայն իմ բուլղար ընկեր Գեորգին:

Գեորգի Լազարովը արդեն երկար տարիներ չէր գրում: Մենք ծանոթացել էինք հեռավոր հազար ինը հարյուր իննսունյոթին, Վարշավայում, մի համաժողովի ժամանակ, որը կրում էր «Ստեղծագործական լրագրությունը քսաներորդ դարի նախաշեմին» անունը: Ու չնայած նա ինձանից մեծ էր տասնհինգ տարով, մենք անմիջապես ընկերացել էինք: Գեորգին այդ ժամանակ բուլղարական ընդդիմադիր թերթերից մեկի խմբագիրն էր ու միաժամանակ հրաշալի էսսեիստ: Մինչ այդ, Բեռլինի պատի փլուզումից ու Վարշավայի համաձայնագրի խզումից առաջ, մի երկար շրջան եղել էր «Բալկանպրեսսի» թղթակիցը Ճապոնիայում, Կորեայում և Չինաստանում: Հետո մի կարճ շրջան սկսել էր գրքեր գրել, իսկ հիմա, արդեն երկար ժամանակ զբաղվում էր հասարակական–կրթական գործունեությամբ ու միակն էր մեր հավաքների մասնակիցներից, ով փաստորեն գործող գրող չէր: Նա միանում էր մեզ, որովհետև, ինչպես ինքն էր ասում՝ դուք պարբերաբար օգնում եք ինձ թարմացնել եվրոպական մշակույթի, քաղաքականության և գինեգործության վերաբերյալ իմ պատկերացումները:

Եվ ահա նա նստած էր հյուրանոցի բացօթյա դարատափում՝ բերանում ստեղծագործական տարիներից մնացած ծխամորճը ու հմայված նայում էր լճի կապույտին:

— Ես համոզված էի, որ առաջինը դու ես ժամանելու,— ասաց Գեորգին գրկախառնվելով,— առաջարկում եմ սկսել քո կոնյակներից: Չեմ կարծում, թե բոլորը կհասցնենք խմել մինչ մնացածների գալը: Քանի՞ շիշ ունես:

Ես ունեի տասը շիշ: Ու երջանիկ կլինեի նստել հենց այդտեղ՝ հյուրանոցի դարատափում, ընկերոջս հետ խմել ու նայել

լճի կապույտին: Բայց դրա փոխարեն ստիպված էի պատմել նրան Մշկոյի պատմությունը:

— Իհարկե, լինում են նման մարդիկ: Ես ինքս ունեմ այդպիսի մի ընկեր,— ասաց Գեորգին ինձ ուշադիր լսելուց հետո,— և իհարկե պետք է պահել խոստումը: Դե ինչ, գալիս եմ քեզ հետ:

— Բայց…

— Չի քննարկվում,— կտրուկ ընդհատեց ինձ ընկերս,— ես հին պրոստոտիտ ունեմ, իսկ Բաղ Ռագացի տաք ջրերը լավ են շագանակագեղձին:

Շվեյցարական դեկորներ

«Ջուլիկը» ասես սահում էր շվեյցարական ավտոմայրուղու հայելու վրայով: Մենք քիչ առաջ էինք անցել Իտալիա–Շվեյցարիա սահմանը, քառասուն ֆրանկ տալով՝ որպես այդ հայելուց օգտվելու վճար: Հարկավոր էր մի տեղ գրել ծախսերը՝ վերջում Մշկոյանին ներկայացնելու համար:

Բայց փողի հերն էլ անիծած, ավելի լավ էր վայելել Շվեյցարիան:

— Դու երբևէ մտածե՞լ ես՝ կ՚ա աշխարհում մեկ այլ երկիր որն ունի այնքան խորհրդանիշ, որքան Շվեյցարիան,— հարցրի Գեորգիին:

— Այո,— պատասխանեց նա՝ այնքան արագ, կարծես սպասում էր այդ հարցին,— իհարկե մտածել եմ: Իսկապես այդ խորհրդանիշերը շատ են: Միայն թե դրանք ընդամենը դեկորներն են:

— Դեկորնե՞ր:

— Անտարակո՛յս: Շատերի պատկերացումներում սա երկիր է շոկոլադի կամ պանրի համով, ուր աշխատում են աշխարհի ամենաանխափան ժամացույցներն ու բանկային համակարգը: Մինչդեռ Շվեյցարիայի հիմնական առանձնահատկությունն այլ է:

— Բնությո՞ւնը,— հարցրի ես:

— Ոչ,— Գեորգին վառեց ծխամորճը,— թեպետ գուցե այստեղ են ամենասիրուն լեռները, անտառներն ու մարգագետինները, գետակներն ու լճերը... Ու կարելի է թվարկել շատ այլ հետաքրքիր առանձնահատկություններ ևս: Բայց դրանք նույնպես դեկորներ են:

— Ուրեմն՝ ի՞նչ նկատի ունես:

— Կան շատ ավելի կարևոր բաներ,— Գեորգին շոյեց մորուքը,— ինչպես, օրինակ, սերը կյանքի հանդեպ:

— Իսկ կա՞ այնպիսի տեղ ուր մարդիկ չեն սիրում կյանքը,— հետաքրքրվեցի ես:

— Ոչ,— վճռական պատասխանեց նա,— բայց այստեղ մարդիկ ոչ միայն սիրում են կյանքը, այլև հարգանքով են մոտենում իրենց տրված կյանքի ժամանակին և շատ ուշադիր են դրա հանդեպ: Կյանքի միջին տևողությունը Շվեյցարիայում ութսուներեք տարի է, և այստեղ են բնակվում Եվրոպայում ամենաշատ հարյուրն անց մարդիկ:

— Եվ ո՞րն է դրա պատճառը:

— Այն, ինչն արդեն ասացի՝ սերն ու միաժամանակ հարգանքը կյանքի հանդեպ: Որովհետև կյանքի հանդեպ հարգանք նշանակում է հարգանք քաղաքացու ու պետության հանդեպ, հարգանք գյուղի ու քաղաքի հանդեպ, հարգանք ծառի ու անտառի հանդեպ: Եվ միայն այդ սիրո և հարգանքի համադրության դեպքում է, որ կարելի է սեփական երկրում ապրել ոչ միայն երկար, այլև՝ երջանիկ:

— Եվ քո կարծիքով դա՞ է Շվեյցարիայի հիմնական առանձնահատկությունը:

— Ոչ միայն,— Գեորգին վառեց հանգած ծխամորճը,— կա նաև մեկ այլ բան. պետության սերն ու հարգանքը հանդեպ ժողովուրդը: Պետությունը սիրում է իր ժողովրդին, հետևաբար և պաշտպանում է, պետությունը հարգում է իր ժողովրդին, հետևաբար և տալիս է լավ ապրելու հնարավորություն:

— Իհարկե, հեշտ է դա անել, երբ պետության հարևաններն են Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ավստրիան և Լիխտենշտեյնը,— հեգնեցի ես:

— Անշուշտ դա կարևոր է,— համաձայնեց Գեորգին,— միայն թե, չէ՞ որ միշտ չի եղել, որ քո թված պետությունները լավ հարևաններ են եղել Շվեյցարիայի համար: Բայց միևնույն է, Շվեյցարիան այն պետությունն է, ուր պատերազմ չի եղել ուղիղ մեկ ու կես դար:

— Որովհետև այն նեյտրալ է եղել:

— Այո, և հիմա էլ է նեյտրալ: Հաշվի առնելով, որ Շվեդիան և Ավստրիան Եվրոպական միության անդամներ են, Շվեյցարիան, այսօրվա դրությամբ, Եվրոպայում միակ նեյտրալ



պետությունն է: Բայցևայնպես պետության նեյտրալ լինելու էությունը ոչ մի կապ չունի պացիֆիզմի հետ: Երկրում գործում է համընդհանուր զինվորական պարտավորություն և շվեյցարական բանակը համարվում է աշխարհում ամենաէֆեկտիվ բանակներից: Գուցե դա՞ է պատճառը, որ այստեղ պատերազմ չի եղել ավելի քան հարյուր հիսուն տարի և ոչ թե այն, որ պետությունը նեյտրալ է:

— Կարծում եմ՝ կան մի քանի հանգամանքներ, որոնք դու հաշվի չես առնում:

— Որո՞նք են այդ հանգամանքները,— հետաքրքրվեց Գեորգին:

— Նախևառաջ հարևան պետությունների քաղաքակրթության մակարդակը: Երբ դու շրջապատված ես հարևաններով, որոնք պատմական անարդարություն են գործել քո հանդեպ, ընդ որում՝ հնարավոր ամենադաժան ձևերով, ու ոչ մի կերպ չեն ուզում ընդունել դա, դու նախևառաջ պետք է վերականգնես այդ արդարությունը, հետո նոր մտածես կյանքի կամ ծառի հանդեպ սիրո, հարգանքի ու նման բաների մասին:

— Ամենևին,— չհամաձայնեց ընկերս,— արդարությունը վերականգնելու համար դու պետք է ուժեղ լինես, իսկ որպեսզի պետությունը ուժեղ լինի նախևառաջ պիտի ապահովի իր քաղաքացու բարեկեցիկ կյանքը, ինչն էլ, իր հերթին, անհնար է, եթե քաղաքացին ինքը հարգանքով չի վերաբերվում այդ կյանքին և, ինչու չէ, իրեն շրջապատող ծառերին: Որովհետև ինչպե՞ս կարող ես դու ուժեղանալ, եթե պիտի ապրես տխուր, աղքատ ու զրկանքներով:

— Բայց չէ՞ որ կարելի է ապրել աղքատ ու զրկանքներով կյանք, եթե այն ծառայեցնում ես պայքարին, որն ուղղված է խաթարված արդարության վերականգնմանը: Մի՞թե բարեկեցությունը վեր է արժանապատվությունից: Եվ, ի վերջո, առանց արդարության վերականգնման՝ մի՞թե հնարավոր է հաջորդ սերունդների նույն այդ բարեկեցությունը:

— Ցանկացած ժողովրդի ու պետության հանդեպ պատմության որևէ փուլում անարդարություն է եղել: Եվ որպեսզի կարողանաս վերականգնել արդարությունը պիտի համբերատար

ու հետևողականորեն ուժեղանաս: Եվ Շվեյցարիան հենց դրա օրինակն է:

— Հուսանք, որ մեր երկրներն էլ երբևէ կդառնան օրինակելի:

— Հուսանք,— կրկնեց Գեորգին, ապա կտրուկ փոխեց խոսակցության թեման,— ի դեպ մենք շուտով մտնում ենք Լուգանո: Ես այնտեղ գիտեմ մի ռեստորան, որը կոչվում է Tratoria Galeria և որտեղ տալիս են լավագույն սաղմոնի թարթարը և ռիսոտոն, որը ես կերել եմ երբևէ: Գինու մասին էլ չեմ խոսում:

Ընկերոջս ակնարկն ինձ դուր եկավ: Վերջին անգամ սնվել էի Պրահայի օդանավակայանում: Ու չնայած Բադ Ռագացում ինձ էր սպասում Մշկոն կամ, ավելի ճիշտ, բոլորովին էլ չէր սպասում, ես կայանեցի «Ջուլիկին» Tratoria Galeria ռեստորանի առջև:

Այն մասին, թե ինչու էր հեռացել Մշկոն Բադ Ռագացից

Մշկոն, սակայն, Բադ Ռագացում չէր: Իհարկե եղել էր այստեղ, բայց նրա այցը շատ կարճ էր տևել: Սակայն ամեն ինչի մասին՝ հերթով:

Ժամը չորսն էր, երբ մենք հասանք Bad Ragaz Grand Hotel հյուրանոց: Սիրուշի քարտով վճարումն այստեղ կատարվել էր վեց ժամ առաջ՝ առավոտյան տասին: Այն կազմել էր երեք հազար եվրո:

Ես մոտեցա ընդունարանի կանգնասեղանին և աշխատակցուհիներից մեկին հարցրի, թե ո՞ր համարում է Մշկոյանը:

— Ցավում եմ, բայց մենք հյուրերի մասին տեղեկություն չենք տրամադրում,— շատ քաղաքավարի մերժեց աղջիկը,— գուցե զանգահարեք և իրենի՞ց հարցնեք:

Ես գրպանիցս հանեցի հեռախոսը, միացրի բարձրախոսն ու զանգահարեցի: Մշկոյանը, բնականաբար, անհասանելի էր:

— Տեսնո՞ւմ եք,— ասացի աշխատակցուհուն,— նրա հեռախոսն անջատված է:

— Լավ, ես կզանգահարեմ նրան ներքին հեռախոսով,— տեղի չտվեց աղջիկը և սկսեց համակարգչի մեջ փնտրել հյուրի սենյակը:

Գեորգին կանգնած էր կողքիս և անհանգիստ շարժումներ էր անում: Ռեստորանում նա խմել էր մեկ շիշ գինի ու հիմա երևի նրա շագանակագեղձը արագ լիցքաթափում ու փոխհատուցում էր պահանջում: Մենք պայմանավորվել էինք, որ Մշկոյին գտնելուց հետո միասին գնալու ենք այստեղի տաք ջրերը:

— Պարոն Մշկոյանը քիչ առաջ հանձնել է համարը և հեռացել,— անսպասելի ավետեց աշխատակցուհին:

— Ինչպե՞ս թե հեռացել է,— զարմացա ես,— չէ՞ որ նա…

— Մի րոպե,— ընդհատեց ինձ աշխատակցուհին,— նրան սպասարկել է Ռոզաբելլան:

Ռոզաբելլան խոշոր աչքերով ու խոշոր կրծքերով մի իտալուհի էր, ով շատ լավ հիշեց Մշկոյին:

— Ձեր ընկերն ասաց, որ շատ դժգոհ է մեր հյուրանոցից, քանի որ Բադ Ռագացում փետրվար ամսին ձյուն չկա:

— Իսկ նա չասաց, թե ո՞ւր է պատրաստվում գնալ,— անհանգիստ հարցրի ես:

— Ոչ,— ժպտաց Ռոզաբելլան,— բայց ասաց, որ պատրաստվում է դիմել Շվեյցարիայի զբոսաշրջության նախարարություն, որ մեզ զրկեն հինգերորդ աստղից:

Bad Ragaz Grand Hotel հյուրանոցին, ուր մեկ օր մնալու արժեքը սկսվում էր վեց հարյուր շվեյցարական ֆրանկից, իհարկե ոչ ոք աստղից չէր զրկի: Միայն թե Մշկոն իսկապես ճիշտ էր. չնայած Բադ Ռագացն ավելի շատ հայտնի էր որպես բնական տաք աղբյուրների, այլ ոչ թե որպես լեռնադահուկային կուրորտ, միևնույն է՝ այստեղ գրեթե ձյուն չկար:

Լավ, ուրեմն ի՞նչ էր տեղի ունեցել: Ես կրկին ստիպված էի գուշակել:

Ցյուրիխից Բադ Ռագաց Մշկոն, ամենայն հավանականությամբ, եկել էր գնացքով կամ տաքսիով, երկու դեպքում էլ վճարելով կանխիկ, որովհետև հյուրանոցում արված վճարումից բացի, այլ վճարման մասին Սիրուշը հաղորդագրություն չեր ստացել: Իսկ հյուրանոցում Մշկոն վճարել էր մոտ երեք հազար եվրո: Հաշվի առնելով, որ մեկ օրվա արժեքը այստեղ սկսվում էր վեց հարյուր ֆրանկից, ինչը մի քիչ է պակաս նույնքան եվրոյից, Մշկոն պատրաստվում էր Բադ Ռագացում անցկացնել հինգ օր: Սակայն, տեղեկանալով, որ առաջիկա օրերին այստեղ ձյուն չի լինելու, Մշկոն փոշմանել էր և հավանաբար որոշել՝ ավելի բարձրանալ Ալպերով, այնտեղ, ուր հաստատ ձյուն կլիներ: Կամ վերադարձել էր Ցյուրիխ: Կամ՝ գնացել գրողի ծոցը:

Վճարած գումարը հյուրանոցը շուտով հետ կփոխանցեր Սիրուշի քարտին, նա հաղորդագրություն կստանար այդ մասին ու անկասկած անմիջապես կզանգահարեր ինձ: Հետո անպայման

կստանար մեկ այլ հաղորդագրության Ալպերից, Ցյուրիխից կամ գրողի ծոցից, ուր Մշկոն կվճարեր ինչ–որ այլ հաշիվ:

Իսկ մինչ այդ կարելի էր մտածել իմ բարեկամ Գեորգիի և ինչու չէ, նաև սեփական շագանակագեղձի մասին ու մի քիչ լողանալ Բադ Ռագացի աշխարհահռչակ տաք ջրերում:

Հետո արդեն, ինչպես ասում են՝ ըստ իրավիճակի:

Տորթի միջի աղջիկը

Մի անգամ Երևանում Մշկոն կազմակերպել էր իր հերթական, ինչպես ինքն էր ասում, «գրանդիոզ» միջոցառումը և այդ նպատակով «փակել» էր կենտրոնում գտնվող հյուրանոցներից մեկի ամբողջ հարկաբաժինը: Հարկաբաժինն այդ ուներ մեկ «նախագահական», մեկ «հարսանեկան», երկու «լյուքս», երեք «կիսալյուքս» և վեց սովորական համար: Մինչդեռ միջոցառման մասնակիցներս ինն էինք՝ Մշկոն, ես, մեր մեկ այլ ընկեր և վեց ուկրաինուհի, ովքեր բոլորովին էլ մեզ հետ չէին:

Խմեցինք ամբողջ օրին, հետո նաև շամպայնը, որ կար այդ հյուրանոցում, հետո անկեղծորեն չեմ հիշում թե ինչ եղավ: Առավոտյան մեր երրորդ ընկերն ու ես Մշկոյի սիրած լոլիկով ձվածեղը պատվիրեցինք ու սկսեցինք փնտրել նրան: Նա պիտի որ քնած լիներ սենյակներից մեկում: «Նախագահական» համարում, ուր մահճակալի լայնությունը ավելի քան երկու հարյուր հիսուն սանտիմետր է և հարսանեկան համարում, ուր երկու հարյուր հիսուն սանտիմետրից մի քիչ պակաս է, Մշկոն չկար: Չկար նաև «լյուքս» և «կիսալյուքս» համարներում, ուր մահճակալների լայնությունը ավելի է երկու հարյուր սանտիմետրից: Մշկոյին գտանք «ստանդարտ» համարներից մեկում, ուր մահճակալի լայնությունը հարյուր ութսուն սանտիմետր է: Բայց նա ամենևին էլ մահճակալին չէր քնած:

Նորմալ հյուրանոցներում սովորաբար սենյակային կահույքի պարտադիր մաս են կազմում աթոռակները, որոնք նախատեսված են նրա համար, որ հյուրերը նստեն դրանց վրա և հագնեն կոշիկները: Այդ աթոռակների լայնությունը կլինի առավելագույնը հիսուն սանտիմետր, և դրանց վրա ոչ մի կերպ հնարավոր չէ պառկելը: Եթե դու, իհարկե, յոգ կամ Մշկոն չես: Որվհետև հենց նման աթոռակին կուչ եկած, քնած գտանք մեր ընկերոջն այդ առավոտյան:

Մշկոյի հետ կապված հայաստանյան ուրիշ զավեշտալի պատմություններ էլ կան, որոնց մասին դեռ անպայման կպատմեմ այս գրքում, բայց այժմ վերադառնանք Շվեյցարիա, որտեղ վերջին անգամ տեսել էին մեր հերոսին:

Երբ Գեորգիի հետ դուրս եկանք տաք ջրերից և մտանք հանդերձարան, առաջին գործով վերցրի հեռախոսս, որ տեսնեմ արդյո՞ք Փղիկից զանգ կամ հաղորդագրություն չկար: Իհարկե կար. մի քանի բաց թողնված զանգ և երկու հաղորդագրություն, որոնցից մեկում նա ասում էր, որ Բադ Ռագացում արված վճարումը վերադարձվել է իր հաշվին, իսկ երկրորդում՝ որ նոր վճարում է կատարվել, այս անգամ՝ Ցերմատում:

— Դե ինչ,— ասաց բուլղար բարեկամս,— ես սիրով կընկերակցեի քեզ ճամփորդելու դեպի Ցերմատ, որովհետև երբեք այդտեղ չեմ եղել, բայց նոր զարգացող եվրոպական պետություններից ժամանած միանգամից երկու մասնակցի բացակայությունը մեր հավաքից, կարծում եմ, ճիշտ չի ընկալվի:

Ես ճանապարհեցի Գեորգիին երկաթուղային կայարան և նավիգատորի վրա հավաքեցի հերթական ուղղության անվանումը: Բադ Ռագաց–Ցերմատ՝ երկու հարյուր հիսուն կիլոմետր և չորս ժամ տասներկու րոպե՝ տեղեկացրեց սարքը: Ուրեմն առաջ: Հարկավոր էր որքան հնարավոր է շուտ տեղ հասնել, այլապես Մշկոն կարող էր այստեղ էլ ինչ–որ բան չհավանել ու գնալ ուրիշ տեղ: Չնայած ձյուն Ցերմատում հաստատ կլիներ, քանի որ այն ծովի մակերևույթից շատ ավելի բարձր էր, քան Բադ Ռագացը: Բայց Մշկոյին ի՞նչ կար, նա կարող էր մեկ այլ պատճառ գտնել:

Նորից զանգահարեցի Սիրուշին, որպեսզի ճշտեմ որոշ մանրամասներ: Հարցրի, թե որքա՞ն և ո՞ր հյուրանոցում է վճարել Մշկոն: Պարզվեց, որ նա վճարել է ընդամենը քսանչորս եվրո՝ ինչ որ Chalet Monte Cristo–ում: Ու քանի որ դա բոլորովին էլ նման չէր կոմսական հաճույքների, ես խնդրեցի մի անգամ էլ նայել հաղորդագրությունը: Ամեն ինչ, սակայն, ճիշտ էր:

Ճանապարհի առաջին հարյուր վաթսուն կիլոմետրն անցնում էր մայրուղու հայելով, և «Ջուլիկը» հաղթահարեց այն մեկ ժամում: Զարմանալի չէր՝ փոքրիկ մեքենայի կապոտի տակ

հարյուր յոթանասուն ձիաուժանոց շարժիչ էր: Առհասարակ մեքենան շատ լավն էր և ես հաճույքով էի վարում այն: Սլանում էի ժամում երկու հարյուր կիլոմետր արագությամբ ու հասկանում որ այս «Ջուլիկը» հիշեցնում էր մյուս Ջուլիկին ոչ միայն նրբագեղության ու ագրեսիվ կեցվածքի զարմանալի համադրությամբ, այլև իր ճկունությամբ ու վայրենի գոռոցներով, երբ կտրուկ սեղմում էի գազի ոտնակը:

Շուտով, սակայն, ճանապարհը շեղվեց մայրուղուց, նեղացավ ու բարձրացավ Ալպերով վեր: Սկսեց ձյուն տեղալ. նախ՝ դանդաղ ու սիրուն, ապա՝ ակտիվ ու առատ, իսկ հետո եղանակը աստիճանաբար խելագարվեց: Դիմապակուց այն կողմ հազիվ էր երևում, մեքենան տեղ–տեղ սահում էր, ու ես արդեն սկսում էի անհանգստանալ, որովհետև չգիտեի՝ անվադողերը ձմեռային են, թե՝ ոչ, երբ մի տարօրինակ բան կատարվեց:

Առջևում ուրվագծվեց մի արգելափակոց: Նախ մտածեցի, թե վճարովի ճանապարհ է սկսվում, հետո որոշեցի, որ շեղվել եմ ուղուց և հասել եմ ինչ որ մասնավոր տարածք, կամ գուցե հասել եմ աշխարհի վերջին. մի խոսքով՝ ինչ ասես մտքովս չանցավ:

Սակայն ի՞նչ էր սա:

Մինչ արգելափակոցին հասնելը տեղադրված էր մի կրպակ, որի մեջ, բարեբախտաբար, մարդ կար: Ես իջեցրի մեքենայի պատուհանը:

— Երեսուն ֆրանկ,— գերմաներենով ասաց մարդը, հետո էլի ինչ–որ բան ավելացրեց, որը հասկանալու համար, սակայն, իմ գերմաներենի իմացությունը չբավականացրեց:

— Կարելի՞ է անգլերեն,— հարցրի:

Բայց մարդը պարզվեց անգլերեն չէր խոսում: Նա գերմաներենով կրկնեց նույնը և հավելեց.

— Շնելլո, շնելլո:

Ի՞նչ արած՝ մտածեցի, շնելլո, ուրեմն՝ շնելլո, վճարեցի և արգելափակոցը բացվեց: Դանդաղ շարժվեցի ու տեսա մի տրակտոր, որը այս ու այն կողմ գնալով՝ մաքրում էր ճանապարհը: Անցա ևս հիսուն մետր, և հասա մի թեքահարթակի, որը բարձրանում էր ուղիղ գնացքի վրա: Մի պահ ինձ թվաց, թե առջևումս տեսիլք է:

Բայց ոչ, դա իսկապես գնացք էր: Մեկը Շվեյցարական Ալպերում շրջագայող այն գնացքներից կամ, եթե կարելի է այդպես ասել՝ լաստագնացքներից, որոնք նախատեսված են դեպի լեռներ տանող ճանապարհները կրճատելու համար: Լեռնային զիգզագներով մեքենան երկու ժամ վարելու փոխարեն՝ բարձրանում ես գնացք, որը քեզ թունելով տեղ է հասցնում կես ժամում: Ահա թե ինչի համար էր երեսուն ֆրանկը:

Բարձրացա թեքահարթակով, բավականչափ առաջացա, ու դեռ չէի հասել շարքով կայանած մյուս մեքենաներին, երբ կիսադատարկ լաստագնացքը շարժվեց և անմիջապես մտավ թունել:

Գնացքն իրենից ներկայացնում էր կիսաբաց վագոններով մի շարժակազմ, որը թվում էր՝ տանում է դեպի երկրի ընդերքը: Որոշակի տարածությունը մեկ՝ թունելում վառվող լույսերը, կարծես դժոխքի ուղեցույցները լինեին, իսկ սրահ թափանցող գնացքի անիվների ականջ ծակող ձայնն ու խոնավության խեղդող հոտը՝ հավերժական տանջանքների նախաբանը: Արդյո՞ք ես երեսուն եվրոյով տոմս էի գնել դեպի դժոխք:

Բայց, ոչ: Կես ժամից գնացքը դուրս եկավ թունելից, կանգնեց, ու քիչ անց դիմացիս մեքենաները շարժվեցին: Ես հետևեցի նրանց, առաջ ընթանալով հասա հակառակ ծայրի թեքահարթակին ու դուրս եկա ճանապարհ:

Միայն թե այն փակ էր: Եթե ներքևում պարզապես ուժեղ ձյուն էր տեղում, ապա այստեղ իսկական ձնաբուք էր: Քամին հավաքում էր ձյունը շրջակա բարձունքներից ու բերում լցնում ուղիղ ճանապարհին: Գրեթե չկար տեսանելիություն, միայն մեքենաների հետևի կարմիր լուսարձակներն էին մի կերպ նշմարվում:

Բացեցի դուռը, իջա ու քայլեցի այդ լույսերի ուղղությամբ: Մի քանի վարորդ հետևեցին իմ օրինակին: Նրանցից մեկը՝ վառ դեղին բաճկոնով մի չափազանց հաղթանդամ տղամարդ, հատկապես վրդովված էր և փորձում էր ինձանից ինչ–որ բան ճշտել: Սակայն ես ոչինչ չէի հասկանում, որովհետև քամին խլացնում էր նրա ձայնը:

Կուտակված մեքենաները տասը–տասներկուսն էին: Ամենաառջևինը՝ փոքրիկ մի «Պեժո», թաղվել էր ձյան մեջ և չէր

կարողանում առաջ շարժվել: Մենք փորձեցինք հրել այն և մեզ դա հաջողվեց՝ հիմնականում դեղին բաճկոնով տղամարդու շնորհիվ: Բայց «Պեժոն», որոշ տարածություն գնալով, կրկին թաղվեց և մեր հետագա փորձերն այն տեղաշարժել՝ անհաջող անցան: Ձյունն այնքան շատ էր, որ հասնում էր մեքենայի բամպերին: Քիչ անց մոտեցավ ինչ–որ մեկը, երևի լաստագնացքի անձնակազմից ու խնդրեց վարորդներին վերադառնալ մեքենաները և սպասել: Դեղին բաճկոնով հաղթանդամ տղամարդը, սակայն, համաձայն չէր. նա ինչ որ բան էր գոռում գերմաներենով՝ քամու հետ կռիվ տալով:

Դե ինչ, սպասել, ուրեմն սպասել: Մեքենայի մեջ կար կես բաք բենզին և ինն ու կես շիշ կոնյակ: Կեսը խմել էր Գեորգին՝ Բադ Ռագացի տաք ջրերում: Բեռնախցիկից հանեցի կիսատ շիշը, ճանապարհին գնած սուրճի թղթե բաժակը, որ դարձրել էի մոխրաման, մաքրեցի ձյունով, լցրեցի կոնյակը և հարմար տեղավորվեցի «Ջուլիկի» գրկում: Իհարկե կվայելեր նաև շվեյցարական շոկոլադը, ու ես չգիտեի, որ այդ հարցն էլ շուտով պիտի լուծվեր:

Դեռ չէի հասցրել խմել առաջին բաժակը, երբ տեսա, թե ինչպես դիմացի ֆուրգոնից իջավ դեղին բաճկոնով տղամարդը, մոտեցավ իմ մեքենային և թակեց պատուհանը: Իջեցրի ապակին ու փորձեցի հասկանալ, թե ինչ է ուզում: Բայց, քանի որ քամին չէր թողնում ոչինչ լսել, հրավիրեցի նրան նստել մեքենան: Նա տեղավորվեց կողքի նստատեղին, իջեցրեց կապիշոնը և սառած ձեռքերն իրար շփելով սկսեց գերմաներեն ինչ որ բան խոսել: Ես խնդրեցի անցնել անգլերենի, բայց նա ասաց.

— Քեյն ինգլիշ:

— Ռուսկի՞,— հետաքրքրվեցի ես,— իլի բոլգրսկի:

Բայց նա չհասկացավ: Ու քանի որ այդքանով սահմանափակվում էր օտար լեզուների իմ իմացությունը, ես նրան կոնյակ առաջարկեցի: Տղամարդը զարմացած նայեց ինձ, մի պահ մտածեց, հետո ասաց.

— Նուր էյն մինուտե:

Ապա իջավ մեքենայից և գնաց դեպի իր ֆուրգոնը: Արդյոք չնեղացրի՞ նրան ՝ անհանգստացա ես: Բայց ոչ: Քիչ անց

տղամարդը վերադարձավ և վերադարձավ ոչ մենակ: Նրա հետ բարձրահասակ մեկն էր, ով, երբ նստեց մեքենայի հետևի նստատեղին, պարզվեց՝ աղջիկ է: Բարեբախտաբար նա խոսում էր անգլերեն:

— Մենք Ձեզ քաղցրավենիք ենք բերել,— ասաց նա՝ ստվարաթղթե տուփի միջից ախորժալի շոկոլադներ հանելով:

— Իսկ բաժակ բերե՞լ եք:

— Իհարկե:

Սկսեցինք խմել, և ես հետաքրքրվեցի, թե ինչո՞ւ է նրա ուղեկիցը այդչափ անհանգիստ և ո՞ւր են գնում նրանք:

— Հասկանո՞ւմ եք, մենք ուշանում ենք ծննդյան տարեդարձից,— բացատրեց աղջիկը,— մենք տանում ենք քաղցրավենիք և հոբելյանական տորթը:

— Այո,— համաձայնեցի ես,— առանց տորթի ինչ ծնունդ:

— Իհարկե,— ժպտաց աղջիկը,— առավել ևս, որ դա սովորական տորթ չէ:

— Այսի՞նքն,— չհասկացա ես:

— Դե,— կմկմաց նա,— այն տորթերից է, որի միջից աղջիկ է դուրս գալիս: Մերկ աղջիկ:

— Իսկ այդ աղջիկն հիմա տորթի մե՞ջ է,— զարմացա ես:

— Ոչ, այդ աղջիկը ես եմ:

Գեորգիի թողած կիսատ շշից բացի, մենք խմեցինք ևս մեկ շիշ, մինչ Շվեյցարիայի Վալե կանտոնի մունիցիպալ ծառայությունները կհոգային ճանապարհների մաքրման գործը:

Այն մասին, թե ինչպես էր Մշկոյի ձին կեղտոտել Ցերմատի կենտրոնում

Ցերմատը համարվում է ոչ միայն շվեյցարական, այլ ամբողջ Ալպերի լավագույն կուրորտներից: Այն Մաթթերհորն լեռան լանջին է՝ Վիսպա գետակի ափին: Ցերմատը հայտնի է նաև իր երկար ճոպանուղիներով ու սահուղիներով՝ այդ թվում էքստրեմալ ոճը նախընտրող դահուկորդների համար: Այստեղ կան նաև մեկուկեսդարյա պատմություն ունեցող հյուրանոցներ և ռեստորաններ:

Այս ամենն, իհարկե, հրաշալի էր, բայց կար մի խնդիր. Ցերմատը հռչակել էր իրեն «ծխից ազատ ավան» և բացառությամբ մունիցիպալ, հրշեջ և շտապօգնության ծառայությունների, ինչպես նաև էլեկտրամեքենաների, այլ տրանսպորտի մուտքն այստեղ արգելված էր: Այդ մասին ավետում էր Ցերմատից յոթ կիլոմետր այս կողմ «Թաշչ» կայարանի մոտ տեղադրված ցուցանակը, որը սակայն ես չտեսա, ինչի հետևանքով ստիպված էի վճարել երեք հարյուր ֆրանկ տուգանք: Բայց այդ մասին հետո:

Երբ հասա «Շալե Մոնթե Քրիստո», գիշերվա երկուսի կողմերն էր: Ընդունարանի աշխատակիցն անմիջապես տեղը բերեց Մշկոյին, սակայն ասաց, որ նա իրենց հյուրանոցում չէ:

— Ձեր ընկերը մի բաժակ վիսկի խմեց բարում և հեռացավ,— պատմեց աշխատակիցը,— նա բողոքեց, որ մեր հյուրանոցում ախոռ չկա իր ձիու համար:

— Ինչպե՞ս թե ձիու,— զարմացա ես:

— Այո, նա ձիով էր:

Փաստորեն քսանչորս եվրոն, որի մասին հաղորդագրություն էր ստացել Սիրուշը, Մշկոն վճարել էր մի բաժակ վիսկիի համար: Բայց ի՞նչ կապ ուներ այստեղ ձին:

Ամեն ինչ, սակայն, պիտի պարզվեր միայն հաջորդ առավոտյան: Իսկ այդ գիշեր ես, բնականաբար, Մշկոյանին չգտա, ասենք՝ նույնիսկ չփնտրեցի էլ: Սենյակ վերցրի մի էժան հյուրանոցում և մեռածի պես քնեցի:

Առավոտյան զանգեցին հյուրանոցի ընդունարանից և ասացին, որ ինձ են հարցնում ինչ–որ ոստիկաններ: Առաջին բանը, որ անցավ մտքովս՝ Մշկոն ինչ–որ բան է արել կամ նրա հետ ինչ–որ բան է եղել: Արագ հագնվեցի և վազեցի ցած: Սակայն պարզվեց՝ խնդիրը կապված էր ոչ թե Մշկոյի, այլ՝ ինձ հետ: Կամ ավելի ստույգ՝ «Ջուլիկի»:

— Ձեռն է մուտքի մոտ կանգնած կարմիր «Ալֆա Ռոմեոն»,— պատշաճ ներկայանալուց և բարևելուց հետո, հարցրեց ոստիկաններից մեկը՝ խոշոր գլխով և ժանգոտ մորուքով մի տղամարդ:

Ու քանի որ ես առաջին անգամ էի տեսնում մորուքով ոստիկան ու, բացի այդ, ոչ սուրճ էի խմել, ոչ էլ՝ լվացվել, հետևաբար դեռ կիսարթուն էի՝ ակամայից ասացի.

— Ջուլիկը:

— Ինչ,— չհասկացավ ոստիկանը:

Ես տրորեցի աչքերս ու շարունակելով չհասկանալ, թե ինչ է կատարվում՝ հարցրի.

— Որտեղ է Մշկոն:

— Ո՞վ,— էլ ավելի զարմացավ մորուքավորը:

Այստեղ միջամտեց երկրորդ ոստիկանը, ով մորուք չուներ, փոխարենը ակնոցով էր:

— Բենզինային շարժիչներով մեքենաների մուտքը Ցերմատ արգելված է,— հայտարարեց նա,— Դուք պետք է տեղափոխեք Ձեր մեքենան «Թաշչ» կայարանի մոտ, այստեղից յոթ կիլոմետր հեռու:

Այստեղ նոր հասկացա, թե ինչն է խնդիրը: Ավելի ճիշտ՝ այնքան էլ լավ չհասկացա:

— Շատ լավ,— ասացի՝ արդեն ավելի հանգիստ,— բայց ես ինչ իմանայի:

— Այնտեղ մեծ ցուցանակ կա,— բացատրեց ակնոցավորը,— բացի այդ, չիմանալը չի ազատում Ձեզ պատասխանատվությունից:

— Պատասխանատվությո՞ւն,— զարմացա ես,— ի՞նչ պատասխանատվություն:

— Դուք պետք է երեք հարյուր ֆրանկ տուգանք վճարեք,— հայտարարեց ոստիկանը՝ պայուսակի միջից ինչ–որ թղթեր հանելով:

«Պատասխանատվությունից» խուսափել ինձ իհարկե չհաջողվեց, և ես ստիպված էի վճարել երեք հարյուր ֆրանկը դիմացի մայթի բանկում: Բայց փողը դեռ մի կողմ, ամենավատն այն էր, որ մնացի առանց ավտոմեքենա և պետք է ոտքով շրջեի փողոցից փողոց ու փնտրեի Մշկոյին: Մշկոյին, ով ձիով էր:

Սակայն ի՞նչ ձիու մասին էր խոսքը և որտեղի՞ց էր ընկերս այն ճարել: Փորձեցի ճշտել ոստիկաններից՝ իբրև փոխհատուցում իմ վճարած տուգանքի:

— Եթե խոսքն այն հարբած տղամարդու մասին է, որը երեկ շրջում էր ձիով, մենք նրան նույնպես տուգանեցինք և առգրավեցինք ձին՝ վերադարձնելով տիրոջը:

— Տուգանեցիք՝ որովհետև նա հարբա՞ծ էր,— հետաքրքրվեցի ես:

— Ոչ, որովհետև նրա ձին կեղտոտել էր քաղաքի կենտրոնում՝ Al Trecolore ռեստորանի մուտքի առջև:

Այլ տեղեկություն Մշկոյի և նրա ձիու մասին ոստիկանները չտրամադրեցին, ու ես ստիպված էի ինքնուրույն փնտրել ընկերոջս: Ոտքով չափեցի Ցերմատը՝ ողջ երկայնքով ու լայնքով, մտա գրեթե բոլոր հյուրանոցներն ու ռեստորանները, իսկ դրանք մի քանի տասնյակ էին, բայց իզուր: Ամենաշատն ինձ անհանգստացնում էր այն, որ որևէ նոր վճարման մասին հաղորդագրություն Սիրուշը չէր ստացել, ուրեմն Մշկոն կամ գիշերել էր ինչ–որ մեկի մոտ, կամ՝ դրսում: Բավականաչափ կանխիկ փող նրա մոտ պիտի որ չլիներ, քանի որ կանխիկացման մասին հաղորդագրություն ևս չէր եղել: Բայց կարող էր լինել այնքան, որ բավականացներ դահուկ քշելուն: Որոշեցի նստել ճոպանուղի և բարձրանալ սահուղիները: Մշկոն կարող էր լինել այնտեղ:

Ինքս վերջին անգամ դահուկ քշել էի դպրոցական տարիքում: Ձմեռները սիրում էի գնալ մեր պապական գյուղը՝ Արագածի լանջին: Քանի որ գյուղը գտնվում էր բարձր լեռնային գոտում,

և տարին առնվազն հինգ ամիս այստեղ ձյուն էր, դպրոցում գործում էր դահուկի խմբակ, որը պարբերաբար ստանում էր դահուկներ: Իհարկե, դրանք ոչ մի աղերս չունեին ժամանակակից դահուկների հետ և ավելի շատ նման էին հատակի փայտի, որը կապում էինք մեր ոտքերին թելով կամ ռեզինով: Բայցևայնպես, ես սովորել էի դրանց շատ լավ տիրապետել ու ինքնամոռաց սահում էի բլուրներում ու ձորակներում: Անցան տարիներ, և հաջորդ անգամ դահուկի վրա պիտի կանգնեի, երբ հասուն մարդ էի ու աղջիկս էլ ութ տարեկան էր: Նրա հետ գնացել էինք Ծաղկաձոր: Դստերս մոտ հասցրել էի պարծենալ դահուկ վարելու հմտություններով և մի բան էլ դեռ ճոխացրել: Վարձույթի սրահից վերցրինք երկու զույգ դահուկ և պատրաստվում էինք նստել ճոպանուղի, երբ մեզ մոտեցավ մի հրահանգիչ և առաջարկեց իր ծառայությունները: Ես, բնականաբար, ուղարկեցի նրան գրողի ծոցը, մենք հագանք դահուկները և նստեցինք ճոպանուղի: Տեղ հասնելուց հետո արդեն դահուկների վրա պիտի իջնեինք ճոպանուղու նստատեղից ու սահելով առաջ շարժվեինք: Դուստրս, որն առաջին անգամ էր կանգնում դահուկների վրա, դա արեց շատ ճիշտ և չափազանց վստահ, մինչդեռ ես առաջ ընթացա մի քանի մետր և փռվեցի ձյան մեջ: Ընդ որում՝ ոտքերս ու դահուկներն այնպես խճճվեցին, որ երկար ժամանակ չէի կարողանում վեր կենալ:

Այստեղ՝ շվեյցարական Ցերմատի ճոպանուղի, հասկանալիորեն, նստեցի առանց դահուկների: Տեսնում էի, թե ինչպես են բոլորը զարմացած նայում ինձ: Ոչ միայն, որ ես առանց դահուկների էի ու համապատասխան համազգեստի, այլ որովհետև հագիս ընդամենը մի բարակ կաշվե բաճկոն էր ու անգամ գլխարկ չունեի: Բանն այն է, որ երբ պատրաստվում էի ճամփորդության, մտքովս էլ չէր անցնում, որ կարող եմ հայտնվել ծովից երկու հազար հինգ հարյուր մետր բարձրության վրա, որտեղ տասնհինգ աստիճան ցուրտ էր:

Ինչևէ, սառած, փայտացած տեղ հասա ու սկսեցի փնտրել Մշկոյին: Շատ ժամանակ պետք չէր, որպեսզի հասկանայի, որ իզուր եմ հասել այստեղ, դեռ մի բան էլ՝ սառել ու փայտացել: Դահուկային համազգեստով, կապուշոններով ու հաստ սև

ակնոցներով այս բազմության մեջ, ոչ թե Մշկոյին, այլև իրեն՝ սատանային հնարավոր չէր լինի ճանաչել:

Վերադարձա Ցերմատ, կոնյակ ուզեցի առաջին իսկ պատահած սրճարանում ու սկսեցի տաքացնել ամբողջովին սառած ոսկորներս: Պետք էր մտածել, թե որտեղ և ինչպես փնտրել Մշկոյին:

Սակայն դրա անհրաժեշտությունը չեղավ. զանգահարեց Սիրուշը և ասաց, որ քիչ առաջ Մշկոն գնացքի տոմս է գնել Ցերմատի երկաթուղային կայարանում:

Ինչո՞ւ եք աղջիկներ բերել, այստեղ աղջիկներ կան

Որքա՜ն նման ու միևնույն ժամանակ որքա՜ն տարբեր են լեռները աշխարհի տարբեր հատվածներում: Եվ որքա՜ն նման ու տարբեր բաներ են տեսել՝ իրենց բարձրունքներից նայելով ներքև:

Տեսել են կյանք ու այդ կյանքի համար կռիվ, տեսել են օջախի ծուխ ու արկերի պայթյուն, տեսել են հողագործ և զինվոր, տեսել են խաղաղություն և պատերազմ:

Որքա՜ն տարբեր են լեռների լանջերին ու ստորոտներին ապրող մարդիկ ու ժողովուրդները: Ստեղծարար ու կործանարար, խաղաղասեր ու ռազմատենչ, կենսախինդ ու արյունարբու:

Ինչպե՞ս որոշ ժողովուրդներ հասան նրան, որ կարողանում են խաղաղ ու երջանիկ ապրել ու արարել իրենց լեռների հայացքի ներքո, իսկ որոշ ժողովուրդների սիրտը դեռ արյուն է ուզում: Ինչո՞ւ որոշ ժողովուրդներ լեռնային աղբյուրներից բխող կենարար ջուրն օգտագործում են կյանքը ծաղկեցնելու համար, իսկ որոշ ժողովուրդներ՝ տիրանալով այդ աղբյուրներին՝ ջուրը խառնում են արյունով: Ինչո՞ւ են որոշ ժողովուրդներ շռայլորեն տալիս իրենց լեռների հավերժությունն ուրիշներին, իսկ որոշ ժողովուրդներ ստիպված են հավերժորեն պաշտպանել իրենց լեռները…

Դժվար է ասել, համենայնդեպս, այսպիսի բաներ էի մտածում, երբ Շվեյցարական Ալպերի ոլորաններով սլանում էի դեպի Ժնև:

Մինչ այդ, Ցերմատում ճշտել էի, որ տոմսը, որը գնել էր Մշկոն, հետևյալ երթուղով էր. Ցերմատ–Վիսպ, Վիսպ–Ժնև, Ժնև–Փարիզ: Երկու կայարանում էլ ուղևորները պիտի փոխեին գնացքը:

Վիսպ կայարան հասա ուշացած: Ժնև ուղևորվող գնացքը շարժվել էր կես ժամ առաջ: Հիմա պետք էր ամեն ինչ անել, որ Ժնև հասնեի ժամանակին ու բռնացնեի ընկերոջս, մինչ նա կնստեր Փարիզի գնացքը: Այլապես ստիպված պիտի լինեի հասնել Փարիզ:

Սակայն ինչո՞ւ էր Մշկոն այդքան շուտ ձանձրացել Շվեյցարական Ալպերից: Չէ՞ որ նրա սիրտը ձյուն էր ուզում, իսկ այստեղ այնքան ձյուն կար, որքան անապատում ավազ: Կամ գուցե մի քիչ պակաս:

Ամեն ինչ կարող էր պատահած լինել: Մշկոն այն կերպարն էր, որ կարող էր մեկ րոպեում հաստատակամ ինչ–որ բան որոշել ու հաջորդ րոպեին նույնքան հաստատակամ փոխել որոշումը:

Մի անգամ երբ նոր էինք սկսել ընկերություն անել Մշկոյի հետ, նա մեզ հրավիրել էր ռեստորան՝ նշելու իր ծննդյան տոնը: Ընդ որում հրավիրել էր կանանց հետ: Նախօրոք խնդրել էր տղամարդկանց՝ գալ ֆրակներով, իսկ կանանց՝ երեկոյան զգեստներով: Տղամարդիկ, իհարկե, ֆրակ չէին հագել, բայց կանայք պահել էին էթիկետը՝ զուգվել–զարդարվել էին, ինչպես հարկն է: Երևանի կենտրոնում գտնվող բարձրակարգ ռեստորանում, որը Մշկոն փակել էր հատուկ մեզ համար, նվագում էր լարային քառյակը, սեղաններին դրված էին թանկարժեք խմիչքներ, խավիար, ծովամթերք և այլ դելիկատեսներ, իրենց հերթին էին սպասում պատվիրված տաք ուտեստները, բայց հոբելյարը չկար: Մենք անհամբեր նայում էինք իրար ու սպասում, թե ով առաջինը կմոտենար սեղաններին: Այնուամենայնիվ, որոշեցինք զանգել Մշկոյին, ճշտելու, թե ինչո՞ւ է նա ուշանում: Հոբելյարն ասաց, որ պլանները փոխվել են՝ բոլորին սպասում է Ջրվեժում: Վայրը, ուր այդպես անակնկալ տեղափոխվել էր ծննդյան միջոցառումը, նոր էր բացվել, և մեկն էր այն վայրերից, որոնց մասին այս գրքում առիթ ունեցել եմ պատմելու: Մշկոն մեզ դիմավորեց լողազգեստով, բնականաբար՝ քեֆն արդեն տեղը տեղին լավ, զարմացած նայեց զուգված– զարդարված մեր կանանց, ում առաջին անգամ էր տեսնում, և ասաց.

— Ինչո՞ւ եք աղջիկներ բերել, այստեղ աղջիկներ կան:

Ժնև հասա ճիշտ ժամանակին, հոգեհան անելով Ջուլիկին, բայց մինչ նավիգատորը քաղաքի նեղլիկ ու ծանրաբեռնված փողոցներով կհասցներ ինձ երկաթուղային կայարան, մինչ կայարանում կգտնեի ճիշտ կառամատույցը, գնացքն արդեն շարժվել էր:

Ես նայեցի չվացուցակին. մինչև Փարիզ այն հասնում էր երեք ժամ հիսուն րոպեում: Մինչդեռ, ըստ նավիգատորի, մեքենայով Փարիզ կարելի էր հասնել հինգ ժամ տասը րոպեում: Եվս մեկ ժամ կպահանջվեր, մինչ խցանումների միջով հասնեի «Գարե դե Լիոն» կայարան, ուր ժամանում էր գնացքը: Ուրեմն ի՞նչ էր ստացվում:

Ստացվում էր, որ Փարիզ Մշկոն կհասներ ինձանից առնվազն երեք ժամ շուտ և Աստված գիտե, թե ուր կգնար կայարանից: Հետևաբար կարելի էր չշտապել: Եվ ընդհանրապես, արժեր արդյո՞ք շարունակել այս անհաջող հետապնդումը, որը, եթե անկեղծ լինեմ, չնայած ինձ դուր էր գալիս, բայց չափազանց թանկ էր նստում վրաս:

Ես զանգահարեցի Երևան՝ Փղիկին ու մանրամասնորեն ներկայացրեցի իրավիճակը:

Փարիզի անունը լսելով նա ուրախացավ:

— Խնդրում եմ, գնա այնտեղ,— ասաց աղերսագին,— հետո մի պահ մտածեց ու շարունակեց,— գո՞ւցե ես էլ գամ: Միասին մենք անպայման կգտնենք Մշկոյանին: Ես Փարիզն ավելի լավ գիտեմ, քան Երևանը:

— Իսկ ի՞նչ երաշխիք, որ նա կմնա Փարիզում,— առարկեցի ես՝ մտքումս պատկերացնելով, թե ինչպես ենք Փղիկի հետ որոնելու Մշկոյին համաշխարհային զբոսաշրջության ու մշակույթի կենտրոնում:

— Վստահ եմ, որ կմնա, նա սիրում է Փարիզը:

— Իսկ կա՞մ մեկը, ով չի սիրում Փարիզը:

Բայց պետք էր ինչ-որ մերժելու ձև գտնել: Եթե Սիրուշը իսկապես ուզում էր գնալ Փարիզ, ապա թող գնար ու ինքն էլ որոներ իրեն հարստահարողին: Վերջ՝ մտածեցի, ես դուրս եմ գալիս խաղից:

— Գիտե՞ս,— ասացի հնարավորինս խեղճ առոգանությամբ,— բանն այն է, որ այս ամենը շատ թանկ է նստում ինձ վրա, իսկ ես այնքան էլ հարուստ մարդ չեմ:

Սակայն պարզվեց մարտավարությունս սխալ էր ընտրված.

— Եթե ինձ վերադարձնես Մշկոյին ու քարտս, ես կփոխհատուցեմ քո բոլոր ծախսերը,— խոստացավ Փղիկը:

Ճամփորդել Եվրոպայում ոչ սեփական հաշվին, գուցե այնքան էլ վատ գաղափար չէր: Միայն թե առանց Փղիկի: Նա, իհարկե, հրաշալի կին էր, ուներ չափազանց բարի աչքեր, բայց, ավելի լավ է՝ մնար Երևանում:

Դե ինչ, արկածները շարունակվում են, առաջ դեպի Ֆրանսիա՝ մտածեցի ես ու փորձեցի հիշել «Մարսելյեզի» երաժշտությունը: Սակայն չհիշեցի և «Մեր հայրենիքը» երգելով ուղղություն վերցրի դեպի Փարիզ:

Ժնև–Փարիզ՝ հինգ հարյուր քառասունմեկ կիլոմետր, որն ըստ նավիգատորի կարելի էր անցնել հինգ ժամ տասը րոպեում: Նավիգատորը երևի լավ չէր ճանաչում «Ջուլիկին»: Բայցևայնպես, արդյո՞ք իմաստ ուներ շտապելը:

Երեկոյան ժամը յոթն էր: Մշկոն Փարիզում կլիներ երեք ու կես ժամից, այսինքն՝ տասն անց կես: Մինչ զվարճանքներին ու հաճույքներին տրվելը՝ նա պետք է, որ նախ տեղավորվեր հյուրանոցում, բնականաբար՝ հինգ աստղանի: Թե ի՞նչ հյուրանոցում՝ պարզ կդառնար հաղորդագրությունից, որը կստանար Սիրուշը: Հետագա ժամանակացույցը ըստ ամենայնի կլիներ այսպիսին. տասնմեկ զրո–զրո՝ ընթրիք ոստրեներով որևէ բարձրակարգ ռեստորանում, տասներկու զրո–զրո՝ այցելություն կաբարե, չորս զրո–զրո՝ վերադարձ հյուրանոց՝ առնվազն երկու պարուհու հետ, վեց զրո–զրո՝ քուն: Հենց այդտեղ էլ կարելի էր գտնել նրան առավոտյան, ավելի ճիշտ՝ կեսօրին, որովհետև, խելահեղ գիշերվանից հետո, ավելի վաղ՝ հազիվ թե նա արթնանար:

Հետևաբար կարելի էր գիշերել ճանապարհին ինչ-որ տեղ, արթնանալ առավոտյան ժամը ութին և կեսօրին հասնել Փարիզ: Եվ, ի վերջո, մարդավարի սնվել, չէ՞ որ ես էլ մարդ էի ու ես էլ էի սիրում ոստրեներ:

Ու հավանաբար այդպես էլ կվարվեի, եթե Շվեյցարիա–Ֆրանսիա սահմանը հատելուց հետո չհիշեի նկարիչ ընկերոջս՝ Զավոյին, որը բնակվում էր ճիշտ իմ ճանապարհին ընկած Մոնթրեվել–էն–Բրեսսե ավանում:

Նկարիչ Զավոյի հայրենիքն ու այծերը

Զավոն Ֆրանսիա էր տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել այստեղ մի քանի տարի առաջ: Եվ Զավոն մեկն էր իմ ճանաչած այն հազվադեպ մարդկանցից, ում մասին երբեք չէիր մտածի, որ նա կարող է արտագաղթել հայրենիքից: Միթե այդպես լինում է:

Միթե այդպես լինում է, որ ապրես ողջ կյանքդ արմատներիդ կառչած ու մի օր քեզ թվա, թե դրանք փտել են ու անկարող են այլևս քեզ ամուր պահել հողիդ վրա: Ու թողնես, որ քամին քեզ սերմնացուի պես քշի տանի դեպի ուրիշ հողեր: Կամ գուցե չթողնես, այլ պարզապես չկարողանաս ընդդիմանալ: Միթե այդպես լինում է:

Լինում է, եթե դու ծառ ես:

Ոչինչ, ծառն էլ Աստծո ստեղծագործություն է, և նկարիչ ընկերս ինձանից չի նեղանա: Չի նեղանա, եթե ասեմ, որ մարդն, իր արմատներից կտրվելով, անշուշտ կարող է մնալ լավ մարդ, անգամ դառնալ ավելի լավը, ապրել ավելի լավ, նկարել ավելի լավ, բայց ինչ կլինի հողի հետ: Ինչ է լինում այսօր մեր հողի հետ, երբ Զավոյի պես մարդիկ կտրվում են նրանից ու հեռանում:

Այստեղ՝ Մոնթրեվել–էն–Բրեսսե ավանում, որտեղ ապրում ու ստեղծագործում է Զավոն՝ վերջին մի քանի տարիներին, կարծես կյանքը հեքիաթ լինի: Եվ գուցե հենց այդպես էլ կա: Տասնհինգերորդ դարում կառուցված տներ՝ շրջապատված երկու հարյուր տարեկան կաղնիներով, չքնաղ մարգագետիններ ու լճակներ և համատարած լռություն:

Մենք երկար քայլում ենք գյուղով՝ չհամարձակվելով խախտել այդ լռությունը, հետո Զավոն հարցնում է:

— Երբ ես վերջին անգամ եղել Գյումրիում:

— Վերջերս:



— Պատմիր մի քիչ:

Սակայն ինչ պատմեմ: Եթե պատմեմ, ապա պիտի ասեմ, որ Գյումրվա հեքիաթը, եթե չի էլ ավարտվել, ապա չի ավարտվել այն հազվադեպ գյումրեցիների շնորհիվ, ովքեր համառորեն չեն ուզում կտրվել իրենց արմատներից: Երաժիշտ կամ դարբին, դերասան կամ ուսուցիչ, առևտրական կամ վարսավիր, ովքեր, գուցե, վերջին հերոսներն են Գյումրվա հեքիաթի: Սակայն ինչ կլինի, եթե նրանք էլ հեռանան: Հեռանան, հաստատվեն, ինչ–որ Մոնթրեվել–էն–Բրեսսեում ու գուցե դառնան ավելի լավ երաժիշտ, առևտրական կամ վարսավիր: Ինչ կլինի Գյումրվա հեքիաթի հետ: Մինչ այդ կամ դրանից հետո, գուցե վերանորոգվեն քաղաքի փողոցները, վերականգնվեն հին տները, կառուցվեն նորերը: Բայց ո՞ւմ է պետք այդ ամենը, երբ հեռանում են հեքիաթի հերոսները:

Այնուամենայնիվ չեմ ասում այս ամենն ընկերոջս, ոչ թե նրա համար, որ նա կնեղանա, այլ որովհետև, համոզված եմ, նա կտխրի և կհուզվի:

— Իսկ դու տեսե՞լ ես իմ այծերին,— հարցնում է Զավոն,— և իմ նոր նկարները:

Այստեղ՝ հեքիաթային Մոնթրեվել–էն–Բրեսսեում Զավոն այծ է պահում ու նկարում: Այծերը թվով տասներկուսն են, նույնքան կտավ է նկարում ընկերս ամեն ամիս:

Մենք միասին գինի ենք խմում, ուտում այծի պանիր, նա հումորներ է անում՝ հիշելով գյումրվա պատմություններն ու մեր ընդհանուր ընկերներին, բայց ես տեսնում եմ նրա թախիծը:

Հիասթափությունը վատ բան է, հուսալքությունը՝ սարսափելի: Վստահ եմ՝ նախ առաջինը, ապա երկրորդն են պատճառ եղել, որ նկարիչ Զավոն հեռանա հայրենի Գյումրիից ու գա, ապրի այստեղ՝ ֆրանսիական Մոնթրեվել–էն–Բրեսսեում:

Թե ինչից է նա աստիճանաբար հիասթափվել, հետո վերջնականապես հուսալքվել, ես շատ լավ գիտեմ:

Դեռևս հազար ինը հարյուր ութսունականներին, երբ Զավոյի հայրենիքը դեռ չէր էլ սկսել իր ընթացքը դեպի անկախություն, նկարիչ ընկերս մեկն էր այն քչերից, ով հավատում էր դրան և պայքարում էր դրա համար: Հետո՝ հազար ինը հարյուր

ինսունականներին մեկն էր այն քչերից, ով հասկանում էր, որ այլևս անկախ իր հայրենիքը սխալ ուղղությամբ է գնում: Ու պայքարում էր նոր իշխանությունների դեմ: Իսկ արդեն երկու հազարականներին մեկն էր այն քչերից, ով հասկանում էր, որ հայրենիքը թաղվում է ճահճի մեջ ու փորձում էր չթողնել դա: Երկու հազար տասականներին արդեն ոչին չեր հասկանում և մեկն էր այն քչերից, ով միևնույնն է, իրավունք չուներ հեռանալու:

— Երբեմն ամեն ինչ անիմաստ է դառնում– ասում է Զավոն՝ կարծես կարդալով մտքերս:

Երբեմն ամեն ինչ անիմաստ է դառնում: Ես հասկանում եմ ընկերոջս: Թեպետ համաձայն չեմ նրա հետ: Ես գիտեմ, որ նա գաղափարական մարդ է՝ արդարության մարտիկ: Գաղափարական մարդիկ քիչ են ամենուրեք: Նկարիչ, ուսուցիչ, զինվորական կամ դարբին՝ ինչ է նրանց ասածը. մարդը կարող է ապրել արժանապատվորեն միայն այն ժամանակ, երբ ժողովուրդն է ապրում արժանապատվորեն: Սակայն նրանց այս ասածն հասկացողները քիչ են: Ու քանի որ քիչ են, երբեմն լինում է այնպես, որ գաղափարական մարդը դառնում է գաղափարի մարտիկ: Երբ նա տեսնում է, որ ժողովուրդը գլուխ է խոնարհում արտաքին և ներքին անարդարությունների դեմ, ընդդիմանում է դրան ու փորձում ժողովրդին հանել սխալ ընթացքից:

Այստեղ, ֆրանսիական Մոնթրեվել–էն–Բրեսսեում հասարակությունն ապրում է արժանապատվորեն: Ինչ որ ժամանակ առաջ գաղափարական մարդիկ պայքարել են ներքին անարդարությունների դեմ և հասել արժանապատիվ կյանքի այս գյուղում և ողջ երկրում:

Նկարիչ Զավոյի իրական հայրենիքում գաղափարական մարդիկ ստիպված են պայքարել ոչ միայն ներքին, այլև առավել արտաքին անարդարությունների դեմ: Այդ պայքարն, իհարկե, շատ ավելի բարդ է: Եվ, ավա՜ղ, երբեմն հասցնում է ոչ միայն հիասթափության, այլև՝ հուսալքության:

Երբեմն ամեն ինչ անիմաստ է դառնում: Ես հասկանում եմ ընկերոջս, բայց համաձայն չեմ նրա հետ: Գուցե մի օր համաձայն լինե՞մ:

Թե ինչպես Մշկոն տասը հազար դոլար տվեց ակորդեոնահար ծերուկին

Փարիզ հասա, ինչպես և նախատեսել էի, կեսօրին: Մշկոյի գտնվելու վայրի մասին, սակայն, տեղեկություն չկար: Սիրուշը չէր ստացել և ոչ մի հաղորդագրություն:

Ինչ–որ բան այն չէր: Մշկոյի անհետանալուց անցել էր մի քանի օր: Այս ընթացքում նա Սիրուշի քարտը գործածել էր հինգ անգամ: Առաջինը՝ Երևանի Հյուսիսային պողոտայում, երբ բանկոմատից հանել էր հազար եվրոյին համարժեք դրամ: Երկրորդը, երբ գնել էր Երևան–Մոսկվա–Ցյուրիխ օդանավի տոմսը՝ վճարելով երեք հարյուր եվրո: Երրորդը, երբ Ցերմատում քսանչորս եվրո էր ծախսել մեկ բաժակ վիսկիի վրա: Եվ չորրորդը, երբ նույն Ցերմատում գնել էր Փարիզ մեկնող գնացքի տոմս ու վճարել երկու հարյուր եվրո: Մեկ անգամ էլ նա վճարել էր Բադ Ռագացի հյուրանոցում, սակայն դա կարելի է չհաշվել, որովհետև գումարը վերադարձվել էր Սիրուշի հաշվին: Այսինքն՝ մեր բարեկամն ընդհանուր ծախսել էր հազար հինգ հարյուր քսանչորս եվրո: Գումարած այն տուգանքը, որը նա վճարել էր իր ձիու փոխարեն: Իսկապես ինչ–որ բան այն չէր:

Եթե անգամ ընդունենք, որ այն կանխիկ գումարը, որը նա հանել էր Երևանում, հենց այնտեղ էլ չէր ծախսվել ամբողջությամբ, միևնույն է՝ այն շատ քիչ էր երկու օր Շվեյցարիայում և մեկ օր Փարիզում անցկացնելու համար: Իհարկե, նկատի ունենալով Մշկոյի թաքերի լայնությունը:

Ուրեմն, ինչ էր ստացվում: Կամ Մշկոն խիստ խնայողաբար էր ծախսում «հարսնացուի» փողերը, կամ գտել էր ինչ–որ մեկին, ով վճարում էր իր փոխարեն: Առաջին տարբերակը կարելի էր բացառել: Այսինքն, ստացվում էր, որ Մշկոն հանդիպել էր ինչ–որ մեկին, ով շռայլորեն հյուրասիրում էր նրան: Այլապես որտեղ էր նա գիշերել այս երկու օրերին և ինչպե՞ս էր սնվել: Եվ ամենակարևորը՝ ո՞ւմ հաշվին էր խմել:

Այս հարցերի պատասխանները ես չունեի: Եվ կրկին ստիպված էի ենթադրություններ անել: Ամենահավանական տարբերակն այն էր, որ Մշկոն Ցերմատում հանդիպել էր մեծահարուստ մի այրու, ով իր ձմեռային արձակուրդների վերջին օրն էր անցկացնում Շվեյցարական Ալպերում: Այրին նրան ընթրիք էր հյուրասիրել, գիշերն անցկացրել էին նրա համարում, ապա հրավիրել էր նորաթուխ կավալերին Փարիզ: Մեկնել էին միևնույն գնացքով և միայն այստեղ էր Մշկոն վճարել տոմսերի համար: Փարիզում արդեն տեղավորվել էին այրու տանը, որտեղ և հիմա քնած էր ընկերս:

Ուղիղ երկու ժամից իմ ենթադրությունները հաստատվեցին: Զանգահարեց Սիրուշը և ասաց, որ հենց նոր իր քարտով վճարում էր արվել ինչ–որ Tiffany & Co խանութում: Եվ, ի՞նչ եք կարծում՝ որքա՞ն: Յոթ հազար հինգ հարյուր եվրո:

Ես արդեն տեղավորվել էի հյուրանոցում և պատրաստվում էի մի քիչ քնել նախորդ անքուն գիշերից հետո: Վեր կացա, և համացանցում փնտրեցի տեղեկություն Tiffany & Co խանութի մասին: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ խանութ էր դա: Դե իհարկե՝ ոսկյա և ադամանդե զարդերի:

Մի ամառային երեկո Մշկոյի հետ խմում էինք Երևանի բացօթյա սրճարաններից մեկում, որտեղ կենդանի երաժշտություն կար: Ամսվա վերջին օրն էր, և Մշկոն հենց նոր էր բանկից ստացել եղբոր ուղարկած գումարը՝ տասը հազար դոլար, որը պետք է օգտագործեր ամսվա ընթացքում կուտակած պարտքերը փակելու համար: Ընկերս պատվիրել էր իր սիրելի ֆրանսիական օղին, մենք անցել էինք արդեն երկրորդ շշին, երբ բեմ բարձրացավ մի գեղեցկուհի: Նա սկսեց երգել Սինատրայի I love you baby երգը, ընդ որում՝ անտաղանդ: Մշկոյի համար, սակայն, դա կարևոր չէր: Նա կանչեց մատուցողին և ականջին ինչ–որ բան ասաց: Ընդմիջմանը երգչուհին մոտեցավ մեր սեղանին ու նստեց Մշկոյի կողքին: Քիչ անց նրանք արդեն գրկախառնված էին: I love you baby՝ վանկարկում էր ընկերս և համբուրում երգչուհուն: Հետո նա կտրուկ վեր կացավ և դուրս եկավ սրճարանից:

Հարևանությամբ կային ծաղկի, պատրաստի հագուստի և ոսկյա զարդերի խանութներ: Ես աղոտ հույսեր էի փայփայում, որ ընկերս կսահմանափակվի ծաղկով: Իհարկե այդպես չեղավ. որոշ ժամանակ անց նա վերադարձավ՝ ձեռքին մուգ կարմիր թավշյա մի տուփ: Տուփի մեջ ոսկյա վզնոց էր, որի վրա շարքով փայլում էին փոքրիկ ադամանդները: Թե ինչ կատարվեց երգչուհու հետ՝ հեշտ չէ նկարագրելը, նա երկար ժամանակ կորցրեց խոսելու՝ հետևաբար նաև երգելու ունակությունը: Ընդմիջումից հետո նա այլևս բեմ չվերադարձավ, փոխարենը համաձայնեց Մշկոյի հետ գնալ մի տեղ՝ երեկոն շարունակելու: Երբ մատուցողը բերեց մեր հաշիվը, Մշկոն սեղմեց ոտքս: Դա նշանակում էր, որ նա ծախսել էր մոտն եղած ողջ գումարը, և հաշիվը պիտի փակեի ես: Բայց դա դեռ ոչինչ, գլխավորն առջևում էր, երբ պիտի դուրս գայինք սրճարանից և քայլեինք դեպի քիչ այն կողմ կայանած իմ մեքենան: Ճանապարհին մի ծերուկ ակորդեոն էր նվագում: Սիրուն ու տխուր մի մեղեդի, որը շատ ծանոթ էր թվում: Ծերուկն ամբողջովին տրվել էր ակորդեոնին ու նույնիսկ չէր էլ նայում շուրջը: Նրա առջև դրված էր գործիքի պատյանը, որի մեջ անցորդները մետաղադրամ էին նետում: Մշկոն կանգնեց ու մի պահ քարացավ: Կողքից նայողին կթվար, որ նա երաժշտությունն էր ըմբռնում: Բայց ոչ, նա սպասեց, մինչ ծերուկը դադար կտար, մոտեցավ ու հարցրեց.

— Աշոտ քեռի, Դո՞ւք եք:

Ակորդեոնահար ծերուկը գլխով դրական շարժում արեց:

— Դուք ինձ չե՞ք հիշում,— հարցրեց Մշկոն:

Աշոտ քեռին այս անգամ բացասական շարժում արեց:

— Դուք հանգուցյալ հորեղբորս ընկերն էիք, ես Ձեզ տեսել եմ նրա տանը:

Չգիտեմ, հիշե՞ց ծերուկը Մշկոյին, ճանաչո՞ւմ էր նրա հորեղբորը, թե ոչ, բայց նրա բախտն այդ օրը այնպես բերեց, որ կարող էր այլևս մինչև կյանքի վերջ չնվագել փողոցներում:

Մշկոն նախ պրպտեց գրպանները, այնտեղ բնականաբար փող չգտավ, հետո մոտեցավ երգչուհուն ու գրկեց նրան: Երգչուհին նույնպես գրկեց Մշկոյին, մտածելով, որ նա հուզված է: Ընկերս իհարկե հուզված էր, բայց գրկելու պատճառն ուրիշ էր: Նա

ճարպկորեն հանեց գեղեցկուհու վզից իր իսկ նվիրած շղթան, դրեց այն ծերուկի ակորդեոնի պատյանի մեջ և մինչ երգչուհին կհասցներ ձայն հանել, ասաց.

— Գնացինք, ես քեզ վաղն ուրիշը կառնեմ:

Ուրիշ շղթա հաջորդ օրը Մշկոն իհարկե չառավ, բայց ժամանակն է պարզել, թե ի՞նչ էր առել նա Փարիզում, ո՞ւմ համար և ինչո՞ւ:

Tiffany & Co խանութը գտնվում էր Լուվրից մի քանի հարյուր մետր հեռավորությամբ: Պետք է ասել, որ Մշկոն զարմանալիորեն իրեն չափազանց համեստ էր պահել: Ամենայն հավանականությամբ, երբ նա այստեղից զարդ էր գնել, բավականաչափ խմած չէր եղել: Այստեղ իհարկե կային զարդեր, որոնք յոթ հազար հինգ հարյուր եվրոյից էժան արժեին, բայց դրանք շատ քիչ էին:

Խանութում, դժբախտաբար, Մշկոյին չհիշեցին կամ չուզեցին հիշել, և ես չկարողացա ճշտել, թե հատկապես ի՞նչ էր նա գնել: Բայց ամեն դեպքում համոզված էի, որ նրա այստեղ գտնվելու իմ ենթադրած սցենարը մեծամասամբ համապատասխանում էր իրականությանը:

Ցերեկվա ժամը երեքն էր, օրն՝ ուրբաթ. ես հիշում էի, որ ուրբաթ օրերին Լուվրն աշխատում էր մինչև ուշ երեկո: Դե ի՞նչ, կարելի էր մտնել թանգարան ու շրջել այնտեղ մինչև փակվելը: Կամ մինչև նոր ազդակ կգար Մշկոյից:

Արժեքներն ու արժեքները

Բարեբախտաբար հերթը մեծ չէր: Ես կանգնել էի մի քանի չինացիների արանքում ու մտածում էի տարբեր բաների մասին: Ասենք՝ թե որքան զարմանալի բան է աշխարհը:

Հավանաբար այստեղից են սնուցվել համաշխարհային քաղաքակրթության երակները՝ Լյուդովիկոս չգիտեմ որերորդի ժամանակներից, գուցե դրանից առաջ կամ հետո: Այստեղ են իրենց հիմնական կերպը ստացել ժողովրդավարությունը, տոլերանտ հասարակությունը, խոսքի ազատությունը: Այսինքն՝ եվրոպական արժեքները:

Արդյո՞ք վատ բաներ են դրանք: Արդյո՞ք վատ է, երբ ժողովուրդն ինքն է որոշում ինչպես ապրել՝ազատ կամարտահայտության միջոցով ընտրելով նրանց, ովքեր օրենքներ կընդունեն ու կյանքի կկոչեն դրանք: Արդյո՞ք վատ է, երբ հասարակության տարբեր հատվածներ, եթե անգամ տարբեր կերպ են մտածում տարբեր բաների մասին՝ չեն փաթաթում իրենց կարծիքը միմյանց վզին ու՝ հանդուրժողաբար ապրում են կողք կողքի: Արդյո՞ք վատ է, երբ մարդը կարող է խոսել, արտահայտել կարծիքը, համաձայնել կամ չհամաձայնել այլոց կարծիքի հետ, գովել կամ քննադատել և դա անել ազատորեն, առանց վախենալու, որ իրեն կպատժեն դրա համար:

Իսկ ի՞նչ են շատերը հասկանում՝ եվրոպական արժեքներ ասելով:

Ահավասիկ՝ ինձանից ու չինացիներից քիչ այն կողմ, հերթի մեջ կանգնած են երկու ֆրանսիացի աղջիկ, ում տասնութ տարին հավանաբար նոր է լրացել և ովքեր մի քանի օր առաջ, կյանքում առաջին անգամ, մասնակցել են ընտրությունների և իրենց ձայնը տվել նախընտրած թեկնածուին: Սրանով սահմանափակվել է նրանց մասնակցությունը Ֆրանսիայի քաղաքական կյանքին

մինչև հաջորդ ընտրությունները, որոնց ժամանակ նրանք կլինեն քսաներեք տարեկան, կրկին կմասնակցեն և կրկին կքվեարկեն նույն, կամ այս անգամ գուցե ուրիշ թեկնածուի օգտին: Այս աղջիկները գիտեն, որ իրենց և հասարակության մասնակցությունը պետության քաղաքական կյանքին պիտի լինի միայն ընտրությունների ժամանակ, մնացած ընթանցքում մարդիկ պիտի զբաղվեն ոչ թե քաղաքականությամբ, այլ՝ իրենց գործով: Այս աղջինկերը պիտի սովորեն համալսարանում կամ աշխատեն ինչ–որ կարի ֆաբրիկայում՝ օրենքների ընդունումը և պետության կառավարումը թողնելով նրանց, ում ընտրել են: Այս աղջիկները գիտեն, որ սա է ժողովրդավարությունը: Մինչդեռ շատ հասարակություններում մարդիկ իրենց հիմնական գործը թողած պերմանենտ մասնակիցն են քաղաքական գործընթացների ու քիչ է մնում մասնակիցը լինեն օրենքների ընդունմանն ու պետության կառավարմանը: Եվ նրանք համոզված են, որ դա է ժողովրդավարությունը:

Ո՞րն է այս երկուսից իրական արժեքը:

Եվ կամ ահավասիկ՝ ինձանից ու չինացիներից քիչ այն կողմ, հերթի մեջ գրկախառնված կանգնած են երկու տղամարդ ու քիչ է մնում համբուրվեն: Իմ հայրենիքում շատերին թվում է, թե սա է եվրոպական արժեքը: Մինչդեռ ես տեսնում եմ, որ այստեղ նրանց վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնում: Ինչպե՞ս կարելի է արժեքի վրա ուշադրություն չդարձնել:

Եվ կամ ահա՝ ինձանից ու չինացիներից քիչ այն կողմ կանգնած է մեկ այլ՝ վստահաբար սովորական կողմնորոշման տղամարդ, ում ձեռքին Le Monde թերթն է, որի առաջին էջին երևում է Նիկոլյա Սարկոզիի նկարը: «Փարիզի դատախազը հայտնել է Ֆրանսիայի նախկին նախագահի դեմ հարուցված քրեական գործի մասին: Այն հարուցվել է նախընտրական արշավի անօրինական ֆինանսավորման մեջ Սարկոզիի մասնակցության կասկածանքով: Ըստ դատախազության՝ նախկին նախագահի կողմից ընտրարշավի ընթացքում ծախսվել է երկու անգամ ավելի շատ գումար, քան նախատեսված է օրենքով»՝ գրված է նկարի տակ: Ֆրանսիական այս Le Monde թերթի, ինչպես նաև տասնյակ այլ թերթերի առաջին, երկրորդ և բոլոր մյուս էջերում կան բազմաթիվ քննադատական հոդվածներ Ֆրանսիայի օրվա և նախկին

իշխանությունների, օրվա և նախկին ընդդիմության վերաբերյալ: Կան բազմաթիվ ռեպորտաժներ, որտեղ ի ցույց են դրվում քաղաքական իշխանությունների, օրենսդիր մարմնի, դատական իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թե՛ ձեռքբերումները, թե՛ թերացումներն ու ձախողումները: Այս թերթերի ամենակարևոր առանձնահատկությունները, սակայն, այլ են. առաջինը՝ դրանք հիմնվում են բացառապես փաստերի վրա և երկրորդը՝ դրանք չեն վերահսկվում իշխանությունների կողմից: Այստեղ, Ֆրանսիայում կարծում են, որ սա է խոսքի ազատությունը: Կան երկրներ սակայն, որոնց շարքում է, ավա՜ղ, նաև իմ երկիրը, ուր խոսքի ազատությունն այլ կերպ է ընկալվում. առաջին՝ կարելի հրապարակել ի՞նչ մտքովդ անցնի՝ թքած փաստերի վրա և երկրորդ՝ կարող են լինել լրատվամիջոցներ, որոնք վերահսկվում են իշխանությունների կողմից և կարող են լինել լրատվամիջոցներ, որոնք չեն վերահսկվում իշխանությունների կողմից: Ո՞ր դեպքում է խոսքի ազատությունը արժեք և ո՞ր դեպքում՝ ոչ:

Եվրոպական արժեքները՝ լավ կամ վատ, ափսոս են: Համաձայն ենք, թե համաձայն չենք դրանց հետ՝ հանգիստ թողնենք դրանք, որովհետև հաճախ մենք անում ենք այնպես, որ այդ արժեքները կորցնեն իրենց արժեքը, եթե անգամ չունեն այն:

Սակայն կա նաև մյուս ավելի վտանգավոր պահը: Երբ «եվրոպական արժեքները» ընդօրինակվում են և ներմուծվում այնտեղ, ուր դեռ նոր է հասունանում դրանց պահանջը կամ դեռ ընդհանրապես չի էլ սկսել հասունանալ, որովհետև այդտեղ շատ ավելի արդիական և կարևոր խնդիրներ կան:

Առհասարկ, ճի՞շտ է արդյոք որևէ բան ընդօրինակելը առավել ևս՝ առանց հարմարեցնելու այն քո տեսակին ու ժամանակին: Թե՞ յուրաքանչյուր արժեք այդպիսին է այնտեղ, ուր այն ձևավորվել է ու էություն ստացել:

— Խնդրում եմ շարժվեք,— ասում է չինացին՝ թեթևակի ժպտալով ու թեթևակի հրելով ինձ:

Ու քանի որ իմ այս մտորումների հետ նա և իր ազգակիցները ոչ մի կապ չունեն, ու ինքս էլ ոչ մի պատկերացում չունեմ չինական արժեքների մասին, ես չեմ նեղանում ու ժպտում եմ ի պատասխան:

-

Այն մասին, թե ինչ է հարկավոր լավ լոլիկով ծվածեղ պատրաստելու համար

Մշկոյից հերթական ազդակը ստացվեց հաջորդ առավոտյան: Փարիզի ժամանակով ժամը իններին, երբ ես խորը քնած էի հյուրանոցի իմ համարում ու, ճիշտն ասած, պատրաստվում էի դեռ երկար քնել, որովհետև նախորդ երեկո տեղը տեղին խմել էի, զանգահարեց Սիրուշը:

— Ես գիտեմ, թե մոտավորապես որտեղ է Մշկոն,— ասաց նա:

— Ես նույնպես գիտեմ, թե մոտավորապես որտեղ է նա:

— Ինչպե՞ս թե,— զարմացավ նա,— ուրեմն ինչո՞ւ չես ասում:

— Մշկոն մոտավորապես Փարիզում է, կամ մոտավորապես Ֆրանսիայում, կամ մոտավորապես Եվրոպայում, կամ մոտավորապես Երկիր մոլորակի վրա:

— Չէ, ես լուրջ եմ ասում,— հանգստացավ Սիրուշը,— ես գիտեմ, թե որ փողոցում է նա, ու դու պիտի հենց հիմա գնաս այնտեղ:

Պետք է ասեմ, որ այստեղ ես զայրացա: Կարծես թե Փղիկն անցնում էր սահմանները: Նա արդեն սկսել էր ինձ կարգադրել, կարծես ես մասնավոր խուզարկու լինեի, ում ինքը վարձել էր: Ու նաև՝ զգացի, որ գլուխս ցավում է, բայց դրանում Սիրուշը մեղավոր չէր:

— Հենց հիմա ես պատրաստվում եմ շարունակել քունս, կզանգեմ երբ արթնանամ,— ասացի ու անջատեցի հեռախոսը:

Բայց նրանից պրծնելն այդքան հեշտ չէր: Սիրուշը նորից զանգեց և այս անգամ, խոսեց բոլորովին ուրիշ տոնով:

— Խնդրում եմ, մի զայրացիր, դու չես պատկերացնում իմ վիճակը:

Ու ես որոշեցի չզայրանալ ու պատկերացնել նրա վիճակը:

Պարզվեց, որ Մշկոն ժամը իննին վեց եվրոյի առևտուր է արել մի խանութում, որը գտնվում է Փարիզի Բուժիվալ արվարձանում: Այստեղ հավասարապես կարևոր էին թե՛ ժամը, թե՛ գումարի չափը, թե՛ վայրը: Եվ այստեղ էր, որ ի հայտ եկան Փղիկի դեդուկտիվ ընդունակությունները:

— Ի՞նչ կարող էր գնել Մշկոն առավոտյան ժամը իննին՝ ծախսելով ընդամենը վեց եվրո,— հարցրեց Սիրուշը:

— Օրինակ՝ զուգարանի թուղթ:

Բայց Սիրուշը լուրջ էր տրամադրված.

— Ինձ համար դա ավելի քան պարզ է,— շարունակեց նա՝ ուշադրություն չդարձնելով իմ ասածին,— երբ Մշկոն խմում է նախորդ օրը, առավոտյան նրա սիրտը լոլիկով ձվածեղ է ուզում: Դա պարզապես օրենք է:

— Անկեղծ ասած, իմ սիրտն էլ հիմա չէր հրաժարվի լոլիկով ձվածեղից,— կրկին կատակեցի ես:

— Խնդրում եմ լսիր մինչև վերջ,— համառեց Սիրուշը,— եթե նա գնում է խանութ՝ ձու ու լոլիկ առնելու, նշանակում է՝ ինքն էլ պիտի պատրաստի ձվածեղը, ինչն էլ նշանակում է, որ նա հյուրանոցում չէ: Մշկոյին պետք է փնտրել խանութի հարևանությամբ գտնվող շենքերում:

Սիրուշի դատողություններն, իհարկե, հիմնավոր էին: Ես հերթական անգամ ստիպված էի կիսատ թողնել քունս ու վերսկսել ընկերոջս փնտրտուքները:

Խանութը, ուր առևտուր էր արել Մշկոն, ու, համաձայն Սիրուշի վերլուծության, գնել ձու և լոլիկ, գտնվում էր Անրի Բարբյուսի անունը կրող փողոցի վրա:

Ես նախ ճշտեցի, թե ո՞վ է Անրի Բարբյուսը: Պարզվեց, որ նա ֆրանսիացի արձակագիր է և եղել է Էյնշտեյնի մերձավոր ընկերը: Մինչդեռ փողոցը, որը կրում էր նրա անունը Փարիզի մի արվարձանում էր, ուր ապրել և ստեղծագործել էին շատ ավելի հայտնի մարդիկ: Արվարձանն այդ կոչվում էր Բուժիվալ և ձգվում էր Սենայի ափի երկայնքով: Այստեղի աննկարագրելի պատկերներն էին վրձնել այնպիսի հանճարեղ իմպրեսիոնիստներ, ինչպիսիք էին Կլոդ Մոնեն, Օգյուստ Ռենուարն ու Ալֆրեդ Սիսլեյը, այստեղ էր երկնել իր «Կարմեն» օպերան

Ժորժ Բիզեն, այստեղ էր ապրել և ստեղծագործել Իվան Տուրգենևը:

Այս ամենն իհարկե հրաշալի էր, բայց ինչպե՞ս գտնել այստեղ Մշկոյին:

Ես տեղավորեցի «Ջուլիկին» անմիջապես խանութի դիմաց և որոշեցի ճշտել, արդյո՞ք Սիրուշի վարկածը համապատասխանում էր իրականությանը: Վաճառողը, ով հավանաբար նաև փոքրիկ այս խանութի տերն էր, անմիջապես ճանաչեց Մշկոյին, երբ ցույց տվեցի վերջինիս նկարը հեռախոսիս մեջ:

— Այո, քիչ առաջ նա այստեղ էր,— հաստատեց նա, ապա հարցրեց,— դուք Ինտերպոլի՞ց եք:

— Ինչո՞ւ այդպես որոշեցիք,— հետաքրքրվեցի ես:

— Նախ՝ նա շատ կասկածելի տեսք ուներ,— կոտրված անգլերենով և շատ լուրջ տոնով բացատրեց վաճառողը,— և ես որոշեցի, որ Դուք ոստիկանությունից եք, քանի որ նրանով եք հետաքրքրվում: Բայց, քանի որ Դուք խոսում եք անգլերեն, ես որոշեցի, որ դուք Ինտերպոլից եք:

Եվս մեկ դեդուկտիվ վերլուծաբան՝ մտածեցի ես, բայց փոխարենը հարցրի.

— Իսկ կարող եք հիշել, թե ի՞նչ գնեց նա:

— Իհարկե. կես դյուժին ձու, մեկ կիլոգրամ լոլիկ և մեկ հատ կանաչ պղպեղ:

Փաստորեն Սիրուշի վարկածն այնքան էլ ճիշտ չէր. մեր բարեկամը, ձվից ու լոլիկից բացի, գնել էր նաև կանաչ պղպեղ:

Դուրս եկա խանութից ու որոշեցի սուրճ խմել դիմացի մայթի սրճարանում ու մտածել հետագա անելիքներիս մասին: Տեղավորվեցի փողոց նայող ապակե պատի տակ դրված սեղանի մոտ և հիշեցի, որ այստեղ ծխել չեմ կարող: Լավ, մտածեցի, կվերցնեմ սուրճը և դուրս կգամ: Այդ պահին տեսա փողոցով անցնող մի սև մոտոցիկլետ: Ղեկին նստած էր սպիտակ սաղավարտով մի աղջիկ: Նրա հետևում նստած էր Մշկոն՝ առանց սաղավարտի և դեմքի չափազանց գոհ արտահայտությամբ:

Փարիզի մոտոցիկլետները

Չնայած Փարիզը համարվում է աշխարհի ամենագրավիչ քաղաքներից կամ գուցե՝ քաղաքը, չնայած այն բոլոր զբոսաշրջիկների երազանքն է և շատերն անգամ պատրաստ են «տեսնել Փարիզն ու մեռնել», այն անշուշտ ունի իր խնդիրները՝ խնդիրներ, որոնք մտահոգում են հիմնականում քաղաքի հյուրերին: Շատերն, օրինակ, դժգոհում են, որ Փարիզը մաքուր չէ: Իսկապես, զբոսաշրջիկների նման ահռելի հոսքի պայմաններում կոմունալ ծառայությունները պարզապես չեն հասցնում հաղթահարել աղբահանության խնդիրը, չնայած մաքրում–լվանում են քաղաքը օրը երկու անգամ: Հարգելի զբոսաշրջիկներ, մի՛ կեղտոտեք Փարիզը, և այն մաքուր կլինի:

Մյուս դժգոհությունն այն է, որ այստեղ շատ են այնպիսի էմիգրանտները, որոնք անհարմարություններ են ստեղծում հյուրերի համար՝ իրենց կպչուն և հաճախ՝ լկտի պահվածքով: Սա ևս համապատասխանում է իրականությանը: Ակնհայտ է, որ աֆրիկյան և արաբական ծագմամբ շատ էմիգրանտներ պարզապես գրավել են Փարիզի տեսարժան վայրերը և ոչ միայն խոչընդոտում են մարդկանց նորմալ տեղաշարժը, այլև հաճախ կպչում ու պոկ չեն գալիս: Ավելին՝ նրանք անգամ բաժանել են քաղաքի պատմամշակութային ու ժամանցային վայրերն իրար մեջ ու, ոստիկանների անտարբեր հայացքի ներքո, իրենց ապրանքներն ու ծառայություններն են պարտադրում մարդկանց: Օրինակ՝ Էյֆելյան աշտարակի ողջ շրջակայքը «գրված է» սևամորթների կողմից, ովքեր մայթերին, ուղիղ անցորդների ոտքերի տակ փռած՝ վաճառում են տարատեսակ ապրանքներ և, եթե նրանց մնա, կվաճառեն նաև Էյֆելյան աշտարակը: Մինչդեռ այստեղ չես տեսնի ոչ մի արաբ առևտրական: Փոխարենը՝ արաբները «գրավել են» Կլիշի բուլվարը, որտեղ գտնվում են հանրահայտ

«Մուլեն Ռուժը» և այլ տարատեսակ ժամանցի վայրեր: Այստեղով անհնար է մի քանի քայլ անել՝ առանց որևէ արաբի հետ բախվելու: Եվ, եթե քաղաքի աղտոտվածության հարցում ավելի շատ մեղավոր են զբոսաշրջիկները, այս մյուս հարցում, անշուշտ, անելիք ունեն քաղաքային իշխանությունները և ոստիկանությունը:

Երրորդ խնդիրը կապված է մոտոցիկլետի հետ: Այստեղ վերգետնյա տրանսպորտով տեղաշարժվողների եթե ոչ կեսը, ապա հաստատ մեկ երրորդը դա անում են մոտոցիկլերով կամ մոպեդներով: Ընդ որում, կարևոր չէ՝ ամառ, թե ձմեռ, շոգին, թե ձյանը: Եվ եթե տեղացիները վաղուց արդեն սովորել են մոտոցիկլետների առատությանը և վայրիվերումներին ու շատ լավ գիտեն, թե ե՞րբ և ինչպե՞ս դրանցից զգուշանան, ապա քաղաքի հյուրերը՝ վարորդ թե հետիոտն, հաճախ հայտնվում են անհարմար և անգամ վտանգավոր իրավիճակներում: Ինչ վերաբերում է երկանիվ այս նժույգներով շրջող կոնտինգենտին, ապա այն շատ բազմազան է: Դպրոցական աչոնիկներ ու թոշակառու տատիկներ, պատառոտված ջինսերով տղեկներ ու սոլիդ կոստյումներով տղամարդիկ:

Թե նշված կոնտինգենտից որին էր պատկանում նա, ում մոտոցիկլի հետևում առանց սաղավարտի և երջանիկ ժպիտով նստած էր Մշկոն, ես չհասցրի հասկանալ, որովհետև մոտոցիկլը շատ արագ կորավ տեսադաշտիցս: Անմիջապես վեր թռա տեղիցս ու վազեցի դուրս: Տեսա, թե ինչպես մոտոցիկլը առաջացավ միակողմանի փողոցով, հասավ մոտակա խաչմերուկին ու կանգնեց կարմիր լույսի տակ: Պետք էր արագ կողմնորոշվել՝ վազել դեպի խաչմերուկ, թե գնալ մեքենայով: Ես, փաստորեն, սխալ որոշում կայացրի և վազեցի: Մինչ կհասնեի խաչմերուկին, մոտոցիկլետը թեքվեց ավելի լայն փողոց և անհետացավ մեքենաների շարքում: Մինչդեռ, եթե գնայի մեքենայով, կկարողանայի հետևել մոտոցիկլետին:

Ինչևէ, վերադարձա սրճարան և շարունակեցի խմել կիսատ թողած սուրճս: Պետք էր մտածել, թե ինչ անել հետո:

Ամեն ինչ հանգեցնում էր նրան, որ իմ ենթադրությունները, կապված Մշկոյի նոր ծանոթության և Շվեյցարիայից Փարիզ

տեղաշարժի ու այստեղի տեղակայման հետ, բավականաչափ մոտ էին իրականությանը: Մոտոցիկլետ վարող աղջիկը կամ տիկինը գուցե ամենևին էլ այրի չէր, բայց, որ հյուրընկալել էր Մշկոյին իր տանը՝ հաստատ էր: Եվ ոչ միայն հյուրընկալել էր, այլև հոգում էր ծախսերը, նրա վրա թողնելով միայն այնպիսի մանրուքներ, ինչպիսին է լոլիկով ձվածեղը:

Բայց ո՞ւր էին գնում նրանք հիմա, առավոտյան ժամը իննին, այդ ձվածեղն ուտելուց հետո: Վստահաբար՝ ոչ նախաճաշելու:

Ուրեմն, ի՞նչ անել՝ գնալ ու փնտրել սև մոտոցիկլետը, որի վրա նստած էին սպիտակ սաղավարտով աղջիկը և առանց սաղավարտի Մշկոն, թե սպասել այստեղ:

Ես կանչեցի մատուցողին և լոլիկով ձվածեղ խնդրեցի: Բայց սրճարանի ճաշացանկում այն չկար: Ստիպված էի բավարարվել սովորական ակնիկ ձվածեղով: Կսպասեմ այստեղ՝ որոշեցի ես, նրանք վաղ թե ուշ կվերադառնան:

Այն մասին, թե ինչպես կարելի է խթանել արվեստները

Գրքերիցս մեկում ես առիթ ունեցել եմ պատմելու իմ երաժիշտ ընկերների մասին, ում ես կոչում եմ Վասյաներ: Նրանք չորսն են՝ իրար չափազանց նման չորս Վասյա, ովքեր ունեն ռոք խումբ, որի անունը չեմ տա, բայց կասեմ, որ այն իմ ամենասիրելի ռոք խումբն է աշխարհում: Իհարկե «Բիթլզից» հետո: Գուցե նաև... Բայց դա կարևոր չէ: Նրանք իսկապես հրաշալի երաժշտություն են ստեղծում ու նվագում և ժամանակ առ ժամանակ համերգներ են տալիս արտասահմանում և Հայաստանում: Ֆոլք–ռոք ժանրը, որն ընկած է նրանց ստեղծագործությունների հիմքում, այնքան «պոպուլյար» է մեր հայրենիքում, որ նրանց համերգների ժամանակ հավաքվում է մի քանի տասնյակ մարդ: Երբեմն՝ մի քանի հարյուր: Եվ, քանի որ այդ համերգներից ստացված եկամուտը բավականացնում է միայն նույն համերգի ծախսերը փակելուն, գուցե նաև մի թեթև «աֆթրփարթի» կազմակերպելուն, Վասյաները ստիպված են իրենց ապրուստը հոգալու համար այլ ճանապարհներ գտնել: Մեկը բարմենություն է անում սրճարանում, մյուսը դասավանդում է մասնավոր դպրոցում, երրորդը զբաղվում է համակարգչային մոնտաժով, չորրորդը չի կարողանում աշխատանք գտնել: Ավելի ճիշտ՝ չէր կարողանում: Հիմա արդեն նա ունի աշխատանք: Չորրորդ այդ Վասյան աշխատանք է գտել Փարիզում: Թե ինչ աշխատանք՝ պիտի իմանամ քիչ հետո:

Սրանից երեք տարի առաջ Երևանյան համերգներից մեկի ժամանակ Վասյան խելակորույս զարկում էր իր թմբուկը ու չէր էլ նկատում բեմի մոտ հավաքված իր երկրպագուհիներից մեկի իրեն ուղղված սիրահարված հայացքը: Աղջկա անունը Կոնստանս էր: Նա ուսանողուհի–վոլանտյորուհի էր, ով Ֆրանսիայից

գնացել էր Հայաստան մեկ ամսով, սակայն մնացել՝ երեք տարի: Կոնստանսն ու Վասյան ամուսնացել էին և ունեցել երկու աղջիկ՝ Անուշ և Ժոզեֆին: Երեք տարի Վասյան մի կերպ հոգում էր երիտասարդ ընտանիքի ծախսերն իր հայրենիքում, բայց հետո այլևս չկարողացավ և ստիպված էր արտագաղթել կնոջ՝ Կոնստանսի հայրենիքը:

— Չի կարող պատահել,— ասաց ընկերս հեռախոսով, երբ իմացավ, որ Փարիզում եմ,— ինչպե՞ս ես հայտնվել այստեղ:

Լավ հարց էր. բայց որպեսզի պատասխանեի այդ հարցին, ստիպված պիտի լինեի պատմել ողջ այս պատմությունը, և ռոումինգը կքամեր բջջային հաշիվս: Առաջարկեցի Վասյային գալ այն սրճարանը, ուր նստած սպասում էի մինչ կհայտնվեին Մշկոն և իր մոտոցիկլիստուհին:

— Գուցե դո՞ւ գաս,— առաջարկեց ընկերս:

— Ո՞ւր,— հետաքրքրվեցի ես:

— Իմ աշխատանքի վայրը: Կնվագեմ մեկ ժամ, հետո կգնանք խմելու:

— Որտե՞ղ է քո աշխատանքի վայրը:

— Ալեքսանդր Երրորդի կամրջի վրա:

— Չեմ կարող: Ես զբաղված եմ հետախուզական գործունեությամբ և իրավունք չունեմ փոխել տեղակայման վայրս: Կպատմեմ՝ երբ գաս:

Վասյան եկավ մեկ ժամից, ու ես պատմեցի, բայց իհարկե ավելի հետաքրքիր էր այն, ինչ պատմեց նա:

Ալեքսանդր Երրորդի կամրջի վրա ընկերս նվագում էր իր հարվածային գործիքները: Ինչպես նաև Փարիզի մի քանի ուրիշ կամուրջների վրա: Սա շատ հետաքրքիր պատմություն էր: Փարիզում գոյություն ուներ շրջիկ երաժիշտների, այսպես ասած՝ համքարություն, որոնք իրար մեջ էին բաժանել մայրաքաղաքի կամուրջները և հերթով նվագում էին այնտեղ: Կարծեմ՝ դա արգելված էր, բայց քաղաքային իշխանությունները և ոստիկանությունը աչք էին փակում երևույթի վրա, որովհետև ոչ Փարիզի բնակիչները, ոչ էլ, առավել ևս՝ զբոսաշրջիկները դրան դեմ չէին, իհարկե պայմանով, որ երաժիշտները լավը լինեին և նվագեին ճաշակով երաժշտություն: Երաժիշտներն՝ իրենց հերթին, իրար

մեջ պայմանավորվել էին և ստեղծել յուրատեսակ գրաֆիկ, թե ով որտեղ և որ ժամերին պիտի նվագի: Ինչ վերաբերում է եկամտին, ապա այն տասն անգամ գերազանցում էր Հայաստանի, ասենք, ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորի աշխատավարձը: Ըստ Վասյայի՝ օրական հինգ, վեց ժամ նվագելով կարելի էր աշխատել երկու հարյուր եվրո:

— Իսկ գրողները չե՞ն կարող գրել կամուրջների վրա,— հարցրի ընկերոջս:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս է լինում, որ ստեղծագործող մարդը ստիպված է ստեղծագործել իր հայրենիքից հեռու՝ կամրջի վրա:

Ո՛չ իմ երաժիշտ ընկեր Վասյան, ո՛չ իմ գեղանկարիչ ընկեր Զավոն, ո՛չ էլ մյուսները՝ ուրիշ երաժիշտներ, նկարիչներ, քանդակագործներ, ռեժիսորներ ու բանաստեղծներ, վստահեցնում եմ, շատ բան չեն ուզում: Նրանք ընդամենը ուզում են կարողանալ ապրել ու կարողանալ ստեղծագործել: Եվ իհարկե նրանք ուզում են դա անել հայրենիքում: Ուրեմն ինչո՞ւ հայրենիքը չի ուզում դա: Պատճառները, հասկանալի է, տարբեր են ու շատ: Բայց արդյո՞ք դրանցից որևէ մեկն արդարացված է:

Երբ տեղի էր ունենում այս պատմությունը, այստեղ՝ Ֆրանսիայում իշխում էին սոցիալիստները: Սրանք, անշուշտ, այն սոցիալիստները չէին, որոնք իշխել են իմ հայրենիքում մոտավորապես յոթանասուն տարի և այդ յոթանասուն տարիների ընթացքում ոչ միայն չեն կարողացել հասնել իրենց գաղափարախոսության հիմքում ընկած սոցիալական հավասարությանը, այլև ավելի են խորացրել հասարակության տարբեր շերտերի միջև ընկած անդունդը: Նրանց իշխանության տարիները մեր ու էլի ուրիշ ժողովուրդների վրա ուրիշ չափազանց բացասական անդրադարձեր էլ են ունեցել, և պատահական չէ, որ սոցիալիզմից մեր ու էլի որոշ ժողովուրդները անցում արեցին ո՛չ դեպի կոմունիզմ, ո՛չ էլ կապիտալիզմ, այլ ակամա այստեղ հաստատվեցին ֆեոդալական կարգեր կամ դրանց նման մի բան: Սակայն, հանուն արդարության պետք է ասել, որ Սոցիալիստական Հայաստանում արձանագրվել են դրական երևույթներ ևս: Դրանցից մեկը մշակութային կյանքի և հենց իր՝ մշակույթի զարգացումն

էր: Թե ինչի՞ շնորհիվ դա եղավ՝ այլ հարց է, բայց այնուամենայնիվ փաստ է, որ այդ յոթանասուն տարիների ընթացքում իմ ժողովուրդը ստեղծեց բազմաթիվ արժեքներ մշակութային բոլոր ոլորտներում: Մինչդեռ բավական էր, որ փլուզվեն փսևդոսոցիալիստական կարգերը, կարծես դրանց ավերակների տակ մնացին բոլոր մշակութային արժեքները: Մենք ոչ միայն չկարողացանք ստեղծել նոր, իրական արժեքներ, այլև չկարողացանք պաշտպանել այն, ինչ ստեղծվել էր նախորդ հարյուրամյակի ընթացքում և դրանից առաջ:

Ինչպե՞ս կարելի է պաշտպանել ու զարգացնել այն ամենը, ինչ քոնն է, եթե դու չես կարողանում պաշտպանել քո մշակույթը: Ոչ միայն չես կարողանում պաշտպանել, այլ, կարծես թե՝ դիտմամբ, խառնում ես քո մշակույթը այն ժողովուրդների մշակույթների հետ, որոնք քեզանից խլել են այն հողը, որի վրա ստեղծվել է քո մշակույթը:

Ինչպե՞ս կարելի է հասնել նրան, որ ունենաս սեփական պետությունդ և այսպես սրիկայաբար վարվես սեփական մշակույթիդ հետ: Սրիկայություն չէ՞ արդյոք ստիպել ժողովրդին լսել ու տեսնել այն էժանությունը, որ հեռարձակվում է պետական ու մասնավոր հեռուստաալիքներով վերջին տասնամյակներում: Սրիկայություն չէ՞ արդյոք թույլ տալը, այնպիսի վիճակի հասցնելը, որ իրական արժեք ստեղծողը՝ երաժիշտ կամ նկարիչ, բանաստեղծ կամ ռեժիսոր, ստիպված լինի հեռանալ և ստեղծագործել դրսում:

Եվ ինչ է ստացվում արդյունքում: Ստացվում է այնպես, որ իմ ընկեր Վասյայի պես հրաշալի երաժիշտը ստիպված է նվագել Փարիզում՝ կամրջի վրա:

— Մեր ուզածը մեծ բան չէ,— ասում է ընկերս՝ սրճարանում ինձ հետ նստած,— մենք ընդամենն ուզում ենք ապրել ու ստեղծագործել:

— Դու ուզում ես, որ պետությունը քեզ փող տա, որ դու ապրես ու ստեղծագործե՞ս,— հարցնում եմ:

— Բոլորովին: Ես ուզում եմ որ պետությունը ստեղծի միջավայր: Միջավայր՝ ոչ թե նրա համար, որ արվեստագետները ստեղծագործեն, այլ, որ նրանց ստեղծագործությունները

հասնեն ժողովրդին: Միջավայր, որտեղ ժամանակի ընթացքում լավը կառանձնանա վատից, մաքուրը՝ կեղտոտից, իրականը՝ կեղծից:

— Եվ ի՞նչ պիտի անի պետությունը. ինչպե՞ս և ի՞նչ չափանիշներով պիտի առանձնացնի լավը վատից:

— Ես չասացի, որ պետությունը պիտի դա անի. պետությունը պիտի ստեղծի միջավայրը, մնացածը կլինի ինքնըստինքյան:

— Ես միևնույնն է՝ չեմ հասկանում:

— Փորձեմ բացատրել. դիցուք, մեր խումբը նվագում է ֆոլքռոք, որը, բնականաբար, առանձնապես պոպուլյար չէ մի հասարակությունում, որի արյան մեջ տասնամյակներով ներարկվել է «ռաբիսը»: Կամ մի ռեժիսոր նկարում է ֆիլմեր, որտեղ երկիրն ու աշխարհը, քաղաքացին ու մարդը, վերջապես՝ կյանքը, ներկայացվում են այնպես՝ ինչպես կան, առանց էժանագին ավելորդությունների, ինչը հասկանալիորեն չի գրավում այն լսարանին, որը սովորել է սերիալային էժանությանը: Կամ մի բանաստեղծ գրում է պոեմներ, ուր չկան հայհոյանք, ժարգոն ու տափակ հումոր, որոնք այնքան դուր են գալիս մեր հասարակությունը:

— Լավ, ինչպե՞ս պիտի ազդի այս ամենի վրա պետությունը:

— Քանի՞ պետական աշխատող կա մեր երկրում:

— Պատկերացում չունեմ:

— Ընդունենք՝ հարյուր հազար, չնայած նրանք շատ ավելին են:

— Ընդունենք:

— Եվ կա Մշակույթի նախարարություն:

— Դարձյալ ընդունենք:

— Այսօր ի՞նչ օր է:

— Երեքշաբթի:

— Ենթադրենք՝ շաբաթ օրը մեր խումբը համերգ ունի մի համերգասրահում: Կամ մի կինոթատրոնում կայանալու է մի ֆիլմի պրեմիերա: Կամ մի ցուցասրահում՝ մի նկարչի ցուցահանդես:

— Հրաշալի:

— Կարո՞ղ է Մշակույթի նախարարությունը անել հետևյալը. բոլոր պետական հիմնարկներում, բոլոր պետական ծառայողներին, ովքեր ենթադրենք՝ հարյուր հազարն են, առաջարկել

առաջիկա միջոցառման տոմսեր, եթե խոսքը համերգի կամ ֆիլ-մի ցուցադրության մասին է, իսկ եթե ցուցահանդես է, ապա՝ հրավիրատոմսեր:

— Այսինքն՝ պարտադրի:

— Ոչ մի դեպքում: Հենց առաջարկի, որովհետև պարտադ-րանքը բոլորովին այլ տեղ կտանի:

— Լավ, հետո՞:

— Համաձայն ես, որ ժամանակի ընթացքում տասից մեկը, այսինքն՝ տասը տոկոսը, կգնեն տոմսերը:

— Հնարավոր է:

— Ոչ թե հնարավոր է, այլ հաստատ: Հարյուր հազարի տա-սը տոկոսն անում է տասը հազար: Հիմա պատկերացրու, որ մեր համերգին մասնակցի տասը հազար հանդիսատես: Ի՞նչ էի անելու այդ դեպքում ես այստեղ:

Վասյայի ասածը գուցե խելքին մոտ էր: Տրամաբանորեն՝ ու-րիշ ինչո՞վ պիտի զբաղվի Մշակույթի նախարարությունը, եթե ոչ՝ մշակույթը զարգացնելով: Իսկ մշակույթը զարգացնելու համար ուրիշ ի՞նչ է հարկավոր, եթե ոչ այն հասանելի դարձնել հասա-րակությանը՝ նույն այդ Մշակույթի նախարարության աշխատա-կիցներին, որոնց մեծամասնությունը, համոզված եղեք, պատկե-րացում անգամ չունեն, թե ի՞նչ մշակութային իրադարձություն-ներ են տեղի ունենում իրենց շուրջը: Եվ փոխանակ երեկոյան գնան որևէ համերգի կամ ցուցահանդեսի, գնում են միմյանց հյուր կամ լավագույն դեպքում՝ սրճարան:

— Դարձյալ գրողները դուրս մնացին,— ասացի ընկերոջս:

— Ի՞նչ նկատի ունես,— չհասկացավ նա:

— Չէ՞ որ գրողները համերգներ չեն տալիս, և կինոթատ-րոններում չեն ցուցադրվում նրանց գրքերը: Ուրեմն քո այս սցե-նարով, որն, անկեղծ ասած, ինձ դուր է գալիս, ինչպե՞ս պիտի տարածվի գրականությունը:

— Հավատացնում եմ՝ դրա լուծումն էլ կա, և այն շատ ավելի պարզ է, քան մյուսների պարագայում:

— Դե, կխնդրեմ՝ ասես այդ լուծումը:

— Կրկին անդրադառնանք պետական աշխատողների թվին՝ հարյուր հազար մարդ: Չի՞ կարող արդյոք մշակութային

գերատեսչությունը ստեղծել նոր հրատարակված գրքերի մի բա-զա, որը որոշակի պարբերականությամբ կներկայացվի իրենց և այլ գերատեսչությունների և մնացած պետական հիմնարկների աշխատակիցներին: Կարելի է դա անել անմիջականորեն՝ այ-սինքն այցելություններով, կամ գոնե էլեկտրոնային փոստով: Կրկին ընդունենք, որ տասից մեկին կհետաքրքրի մեկ գիրք, մյուսին մեկ ուրիշը: Այսինքն տասը հազար մարդ կարող է գնել նոր հրատարակված որևէ գիրք, եթե պատշաճ աշխատանք տարվի նրանց հետ: Դու դժգո՞հ կլինես, եթե տարեկան տասը հազար գիրք վաճառես:

Ես պատմեցի ընկերոջս իմ եվրոպացի գրող բարեկամների պատմությունը, ովքեր դժգոհում էին նրանից, որ տարին երեք հարյուր հազար գիրք են վաճառում: Նա իհարկե, չհավատաց, բայց դա չէ կարևորը: Կարևորն այն է, որ Վասյայի ասածների մեջ իսկապես տրամաբանություն կար:

Ալբերտ Էյնշտեյնի ընկեր Անրի Բարբյուսի անունը կրող փո-ղոցի սրճարանում ես փաստորեն անցկացրի մի ամբողջ օր՝ առավոտյան ժամը իննից երեկոյան ժամը ինը: Այստեղ նախա-ճաշեցի, ապա, երբ ինձ միացավ ընկերս՝ Վասյան, մենք միասին ճաշեցինք ու ընթրեցինք և խմեցինք ճիշտ այնքան օղի, որքան կար այդ սրճարանում: Հաշիվը փակեց ընկերս՝ ծախսելով այդ օրը Ալեքսանդր Երրորդի կամրջի վրա աշխատած ողջ գումարը և նախորդ օրը ուրիշ կամուրջների վրա աշխատած գումարի մեծ մասը: Բայց դա երկրորդական էր: Գլխավորն այն էր, որ Մշկոն այդպես էլ չհայտնվեց:

Ժամը իննին զանգեց Սիրուշը:

— Ես գիտեմ, թե որտեղ է Մշկոյանը,— ասաց նա արդեն սովորական դարձած իր խոսքը:

— Եվ որտե՞ղ է նա,— տվեցի ես արդեն սովորական դար-ձած իմ հարցը:

— Ամստերդամում:

— Ամստերդամո՞ւմ:

— Այո, Ամստերդամի թագավորական պալատում:

Մշկոյի չափազանցությունները կամ հոգնա արեք աղջկան

Մշկոն չափազանցնելու մեծագույն վարպետ էր, և դա գիտեին նրա բոլոր ընկերները, այդ թվում, բնականաբար, և ես: Օրինակ, մի ծանոթ զինվորականի ներկայացնելիս՝ ներկայացնում էր որպես գեներալ, չնայած մարդու ուսադիրներից հստակ երևում էր, որ նա առայժմ փոխգնդապետ է: Կամ ծանոթացնում էր մեզ մի ֆիզիկոսի հետ և ներկայացնում նրան իբրև ակադեմիկոս, մինչդեռ խոսակցությունից պարզ էր դառնում, որ մարդը հենց նոր է պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը: Կամ շախմատիստ բարեկամին ներկայացնում էր իբրև շախմատի աշխարհի չեմպիոն, և, երբ մենք նրան բացատրում էինք, որ աշխարհի ներկա չեմպիոնը ուրիշ է և, որ ընդհանրապես՝ հայ ժողովուրդը միայն մի աշխարհի չեմպիոն է ունեցել, Մշկոն ասում էր՝ ոչինչ, մի օր կդառնա ու նոր ես ձեզ հետ կխոսեմ: Հետո պարզվում էր, որ շախմատիստ բարեկամը վերջերս է լրացրել առաջին կարգը:

Մի անգամ մեր ընկերներից մեկի տատի հոգեհացի արարողության ժամանակ Մշկոն գնաց–նստեց տեր հոր կողքին ու սկսեց խմել հետը: Հոգեհացն արդեն ավարտվել էր, բայց նրանք դեռ խմում էին: Մենք մոտեցանք, որ փորձենք հետ պահել մեր ընկերոջը սպասվող կանխատեսելի սրբապղծությունից, բայց չստացվեց. դուք գնացեք տուն, իսկ մենք, հարգարժան արքեպիսկոպոսի հետ, գնում ենք Ջրվեժ՝ ասաց Մշկոն՝ քահանային աչքով անելով:

Մի անգամ էլ, Հայաստանի հեռավոր գյուղերից մեկում, եթե չեմ սխալվում Տավուշում, մեր հերթական կերուխումի ժամանակ աղջիկներից մեկը վատացավ: Մենք ստիպված էինք շտապօգնություն կանչել: Քիչ անց եկավ շտապօգնության մեքենան՝ նախնադարյան մի ՌԱՖ, որպիսիք, պետք է որ վաղուց դուրս եկած լինեին շրջանառությունից: Մեքենայի անձնակազմը բաղկացած էր երկու մարդուց՝ սպորտային համազգեստով վարորդից և բժշկից, որը նույնպես սպորտային համազգեստով էր, սակայն վրայից ամեն դեպքում հագել էր սպիտակ խալաթը: Հիվանդի մոտ նրան ուղեկցեց Մշկոյանը, հետո վերադարձավ մեզ մոտ և ասաց՝ ես խոսեցի գլխավոր բժշկի հետ և խորհուրդ տվեցի նրան հոգնա անել աղջկան:

Ահա այսպիսի պատմություններ: Չմոռանամ նաև ասել, որ ինձ Մշկոն ներկայացնում էր իբրև աշխարհահռչակ գրող՝ Նոբելյան մրցանակի հավակնորդ: Ընդ որում ինձանից մեծ ջանքեր էին պահանջվել, որ ընկերոջս համոզեմ՝ Նոբելյան մրցանակի դափնեկիրը դարձնել գոնե հավակնորդ:

Ինչևէ, Մշկոն իհարկե չափազանցնելու անգերազանցելի վարպետ էր, սակայն այս վերջին չափազանցությունը, որի մասին հիմա կպատմեմ, վեր էր ցանկացած երևակայությունից:

Ինչպես արդեն ասացի, Սիրուշի տվյալներով Մշկոն Ամստերդամի թագավորական պալատում էր, այսինքն՝ արքունիքում: Իսկ որտեղից էր Փղիկը վերցրել դա: Պարզվեց, որ Մշկոն զանգահարել էր նրան: Պատկերացնո՞ւմ եք Փղիկի վիճակը, երբ նա վերցրել է հեռախոսը և էկրանին տեսել Մշկոյի անունը: Խոսակցությունը, սակայն, չափազանց կարճ էր տևել. գիտե՞ս թե որտեղ եմ հիմա՝ հարցրել էր Մշկոն: Խնդրում եմ, վերադարձիր՝ աղերսել էր Սիրուշը: Չեմ կարող՝ ասել էր Մշկոն, ես հիմա խմում եմ Նորին գերազանցություն Վիլլեմ Ալեքսանդրի հետ:

Հետո մեր բարեկամի հեռախոսը անջատվել էր, ու նա կրկին դարձել էր անհասանելի:

Վիլլեմ Ալեքսանդր արքան թագադրվել էր վերջերս և գուցե դառնար հրաշալի միապետ ու էլ ավելի ծաղկեցներ իր առանց այդ էլ ծաղկաշատ թագավորությունը՝ Հոլանդիան: Միայն թե նրա անվան հետ կապված կային մի քանի սկանդալային պատմություններ, որոնք առնվազն վկայում էին, որ Նորին գերազանցություն արքան զվարճանքների մեծ սիրահար է և բավականաչափ լավ հարաբերությունների մեջ նորին գերազանցություն ալկոհոլի հետ:

Օրինակ՝ հայտնի էր, որ երիտասարդության տարիներին, այն ժամանակ դեռ թագաժառանգ Վիլլեմը, Լեյդենի բարերից մեկում մի լավ խմելուց հետո նստել էր մեքենայի ղեկին և քիչ անց թռել քաղաքի բազմաթիվ ջրանցքներից մեկը: Մի անգամ էլ նա մասնակցել էր երկու հարյուր կիլոմետրանոց չմուշկային մարաթոնի և հետո խոստովանել, որ դա արել է գրազով: Նորին գերազանցության հետ կապված այլ պատմություններ էլ կային, որոնք առնվազն հավաստում էին, որ մեր բարեկամ Մշկոյի հետ նա ուներ որոշակի ընդհանրություններ, բայց հանգիստ թողնենք այդ պատմությունները և փորձենք հասկանալ, թե ինչ գործ ուներ նրա հետ Մշկոն, եթե իհարկե նա ճիշտ էր ասել և սովորականի պես չէր չափազանցրել:

Իհարկե չափազանցրել էր, բայց որպեսզի Մշկոն մի բան չափազանցներ, ապա պիտի ունենար համապատասխան հիմքեր, որի վրա կարողանար կառուցել չափազանցությունը: Ասենք՝ որպեսզի հայտարարեր, թե խմում եմ գեներալի հետ, պիտի առնվազն խմելիս լիներ փոխգնդապետի հետ: Ուրեմն, կարելի էր ենթադրել, որ երբ նա Սիրուշին ասել էր, թե խմում է թագավորի հետ, խմելիս է եղել ասենք՝ նրա համհարզի հետ: Դա էլ, անշուշտ, քիչ բան չէր:

Սակայն, ես ինչ անեի հիմա: Արժեր շարունակել որոնումները՝ նկատի ունենալով այն, որ Մշկոն արդեն կապվել էր «հարսնացուի» հետ և խոսել: Վերջինիս ես, իհարկե, չէի պատմել այն ամենի մասին, ինչը կապված էր Մշկոյի նոր «հարսնացուի» հետ, ում նա հանդիպել էր, ըստ ամենայնի, շվեյցարական Ցերմատում, և ում մոտոցիկլետի վրա տեսել էի մեր բարեկամին, արդեն Փարիզում: Արդյո՞ք նրա հետ և հենց մոտոցիկլետով էր մեկնել Մշկոն Ամստերդամ, արդյո՞ք նա էր տարել Մշկոյին թագավորական պալատ՝ Նորին գերազանցության կամ նրա համհարզի հետ խմելու:

Ամեն դեպքում արժեր ճշտել: Մանավանդ, որ Սիրուշն ինքն էր ինձ խնդրում գնալ Ամստերդամ և, մանավանդ, որ ես դա անելու էի Սիրուշի հաշվին: Իհարկե, եթե կարողանայի գտնել Մշկոյին և գտնեի այն ժամանակ, երբ նա հասցրած չլիներ ծախսել Փղիկի քարտի վրա եղած ողջ գումարը:

Ու չնայած ես պատկերացում չունեի, թե ինչպես և հատկապես որտե՞ղ եմ փնտրելու ընկերոջս Ամստերդամում, այնուամենայնիվ առավոտյան հրաժեշտ տվեցի Փարիզին և ուղղություն վերցրի դեպի Կակաչների երկիր:

Այն մասին, թե ինչու են մեր գործարարները գործարանների փոխարեն բացում պոռնկանոցներ

Փարիզ–Ամստերդամ՝ հինգ հարյուր տասնհինգ կիլոմետր և հինգ ժամ քառասուն րոպե՝ ազդարարեց նավիգատորը: Ճանապարհն անցնում էր Ֆրանսիայի հյուսիսով, ամբողջությամբ կտրում Բելգիան, հետո Նիդերլանդների մի մասը և հասնում Ամստերդամ:

Ճամփորդության չորրորդ օրն էր, ու մինչ «Ջուլիկը», ֆրանսիական ռադիոկայաններից մեկով հնչող ռոքընռոլի տակ, սլանում էր վճարովի մայրուղով, ես փորձեցի վերականգնել այդ հինգ օրերի ընթացքում Մշկոյի և, համապատասխանաբար, իմ անցած երթուղին:

Համապատասխանությունը սկսվում էր շվեյցարական Բադ Ռագացից, ուր Մշկոն հասել էր Ցյուրիխից, ես՝ Միլանից: Այստեղից արդեն մեր երթուղին ու նպատակակետերը նույնն էին, տարբեր էին միայն փոխադրամիջոցները: Եվ այսպես՝ Բադ Ռագացից՝ Ցերմատ: Սա միակ երթուղին էր, որ հայտնի չէր, թե ինչո՞վ էր անցել Մշկոն: Ավելի հավանական է՝ տաքսիով: Բադ Ռագացում նա տաքսուց նստել էր ձիու վրա, որն անամոթաբար կեղտոտել էր մաքրամաքուր այս ավանը, և Մշկոյին դրա համար տուգանել էին: Այստեղ տուգանվել էի նաև ես, որովհետև առանց իմանալու ավան էի մտել մեքենայով, ինչը չէր կարելի, որովհետև Բադ Ռագացն իրեն հայտարարել էր «ծխից ազատ բնակավայր»: Ինչևէ, այստեղ մենք անցկացրել էինք մեկ օր և մեկ գիշեր ու միմյանց չէինք հանդիպել: Փոխարենը՝ Մշկոն հանդիպել էր մի ֆրանսուհու, ում հետ էլ գնացքով մեկնել էր Փարիզ: Ես մեկնել էի նրա հետևից և ճանապարհին մեկ գիշեր անցկացրել Մոնթրեվել–էն–Բրեսսեում՝ հյուրընկալվելով նկարիչ

ընկերոջս: Փարիզում Մշկոն մնացել էր երեք գիշեր, ես՝ երկու, ու հենց այստեղ էլ, ողջ ճամփորդության ընթացքում առաջին անգամ, տեսել էի ընկերոջս՝ ինչ– որ մոտոցիկլետի հետևի նստատեղին, սակայն դա տևել էր ընդամենը մի ակնթարթ: Հենց այդ մոտոցիկլետն էլ, ըստ ամենայնի, Մշկոյին տարել էր Ամստերդամ, ուր էլ ես գնում էի հիմա՝ վայելելով «Ջուլիկի» շորորուն պարը ռոքընռոլի տակ:

Ձմեռն արդեն ավարտվում էր, և Եվրոպայի հյուսիսն անհամբեր սպասում էր, թե ե՞րբ պիտի արեգակը ջերմացնի հողը: Աշխարհի այս հատվածում, ինչպես նաև այստեղից հարյուրավոր կիլոմետրերով դեպի հարավ ու դեպի արևելք, ոչ մի քառակուսի սանտիմետր անիմաստ հող չկա: Եթե բնակավայր է, ապա քաղաք է, գյուղ կամ ավան, եթե բնակավայր չէ, ապա մշակելի հող է, ցորենի արտ կամ խաղողի այգի, եթե մշակելի հող չէ, ապա արոտավայր է, ուր անհոգ արածում են չալպուտուրիկ կովերը, եթե արոտավայր չէ, ապա հողմային էլեկտրակայաններ են, որոնց պտուտակներն ասես պտտվում են իմ մեքենայում հնչող ռոքընռոլի տակտի տակ, եթե սրանցից և ոչ մեկն է, ապա արդյունաբերական գոտի է, որտեղից վեր են խոյանում ահռելի ծխնելույզները:

Ինչպե՞ս է ստացվում, որ, ասենք, Բելգիան, որը ճիշտ նույնքան տարածք ունի, որքան իմ հայրենիքը, կարողանում է իր հողի յուրաքանչյուր սանտիմետրից կյանք քամել, իսկ Հայաստանում կիլոմետր առ կիլոմետր չորանում է հողը:

Ինչպե՞ս է լինում, որ վերջին քսան հինգ տարում Բելգիայում բացվում է քսանհինգ նոր գործարան, իսկ Հայաստանում իրար հետևից փակվում են քսանհինգ տարի առաջ այստեղ աշխատող գործարանները:

Այս պարագայո՞ւմ էլ խնդիրը կամ խանգարողը հարևաններն են:

Պե՞տք է արդյոք լուրջ էկոնոմիստ լինել հասկանալու համար, որ առանց արդյունաբերության և գյուղատնտեսության պետությունը կարող է պարզապես գոյատևել՝ իր քաղաքացիների մեծագույն մասին ստիպելով դառնալ կամ առևտրականներ կամ տաքսու վարորդներ:

Եվ որքա՞ն կարող է գոյատևել պետությունը առևտուր անելով և տաքսի քշելով և ո՞ւր կհասցնի նրան այդ տաքսին:

Որքա՞ն գումար է անհրաժեշտ քսան հինգ գործարան հիմնելու համար: Որքա՞ն գումար է անհրաժեշտ քսանհինգ հազար հեկտար հողը ցանքատարածք դարձնելու համար: Որքա՞ն գումարներ են անտեղի վատնվել կամ գրպանվել վերջին քսանհինգ տարիներին: Եվ կա արդյո՞ք ծրագիր՝ հետագա քսանհինգ տարիների համար:

Չգիտեմ, գուցե և սխալվում եմ, գուցե և շատ բաներից չեմ հասկանում, գուցե և ամեն բան լավ կլինի, համենայնդեպս, ցավով եմ նայում շուրջս:

Պետք էր բենզին լցնել. ես արդեն չորս հարյուր կիլոմետր հեռացել էի Փարիզից, հատել Բելգիան և հենց նոր անցել Հոլանդիայի սահմանը, չնայած սահման, որպես այդպիսին, չկար:

Բենզալցակայանը իրենից ներկայացնում էր մի հսկայական համալիր, ուր առաջին հայացքից թվում էր՝ կա ամեն ինչ, բացի բենզինից: Այստեղ ստեղծված էին բոլոր հարմարությունները, որ երկար ճանապարհից հոգնած վարորդները ոչ միայն հանգստանան, այլև սնվեն որքան և ինչ ուզեն: Համալիրում, բացի խանութներից, ուր նույնպես սնունդ էր վաճառավում, կար նաև երկու սրճարան՝ մեկը բացօթյա, երկու ռեստորան՝ իրենց դարատափերով և մեկ McDonald's: Ավելին՝ կային ծառերի տակ տեղակայված բազմաթիվ տաղավարներ, որտեղ վարորդներն ու ուղևորները կարող էին հարմարավետ տեղավորվել և ուտել իրենց մոտ ունեցած կամ խանութներից գնված սնունդը:

Բայց մոռացա գլխավորը. այստեղ, իհարկե, կային նաև զուգարաններ, որոնք, պետք է ասեմ՝ այդ պահին ինձ ամենից շատն էին հետաքրքրում:

Տեղավորեցի «Ջուլիկին» ավտոկայանատեղիում, մի սև «Մերսեդես Գելենդվագենի» կողքին, որտեղ հավաքված էին մի քանի տղամարդիկ, և անմիջապես էլ հասկացա, որ տեղի ընտրության հարցում սխալվել եմ:

«Գելենդվագենը» կարծեմ բոլորովին նոր էր, կամ՝ առնվազն մեկ–երկու տարվա: Եվրոպական այնպիսի երկրներում, ասենք՝ Բելգիայում կամ Հոլանդիայում, որտեղ կյանքի մակարդակը

տասն անգամ գերազանցում է իմ երկրի կյանքի մակարդակին, այսպիսի մեքենաների կհանդիպես տասն անգամ քիչ, քան ասենք՝ Երևանի Հյուսիսային պողոտայում: Բայց այդ պահին դա չէր կարևորը: Կարևորն այն էր, որ՝ ի՞նչ եք կարծում, ովքե՞ր էին կանգնած «Մերսեդեսի» մոտ: Դե իհարկե, հայեր՝ հագած մորթե օձիքներով սև կաշվե բաճկոններ:

Ես իհարկե կբարևեի նրանց և անգամ կծանոթանայի, բայց ինչպես արդեն ասացի, այդ պահին ինձ ուրիշ բան էր հետաքրքրում: Կծանոթանամ վերադառնալիս՝ մտածեցի ու, տղամարդկանց կասկածամիտ հայացքների ներքո, արագ քայլեցի դեպի զուգարան: Սակայն վերադարձին նույնպես որոշեցի խուսափել հարգարժան իմ այդ հայրենակիցներից և՝ ահա թե ինչու:

Հիշո՞ւմ եք՝ բենզալցկայանի տարածքում կային երկու սրճարան՝ մեկը բացօթյա, երկու ռեստորան՝ իրենց դարատափերով, մեկ McDonald's և ծառերի տակ տեղակայված բազմաթիվ տաղավարներ: Բայց հայերը հայեր չէին լինի, եթե սնվեին այդ տեղերից որևէ մեկում: Ամենևին. նրանք շարել էին իրենց սնունդը՝ հաց, երշիկ, պանիր, լոլիկ, կանաչի և սոխ, «Գելենդվագենի» կապոտին և այնպիսի ինտենսիվությամբ էին կլանում ուտելիքը, կարծես սա իրենց վերջին խնջույքն էր…

Ես, գլուխս կախ, անցա նրանց կողքով և բացեցի մեքենայի դուռը: Ամեն ինչ գուցե հաջող անցներ, և ես չարժանանայի հարգարժան հայրենակիցներիս հետ կապոտի վրա հաց կիսելու պատվին, եթե այդ պահին չզանգեր հեռախոսս: Փղիկն էր:

— Մշկոն երկու հազար եվրո է հանել բանկոմատից,— ասաց նա,— բանկոմատը գտնվում է Կարմիր լապտերների թաղամասում:

— Երկու հազա՞ր,— մեխանիկորեն կրկնեցի ես,— Կարմիր լապտերների թաղամասո՞ւմ:

Ի պատիվ հայ տղամարդկանց՝ պիտի ասեմ, որ նրանք համբերատար սպասեցին մինչ ես կավարտեմ խոսակցությունը, նոր դիմեցին ինձ:

— Հա՞յ ես, ախպեր,— հարցրեց առաջինը:

— Որտեղի՞ց ես,— հարցրեց երկրորդը:

— Ի՞նչ ես անում էստեղ,— հարցրեց երրորդը:

— Արի մի կտոր հաց ուտենք,— ասաց չորրորդը:

Ես իհարկե պատասխանեցի երեքին էլ և ընդունեցի չորրորդի հրավերը: Բայց նաև մտածեցի, թե մորթե օձիքներով սև կաշվե բաճկոն հագած այս մարդիկ, որ անկասկած հնարավորությունների տեր են, վերջին մոդելի իրենց սև «Մերսեդես Գելենդվագենի» պատուհանից ինչ են տեսնում եվրոպաներում, որ Հայաստան վերադառնալով այնտեղ բացում են ոչ թե գործարաններ ու ֆերմաներ, այլ պոռնկանոցներ:

Ուրվականներ ու տեսիլքներ կամ ինչպես ես կորցրի Ջուլիկին Ամստերդամի Կարմիր լապտերների թաղամասում

Կարմիր լապտերների թաղամաս հասա, երբ մութն արդեն ընկել էր:

Ինձ պետք էր հասկանալ որոշ բաներ: Ինչո՞ւ է այս փողոցի համբավը տարածվել ողջ աշխարհով մեկ, և ինչ էր անելու իմ ընկեր Մշկոն այն երկու հազար եվրոյով, որ հանել էր այստեղի որևէ բանկոմատներից: Եվ ի վերջո՝ ո՞ւր մնաց Նորին գերազանցություն Վիլլեմ Ալեքսանդրը: Արդյո՞ք նրանք միասին էին ծախսելու գումարը, չէ՞ որ հայտնի բան է՝ թագադրված անձինք կանխիկ փող չեն ունենում:

Փղիկի հետ խոսակցությունից անցել էր մոտավորապես մեկ ժամ: Այսինքն՝ մոտավորապես մեկ ժամ առաջ Մշկոն օգտվել էր այստեղի ինչ–որ բանկոմատից: Հետևաբար նա պետք է որ լիներ մոտակայքում:

Կայանեցի «Ջուլիկին» թույլատրված վայրում, նախապես ներողություն խնդրեցի նրանից հնարավոր շեղումների համար՝ նկատի ունենալով այն վայրը, ուր պիտի գնայի ու անվստահ քայլերով մտա Կարմիր լապտերների փողոց:

Դա, իհարկե, փողոց չէր, այլ բազմաթիվ փողոցներից, նրբանցքներից ու փակուղիներից կազմված մի քառակուսի, կամ գուցե ուղղանկյունի, ուր ամեն քայլափոխի փոքր ու մեծ վիտրաժ պատուհաններից անցորդներին էին նայում տարբեր գույնի ու ոճի գեղեցկուհիները և սիրալիր հրավիրում ներս: Իսկ օդը պարուրված էր հաշիշի թթու բուրմունքով, որ գալիս էր դարձյալ ամեն քայլափոխի շարված cofee shop–երից:

Ինչո՞ւ չհամատեղել գործը հաճույքի հետ՝ մտածեցի ես ու մտա դրանցից առաջինը: Իմ ընկեր Վասյան ասում էր՝ նորմալ

մարդիկ լինում են երկու տեսակի՝ խմող կամ ծխող: Նա իհարկե նկատի ուներ հաշիշ ծխողներին: Կամ մարիհուաննա: Ես դրանք շատ լավ չեմ տարբերում, որովհետև պատկանում եմ մարդկանց առաջին խմբին՝ ըստ ընկերոջս դասակարգման: Բնականաբար, այդ խմբին է պատկանում նաև Մշկոն:

Cofee shop–ում ազատ սեղան չկար՝ մարդիկ գնում էին հաշիշն ու ծխում հենց տեղում, իսկ բարի առջև բավականին մեծ հերթ էր: Դարակների վրա խմիչքների շշերի փոխարեն շարված էին խոտերով լցված կոլբաներ, իսկ վերևում կախված էր մի հսկա գրատախտակ, որի վրա ներկայացված էր առաջարկվող տեսականին՝ մեկից մինչև տասներկու թվագրումով և յուրաքանչյուր թվի առաջ՝ իր անունը: Օրինակ թիվ երրորդը կրում էր «Թռիչք կկվի բնի վրայով» անունը, թիվ հինգերորդը՝ «Ճամփորդություն դեպի լուսին», թիվ յոթերորդը՝ «Տեսիլքներ և ուրվականներ», թիվ իններորդը՝ «Քնքուշ ամնեզիա», թիվ տասներկուերորդը՝ «Մահ կարմիր լապտերների թաղամասում»:

Մինչ կհասներ հերթս, ես մի սիգարետ վառեցի ու սկսեցի մտածել, թե ո՞րն ընտրեմ:

— Այստեղ ծխել չի կարելի,— ասաց կողքիս կանգնած մի տղամարդ:

Նա ժանգի գույնի թավ ունքեր ուներ, սուր քիթ և շատ փոքր, կլոր բերան ու շատ նման էր ծաղրածուի: Ես, ճիշտն ասած, չհասկացա, նա լուրջ էր ասում, թե՝ կատակում էր և, համենայնդեպս, հարցրի.

— Ի՞նչ խորհուրդ կտաք, ո՞րն ընտրեմ:

— Նման խորհուրդ տալն անշնորհակալ գործ է, բարեկամս,— ասաց ծաղրածուն:

— Լավ, իսկ Դուք ո՞րն եք ծխում:

— Ես միշտ ծխում եմ համար ինը՝ դա ինձ օգնում է որոշ ժամանակ մոռանալ, որ կին ունեմ:

Համար ինը «Քնքուշ ամնեզիան էր»:

Չգիտեմ՝ այն պատճառով, որ ես ամենևին էլ չէի ուզում մոռանալ սիրելի կնոջս, թե, որ մտավախություն ունեի՝ համար ինը չափից ավելի ուժեղ կլինի, ընտրեցի համար յոթը՝ «Տեսիլքներն ու ուրվականները»:

Վերցրի խնամքով փաթաթված գլանակը և ուզում էի դուրս գալ փողոց, բայց այդ պահին սեղան ազատվեց ու որոշեցի նստել և ծխել այստեղ: Այդպես էլ վարվեցի: Ծխեցի ողջ գլանակը, սպասեցի մի քիչ, բայց ոչ մի տեսիլք ու ուրվական չհայտնվեց: Արդեն պատրաստվում էի վեր կենալ, երբ դիմացս նստեց ժանգոտ ունքերով ծաղրածուն: Նրա ուսին թառել էր բազմագույն փետուրներով մի թութակ: Այն, որ կան խոսող թութակներ, ես, բնականաբար, գիտեի, միայն թե չգիտեի՝ արդյո՞ք խոսում են տեսիլքները: Այս մեկը, համենայնդեպս, խոսում էր. ծաղրող հայացքով նայում էր ինձ ու ինչ–որ բան բլբլում, որը, սակայն, ես չէի հասկանում: Հավանաբար ասում էր, որ ճիշտ ընտրություն չեմ արել:

Հաջորդ տեսիլքն, ավելի ճիշտ՝ տեսիլքները, հայտնվեցին արդեն փողոցում. ջրանցքի քարե բազրիքին հենված–կանգնած էին երկու ոստիկան և ուշադիր նայում էին ինձ: Նրանք հար և նման էին Ցերմատի այն երկու ոստիկաններին, ովքեր տուգանեցին ինձ երեք հարյուր ֆրանկով. մեկը մորուքով էր, մյուսը՝ ակնոցով: Ամեն դեպքում՝ արագ անցա նրանց կողքով ու, այ քեզ հրաշք, վիտրաժե պատուհանների մեջ տեսա մի կիսամերկ աղջկա, ով ինձ թվաց դուրս է գալիս տորթի միջից: Հետո տեսա, թե ինչպես է մեկ այլ վիտրաժ պատուհանից ինձ ներս հրավիրում խոշոր աչքերով ու խոշոր կրծքերով Ռոզաբելլան՝ Բադ Ռագացի հյուրանոցի այն իտալուհին: Հետո հայտնվեց կապույտ համզգեստով ու կարմիր վզկապով «Չեխական ավիաուղիների» այն բորտ ուղեկցորդուհին, ում հանդիպել էի Երևան–Պրահա չվերթի ժամանակ: Սակայն այս անգամ նա՛ էր ինձ աչքով անում: Բայց ամենահետաքրքիրը դեռ առջևում էր. հերթական վիտրաժ պատուհանի հետևում կանգնած էր… Փղիկը:

Չգիտեմ՝ որքան ժամանակ շրջեցի այդպես Կարմիր լապտերների թաղամասում: Գուցե մեկ ժամ, գուցե՝ երկու, գուցե ավելի: Ինձ թվում էր, թե խելագարվում եմ: Տեսիլքներն ու ուրվականները շարունակում էին ուղեկցել ինձ անընդհատ և ամենուր: Եվ որպեսզի վերջնականապես չխելագարվեմ, որոշեցի վերադառնալ մեքենայի մոտ, գնալ մի հյուրանոց ու քնել: Բայց պարզվեց՝ դա այնքան էլ հեշտ չէր: Բանն այն է, որ ես ոչ մի կերպ չէի

կարողանում հիշել, թե որտեղ եմ թողել «Ջուլիկին»: Չգիտեմ՝ որքան փնտրեցի նրան՝ գուցե մեկ ժամ, գուցե երկու, գուցե ավելի: Արդեն մտածում էի, որ «Ջուլիկը» նեղացել է ինձանից ու հեռացել, չնայած՝ վստահաբար հիշում էի, որ չէի դավաճանել նրան՝ ի հեճուկս բազմաթիվ ու բազմապիսի գայթակղությունների: Եվ հանկարծ, այդ պահին, ջրանցքի հակառակ ափին, ամբոխի մեջ, նկատեցի մեկին, ում գլխին թագ էր դրված: Նա քայլում էր զգաստ ու ձիգ, կարելի է ասել՝ վեհաշուք կեցվածքով: Նրա կողքից քայլում էր Մշկոն, բնականաբար՝ առանց թագի, բայց, իհարկե՝ դեմքի չափազանց գոհ արտահայտությամբ:

Ինձ նման էժան մասնավոր խուզարկու դեռ պետք է գտնել

Մի անգամ Հայաստանում Մշկոն ինձ գտավ մի վայրում, որտեղ պարզապես անհնար էր ինչ–որ մեկին գտնելը, եթե վերջինս որոշել էր, որ իրեն չգտնեն: Իսկ ես հենց այդպես էլ որոշել էի: Ամռան մի շոգ օր վրան էի խփել Սևանի ափին, կիսաամայի մի վայրում, որպեսզի կտրվեմ բոլորից՝ հատկապես ընկերներից, և գուցե մի նոր գիրք սկսեմ: Բոլորը և, հատկապես՝ ընկերներս, իհարկե, որպեն մեկ զանգում էին ինձ և փորձում ճշտել գտնվելուս վայրը, բայց ես անդրդվելի էի: Ինձ համար լողում էի, զբոսնում լճի ափին, կարտոֆիլ ու ձուկ խորովում, բացարձակապես չէի խմում և բավականին ինտենսիվ գրում էի: Հարևանությամբ կային վայրի հանգստի այլ սիրահարներ ևս, ովքեր ինձ պես խփել էին իրենց վրաններն ափին և աշխարհից կտրված վայելում էին իրենց ամառը: Նրանց և իմ երջանկությունը տևեց երկու օր: Երրորդ առավոտյան զիլ շչակներով, երգ ու երաժշտությամբ, աղմուկ աղաղակով տարածք մտան մի քանի մեքենա, որոնցից մեկի լյուկից դուրս էր հառնել Մշկոյի գլուխը, ինչպես միշտ՝ դեմքի չափազանց գոհ արտահայտությամբ: Իմ հարևան հանգստացողները, բնականաբար, ստիպված էին փոխել իրենց տեղակայման վայրը, բայց դա չէր էականը: Էականն այն էր, որ ես այդպես էլ չհասկացա, թե ինչպե՞ս էր հաջողացրել Մշկոն ինձ գտել: Եվ նա էլ, բնականաբար, չասաց:

Ստացվում էր, որ նա ինձ հեշտությամբ կարողանում էր գտնել, մինչդեռ ինձ մոտ ոչ մի կերպ չէր ստացվում նրան գտնելը: Ավելի ճիշտ՝ գուցե և ստացվում էր, բայց դրանից առանձնապես օգուտ չկար, որովհետև հաջորդ իսկ ակնթարթին Մշկոն դարձյալ անհետանում էր: Ինչպես եղավ Փարիզում, երբ ես նրան տեսա մոտոցիկլետի հետևի նստատեղին և ինչպես, փաստորեն, եղավ

այստեղ՝ Ամստերդամում, երբ ես նրան միայն մի ակնթարթ տեսա Կարմիր լապտերների թաղամասում՝ ջրանցքի հակառակ ափին ու անմիջապես էլ նա կորավ ամբոխի մեջ:

Երբ առավոտյան արթնացա հյուրանոցում՝ոչինչ չէի հիշում ու գլուխս ահավոր ցավում էր: Միայն, երբ կանգնեցի եռման ցնցուղի տակ, հիշողությանս մեջ սկսեցին վերականգնվել որոշ բաներ. նախ հիշեցի իմ ընկեր Վասյային, ով ասում էր, որ նորմալ մարդիկ լինում են երկու տեսակի՝ խմող և ծխող: Ծխողների առավելություններից մեկն, ըստ Վասյայի, այն էր, որ առավոտները նրանց գլուխը չի ցավում: Ուրեմն ինչո՞ւ էր իմ գլուխը ցավում: Երկրորդ բանը որ հիշեցի՝ այն էր, որ նախորդ օրը ոչ միայն չէի կարողացել գտնել Մշկոյին, այլև կորցրել էի «Ջուլիկին»: Թե ինչպե՞ս էի հայտնվել այս հյուրանոցում՝ ոչ մի կերպ չհիշեցի: Փոխարենը հիշեցի, որ սա փաստորեն ճամփորդությանս հինգերորդ օրն էր և երկու օրից լրանում էր մեքենայի վարձակալության ժամկետը, և, որ պակաս կարևոր չէր, իմ վերադարձի չվերթը նույնպես երկու օրից էր: Հետևաբար պետք էր երկու օրում Ամստերդամից հասնել Միլան: Դա, իհարկե, դժվար չէր անելը, բայց դրա համար նախ պետք էր գտնել «Ջուլիկին»:

Հեռախոսիս մեջ բացեցի Ամստերդամի քարտեզը և նախ գտա հյուրանոցս: Պարզվեց, որ այն կպած է Կարմիր լապտերների թաղամասին: Փաստորեն նախորդ օրը, հավանաբար երկար դեգերելուց հոգնած, մտել էի առաջին իսկ պատահած հյուրանոցն ու անջատված քնել:

Առավոտյան ժամը յոթն էր: Կարմիր լապտերների թաղամասը դատարկ էր. միայն աղբատար մեքենաներն էին շրջում, ու նարնջագույն ժիլետներով ինչ–որ մարդիկ ավլում էին նեղլիկ փողոցներն ու մայթերը: Փակ էին և՛ բորդելները, և՛ Cofee shop–երը: Իսկ, որ ամենավատն էր՝ փակ էին սովորական սրճարանները: Մինչդեռ ես սուրճ չէի խմել և անգամ չէի փոխել գուլպաներս, որովհետև ճամպրուկս մնացել էր մեքենայի մեջ: Մի խոսքով՝ վիճակս զարհուրելի էր:

Ու մեկ էլ, այ քե՛զ հրաշք, տեսա «Ջուլիկին» մի ծառի տակ կանգնած: Նա ինձ էր նայում կատաղած և, իհարկե, իրավունք ուներ: Ես ոչ միայն մենակ էի թողել նրան ամբողջ գիշեր, այլև

նրա վրա ծրտել էին ճնճղուկներն ու տատրակները, գուցե նաև ագռավները:

Փոխեցի գուլպաներս հենց մեքենայի բեռնախցիկի մոտ, գտա մի նոր բացվող կրպակ, սուրճ առա ու սկսեցի մտածել հետագա անելիքներիս մասին:

Եթե անգամ նախորդ օրն ինձ հանդիպածը Մշկոն չէր, այլ տեսիլք, իսկ թագակիր մարդը Նիդերլանդների արքան չէր, այլ նրա ուրվականը, երկուսն էլ պետք է որ դեռ Ամստերդամում լինեին: Նորին Գերազանցությունն ինձ առանձնապես չէր հետաքրքրում, իսկ Մշկոյին գտնելու համար ունեի առավելագույնը մեկ օր, որովհետև հաջորդ առավոտյան անպայման պետք էր ճամփա ընկնել, եթե ուզում էի ժամանակին հասնել Միլան, վերադարձնել վարձակալված մեքենան և չուշանալ չվերթից: Իհարկե, երկուսն էլ կենաց մահու հարցեր չէին, մեքենան կարելի էր ուշ վերադարձնել, իսկ վերադարձի համար կարելի էր գնել ուրիշ օրվա տոմս, սակայն այդ ամենը կհանգեցներ լրացուցիչ ծախսերի, ինչին կարելի էր գնալ, եթե դրանք հիմնավորված լինեին: Իսկ հիմնավորված կլինեին, եթե Մշկոյի հերթկան տեղաշարժի մասին որևէ լուր լիներ: Դա էլ, իր հերթին, բարդանում էր նրանով, որ, ըստ Սիրուշի, Մշկոն նախորդ օրը բանկոմատում կանխիկացրել էր երկու հազար եվրո, հետևաբար նա կարող էր գործարքներ կատարել, ասենք վճարել հյուրանոցի համար կամ գնացքի տոմս գնել կանխիկ փողով, և նրա գտնվելու կամ մեկնելու վայրի մասին մենք որևէ տեղեկություն ստանալ չէինք կարող:

Բայց նախ պետք էր հասկանալ, թե ինչ էր տեղի ունեցել այն բանից հետո, երբ ես տեսել էի Մշկոյին Փարիզում՝ մոտոցիկլետի հետևում նստած:

Ես դարձյալ ստիպված էի գուշակել: Կար երկու տարբերակ. կամ Մշկոն Ամստերդամ էր հասել նույն այդ մոտոցիկլետով, կամ մոտոցիկլիստուհին հասցրել էր նրան երկաթուղային կայարան, որտեղից էլ Մշկոն շարունակել էր ճամփորդությունը գնացքով: Երկրորդ տարբերակն ինձ ավելի հավանական էր թվում, որովհետև, Մշկոյին լավ ճանաչելով, ես գիտեի, որ, երբ նրա մոտ փող կա, միևնույն աղջկա հետ երկար զվարճանալը նրա ոճով

չէ: Լավ, բայց ինչ կապ ուներ այստեղ նիդերլանդական արքունիքը: Եվ ինչու էր Մշկոն երկու հազար եվրո կանխիկացրել: Հոլանդիայում հազվադեպ բաներ կան, որոնց համար հնարավոր չէ վճարել քարտով: Ասենք, վճարովի զուգարանները, որոնցից անձամբ էի օգտվել: Դրանց համար, սակայն, երկու հազար եվրոն մի քիչ շատ էր թվում: Մյուս բանը, որի համար կարծում եմ՝ վճարում են կանխիկ՝ սերն է Կարմիր լապտերների թաղամասում: Դժվար է պատկերացնել մարմնավաճառի, ով իր ծառայությունների համար գումարը կստանա տերմինալով: Ընդունենք, որ հենց այս նպատակով էր Մշկոն գումար կանխիկացրել: Սակայն կրկին բաց էր մնում թագակիր անձնավորության հարցը:

Ես զգացի, որ խճճվում եմ ենթադրություններում և գուշակություններում ու որոշեցի վարվել հետևյալ կերպ. շրջել քաղաքում մի քանի ժամ, և, եթե այդ ընթացքում Մշկոյից որևէ լուր չլինի, մոռանալ նրան, ներողություն խնդրել Սիրուշից ու, առանց շտապելու, վերադառնալ Միլան: Այդ դեպքում իհարկե ոչ ոք չէր փոխհատուցի ծախսերս, բայց հերն էլ անիծած, չէ՞ որ ես հետաքրքիր ու արկածներով լի մեկ շաբաթ էի անցկացրել Եվրոպայում:

Բայցևայնպես, մտովի հաշվեցի, թե որքա՞ն գումար եմ ծախսել այս ընթացքում. Մշկոյի արած ծախսերի հետ համեմատած այն իհարկե շատ չէր՝ մոտ հազար հինգ հարյուր եվրո, որի առյուծի բաժինը կլանել էր «Ջուլիկը». չորս հարյուր եվրո՝ վարձակալության համար, երեք հարյուր՝ տուգանքի, ևս այդքան՝ բենզինի և վճարովի ճանապարհների: Փաստորեն կեցության և սնունդի համար այս հինգ օրերի ընթացքում ես ծախսել էի ընդամենը հինգ հարյուր եվրո: Ինձ նման էժան մասնավոր խուզարկու դեռ պետք էր գտնել:

Իմ «Hitchhiker»-ները կամ այն մասին, թե ինչպես կարելի է փրկել աշխարհը

Երբ զանգահարեցի Փղիկին և հանգամանորեն ներկայացրի իրավիճակը, ինչպես նաև կայացրածս որոշումը, նա, իհարկե, սովորականի պես հուզվեց և սկսեց աղերսել, որ մնամ Ամստերդամում:

— Բացառվում է,— չոր պատասխանեցի ես,— ավելի լավ է արգելափակիր քարտդ: Երբ նա փող չունենա, ստիպված կլինի վերադառնալ Երևան:

— Ինչպե՞ս կվերադառնա, եթե փող չունենա:

— Նա մի ճար կգտնի, մի անհանգստացիր. ծայրահեղ դեպքում կզանգի քեզ կամ ինձ:

— Իսկ եթե չզանգի՞: Եթե այդտեղ՝ եվրոպաներում գտնի ուրի՞շ մեկին: Ու այլևս չվերադառնա՞:

— Ուրեմն դա է ձեր ճակատագիրը:

Ամստերդամից շարժվեցի՝ առանց որևէ խղճի խայթ զգալու: Նավիգատորն առաջարկում էր երկու երթուղի՝ մեկը Բելգիայով, Ֆրանսիայով և Շվեյցարիայով, մյուսը՝ Գերմանիայով և Շվեյցարիայով: Երկու դեպքում էլ տարածությունը կազմում էր մոտ հազար երկու հարյուր կիլոմետր և երկու դեպքում էլ երթուղին անցնում էր վճարովի մայրուղիներով: Քանի որ ժամանակ ունեի՝ մինչև թռիչքս դեռ կար մոտ քառասուն ժամ, ու մասամբ էլ խնայողությունից ելնելով, որոշեցի մեկնել այլընտրանքային երթուղով, որը շրջանցում էր վճարովի ճանապարհները: Այդ դեպքում տարածությունը մնում էր գրեթե նույնը, սակայն երկարում էր տեղ հասնելու ժամանակը՝ տասից դառնալով տասնչորս ժամ: Խնդիր չէ, մտածեցի՝ կգիշերեմ ճանապարհին մի տեղ:

Դուրս եկա Ամստերդամից և կանգնեցի ճանապարհամերձ մի բենզակայանի մոտ, որպեսզի այնտեղի խանութից գնեմ



սուրճ և ջուր: Նաև կարելի էր ամբողջացնել մեքենայի բակը: Վճարեցի դրամարկղում, մոտեցա մեքենայիս ու տեսա կողքը կանգնած մի քանի երիտասարդների՝ պատառոտված ջինսերով, ցեխոտ կեդերով, ու հսկա ուսապարկերով:

Նման երիտասարդների ես էլի էի առիթներ ունեցել հանդիպելու՝ եվրոպաներում ճամփորդելիս: Այստեղ նրանց անվանում են hitchhiker–ներ: Hitchhiker–ները մարդիկ են, հիմնականում՝ երիտասարդներ, ովքեր ճանապարհորդում են քաղաքից քաղաք, հաճախ՝ երկրից երկիր, պատահական մեքենաներով, այսպես ասած «ավտոստոպի» միջոցով: Նրանք ամենևին իրենց չեն պարտադրում, կանգնում են ճամփեզրին՝ ձեռքներին մի թղթի կտոր, որի վրա գրված է այն տեղի անունը, ուր ուզում են հասնել և՝ սպասում, մինչ գթասիրտ կամ պարզապես ընկերակցության կարիք ունեցող վարորդներն իրենց կվերցնեն: Ու չնայած եվրոպական օրենքներով «ավտոստոպն» արգելված է հիմնական մայրուղիների վրա, երևույթն այստեղ չափազանց տարածված է: Hitchhiker–ներն հիմնականում տեղակայվում են երկրորդական ճանապարհներին, բենզակայանների կամ ավտոկայանատեղիների տարածքում: Եվրոպայում այս երևույթը հատկապես տարածվեց նախորդ դարի իննսունականներից, երբ Վարշավայի պայմանագրի խզումից հետո՝ աստիճանաբար սկսեցին բացվել Արևելյան և Արևմտյան Եվրոպայի պետությունների միջև ընկած սահմանները, և մերձբալթյան, բալկանյան, հարավսլավական և այլ երկրների քաղաքացիները հնարավորություն ստացան ազատորեն ճամփորդել ամբողջ Եվրոպայով՝ որպեսզի տեսնեն, ասենք, Փարիզը, Վիեննան, Վենետիկը կամ Բարսելոնը: Ու քանի որ Արևելյան Եվրոպայի երկրների բնակչության կենսամակարդակը շարունակում էր մնալ բավականաչափ ցածր, ճանապարհորդներից շատերը՝ հիմնականում երիտասարդներ, չէին կարող իրենց թույլ տալ շրջագայել օդանավերով ու գնացքներով և գիշերել հյուրանոցներում ու մասնավոր բնակարաններում: Շատ ավելի դյուրին է ճամփորդել պատահական մեքենաներով ու գիշերել վրաններում:

Ինչպես արդեն ասացի, ես շատ էի առիթ ունեցել հանդիպելու hitchhiker»–ների Եվրոպայի տարբեր ճանապարհների վրա և

նույնիսկ մի քանի անգամ նրանք ընկերակցել էին ինձ մի քաղաքից մյուսը գնալիս: Միայն թե դա եղել էր հիմնականում տարվա տաք եղանակներին, որովհետև նման կերպ ճամփորդողները, հատկապես նրանք, ովքեր դա անում են վրաններով, ավելի շատ հանդիպում են ուշ գարնանը, ամռանը կամ վաղ աշնանը, որովհետև այն «քեմփինգները», որտեղ նրանք տեղադրում են իրենց վրաններն ու գիշերում, ցուրտ սեզոնին հիմնականում չեն աշխատում:

Մինչդեռ հիմա դեռ նոր էր գարունը բացվում և բավականին ցուրտ էր: Ու նաև անձրևոտ: Եվ գուցե հենց անձրևն էր պատճառը, որ ես մի պահ ոտքս կախ գցեցի և նայեցի մեքենայիս մոտ հավաքված երիտասարդներին: Նրանք երեքն էին և պետք է ասեմ, որ միանգամից դժվար էր հասկանալ, թե նրանցից ո՞րն էր աղջիկ և ո՞րը՝ տղա: Մեկի ականջից օղ էր կախված և նա ուներ երկար շեկ մազեր: Մյուս երկուսը կարճամազ էին՝ մեկը սև, մյուսը շագանակագույն և ականջօղեր չունեին: Առաջինը, պարզվեց, տղա էր, մյուս երկուսը՝ աղջիկներ:

— Հեռո՞ւ եք գնում,— անգլերենով հարցրեց շագանակագույն մազերով աղջիկը:

— Այո: Իսկ դո՞ւք:

— Մենք պարզապես ճամփորդում ենք,— ասաց սևուկը:

— Երանի ձեզ:

— Կտանե՞ք մեզ,— հարցրեց շիկահեր տղան:

— Սիրով, բայց ո՞ւր:

Պարզվեց, որ երիտասարդները ռումինացի ուսանողներ էին: Նրանք էժան տոմսեր էին ձեռք բերել այսպես կոչված low–coast ավիաընկերություններից մեկով և Բուխարեստից թռել էին Ամստերդամ: Մինչդեռ հետադարձ տոմսը դեպի Բուխարեստ՝ Վիեննայից էր: Երկու օր անցկացրել էին Ամստերդամում և հիմա տասներկու օր ունեին Վիեննա հասնելու համար:

Մենք մի կերպ տեղավորեցինք հսկա ուսապարկերը մեքենայի բեռնախցում ու ճամփա ընկանք:

Հետաքրքիր էր զրուցել նոր սերնդի այս ներկայացուցիչների հետ, իմանալ, թե ինչպե՞ս են նրանք պատկերացնում կյանքը, ինչպե՞ս են վերաբերվում ժամանակներին ու փոփոխություններին

ու նաև իրենց շրջապատող մարդկանց, ի՞նչ են մտածում աշխարհի անցյալի, ներկայի ու ապագայի մասին:

— Ինձ թվում է, որ աշխարհի ամենամեծ չարիքը փողն է, որովհետև փողն է ստեղծում ու տարածում չարությունը, նախանձը, ատելությունը, իսկ այս ամենը պատճառ են դառնում աղքատության, մարդկանց շահագործման, պատերազմների:

Ասողը շագանակագույն մազերով աղջիկն էր, որը քաղաքագիտություն էր ուսումնասիրում Բուխարեստի համալսարանում:

— Բայց, չէ՞ որ հնարավոր չէ ապրել առանց փողի,— հարցրեցի ես:

— Իհարկե հնարավոր չէ: Բայց կա մի չափ, որը բավարար է լավ ապրելու համար: Լավ սնվելու, հագնվելու, կրթություն ստանալու, ճամփորդելու, անգամ զվարճանալու համար: Դրանից ավելի ի՞նչ է պետք մարդուն:

— Օրինակ, քեզ նման մեկ այլ երիտասարդի պետք է «Ֆերրարի»:

— Ես հենց դա նկատի ունեմ: Նրան գուցե պետք է «Ֆերրարի», իսկ ինձ բավարար են իմ կեդերը: Ես չեմ կարծում, որ պարտադիր պետք է «Ֆերրարիի» պատուհանից նայես աշխարհին, որ հասկանաս այն, նայես մարդկանց, որ հասկանաս նրանց: Հակառակը՝ այդ դեպքում դու չես հասկանա կամ սխալ կհասկանաս և՛ մարդկանց և՛ աշխարհը:

— Այսինքն, եթե դու ունենաս մեկ միլիարդ, դու դարձյա՞լ կշրջես կեդերով:

— Ամբողջ հարցն այն է, որ ես չեմ ձգտում ունենալ այդ միլիարդը: Եվ կարծում եմ, որ լավ կլինի, եթե բոլորն էլ այդպես մտածեն ու սահմանափակվեն այն շեմով, որը բավարար է նորմալ ապրելու համար:

— Բայց, չէ՞ որ, եթե դու շատ փող ունենաս, դու կարող ես շատ բարի գործեր անել:

— Բոլորն էլ այդպես են ասում, բայց երբ հարստանում են, սկսում են փողը ծառայեցնել ամենևին էլ ոչ բարի գործերի համար: Իհարկե, երբեմն լինում են բացառություններ, բայց դրանք հազվադեպ են: Հիմնականում որքան շատ ունի մեկը փող,

ձգտում է ավելի շատ ունենալ, որովհետև հանգամանքների բերումով ստեղծվում են հարաբերություններ ուրիշ փող ունեցողների հետ, առաջանում է մրցակցություն, պայքար ու կռիվ, ինչի հետևանքով տուժում են հասարակ մարդիկ, այն մարդիկ, ովքեր ինձ պես ուզում են պարզապես նորմալ ապրել:

— Իսկ ի՞նչ է պետք անել, դու ունե՞ս լուծում:

— Ես շատ երիտասարդ եմ դեռ, որպեսզի խոսեմ մեծ բաների մասին, բայց կարծում եմ, որ այդ լուծումը կա: Կարծում եմ, որ մեծ փողերը պիտի կենտրոնացած լինեն բացառապես պետությունների ձեռքում, իհարկե պայմանով, որ այդ պետությունների ղեկին լինեն ազնիվ և արդար մարդիկ: Եվ նրանք այնպես կառավարեն այդ փողը, որ բոլորը կարողանան ունենալ այնքան, որ բավականացնի լավ ապրելուն՝ առանց որևէ «Ֆերրարիի»:

— Իսկ եթե մի պետության ղեկին ազնիվ ու արդար մարդիկ են, իսկ մեկ այլ պետության ղեկին՝ ոչ, ի՞նչ կլինի այդ դեպքում:

— Այդ դեպքում կլինի այն, ինչ հիմա տեղի է ունենում աշխարհում. անարդար ու փողատենչ իշխանություն ունեցող պետությունների քաղաքացիները արտագաղթում են, օրինակ այստեղ՝ Հոլանդիա: Նայեք շուրջը՝ որքան արաբ կամ թուրք կտեսնեք, կամ սևամորթ, ասենք՝ նիգերացի: Ի՞նչ է նրանց ուզածը. ընդամենը նորմալ ապրել: Եվ նրանք չեն կարողանում անել դա մի տեղ, ուր փողի իշխանություն է:

Ես ցավով էի լսում շագանակագույն մազերով այս հրաշալի աղջնակին, ով քաղաքագիտություն էր ուսումնասիրում: Ցավով էի լսում, որովհետև համոզված էի, նրան լուրջ մաքառումներ են սպասվում առաջիկա տարիներին, մինչև որ նա կբախվի դաժան իրականությանը և կհամոզվի, որ անհնար է պայքարել այն ամենի դեմ, ինչը ծնվում է փողից և ինչը ծնում է փող: Կամ գուցե ես սխալվո՞ւմ էի, գուցե իսկապես նա և նրա նման մտածողները կարողանան ժամանակի ընթացքում փրկել աշխարհը փողի իշխանությունից:

— Իսկ քեզ չի՞ անհանգստացնում այն, որ շատ քչերն են քեզ պես մտածում:

Սակայն, պատասխանեց մյուս աղջիկը՝ սևուկը, ով կառավարում էր սովորում նույն համալսարանում:

— Ես, օրինակ, այդպես չեմ մտածում: Կամ այնքան էլ այդպես չեմ մտածում: Ես, իհարկե, համաձայն եմ, որ փողը վատ բան է, բայց այն վատ բան է, երբ վատ բանի է ծառայում: Մինչդեռ ես գիտեմ, թե ինչին և ինչպես ծառայեցնել փողը:

— Նախ ասա, թե ինչի՞ն:

— Նրան, որ աշխարհում ողջ առաջադեմ երիտասարդությունը հնարավորություն ունենա կյանքի կոչել իր գաղափարները:

— Իսկ ո՞վ պիտի որոշի՝ այդ գաղափարները լավն են, թե ոչ:

— Լավ մարդիկ: Մարդիկ, ովքեր ազնիվ են ու խելացի և ովքեր հաջողել են կառավարման խոշոր ոլորտներում: Օրինակ, կարելի է մի խորհուրդ ստեղծել՝ կազմված այնպիսի պետությունների նախկին ղեկավարներից, ուր նրանց իշխանության օրոք գրանցվել են լուրջ հաջողություններ՝ նորարարությունների, ժողովրդավարության, մարդու իրավունքների առումով: Այդ խորհուրդն էլ կարող է զբաղվել առաջադեմ գաղափարների ընտրությամբ, տեսակավորմամբ և հետևողական իրականացմամբ:

— Շատ լավ, իսկ հիմա ասա, թե ինչպես:

— Սա արդեն ավելի դժվար է: Բայց կարծում եմ իրականանալի: Բոլոր այն առաջադեմ պետությունները, որոնք հասկանում են, որ իրենց իսկ շահերից է բխում, որ բոլոր պետությունները ժամանակի ընթացքում դառնան առաջադեմ, պիտի ձեռնարկեն մի միջազգային գործընթաց: Պետք է ընդունվեն միջազգային օրենքներ, որոնք կպարտավորեցնեն բոլոր այն անհատներին, ովքեր ունեն խոշոր եկամուտներ, այդ եկամուտների մի մասն ուղղել առաջադեմ գաղափարների իրականացմանը:

— Իսկ եթե այդ հարգարժան անհատները դեմ լինե՞ն:

— Իհարկե, դեմ կլինեն: Համենայնդեպս նրանց մեծ մասը: Բայց հենց դրա համար են իմ ասած միջազգային օրենքները:

— Իսկ, դու չե՞ս կարծում, որ սա կարող է հակասել նույն այն մարդու իրավունքներին, որոնց պաշտպանությանն ուղղված առաջադեմ գաղափարները դու ուզում ես, որ ֆինանսավորվեն:

— Բոլորովին: Ու բացատրեմ՝ թե ինչու: Ես համոզված եմ, որ բոլոր այն անհատների մեծամասնությունը, ովքեր ունեն

ահռելի եկամուտներ, դրանց հասել են ուրիշների իրավունքները ոտնահարելու հաշվին: Ուրեմն, թող բարի լինեն կիսել այդ եկամուտները և գոնե կիսով չափ վերականգնել արդարությունը: Իսկ մնացածները, ովքեր ազնիվ ճանապարհով են վաստակում իրենց եկամուտները, առանց որևէ օրենքի էլ դրանց մի մասը ուղղում են բարեգործությանը: Մնում է օգնել, որ ուղղվեն ճիշտ բարեգործությանը:

Դե ինչ, մտածեցի, մնում է հուսալ, որ սևուկ այս աղջնակը հաջողությամբ կավարտի ուսումը, կդառնա հրաշալի կառավարիչ և շատ չի հիասթափվի, երբ հասկանա, որ այն, ինչ մտածում է նա հիմա, երբևէ հնարավոր չի լինելու կյանքի կոչել: Կամ, գուցե ես սխալվո՞ւմ էի, գուցե նրան, և նրա նման երիտասարդների հաջողվի՞ աշխարհի կեղտոտ փողերն ուղղել մաքուր նպատակների:

— Իսկ դո՞ւ ինչ կասես,— դիմեցի շիկահեր տղային՝ հայելու մեջ նայելով նրան:

— Ինձ համար կարևորն ազատությունն է:

— Ո՞ւմ ազատությունը:

— Իմ և բոլորի: Բայց, ես կարծում եմ, որ յուրաքանչյուրն ինքը պիտի մտածի իր ազատության մասին:

— Իսկ ո՞րն է այդ ազատությունը:

— Ես նկատի չունեմ ձեռնաշղթաները: Այսինքն ֆիզիկական ազատությունը: Ինձ թվում է, որ պակաս կարևոր չէ մարդու մտքի և հոգու ազատությունը:

— Եվ ինչպե՞ս է դրսևորվում ու ո՞ւր է տանում այդ ազատությունը:

— Ես չեմ մտածում այդ մասին: Ու հենց դա է ազատությունը: Ես պարզապես ապրում եմ ազատ. անում եմ այն, ինչ ուզում եմ, մտածում եմ այնպես, ինչպես ուզում եմ, գնում եմ այնտեղ, ուր ուզում եմ: Բայց միաժամանակ հարգում եմ մյուսների ազատությունը: Թող ուրիշներն էլ մտածեն ինչպես ուզում են, գնան այնտեղ, ուր ուզում են, անեն այն, ինչ ուզում են: Իհարկե խոսքը նրա մասին չէ, որ կարելի է թքել փողոցում, կամ հանել ատրճանակն ու կրակել աջ ու ձախ:

— Եվ այդքանով սահմանափակվո՞ւմ է քո ասած ազատությունը:

— Միթե դա քիչ է:

— Դա քիչ չէ, բայց արդյոք կիսատ չէ: Դու ասում ես, որ յուրաքանչյուրն ինքը պիտի մտածի իր ազատության մասին: Իսկ չե՞ս կարծում, որ չի կարող մեկը լինել իսկապես ազատ, եթե շուրջը կան բազմաթիվ մարդիկ, ում միտքն ու հոգին դեռ պատրաստ չեն ազատ լինելու: Չե՞ս կարծում, որ իրական ազատությունը պայքարն է ազատության համար, և քանի դեռ շուրջդ անազատություն կա, դու չես կարող իսկապես ազատ լինել, որքան էլ մտածես այնպես՝ ինչպես ուզում ես, և անես այն՝ ինչ ուզում ես:

Այնուամենայնիվ, երանի այս երիտասարդներին. երանի նրանց, ում հայրենիքը լուրջ հոգսեր չունի և նրանք կարող են իրենց թույլ տալ մտածել նման բաների մասին: Մտածել այնպես, ինչպես ուզում են, անել այն, ինչ ուզում են, ապրել այնպես, ինչպես ուզում են:

Ես իջեցրի երիտասարդներին Բոննում ու մինչ հրաժեշտ տալը հարցրի, թե ո՞րն է նրանց հետագա երթուղին:

— Ուր աչքներս կտրի,— պատասխանեցին նրանք՝ կարծես միաբերան:

Այն մասին, թե ինչպես ես խմեցի գերմանացի թոշակառուների հետ կամ երջանիկ է այն պետությունը, ուր երջանիկ են ծերերը

Անձրևը շարունակեց ուղեկցել ինձ ողջ ընթացքում, իսկ մութն ընկնելուց հետո այնպես ուժեղացավ, որ արդեն տհաճ էր մեքենա վարելը՝ հատկապես գյուղական ճանապարհներով: Ես կամ պիտի դուրս գայի մայրուղի, կամ մի հյուրանոց գտնեի ու կանգ առնեի այնտեղ: Երկրորդ տարբերակն ինձ ավելի էր դուր գալիս: Նախ՝ հոգնած էի ու քաղցած ու հետո՝ նախորդ օրվա ամստերդամյան արկածներից հետո օրգանիզմս վերականգնվել էր պահանջում, իսկ հոգիս ասում էր՝ այսօր մի կարգին խմել է պետք, բարեկամ:

Մի փոքր գյուղում, եթե չեմ սխալվում՝ Կարլսրուեի մոտակայքում, անձրևի միջից նշմարվեց մի ցուցանակ, որի վրա խոզ էր նկարված ու ինչ–որ բան էր գրված: Թե ի՞նչ էր գրված, ես չհասկացա, բայց ամեն դեպքում թեքվեցի աջ ու մի հարյուր մետրից հասա փայտաշեն մի պանդոկի, որի հարևանությամբ, բարեբախտաբար, նաև հյուրատուն կար:

Ինձ սենյակ տվեցին ձեղնահարկում: Գերմանական տարազով, հյուսած մազերով ու կարմիր այտերով մի աղջիկ ինձ ուղեկցեց վերև և ասաց, որ եթե ուզում եմ ընթրել, ապա պետք է հենց հիմա սեղան ամրագրեմ ռեստորանում, որովհետև հետո կարող է ուշ լինել:

— Այսօր ուրբաթ է, հասկանո՞ւմ եք:

— Հասկանում եմ,— ժպտացի ես,— իսկ խոզն արդեն կրակի՞ն է:

— Իհարկե,— ժպտաց նա՝ ի պատասխան:

— Այդ դեպքում հետևի ձախ ոտքը պահեք ինձ համար: Եվ խնդրում եմ մի շիշ շնապս դրեք սառնարանը:

— Մի շիշ,— զարմացավ աղջիկը:

— Դուք ճիշտ եք. դրեք երկուսը:

Լողացա, հետո հագա կոստյումս, որը նախատեսված էր Կոմոյում կայանալիք գրող ընկերներիս նախաձեռնած եզրափակիչ բանկետին հագնելու համար, ու իջա ռեստորան:

Այն լեփ–լեցուն էր: Մի տեսակ զվարթ ու անկաշկանդ մթնոլորտ էր՝ պարուրված հաճելի աղմուկով ու եփած խոզի բուրմունքով: Հնչում էր շրթհարմոնի սրտաճմլիկ ձայնը, ինչ որ մեկը երգում էր, ոմանք՝ պարում: Դե ինչ, մտածեցի՝ այնքան էլ մեծ մեղք չէ՝ մի երեկո անցկացնել երիտասարդ գերմանուհի գեղջկուհու հետ՝ շրթհարմոնի և շնապսի հնչյունների ներքո:

Միայն թե, ինձ հիասթափություն էր սպասում: Առնվազն երիտասարդ գեղջկուհու առումով: Ամենաերիտասարդ մարդը, ով այդ ուրբաթ երեկո եկել էր այստեղ, կարծեմ ութսուն տարեկան էր, կամ յոթանասունութ, բայց, վստահաբար, ոչ պակաս, քան յոթանասունհինգ: Բայց պետք էր տեսնել, թե ինչպես էին գարեջուր խմում ճերմակ վերնաշապիկներով հարգարժան պարոնայք և ինչպես են թռչկոտում ծաղկավոր զգեստներով գեղեցկուհի տիկնայք: Ա՛յ քեզ երջանիկ ծերություն:

Լավ՝ մտածեցի, գեղջկուհուն մոռանում ենք, բայց շնապսը հո՞ տարիք չի ճանաչում: Հայացքով փնտրեցի ինձ համար պահած սեղանը, սակայն չգտա: Ընդհանրապես ազատ սեղան չկար: Հիասթափված, քաղցած ու ծարավ հոգիս արդեն ուզում էր ընդվզել, երբ ինձ մոտեցավ կարմրաթուշ աղջիկը:

— Եկեք,— ասաց նա ու քայլեց դեպի հեռու անկյունում տեղադրված մի սեղան, որի շուրջ նստած էին երկու տղամարդ և մի կին:

Տիկինը պետք է որ ժամանակին հաղթած լիներ իրենց գյուղի, գուցե նաև ողջ մարզի գեղեցկության մրցույթում ու հիմա էլ նրա երկնագույն աչքերը բոցկլտում էին ու հունից հանում ոչ միայն իր սեղանակից, այլև, վստահաբար, այստեղ հավաքված բոլոր տղամարդկանց: Նրա հագին երկնագույն զգեստ էր՝ դեղին ու կարմիր թիթեռնիկներով: Եթե ձեզ ասեմ, որ մինչև թոշակի անցնելը այս գեղեցկուհին կթվորուհի էր աշխատել, կարծում եմ չեք հավատա:

Տղամարդկանցից մեկը՝ խնամված ճերմակ մորուքով, հետ սանրած հարուստ մազերով, հագին վանդակավոր շագանակագույն կոստյում՝ գրպանից դուրս նայող երկնագույն թաշկինակով, նման էր ծեր դերասանի, մյուսը՝ խուճուճ ալեխառն մազերով, ոսկեզոծ ակնոցով ու սև կոստյումով նման էր Բունդեսթագի պատգամավորի: Ու, եթե ձեզ ասեմ, որ առաջինը եղել էր գյուղի կոմբայնավարը, երկրորդը՝ տրակտորիստը, կարծում եմ՝ առավել ևս չեք հավատա:

Բայց դա այդպես էր, և այդ մասին ես իմացա երրորդ, թե չորրորդ բաժակից հետո: Ընդ որում՝ ոչ թե խոսքերով, այլ՝ ժեստերով, որովհետև թե տիկին կթվորուհին, թե պարոնայք կոմբայնավարն ու տրակտորիստը անգլերեն չգիտեին: Պետք էր նայել նրանց մնջախաղը: Այստեղ պիտի լիներ մեր գյուղի տրակտորիստ Մրոն և տեսներ, թե ինչպես է իր գերմանացի կոլեգան ներկայացնում իրենց մասնագիտությունը:

— Պրոստե,— ասաց կոմբայնավարը և գլուխը քաշեց հսկա բաժակով գարեջուրը:

— Կենացներդ,— արձագանքեցի ես, ու խմեցի իմ շնապսը:

Իսկապես, ինչ կմտածեն մեր գյուղի տրակտորիստները կոմբայնավարներն ու կթվորուհիները, եթե իմանան, որ իրենց նման մարդիկ կարող են ամեն Աստծու ուրբաթ զուգվել, զարդարվել ու գնալ ռեստորան՝ պարելու, խմելու ու զվարճանալու: Ասենք՝ ես վստահ չեմ, որ մեր գյուղում տրակտոր ու կոմբայն է մնացել, որոնք կարելի է վարել և անգամ կով, որին կարելի է կթել: Մնացել են կիսատ–պռատ մարդիկ, ովքեր մի կերպ ավարտին են հասցնում իրենց կիսատ–պռատ կյանքը:

Բայցևայնպես: Հավանաբար ամենասիրուն բանն այն է, երբ արժանապատիվ կյանքն ավարտվում է արժանապատիվ ծերությամբ: Ու երջանիկ է այն պետությունը, ուր երջանիկ են ծերերը:

Երկու շիշ շնապսով ես այդ գիշեր չբավարարվեցի: Խմեցի այնպես, որ կարծեմ ողջ գիշեր երգեցի ու պարեցի գերմանացի թոշակառուների հետ ու ամբողջ հաջորդ ցերեկը չկարաղացա վեր կենալ մահճակալից: Միայն երեկոյան մի կերպ հավաքեցի ինձ ու իրերս և ճանապարհ ընկա դեպի Միլան: Կանգ առա միայն Լիխտենշտեյնում, մի քիչ շրջեցի գիշերային Վադուցով, հետո շարունակեցի ու «Մալպենզա» օդնավակայան հասա ճիշտ ժամանակին: Ոչ առանց հուզմունքի հրաժեշտ տվեցի «Ջուլիկին», սրահում թողնելով Վադուցի այգիներից պոկած մի գարնանային ծաղիկ, գտա դեպի Պրահա իմ չվերթի հաշվառումը և հերթ կանգնեցի: Վերջ արկածներին՝ մտածեցի, վերադառնում եմ տուն ու կարելի է մի գիրք գրել այս ամենի մասին: Երբևէ կպատկերացնե՞ի, որ Մշկոն կարող է դառնալ գրքի հերոս:

Ինչ իմանայի, սակայն, որ արկածներն այդան հեշտ չեն դադարելու և հերոսիցս այդքան հեշտ չեմ պրծնելու:

Նոր էի վայրէջք կատարել Պրահայում, և միացրել հեռախոսս, երբ զանգահարեց Փղիկը:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՄՇԿՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Այն մասին, թե ինչու KLM-ի օդանավը հարկադիր վայրէջք կատարեց Բեռլինում

Պրահայի «Վացլավ Հավել» օդանավակայանի «Սիքսթ» ավտովարձույթի տաղավարի աշխատակցուհուն խնդրեցի ինձ տալ «Ալֆա Ռոմեո Ջուլիետա»: Սակայն պարզվեց՝ Ջուլիկի հետ չեխերը ծանոթ չէին: Ինձ առաջարկեցին «Ֆոլքսվագեն Բիթլ», «Սիտրոեն DS 3» և «Մինի Կուպեր»: Ընտրեցի վերջինը, բայց երկար ժամանակ չէի կարողանում պատասխանել աշխատակցուհու այն հարցին, թե քանի օրով եմ ցանկանում վարձակալել մեքենան:

Դրանից ուղիղ կես ժամ առաջ ունեցել էի երկու հեռախոսազրույց: Առաջինը Սիրուշի հետ, երկրորդը՝ կնոջս: Այն, ինչ ասել էր Սիրուշը, փաստորեն, ստիպել էր ինձ զանգահարել կնոջս և ասել, որ այդ օրը ինձ չսպասեն և հայտնի չէ, թե ե՞րբ կվերադառնամ: Կինս՝ իրեն հատուկ հումորով հետաքրքրվել էր, հո՞ ուրիշ կին չեմ գտել եվրոպաներում, ես, առանց որևէ հումորի, հավաստիացրել էի, որ՝ ոչ:

Իսկ Սիրուշն ասել էր, որ Մշկոն գտնվում է Բեռլինի «Հելիոս» կլինիկայում: Ավելին՝ նա այնտեղ վիրահատվել է նախանցած երեկոյան: Իսկ դա Սիրուշը պարզել էր հետևյալ կերպ: Մի քանի ժամ առաջ նա հաղորդագրություն էր ստացել բանկից, ըստ որի իր քարտից վճարում է կատարվել Բեռլինի «Հելիոս» կլինիկայում՝ ուղիղ երկու հազար եվրո: Նա գտել էր կլինիկայի կոնտակտները, զանգահարել և խնդրել տեղեկություն հայտնել Մշկոյան ազգանունով հիվանդի մասին: Հիվանդանոցից տեղեկացրել էին, որ նման հիվանդ կա, և նա ենթարկվել է միզածորանի էնդոսկոպիկ վիրահատության, որի միջոցով հեռացվել է երիկամից եկած քարը: Վիրահատությունն անցել է հաջող, հիվանդն իրեն լավ է զգում և դուրս կգրվի մեկ օրից:

Բայց դա դեռ ամենը չէր: Ավելի հետաքրքիր էր այն, թե ինչպե՞ս էր Մշկոն հայտնվել Բեռլինի այդ հիվանդանոցում: Իսկ հայտնվել էր ահա թե ինչ կերպ: Նախանցած երեկոյան նա, հայտնի չէ, թե ինչո՞ւ, հայտնի չէ, թե ո՞ւմ հետ՝ Ամստերդամից թռել էր Մոսկվա: Օդ բարձրանալուց քառասունհինգ րոպե հետո բորտ ուղեկցորդուհին զեկուցել էր անձնակազմի հրամանատարին, որ ուղևորներից մեկը ցավի նոպաներ ունի, իսկ ևս տասը րոպե հետո, որ նույն ուղևորն ուշագնաց է եղել: Օդանավի հրամանատարը որոշում էր կայացրել հարկադիր վայրէջք կատարել մոտակա օդանավակայանում: Իսկ մոտակա օդանավակայանը Բեռլինում էր: Այստեղից էլ Մշկոյին շտապօգնության մեքենայով տեղափոխել էին «Հելիոս» կլինիկա և անհապաղ վիրահատել:

Պետք չէ կարծել, որ ես անմիջապես հավատացել էի այս ամենին: Բոլորովին: Հավատացել էի միայն այն ժամանակ, երբ գնացել էի Սիրուշի ուղարկած հղումով և «Դոյչե Վելլե» հեռուստաընկերության ինտերնետային կայքում կարդացել հետևյալ վերնագրով լուրը՝ «Ամստերդամ–Մոսկվա չվերթով KLM ավիաընկերության օդանավը արտակարգ վայրէջք է կատարել Բեռլինում»:

Փաստորեն Մշկոյանը դարձել էր միջազգային լրահոսի հերոս և, փաստորեն, այն ժամանակ, երբ ես Կարլսրուհեի մոտակայքում խմում էի գերմանացի ծերունիների հետ, ընկերոջս վիրահատում էին Բեռլինում:

Սակայն, ի՞նչ էր նշանակում միզածորանի էնդոսկոպիկ վիրահատություն՝ «Դոյչե Վելլեն» չէր հայտնում: Ինքս փորձեցի ճշտել դա:

Երիկամներում ձևավորված քարերը օրգանիզմից դուրս գալու ընթացքում հաճախ երկար ժամանակով կանգ են առնում միզածորանում՝ խանգարելով երիկամից մեզի հոսքին: Սա առաջացնում է երիկամային կոլիկ ՝ բարձր ուժգնության ցավ, որը համարվում է ամենածանր ցավերից մեկը, որը մարդը կարող է զգալ և կարող է անգամ հանգեցնել ուշաթափության: Նման դեպքերում անհրաժեշտ է անհապաղ էնդոսկոպիկ վիրահատության, որի նպատակն է հեռացնել քարերը միզուղիներից և վերականգնել երիկամից մեզի բնականոն արտահոսքը:

Ես, իհարկե ներողություն եմ խնդրում նման ինտիմ մանրամասներ ներկայացնելու համար, բայց դա անում եմ միայն այն

պատճառով, որ չեմ ուզում, որ դուք անհանգստանաք մեր բարեկամի առողջական վիճակով: Մշկոյանի հետ ամեն ինչ կարգին էր:

— Մեկ շաբաթով,— ասացի ավտովարձույթի տաղավարի աշխատակցուհուն,— ես կվերցնեմ մեքենան մեկ շաբաթով:

— Ստանդարտ ապահովագրական փաթեթի և սահմանափակ վազքի դեպքում դա կարժենա չորս հարյուր երեսունհինգ եվրո,— շատ արագ հաշվեց նա,— անսահմանափակ վազքի դեպքում՝ չորս հարյուր իննսունհինգ եվրո: Վճարելով մեկ օրվա համար հավելյալ քսան եվրո՝ դուք կարող եք ստանալ ապահովագրման ամբողջական փաթեթ:

— Որքա՞ն է սահմանափակ վազքը,— հետաքրքրվեցի ես:

— Ձեր վարձակալման ողջ ընթացքի համար՝ հազար հիսուն կիլոմետր,— կրկին շատ արագ ասաց աղջիկը՝ կարծես անգիր արած:

— Շատ լավ, ես կվերցնեմ առանց վազքի սահմանափակման ու առանց ապահովագրության ամբողջական փաթեթի: Իսկ մեքենան նավիգատոր ունի՞:

— Ոչ: Դուք կարող եք վերցնել նավիգատոր՝ մեկ օրվա համար վճարելով ինը եվրո յոթանասունհինգ եվրոսենթ: Յոթ օրվա համար դա կկազմի վաթսունութ եվրո քսանհինգ եվրոսենթ:

— Լավ,— համաձայնեցի ես ու կանգնասեղանի վրայից նայեցի, թե արդյո՞ք աշխատակցուհին հաշվիչ է օգտագործում: Պարզվեց, որ նա բազմապատկում էր մտքում:

«Մինի Կուպերը» նույնպես կարմիր գույնի էր՝ սև տանիքով և, ոչ իր գեղեցկությամբ, ոչ էլ իր ագրեսիվությամբ ամենևին չէր զիջում «Ջուլիկին»: Վերջինս, իհարկե, կնեղանա, բայց ճշմարտությունը մնում է ճշմարտություն:

Պրահա–Բեռլին՝ երեք հարյուր քառասունինը կիլոմետր՝ ազդարարեց նավիգատորը: Ըստ վերջինիս՝ այդ տարածությունը կարելի էր անցնել երեք ժամում, բայց ես անցա երկուսում՝ գերմանական ավտոբանի վրա, ուր չկա արագության սահմանափակում, մինչև վերջ սեղմելով գազի ոտնակը:

Շտապել էր պետք: Ճիշտ է հիվանդանոցից Մշկոն հազիվ թե որևէ տեղ փախչեր, բայց դե, ի՞նչ իմանաս, մեկ էլ՝ տեսար…

Ինչո՞ւ են բժիշկները հեռանում հայրենիքից կամ այն մասին, թե ինչպես Մշկոն ծլկեց հիվանդանոցից

«Հելիոս» կլինիկան, ասես, մի փոքրիկ քաղաք լիներ հսկա քաղաքի մեջ՝ չորս կողմից շրջապատված խիտ անտառով: Կամ գուցե՝ պետություն: Պետություն՝ իր օրենքներով, իր կառավարությամբ ու իր քաղաքացիներով: Կառավարությունն այստեղ բժիշկներն էին, քաղաքացիները՝ հիվանդները: Իսկ օրենքը մեկն էր՝ բուժել:

Հայաստանյան տիպային հիվանդանոցներին ու այնտեղ տիրող բարքերին սովոր իմ աչքը՝ ոչ մի կերպ չէր կարողանում համակերպվել այն ամենի հետ, ինչ տեսնում էր այստեղ: Նախևառաջ՝ խաղաղություն, որը կարծես բերում էր քամին՝ շրջապատող անտառից: Այստեղ ոչ թե արգելված է աղմկելը, այլ բոլորը գիտեն, որ չի կարելի դա անել, ոչ թե արգելված է հիվանդատեսների մուտքը, այլ նրանք գիտեն, թե ե՞րբ, ինչքա՞ն ժամանակով և ի՞նչ պարագայում է կարելի այցելել իրենց հիվանդին, ոչ թե արգելված է «պերեդաչի» տանելը, այլ պարզապես՝ դրա անհրաժեշտությունը չկա:

Երկրորդը՝ հոգատարություն: Այստեղ պարզապես հասկանում են թե հիվանդին, թե՝ հիվանդատեսին և վերաբերում այնպես, որ կարիք չլինի որևէ ավելորդության:

Եվ վերջապես, ազնվություն՝ թե՛ պրոֆեսիոնալ, թե՛ մարդկային առումով:

Բժշկությունը, հավանաբար, աշխարհի ամենակարևոր մասնագիտությունն է: Աստված բոլորին առողջություն տա, բայց, երբ հիվանդ է քո հարազատը, դու ապավինում ես Աստծուն ու բժշկին: Ի՞նչ տիեզերագնաց, ի՞նչ ինժեներ, ի՞նչ ուսուցիչ. բժիշկն է կարևոր, որ փրկի մարդու կյանքը: Ու դու աղոթում ես

Նկարը չկա

Աստծուն քո հարազատի ու բժշկի համար: Երանի այն բժիշկներին, ովքեր արժանի են աղոթքների:

Այստեղ՝ Գերմանիայում, Բեռլինի «Հելիոս» կլինիկայում բժիշկները և բոլոր բուժաշխատողները մի նպատակ ունեն՝ բուժել: Իհարկե, այդ բուժման համար պետք է վճարել, բայց սկզբունքն այստեղ հետևյալն է՝ վճարում ես, որ բուժվես: Մինչդեռ աշխարհի շատ այլ վայրերում, այդ թվում՝ իմ հայրենիքում, շատ դեպքերում, ավա՜ղ, այդպես չէ: Իհարկե կան բազմաթիվ արժանավոր բժիշկներ, բայց նրանք մի կերպ են խուսափում ընդհանուր առողջապահական ճահճում խեղդվելուց: Որովհետև սկզբունքն այստեղ այլ է. ոչ թե՝ վճարում ես, որ բուժվես, այլ՝ նախ վճարիր, հետո կերևա:

Պետությունը չի կարողանում պահել իր գիտնականներին, չի կարողանում պահել իր արվեստագետներին, չի կարողանում պահել իր մարզիկներին՝ լավ չէ, բայց, հերն էլ անիծած: Ինչպե՞ս է լինում, որ պետությունը չի կարողանում պահել իր բժիշկներին:

«Հելիոս» կլինիկա հասել էի ուշ երեկոյան, և ինձ ասացին, որ հիվանդերի տեսակցությունն այդ ժամին արգելված է: Առաջարկեցին գալ առավոտյան: Ինձ նաև հավաստիացրին, որ Մշկոն հիվանդանոցում է:

Իսկ առավոտյան ընդունարանում ինձ անակնկալ էր սպասվում: Երբ հետաքրքրվեցի, թե որտեղ է Մշկոյանը, պարզվեց, որ այստեղ նրան բոլորն են ճանաչում: Աշխատակցուհին խնդրեց սպասել և հեռախոսով կանչեց ինչ–որ մեկին: Քիչ անց մոտեցավ բժշկական համազգեստով բարձրահասակ, նիհարակազմ, հավանաբար երեսունը դեռ չբոլորած մի երիտասարդ, ում ահռելի քթից անմիջապես հասկացա, որ հայ է:

— Դուք նրա բարեկամն ե՞ք,— հարցրեց բժիշկը՝ բարևելուց ու ծանոթանալուց հետո: Նրա անունը Արտաշես էր:

— Ընկերը,— մի քիչ վախվորած պատասխանեցի ես:

— Շատ հետաքրքիր ընկեր ունեք,— ժպտաց Արտաշեսը,— մի անհանգստացեք, նրա հետ ամեն ինչ կարգին է:

— Կարո՞ղ եմ նրան տեսնել,— ուրախացա ես:

— Հիմա չէ: Հիմա նա հետազոտություն է անցնում: Բժիշկը մի պահ մտածեց՝ ուշադիր նայելով դեմքիս, հետո

շարունակեց,— նա ուզում էր գնալ, բայց հիմա դեռ շուտ է: Լավ կլինի, որ առնվազն մեկ օր էլ մնա բժիշկների հսկողության տակ: Ու, քանի որ նրան ոչ մի կերպ հնարավոր չէր համոզել, մենք որոշեցինք մեկ անգամ ևս հետազոտություն անցկացնել: Պատասխաններից կախված՝ մենք կհասկանանք, թե ինչպե՞ս վարվել:

— Ես Ձեզ շատ լավ հասկանում եմ…

Բժիշկը նորից ուշադիր զննեց ինձ, կարծես ուզում էր պարզել, արժե՞ ինձ վստահել, թե՝ ոչ, ապա ասաց.

— Ես պատրաստվում էի սուրճ խմել, կարող եք միանալ:

— Սիրով:

Մենք մտանք սրճարան, մոռացանք Մշկոյին ու սկսեցինք զրուցել:

Ես նախ հետաքրքրվեցի Բեռլինում ապրող ու աշխատող իմ հայրենակից բժշկից, թե ինչպե՞ս է նա հայտնվել այստեղ:

— Այստեղ շատ հայ երիտասարդ բժիշկներ կան,— կարծես արդարացավ նա,— ոչ միայն Բեռլինում, այլև ողջ Գերմանիայում: Խոսքը հարյուրավորների մասին է:

— Հարյուրավորնե՞րի,— զարմացա ես:

— Այո:

— Եվ ինչպե՞ս է դա ստացվում:

— Ամեն ինչ շատ պարզ է: Կա ընդամենը մեկ բացատրություն՝ բոլորը ուզում են լավ բժիշկ դառնալ, իսկ Գերմանիան տալիս է այդ հնարավորությունը:

— Իսկ Հայաստանում չի՞ կարելի լավ բժիշկ դառնալ:

— Հասկանո՞ւմ եք, դա մի քիչ դժվար է բացատրել,— Արտաշեսը խնդրեց, որ սուրճը լցնեն ստվարաթղթե բաժակների մեջ,— բժշկությունը համակարգ է: Վաղուց անցել են անհատ՝ լավ, տաղանդավոր, անգամ՝ հանճարեղ, բժիշկների ժամանակները: Լավ բժիշկը կարող է լավ բժշկել միայն լավ, կայացած համակարգում:

— Եվ Հայաստանում այդ համակարգը կայացած չէ՞:

— Իհարկե, կայացած չէ:

— Իսկ գուցե դա այդպես է, որովհետև հեռանում են լավագույն մասնագետնե՞րը:

— Իսկ գուցե նրանք հեռանում են, որովհետև համակարգը չի կայանում:

Ես զգում էի, որ այս երիտասարդը խոսում էր ցավով, առանց մեծամտության ու ավելորդ ինքնավստահության: Ու դրա համար էլ հարցրեցի:

— Իսկ ինչ է սպասվում այդ դեպքում:

— Ոչ մի լավ բան, եկեք դուրս գանք ծխենք:

Մենք վերցրինք սուրճի ստվարաթղթե բաժակները և դուրս եկանք՝ մաքուր օդին ծխելու:

— Հասկանում եք,— շարունակեց Արտաշեսը,— այսօր Երևանի բժշկական համալսարանի հարյուր շրջանավարտից ինսունը ուղիներ է փնտրում օրդինատուրան դրսում անցկացնելու համար: Նրանցից կեսը գտնում է այդ հնարավորությունը: Իսկ դրանք լավագույն ուսանողներն են, որովհետև վատերին դրսում չեն վերցնի: Դե, հիմա պատկերացրեք, թե ինչ է ստացվում:

— Ես կարծում եմ, որ Դուք չափազանցնում եք:

— Եթե, անգամ ես չափազանցնում եմ կիսով չափ, թեպետ դա այդպես չէ, միևնույն է իրականությունը ավելի լավը չի դառնում:

— Իսկ նրանք, ովքեր ուղիներ չեն փնտրում դուրս գնալու համար:

— Նրանք հիմնականում ապահովված ընտանիքներից են, ովքեր չունեն փողի խնդիր: Եվ կարող են մի քանի տարի աշխատել նույնիսկ անվճար:

— Այսինքն, հիմնական խնդիրը փողն է:

— Իհարկե, նաև: Պատկերացրեք ինձ նմանների վիճակը. ես Տավուշից եմ, իմ ծնողները հասարակ գյուղացիներ են: Նրանք մի կերպ հոգացին իմ ուսման ծախսերը, բայց այլևս չէին կարող: Ես սիրում եմ ծնողներիս, սիրում եմ ժողովրդիս ու իմ հայրենիքը, բայց ես նաև պետք է փող աշխատեմ, ու, որ կարևորն է, ես ուզում եմ լավ բժիշկ դառնալ:

— Պետք չէ արդարանալ: Ես քեզ հասկանում եմ,— անկախ ինձանից՝ անցա «դու»-ի,— բայց ես կգերադասեի, որ դու այս ամենն ասելուց բացի՝ ասեիր նաև, որ փող աշխատելուց ու

լավ բժիշկ դառնալուց հետո, պատրաստվում ես վերադառնալ հայրենիք:

Արտաշեսը չպատասխանեց ինձ: Նետեց սիգարետը աղբամանը, անմիջապես վառեց նորը ու սկսեց լուռ մտածել:

Իսկ ես մտածեցի, որ դա էլ լավ է, որ նա մտածում է:

Հետո մտանք հիվանդանոց, և հայրենակիցս ուղեկցեց ինձ այն բաժանմունքը, ուր պառկած էր Մշկոյանը և խնդրեց նստել սպասասրահում, մինչ իմ համար այցելության թույլտվություն կստանար: Ես տեղավորվեցի բազմոցին ու սկսեցի մտածել, թե ինչպես վարվեմ Մշկոյի հետ: Նրան ինչ-որ բան բացատրելը, նրա վրա զայրանալը, անգամ անպատվելն ու ամոթանք տալը անիմաստ գործ էր: Ես դա շատ լավ գիտեի:

Մի անգամ մեր խմբագրությունում, մենք խմում էինք Մշկոյի հետ, երբ ներս մտավ մեր երիտասարդ լրագրողներից մեկը՝ ձեռքին շոկոլադե կոնֆետների մի տուփ և մի շիշ կոնյակ: Երբ հարցրինք, թե ինչ առիթով է, ասաց, որ ինչ-որ միջազգային կազմակերպության կողմից դրամական մրցանակ է ստացել բնապահպանական թեմայով իր ռեպորտաժներից մեկի համար: Լրագրող այդ աղջիկը մարզից էր, մեզ մոտ աշխատում էր կես դրույքով ու ստանում շատ ցածր աշխատավարձ, որը հազիվ էր բավականացնում իր կեցությունն ապահովելուն: Մենք, իհարկե, շատ ուրախացանք նրա հաջողության համար, շնորհավորեցինք և բացեցինք կոնյակը: Մինչդեռ Մշկոն՝ իրեն հատուկ անհամեստությամբ հարցրեց.

— Որքա՞ն է մրցանակը:

— Հազար դոլար,— ամոթխած պատասխանեց աղջիկը:

Մշկոն մի սուլոց արձակեց և ասաց.

— Գուլյայե՞մ:

Դա նշանակում էր՝ «ուրեմն այսօր քեֆ ենք անում ու ծախսում՝ այդ գումարը»:

Մենք, իհարկե, կանխեցինք այդ սրիկայությունը, ճանապարհեցինք աղջկան, դատարկեցինք նրա բերած կոնյակի շիշը, այլ շշեր ևս, հետո Մշկոն, սովորության համաձայն, անհետացավ: Որոշ ժամանակ անց նա զանգեց, և ասաց որ մեզ է սպասում երևանյան ակումբներից մեկում: Երբ գնացինք, նա

այնտեղ էր լրագրող աղջկա հետ և հասցրել էր պատվիրել այնքան, որ աղջկա ստացած դրամական մրցանակը հազիվ թե բավականացներ հաշիվը փակելուն:

Մենք, իհարկե, էլի զայրացանք Մշկոյի վրա, էլի ամոթանք տվեցինք նրան, և, ինչ եք կարծում, ինչ պատասխանեց Մշկոն.

— Դուք ոտնահարում եք իմ իրավունքները,— ասաց նա, ապա հղում արեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության երկրորդ գլխի երեսունմեկերորդ հոդվածի առաջին կետին, որն անգիր էր արել,— «Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք»:

Այնպես որ, հիմա էլ Մշկոյին ամոթանք տալն անիմաստ էր, նա դարձյալ կխոսեր իր իրավունքների մասին և այս անգամ կարող էր հղում անել ինչ–որ միջազգային կոնվենցիաների: Ի վերջո նա քրեորեն պատժելի ոչ մի արարք չէր արել, պարզապես վերցրել էր իր «հարսնացուի» կրեդիտ քարտը, ընդ որում, վերջինիս համաձայնությամբ և ծախսում էր դրա վրա եղած գումարը՝ հետագայում վերականգնելու պայմանով: Ոչ էլ կարող էի նրան մեղադրել այն բանի համար, որ ես փաստորեն թողել եմ իմ բանուգործն ու մեկ շաբաթ է նրան եմ փնտրում: Որովհետև նա պարզապես կասեր՝ ո՞վ էր քեզ խնդրել: Մնում էր մեկ տարբերակ՝ պարզապես վերցնել Մշկոյի մոտից Փղիկի քարտը: Ու ես հենց դա էլ որոշել էի անել:

Բայց պարզվեց, որ դա անհնար էր: Որովհետև, որպեսզի վերցնեի քարտը Մշկոյից, նախ պետք է տեսնեի նրան:

Երբ բժիշկ Արտաշեսը դուս եկավ ուռոլոգիական բաժանմունքից, նրա դեմքը սփրթնած էր՝ չգիտես, վախից, անհանգստությունից, թե «մանթրաժից»: Ավելի շուտ՝ վերջինից:

— Ձեր ընկերը…— կմկմաց նա,— Ձեր ընկերը…: Գնացել է:

— Ինչպե՞ս թե՝ գնացել է:

— Չգիտեմ…: Գնացել է:

— Այսինքն՝ փախե՞լ է:

— Դե,— շարունակեց կմկմալ բժիշկը,— չի կարելի այդպես ասել:

— Կբացատրե՞ք, խնդրում եմ,— պնդեցի ես:

— Հասկանո՞ւմ եք,— բժիշկը ակնհայտորեն իրեն չէր գտնում,— մենք ավարտել էինք բուժումը… Պարզապես խորհուրդ էր տրվում ևս մեկ օր անցկացնել հիվանդանոցում: Նրան տարել էին «սոնոգրաֆիայի» ու երբ պարզվել էր, որ նրա մոտ ամեն ինչ նորմալ է, ասել էր, որ ուզում է դուրս գալ ծխելու: Յուրաքանչյուր բաժանմունք ունի իր հետին մուտքը, որը տանում է պարտեզ: Նա դուրս է եկել պարտեզ ու հետո՝ անհետացել:

— Իսկ նրա իրե՞րը:

— Բանն այն է, որ նա ոչ մի իր չուներ:

Ինձ մնում էր ճշտել երկու բան. որքանո՞վ էր Մշկոյի առողջության համար վտանգավոր հիվանդանոցում չլինելը, և արդյո՞ք նա պարտք մնացել էր այստեղ: Պարզվեց, որ երկու դեպքում էլ անհանգստանալու ոչինչ չկար:

Երբ այլևս չկա տրամաբանություն

Երբ զանգահարեցի Սիրուշին և պատմեցի այս ամենի մասին, չհավատաց: Եվ, գուցե, իրավունք ուներ: Նա իհարկե մեկ ամսվա ընթացքում հասցրած չէր լինի ճանաչել Մշկոյին այնպես, ինչպես ես էի նրան ճանաչել տարիների ընթացքում: Բայց կարևորն այն էր, որ Սիրուշին այլևս հետաքրքրում էր ոչ թե իր փողը, ոչ թե այն, որ իր «փեսացուն», փաստորեն, փախել է իրենից, այլ բացառապես Մշկոյանի առողջությունը: Նա, իսկապես, անհանգիստ էր, և վախենում էր, որ Մշկոյի հետ ինչ–որ լուրջ բան է պատահել, և ես չեմ ասում: Ստիպված էի փոխանցել հեռախոսը բժիշկ Արտաշեսին, և միայն դրանից հետո Փղիկը հանգստացավ:

Բայց պետք էր հասկանալ, թե ո՞ւր կարող էր հիվանդանոցից գնացած լինել Մշկոն: Ամենայն հավանականությամբ՝ օդանավակայան: Բեռլինում նա հայտնվել էր, բառի բուն իմաստով՝ օդից, երբ վատացել էր ինքնաթիռում, և այն հարկադիր վայրէջք էր կատարել այստեղ: Հետևաբար, ըստ տրամաբանության, նա հիմա պիտի վերականգներ իր ընդհատված թռիչքը: Տրամաբանությունը, մեր բարեկամի պարագայում, իհարկե, լավագույն բանը չէ, որի վրա կարելի է հենվել, բայցևայնպես՝ այլ տարբերակ ես չունեի:

Ու, քանի որ, Մշկոյանի ընդհատված ուղևորությունը դեպի Մոսկվա էր, ես համացանցում փնտրեցի, թի ի՞նչ մոտակա թռիչքներ կան այդ ուղղությամբ:

Ուղիղ չվերթ մեկն էր, մնացածը՝ այլ քաղաքներում վայրէջքով էին: Իսկ այդ միակ ուղիղ չվերթին, որն իրականացվելու էր «Թեգել» օդանավակայանից, մնում էր երեք ժամ: Կարելի էր հանգիստ հասցնել:

Ես հրաժեշտ տվեցի բժիշկ Արտաշեսին, հույս հայտնելով, որ երբևէ կհանդիպենք Հայաստանում ու մաղթեցի նրան շատ

փող ունենալ: Հետո շտապեցի օդանավակայան: Ու էլի, այս էլ որերորդ անգամ, սխալվեցի:

Հիվանդանոցից Մշկոն գնացել էր ոչ թե օդանավակայան, այլ՝ երկաթուղային կայարան: Այդ մասին ինձ տեղեկացրեց Սիրուշը, երբ կանգնած էի խցանման մեջ: Տեղեկացրեց նաև, որ Մշկոն երեսունինը եվրո արժողությամբ գնացքի տոմսը գնել է «Հաուբթբահնհոֆ» կայարանից:

Ինձ որոշ բաներ զարմանալի թվացին: Նախ, ինչո՞ւ էր Մշկոն որոշել Մոսկվա գնալ գնացքով՝ եթե նույն օրը կար օդանավի չվերթ և դրա համար տոմս: Երկրորդ՝ պարզապես հնարավոր չէր, որ Բեռլին–Մոսկվա գնացքի տոմսն արժենար ընդամենը երեսունինը եվրո:

Պարզվեց, որ իմ կասկածները տեղին էին: «Հաուբթբահնհոֆ» կայարան հասնելով՝ ես իմացա, որ Մոսկվայի գնացքը շարժվում է ուշ երեկոյան: Փոխարենը, տարբեր կառամատույցներից մի քանի գնացք պատրաստվում էին մեկնել Ֆրանկֆուրտ, Մյունհեն, ու Վիեննա, և ևս երեքը մեկնել էին քիչ առաջ՝ Ստոկհոլմ, Հռոմ և Կրակով: Որքան, որ դա հնարավոր էր, փնտրեցի Մշկոյին կառամատույցներին ու մեկնման պատրաստվող գնացքների մեջ… չգտա: Հետո ճշտեցի արդեն մեկնած գնացքների տոմսերի արժեքը: Համընկնում էր միայն Կրակովինը, այն արժեր ուղիղ երեսունինը եվրո: Ձեռքի հետ ճշտեցի նաև Մոսկվայի տոմսի գինը. այն երեք անգամ ավելի էր: Ուրեմն, եթե անգամ Մշկոն եկել էր կայարան՝ այստեղից գնացքով Մոսկվա մեկնելու, ընթացքում ինչ որ բան փոխվել էր, և նա Մոսկվայի փոխարեն մեկնել էր Կրակով:

Ես պատկերացում չունեի, թե ի՞նչ էր տեղի ունեցել ու ի՞նչ էր փչել ընկերոջս խելքին, որ նա որոշել էր գնալ այնտեղ: Բայց քանի որ Մշկոյին գտնելը ինձ համար այլևս դարձել էր պատվի հարց ու նաև, որովհետև երբեք չէի եղել Կրակովում, որոշեցի այս անգամ էլ գնալ ընկերոջս հետքերով:

Բեռլին–Կրակով՝ վեց հարյուր կիլոմետր՝ հուշեց նավիգատորը: Այդ ճանապարհը հանգիստ կարելի էր անցնել հինգ ժամում: Մինչդեռ գնացքը, ըստ չվացուցակի, գնում էր ութ ժամ տասնհինգ րոպե: Հետևաբար կարելի էր հասնել Կրակովի կայարան և այնտեղ բռնել Մշկոյի ականջից: Մեկ կամ երկու օր

ման գալ Կրակովում, ապա գնալ Պրահա, հանձնել մեքենան և միասին վերադառնալ Երևան՝ ու այդ ամբողջ ընթացքում Մշկոյի ականջից բռնած: Պետք է ասեմ, որ ես բավականին զայրացած էի ընկերոջս վրա:

Զայրացած էի հիմնականում այն պատճառով, որ դադարել էի հասկանալ նրան: Ավելի ճիշտ՝ նրա գործողություններն ու տեղաշարժը: Անգամ Մշկոյի գործողություններում ու տեղաշարժում պիտի լիներ, գոնե ինձ համար, հասկանալի տրամաբանություն: Մինչդեռ այն վերացել էր՝ սկսած Ամստերդամից: Շվեյցարիա Մշկոն մեկնել էր ձյան համար: Եվ դա էր պատճառը, որ Ցյուրիխից հասել էր Ալպերում գտնվող Ցերմատ: Այստեղից Փարիզ մեկնել էր հանուն կնոջ, և դա էլ հասկանալի էր: Մի լավ զվարճացել էր Փարիզում և նույն կնոջ, կամ նրա ընկերուհու հետ, կամ մենակ գնացել էր Ամստերդամ՝ շարունակելու զվարճանքները: Բոլորովին հասկանալի չէր, թե ինչո՞ւ էր որոշել Ամստերդամից մեկնել Մոսկվա: Որովհետև Մոսկվայի, ավելի ստույգ՝ այնտեղ բնակվող մուլտիմիլիոնատեր եղբոր հետ, նա կապվում էր միայն այն դեպքում, երբ վերջանում էին փողերը, մինչդեռ, այդ պահի դրությամբ, նա դեռ ուներ երեք հարյուր հազարից ավելի եվրո: Ինչևէ, Մոսկվա նա թռել էր, բայց տեղ չէր հասել: Փոխարենը KLM ավիաընկերության պատմության մեջ գրանցվել էր հավանաբար առաջին հարկադիր վայրէջքը: Եվ Մշկոն հայտնվել էր Բեռլինում՝ միզածորանում լոված քարով: Այստեղ բուժվելուց հետո, նա, տրամաբանորեն, պիտի շարունակեր ընդհատված ուղևորությունը դեպի Մոսկվա: Բայց, գրողը տանի, ինչո՞ւ էր որոշել գնալ Կրակով: Եթե ընդունենք, որ վիրահատությունից հետո նրա սիրտը դարձյալ զվարճանալ էր ուզել, ապա կարող էր գնալ, ասենք՝ Բադեն Բադեն, կամ մնալ հենց Բեռլինում, ուր նույնպես զվարճանալու հիանալի վայրեր կան: Մինչդեռ մեկնել էր Կրակով, որն իհարկե Եվրոպայի ամենագեղեցիկ ճարտարապետությունն ունեցող քաղաքներից մեկն է, սակայն անհնար էր պատկերացնել Մշկոյին ճարտարապետական կոթողներով զմայվելիս: Մնում էր ենթադրել, որ նա Կրակովում կամ հին ծանոթներ ունի, կամ Բեռլինի «Հաուբթբահնհոֆ» կայարանում անսպասելի ծանոթացել է կրակովցի ինչ–որ կնոջ հետ ու որոշել ընկերակցել նրան:

Լեհ ոստիկանները կամ պարտադրանքը երբեք լավ տեղ չի տանում

Լեհաստանն ինձ դիմավորեց չքնաղ մայրամուտով, և Օդեր գետում արտացոլվող նարնջագույն արեգակն ինձ բարի ճանապարհ մաղթեց: Չգիտեմ՝ այն որքանով էր բարի: Քիչ անց, վճարովի ավտոճանապարհ մտնելիս, ինձ կանգնեցրին ճանապարհային ոստիկանները: Ես անդրադարձա, որ Եվրոպայում ութ օր ճամփորդելու ընթացքում առաջին անգամ էի տեսնում ճանապարհային ոստիկանների: Ընդ որում՝ ոստիկանների, որոնց հետ կար չափազանց չար աչքերով մի գերմանական հովվաշուն: Բայց քանի որ ոչ մի սխալ բան չէի արել ու վստահ էի, որ փաստաթղթերս կարգին են, հանգիստ կանգնեցի ու անտրտունջ սպասեցի, մինչ նրանք կստուգեին վարորդական իրավունքս ու մեքենայի վկայականը: Բայց ոստիկանները դրանով չբավարարվեցին և խնդրեցին իջնել մեքենայից: Պետք է ասել, որ հատկապես անհյուրընկալ էր շունը: Նա, իհարկե, դնչկալով էր, բայց, միևնույն է, չափազանց ագրեսիվ էր պահում իրեն: Նախ՝ մի լավ հոտոտեց ինձ, հետո, երբ ոստիկանները, առանց թույլտվություն հարցնելու բացեցին մեքենայի դռները, շունը գլուխը մտցրեց սրահ և սկսեց հոտոտել հետևի նստատեղին դրված բաճկոնս:

— Ի՞նչ է տեղի ունենում,— հարցրի ոստիկաններին:

— Սա Ձե՞ր բաճկոնն է:

— Բնականաբար:

— Մենք պետք է նայենք գրպանները:

Ես իսկապես չէի հասկանում, թե ի՞նչ է տեղի ունենում: Վերջին անգամ, երբ եղել էի Լեհաստանում, իսկ դա հեռավոր հազար ինն հարյուր իննսունութին էր, այն դեռ Եվրոմիության անդամ չէր և շատ բաներ այստեղ դեռ հեռու էին եվրոպական

չափանիշներից, այդ թվում՝ ոստիկանության աշխատանքը: Բայց, չէ՞ որ հիմա, վաղուց արդեն, երկիրն անդամակցում էր Եվրոպական Միությանը և, հենց այնպես, առանց պատճառի, քիթը խոթել մարդկանց անձնական իրերի մեջ, պետք է որ այստեղ դադարած լինեին:

Հենց այդպես էլ ասացի ոստիկաններին, բայց նրանք ուշադրություն չդարձրին ու նախ քրքրեցին բաճկոնիս գրպաններն ու աստառը, ապա՝ բացեցին բեռնախցիկն ու անցան ճամպրուկիս:

Ես զարմացած ու ավելի շատ զայրացած հետևում էի նրանց գործողություններին ու չգիտեի՝ ինչ ասել: Այդ ամենը բավական երկար տևեց, որովհետև շունը լրջորեն սևեռվեց նաև ճամպրուկիս վրա ու երկար հոտոտեց հատկապես վերնաշապիկներիցս մեկը՝ տարօրինակ գռմռոցներ արձակելով: Եվ հենց այդտեղ էլ ես հասկացա, թե ինչն է խնդիրը: Դա այն վերնաշապիկն էր, որը հագիս էր երկու օր առաջ՝ բաճկոնիս հետ միասին: Իսկ որտե՞ղ էի ես երկու օր առաջ և ի՞նչ էի անում: Մի խոսքով, շունն առել էր Ամստերդամի cofe eshop–ից գնված և տեղում ծխած յոթերորդ համարի «Տեսիլքներ և ուվականների» հոտը, ինչը, փաստորեն, չէր անցել այս ամբողջ ընթացքում:

Բայց հոտի համար տուգանք, առավել ևս պատիժ նախատեսված չէ: Այնպես որ, ես մի սիգարետ վառեցի ու համբերատար սպասեցի, մինչ ոստիկաններն ու նրանց ոստիկան շունը կավարտեն իրենց զննումը՝ աղոտ հույսեր փայփայելով, որ ինձանից առնվազն ներողություն կխնդրեն պատճառած անհարմարության համար: Սակայն ներողության ինձ չարժանացրին, պարզապես շրջվեցին ու գնացին դեպի իրենց մեքենան՝ մի կերպ համոզելով շանը, որ հետևի իրենց: Վերջինս, շարունակելով գռմռալ, մի հրաժեշտի հայացք նետեց վրաս, ու, եթե դնչկալը չլիներ, հավանաբար կասեր՝ մենք դեռ կհանդիպենք:

Որքա՜ն դանդաղ են ընթանում բարեփոխումներն աշխարհում: Թվում է, թե ի՞նչ մեծ բան է ոստիկանի կողմից մի ներողություն խնդրելը մեկից, ում անիմաստ նեղություն է պատճառել: Բայց, արի ու տես, որ նա դա չի անում: Եթե այդպես լիներ, ասենք ասիական կամ աֆրիկյան մի բռնապետությունում, կարելի էր հասկանալ, բայց մի երկրում, որին շատ մոտ բաբախում է

եվրոպական քաղաքակրթության սիրտը և որն ինքը դարերով մասնակից է եղել այդ քաղաքակրթության ձևավորմանը, դեռ շատ բաներ այն չեն:

Պատճառը, հավանաբար, ընդհատումն է: Ընդհատումն ու պարտադրանքը:

Յուրաքանչյուր ժողովուրդ և երկիր պիտի ինքնուրույն հաղթահարի այն ճանապարհը, որը տանում է դեպի քաղաքակրթություն: Դեպի բարեկեցիկ և արդար կյանք: Այդ ճանապարհը տարբեր ժողովուրդների մոտ կարող է լինել տարբեր երկարության ու բարդության, բայց միևնույն է, այն պետք է անցնել համբերատար ու ինքնուրույն: Սակայն լինում է այնպես, որ ճանապարհն այդ ընդհատվում է: Ընդհատում են ներսից կամ դրսից և երբեմն տարիներով, երբեմն տասնամյակներով շեղում ժողովրդին իր բնականոն ընթացքից: Հետո, երբ ժողովուրդը դուրս է գալիս շեղումից, միևնույն է, բնականոն ընթացքին վերադառնալը տևում է երկար, գրեթե նույնքան, որքան շեղումն էր: Լեհաստանն, օրինակ, շուրջ չորս տասնամյակ ապրել էր խորհրդային բարքերով ու կանոններով և դրանց ամբողջական հաղթահարումը հավանաբար կպահանջի նույնքան ժամանակ:

Պարտադրանքը երբեք լավ տեղ չի տանում՝ լինեն պարտադրողները կոմունիստները, թե՝ դեմոկրատները, իսլամիստ ծայրահեղականները, թե՝ խաչակիրները:

Իսկ Լեհաստանը չքնաղորեն կանաչ երկիր է, լեհերը՝ անսահման հետաքրքիր ժողովուրդ, Կրակովը՝ հավանաբար աշխարհի ամենասիրուն քաղաքներից: Ես դա վստահաբար եմ ասում, որովհետև արդեն մի ամբողջ օր շրջում եմ այստեղի փողոցներով, նրբանցքներով, հրապարակներով ու Վիսլա գետի ափերով:

Մինչ այդ, «Կրակով գլովնի» երկաթուղային կայարան էի հասել ժամանակից շուտ: Բեռլինի գնացքի ժամանմանը դեռ երկու ժամ կար: Որպեսզի ոչ մի դեպքում բաց չթողնեմ Մշկոյին, մի փոքրիկ պլան էի մշակել: Մոտեցել էի կայարանում հերթապահություն իրականացնող երկու ոստիկանի, ներկայացել իբրև լրագրող և ասել, որ օգնության կարիք ունեմ: Ի՞նչ օգնություն՝ զարմացել էին ոստիկանները: Բանն այն է՝ բացատրել էի, որ

շուտով Բեռլինից Կրակով է ժամանում մի հայտնի օլիգարխ և ես ուզում եմ նրանից ինտերվյու վերցնել: Բայց քանի որ սույն օլիգարխը ճամփորդում է ինկոգնիտո, ես չգիտեմ, թե որ վագոնում է նա և վախենում եմ չգտնել նրան: Իսկ մենք ինչ կարող ենք անել՝ կրկին չէին հասկացել ոստիկանները: Ես հեռախոսիս մեջ ցույց էի տվել Մշկոյի մի նկար, որն արվել էր տարիներ առաջ, Ծաղկաձորի մի ռեստորանում և որտեղ Մշկոն արջի հետ էր և ասել ոստիկաններին, որ ահա այն օլիգարխը, որից ուզում եմ հարցազրույց վերցնել: Իսկ նրանց խնդրում եմ անցնել բոլոր վագոնների մոտով և օլիգարխին հանդիպելու դեպքում մի պահ կանգնեցնել նրան և կանչել ինձ: Չգիտեմ՝ նկարի միջի արջն էր տպավորել ոստիկաններին, թե Մշկոն, բայց նրանք համաձայնել էին՝ իհարկե որոշակի խրախուսման դիմաց: Հինգ հարյուր զլոտի՝ ասել էր ոստիկաններից մեկը: Պետք է խոստովանել, որ նրանք ամենայն պատասխանատվությամբ էին կատարել իրենց գործը և Մշկոյանին ավելի ջանադրաբար էին փնտրել, քան, եթե փնտրելու լինեին միջազգային հետախուզման մեջ գտնվող ինչ–որ հանցագործի: Բայց՝ ապարդյուն: Մշկոն գնացքում չէր…

-

Ինչ–որ տեղ Արևելյան Եվրոպայում

Մեկ հրաշալի օր Կրակովում անցկացնելուց հետո ես սկսեցի մտածել հետագա անելիքներիս մասին: Ինձ, իհարկե, չափազանց հուզում էր այն հարցը, թե ո՞ւր էր անհետացել Մշկոն գնացքից, բայց որոշեցի մոռանալ այդ մասին: Միևնույն է՝ անիմաստ էր:

Ավտոմեքենայի վարձակալության ավարտին դեռ վեց օր կար, և որոշեցի այդ վեց օրում շրջել այն վայրերով, ուր նախկինում չէի եղել: Եթե այդ ընթացքում Մշկոյից տեղեկություն ստանայի ու եթե նա լիներ մոտակայքում, կվերականգնեի փնտրտուքները, այլապես կարելի էր շարունակել վայելել Արևելյան Եվրոպան: Ու քանի որ ոչ մի տեղ չէի շտապում, որոշեցի խուսափել ավտոմայրուղիներից և ճամփորդել գյուղերով ու ավաններով:

Կրակով–Բրատիսլավա՝ չորս հարյուր կիլոմետր և վեց ժամ քառասունհինգ րոպե՝ ազդարարեց նավիգատորը:

Նոր էի դուրս եկել քաղաքից, երբ տեսա ճամփեզրին կանգնած երիտասարդ hitchiker–ների: Տղա ու աղջիկ էին, հավանաբար՝ քսան տարեկան: Նրանց կողքին դրված էին ուսապարկերը, իսկ ուսապարկերից մեկի վրա՝ մի կիթառ ու նաև այդ կիթառն էր պատճառը, որ ես կանգ առա: Մոտեցավ աղջիկը և գլուխը մտցրեց պատուհանից ներս: Նա շեկ խոպոպներ ուներ ու երկնագույն կրակոտ աչուկներ: Օրենքով պիտի հարցներ, թե ո՞ւր եմ գնում, կամ ասեր, թե ուր են գնում իրենք, մինչդեռ երջանիկ հայացքով նայեց ինձ ու ասաց անգլերենով.

— Ինչ սիրուն մեքենա ունեք… Ես միշտ երազել եմ «Մինի» ունենալ ու հենց՝ կարմիրը: Ես ճշտել եմ, դրանք շատ թանկ չեն: Հատկապես օգտագործվածները: Իսկ նորը, բնականաբար, չեմ կարող ինձ թույլ տալ: Գիտե՞ք, իմ ընկերուհիներից մեկը…

Բայց, ես ստիպված էի ընդհատել նրան:

— Այս մեքենան իմը չէ: Իսկ դուք ո՞ւր եք գնում:

— Մենք նույնպես գնում ենք Չեխիա, ավելի ճիշտ՝ Պրահա,— նույն ոևորությամբ շարունակեց աղջիկը,— ես միշտ երազել եմ լինել Պրահայում, բայց միշտ չէր ստացվում: Ձեր երկրի մայրաքաղաքը աշխարհի ամենասիրուն քաղաքն է: Գիտե՞ք իմ ընկերուհիներից մեկը…

— Ինչո՞ւ եք որոշել, որ ես գնում եմ Պրահա,— կրկին ընդհատեցի նրան,— և, որ այն իմ երկրի մայրաքաղաքն է:

— Ինչպե՞ս թե,— զարմացավ աղջիկը,— Ձեր մեքենայի համարանիշը չեխական է:

Իսկապես, ես դրան չէի անդրադարձել, չէ որ մեքենան վերցրել էի Պրահայի օդանավակայանից և այն պատկանում էր «Սիքսթի» չեխական մասնաճյուղին: Բայց, միևնույն է, առայժմ Պրահա վերադառնալ չէի պատրաստվում և այդպես էլ ասացի աղջկան:

— Իսկ ո՞ւր եք գնում,— առանց որևէ հուսահատության հարցրեց նա:

— Բրատիսլավա:

— Մի րոպե,— աղջիկը մի քիչ հետ գնաց, հանեց հեռախոսը, ըստ երևույթին բացեց քարտեզը, նայեց այն ու վստահ շարունակեց,— ոչ մի տարբերություն, կարելի է նաև Բրատիսլավա, մենք կգանք Ձեզ հետ:

— Իսկ ո՞ւր մնաց աշխարհի ամենասիրուն քաղաք Պրահան, ուր միշտ երազել եք լինել,— ժպտացի ես:

— Պրահան ոչ մի տեղ չի փախչի, ահա՝ նայեք քարտեզը,— աղջիկը դարձյալ մտավ պատուհանից ներս և ինձ մոտեցրեց հեռախոսը,— մենք պատրաստվում էինք գնալ Պրահա, ապա՝ Վիեննա, իսկ հիմա կանենք հակառակը, ու ճանապարհին կլինենք նաև Բրատիսլավայում: Մենք արդեն եղել ենք Վարշավայում և Կրակովում: Գիտե՞ք, թե ինչ եղավ մեզ հետ Կրակովում…

— Լավ, կարող եք նստել:

Այդ ամբողջ ընթացքում տղան կանգնած էր անտարբեր և ոչ մի ծպտուն չէր հանել: Հիմա նոր նա տեղից շարժվեց, ուսապարկերն ու պայուսակները տեղավորեց բեռնախցիկում, իսկ

կիթառը՝ սրահում: Աղջիկն արդեն նստել էր կողքիս և բեռնմանը չէր մասնակցում:

— Իսկ դուք որտեղի՞ց եք,— հարցրի նրան:

— Վիլնյուսից: Դուք եղե՞լ եք Վիլնյուսում, այն շատ սիրուն քաղաք է: Եթե չեք եղել, պիտի անպայման լինեք: Գիտե՞ք, Վիլնյուսը…

— Ես եղել եմ Վիլնյուսում:

— Իսկապե՞ս: Ափսոս մենք չենք հանդիպել: Ես Ձեզ ցույց կտայի մեր տեսարժան վայրերը: Իդեպ, իմ անունը Օնա է, իսկ նա Վիտաուտասն է: Նա չի խոսում անգլերեն:

— Ես, որքան հասկանում եմ, նա ընդհանրապես չի խոսում,— ուզում էի ավելացնել՝ ի տարբերություն քեզ, բայց փոխարենը հարցրի,— նա կիթառահա՞ր է:

— Դե ոչ… Այդ կիթառն իմն է: Ես երգեր եմ գրում ու նվագում, դա իմ հոբբին է: Ես անպայման կնվագեմ Ձեզ համար: Իսկ ընդհանրապես ես սովորում եմ օտար լեզուների ֆակուլտետում: Բայց, հիմա հասկանում եմ, որ սխալ մասնագիտություն եմ ընտրել: Այսինքն՝ դա բոլորովին էլ մասնագիտություն չէ…

Օնան երկար խոսեց: Ես այլևս նրան չէի ընդհատում և երեք ժամվա ընթացքում նա պատմեց այնքան բան, որ մեկ ուրիշը չէր կարողանա պատմել գուցե երեք շաբաթում: Նախ ներկայացրեց, թե ինչպես են նրանք «ավտոստոպով» Վիլնյուսից հասել Գդանսկ, այնտեղից՝ Վարշավա, ապա՝ Կրակով, պատմեց իր համալսարանի մասին, իր ընկերների ու կուրսեցիների, հետո խոսեց այն սրճարանի մասին, որտեղ աշխատում էր որպես մատուցողուհի, անդրադարձավ բոլոր մյուս մատուցողներին ու մատուցողուհիներին, հավաքարարին և տնօրենին, ով՝ ինչքան հասկացա, ապարդյուն սիրահետում էր իրեն, այնուհետև անցավ իր ծնողներին, ովքեր, պարզվեց, վերջերս են բաժանվել, պատմեց Ռայմոնդ անունով իր պուդելի մասին, որին սարսափելի կարոտել էր, հետո սահուն անցում արեց համաշխարհային կինեմատոգրաֆին ու սկսեց հատ–հատ պատմել իր սիրելի ֆիլմերը:

Երեք ժամից, Ժիլինայի մերձակայքում, ճանապարհի աջ կողում երևաց մի ամրոց:

— Ես մանկուց երազել եմ լինել այստեղ,— ասացի երիտասարդներին ու կտրուկ աջ մտա:

Իհարկե գաղափար չունեի թե սա ինչ տեղ է, բայց ահավոր հոգնել էի, ոչ այնքան երկար ճանապարհից, որքան այս գեղեցկուհու բլբլոցից, ու դեմ չէի մի քիչ հանգստանալ: Սակայն, պարզվեց, դա այդքան էլ հեշտ չէր:

— Ինչ լավ է,— ուրախացավ Օնան,— ես խելագարվում եմ պատմամշակութային հուշարձանների համար: Իսկ ի՞նչ ամրոց է սա:

«Պովաժիեի թանգարան»՝ այսպես էր կոչվում ամրոցը, որը գտնվում էր հսկա մի այգու մեջ: Այն, կարծեմ 13–րդ դարի կառույց էր և պարզվեց շատ տպավորիչ էր: Ես կանգնեցրի մեքենան կայանատեղիում, և մենք մոտեցանք ամրոցի մուտքին: Այն վճարովի էր, եթե չեմ սխալվում՝ յոթ եվրոյի կարգի: Նկատեցի, որ Օնան և յուր ուղեկիցը ինչ–որ բան են քննարկում և հասկացա, որ այս թանգարանի այցելությունը նրանց ծրագրերի, հետևաբար բյուջեի մեջ չէր մտնում: Սուսուփուս երեք հատ տոմս գնեցի, երկուսը տվեցի նրանց և ինքս առաջ ընկա: Օնան, իհարկե, հասավ հետևիցս և ողջ շրջայցի ընթացքում չհեռացավ կողքիցս: Իսկ շրջեցինք մենք բավականին երկար, մոտ երկու ժամ, որովհետև այստեղ իսկապես նայելու ու հմայվելու շատ բան կար: Պարզվեց թանգարանում ներկայացված է տարածաշրջանի պատմամշակութային ժառանգության մի մի ամբողջ բույլ: Այստեղ կային քարի, մետաղական ու փայտարվեստի բազմաթիվ հնամյա ու զարմանալի նմուշներ:

Երբ դուրս եկանք թանգարանից, ժամը հինգն էր: Մինչև Բրատիսլավա դեռ չորս ժամվա ճանապարհ կար, գուցե նաև ավելի՝ նկատի ունենալով, որ ուժեղ անձրև էր սկսվել: Ու քանի որ ես առավոտվանից ոչինչ չէի կերել, առաջարկեցի ուղեկիցներիս մտնել որևէ պանդոկ. ես հյուրասիրում եմ՝ ասացի: Օնան, իհարկե, երջանկացավ, բայց Վիտաուտասին, կարծեմ, գաղափարը դուր չեկավ: Նրանք որոշ ժամանակ վիճեցին իրենց լեզվով, ապա աղջիկն ասաց.

— Օքեյ, նա չի գալիս, բայց մենք կարող ենք գնալ:

Միայն դա էր ինձ մնացել պակաս: Ես շրջվեցի դեպի Վիտաուտասը, իսկ աղջկան խնդրեցի թարգմանել:

— Հավատա ինձ, եղբայր, ձեր ռոմանտիկ ճամփորդությունը ոչինչ չի արժենա, եթե դուք չծանոթանաք սլովակիական խոհանոցին:

Եվ ընդհանրապես, ինչո՞ւ ես մռութերդ կախել՝ ուզում էի շարունակել, բայց բավարարվեցի այդքանով:

Մի խոսքով նա համաձայնեց, չնայած ավելի լավ է չհամաձայներ: Մտանք առաջին իսկ պատահած հյուրատուն–պանդոկը՝ փոքրիկ մի գյուղում, և ես անմիջապես հասկացա, որ այստեղ միայն ուտելով չեմ պրծնի: Պարզապես անհնար է նկարագրել մթնոլորտը, որ տիրում էր գյուղական այդ պանդոկում: Ու թարսի պես, դեռ չէինք տեղավորվել կաղնե փայտից սեղանի շուրջ, երբ մեր կողքով անցավ մատուցողուհին՝ ձեռքին գարեջրով գավաթներ, որոնց վրայից հոսում էր փրփուրը:

Կարճ ասած՝ մտածեցի, որ եթե խմեմ մի գավաթ, աշխարհը դրանից չի քանդվի ու ձեռքով արի մատուցողուհուն:

— Ինչ ազգային ուտեստներ ունեք,— հարցրի:

— Իհարկե՝ «Կոլենո»,— առանց մի վայրկյան մտածելու ասաց նա:

— Կոլենո՞,— զարմացա ես,— ինձ թվում էր «Կոլենո» տալիս են միայն Չեխիայում:

— Այդպիսի բան չասեք մեր խոհարարին, նա կաթված կստանա:

— Լավ, «Կոլենո», ուրեմն «Կոլենո»:

Սակայն, կար լրջագույն մի խնդիր: «Կոլենոյի» հետ գարեջուր խմելը նույնն էր, ինչ՝ մինչև ծնկները մտնել ծովը: Իսկ օղի խմել՝ կնշանակեր խմել առնվազն մեկ շիշ: Եթե ես մենակ լինեի, իհարկե, հենց այդպես էլ կանեի ու այդ օրը կմնայի այս գյուղում: Բայց ինչ անեի ուղեկիցներիս հետ:

Ու մինչ ես մտածում էի, թե ինչպես լուծել լրջագույն այս խնդիրը՝ զանգեց հեռախոսս: Վերցրի այն, և, ինչ եք կարծում՝ ո՞վ էր զանգողը: Փղի՞կը: Սխալվում եք: Զանգողն ինքը՝ Մշկոն էր:

Օնան կիթառ է նվագում

Իմ անվան սկզբնատառերի պատճառով իմ հեռախոսահամարը առաջինն է բոլոր ծանոթներիս հեռախոսային բլոկնոտներում: Հաճախ է պատահում այնպես, որ զանգ եմ ստանում ընկերներիցս, բարեկամներիցս, կամ պարզապես ծանոթներիցս, պատասխանում եմ, իսկ գծի հակառակ ծայրում լռություն է: Դա լինում է հիմնականում այն դեպքերում, երբ զանգողի հեռախոսը հին է՝ կոճակներով: Անմիջապես հասկանում եմ, որ զանգը պատահական է ստացվել ու՝ անջատում հեռախոսս: Օրինակ, գյուղում ապրող մի բարեկամ ինձ զանգում է օրը մի քանի անգամ: Ավելի ճիշտ՝ զանգում է ոչ թե նա, այլ՝ թոռնիկը, ով խաղում է պապի հեռախոսի հետ, պատահաբար բացում բլոկնոտը և պատահաբար դիպչում իմ անվանը: Օրվա մեջ ևս մի քանի անգամ զանգ եմ ստանում ծանոթ մի զոդողից, ով գրանցել էր իմ հեռախոսահամարը, երբ եկել էր գարաժիս դուռը զոդելու: Վերցնում եմ հեռախոսը ու գծի մյուս կողմում լսում զոդման սարքի բզզոցը: Հասկանում եմ, որ նա գործ անելիս պատահաբար դիպչել է գրպանում դրված հեռախոսի բլոկնոտի կոճակին, իսկ բլոկնոտում ինչպես ասացի, իմ համարն առաջինն է՝ անվանս սկզբնատառերի պատճառով:

Մշկոյի հեռախոսը ևս բացառություն չէր, և այնտեղ նույնպես իմ անունն առաջինն էր: Ու երբ զանգ ստացա նրանից ու չգիտեմ՝ ուրախությունից, զարմանքից, թե անհանգստությունից վեր թռա տեղիցս, ինչ իմանայի, որ զանգի պատճառը կրկին անվանս սկզբնատառերն էին:

Ինչևէ, զանգը Մշկոյի համարից էր, սակայն զանգահարողը Մշկոն չէր: Կանացի մի ձայն տվեց իմ անունը և գերմաներենով ինչ որ բան ասաց, որից ես հասկացա միայն «պոլիզեյ» բառը: Խնդրեցի խոսել անգլերեն:

— Ձեզ զանգում են Վիեննայի ոստիկանությունից. իմ անունն է Կատարինա Շտեյներ: Դուք ճանաչո՞ւմ եք Մշկոյան ազգանվամբ մարդու:

— Իհարկե ճանաչում եմ,— ասացի սրտատրոփ,— նրա հետ ամեն ինչ կարգի՞ն է:

— Այո, մի անհանգստացեք,— ասաց Կատարինան,— նա պարզապես հարբած է և գտնվում է ոչ ադեկվատ վիճակում: Դուք նրա ի՞նչն եք:

— Ընկերը,— մի քիչ հանգստացած ասացի ես,— ուրեմն նա Վիեննայո՞ւմ է:

— Ճիշտ այդպես: Որքան հասկացա նա Հայաստանի քաղաքացի է: Կասե՞ք նա այստեղ հարազատներ կամ ծանոթներ ունի:

— Ես ինքս մոտակայքում եմ: Կարող եմ Վիեննայում լինել վաղն առավոտյան: Ասացե՛ք խնդրեմ, նա որևէ օրենք խախտե՞լ է, նրան ինչ-որ բանում մեղադրում են:

— Ոչ, պետք է ասեմ, որ Ձեր ընկերը շատ համակրելի տղամարդ է: Նա պարզապես հարբած է: Ուզում էր նավ բարձրանալ, սակայն տոմս չուներ:

— Նա՞վ,— զարմացա ես:

— Այո, մեկն այն նավերից, որ շրջագայության են մեկնում Դանուբով:

— Լավ, իսկ ինչպե՞ս է նա հայտնվել Վիեննայում:

— Այդ հարցին ես չեմ կարող պատասխանել: Բայց նա մենակ էր և իր հետ ոչինչ չուներ: Դուք հաստատ վաղը կգաք:

— Այո, իսկ կասե՞ք ուր պիտի գամ:

Կատարինան ասաց այն բաժանմունիքի հասցեն, ուր գտնվում էր Մշկոյանը և վստահեցրեց, որ վերջինիս կպահեն այնտեղ մինչև իմ գալը:

— Հիմա Ձեր ընկերը քնած է, բայց մինչև քնելը երգում էր: Նա իսկապես շատ հաճելի տղամարդ է,— եզրափակեց նա:

Չլինի՞ սիրահարվել է տիկին ոստիկանը՝ մտածեցի ես: Բայց հիմա դա առանձնապես կարևոր չէր: Կարևորն այն էր, որ Մշկոն այլևս ձեռքիցս չէր պրծնի: Ոստիկանական բաժանմունքից նա հաստատ չէր կարող փախչել, իսկ այստեղից Վիեննա

երեք ժամվա ճանապարհ է: Կշարժվեմ վաղ առավոտյան, իսկ հիմա խմում ենք՝ որոշեցի ես:

— Պլանները փոխվում են,— դիմեցի ուղեկիցներիս,— մենք այստեղից գնում ենք ոչ թե Բրատիսլավա, այլ Վիեննա: Այսինքն ճանապարհը, եթե չեմ սխալվում, միևնույնն է անցնում է Բրատիսլավայով, այնպես որ եթե ուզեք կարող եք իջնել այնտեղ: Շարժվում ենք առավոտ շուտ: Միայն նկատի ունեցեք՝ գնալու ենք արագ և առանց կանգառների:

Սակայն ուղեկիցներս չհասցրին արձագանքել, որովհետև այդ պահին մատուցողուհին բերեց «Կոլենոն»: Հսկա ափսեների մեջ դրված էին խոզի ծնկները, կողքը՝ շոգեխաշած կարտոֆիլ և կաղամբ: Անմիջապես մոտեցավ երկրորդ մատուցողուհին և սեղանին դրեց երեք գավաթ գարեջուր:

— Սա պանդոկի կողմից է,— ասաց նա:

Կարծես երեկոն խոստանում էր հետաքրքիր լինել: Բայց մի րոպե.

— Իսկ ավելի թունդ ինչ կառաջարկեք,— հարցրեցի,— իհարկե ոչ պանդոկի կողմից:

— Ավելի թունդ...— մտածեց մատուցողուհին,— կարող եմ առաջարկել «Մալինովիցա»:

Ես գլխով արի, չնայած չգիտեի, թե դա ինչ է:

— Իդեպ,— հարցրի,— դուք ազատ սենյակներ ունե՞ք:

Պարզվեց, որ ունեին: Մինչ մատուցողուհին կբերեր «Մալինովիցան», ես բարձրացրի հյուրասիրված գարեջրի բաժակը և ասացի.

— Վիեննայի ոստիկանության կենացը:

— Իսկ ինչո՞ւ հենց Վիեննայի ոստիկանության,— զարմացավ Օնան:

— Երկար պատմություն է,— ես մի շնչով դատարկեցի գավաթը:

Աղջիկը նույնպես խմեց, ճիշտ է ոչ ամբողջը, բայց, կարծում եմ, որքան որ կարող էր, մինչդեռ երիտասարդը մի կողմ հրեց գավաթը և թարս նայեց ընկերուհուն: Հետո ինչ–որ բան ասաց նրան, և Օնան թարգմանեց:

— Նա հարցնում է, եթե Դուք խմում եք, ինչպե՞ս եք մեքենա վարելու:

— Բայց չէ՞ որ ես ասացի, որ մենք մնում ենք այստեղ:

— Այո, բայց նա չհասկացավ:

Իսկապես, ես մոռացել էի, որ տղան անգլերեն չգիտեր: Խնդրեցի Օնային՝ բացատրել նրան, որ մենք մնում ենք այստեղ, իսկ վճարման համար պետք չէ անհանգստանալ:

— Ասա նրան, որ սենյակների արժեքը մտնում է հաշվի մեջ:

Չգիտեմ՝ ի՞նչ և ինչպե՞ս բացատրեց աղջիկն ընկերոջը, բայց ակնհայտ էր, որ վերջինս առանձնապես երջանիկ չէր: Այդպես էլ չխմեց գարեջուրը և նույնիսկ չէր ուտում: Երբ բերեցին խմիչքը, ես լցրեցի նրա բաժակը ու կրկին խնդրեցի Օնային թարգմանել.

— Ես քիչ առաջ մի լավ լուր ստացա, և այսօր ինձ համար շատ ուրախ օր է: Իսկ դուք, միևնույն է, ոչ մի տեղ չեք շտապում: Այնպես որ զվարճացեք այսօր, իսկ վաղը ձեզ կհասցնեմ Վիեննա:

Միայն թե դա էլ առանձնապես չօգնեց: Վիտաուտասը չխմեց, միայն սկսեց ամաչելով ուտել: Մինչդեռ Օնան մի ումպով դատարկեց բաժակը:

Պետք է ասեմ, որ մատուցողուհին յուրովի էր հասկացել իմ ասածը, երբ ես նրան խնդրել էի բերել ավելի թունդ մի խմիչք: Հավանաբար մտածել էր, թե պետք է բերի ամենաթունդ խմիչքը: «Մալինովիցան» կլիներ առնվազն վաթսուն աստիճանի:

— Իսկ ինչո՞ւ է այսօր Ձեզ համար ուրախ օր,— հարցրեց աղջիկը:

— Ընկերոջս տարել են ոստիկանություն:

— Ինչ հետաքրքիր է: Գիտե՞ք ինձ էլ էին մի անգամ տարել ոստիկանություն: Ես Պալանգայում կանգնել էի կամուրջի բազրիքի վրա, ու ոստիկանները որոշել էին, որ պատրաստվում եմ ինքնասպան լինել: Բայց ես չէի պատրաստվում ինքնասպան լինել, պարզապես...

Օնան դարձյալ երկար խոսեց: Երրորդ բաժակից հետո ես նրան այլևս չէի լցնում՝ նկատի ունենալով «Մալինովիցայի» թնդության աստիճանը, բայց առանց խմելու էլ աղջիկը չէր

դադարում բլբլալ: Հետաքրքիր տեսարան էր: Աղջիկը անվերջ խոսում էր, նրա ընկերը կատաղած՝ նստած էր, իսկ ես խմում էի:

— Իսկ ինչ կլինի, եթե ես այստեղ նվագեմ,— ոգևորվեց Օնան, հետո իրենց լեզվով դիմեց Վիտաուտասին՝ ըստ երևույթին խնդրելով մեքենայից բերել իր կիթառը:

Այստեղ նրանք սկսեցին վիճել: Բարձր տոնով խոսեցին մի քանի րոպե, հետո վեր կացան ու դուրս եկան: Քիչ անց աղջիկը վերադարձավ մենակ:

— Ինչ տեղի ունեցավ,— հարցրի՝ անհանգստացած,— որտեղ է ընկերդ:

— Նա գնաց,— շատ անտարբեր ասաց Օնան:

— Ինչպես թե գնաց:

Ես վեր կացա ու շտապեցի տղայի հետևից: Պետք ասել, որ ինձանից մեծ ջանքեր պահանջվեցին նրան վերադարձնելու համար, մանավանդ, որ մենք միմյանց չէինք հասկանում ու խոսում էինք տարբեր լեզուներով: Բայցևայնպես համոզեցի, նա եկավ ու ամեն ինչ սկսվեց նորից: Աղջիկը բլբլում էր, տղան կատաղած նայում էր նրան, ես խմում էի:

Մի երկու ժամից կանչեցի մատուցողուհուն և խնդրեցի երկու սենյակ տալ մեզ: Վիտաուտասը առարկեց, նա ինչ–որ բաներ էր ասում աղջկան և նրանք նորից սկսեցին վիճել:

— Մենք վրան կխփենք կողքի այգում, և կգիշերենք այնտեղ,— ասաց Օնան քիչ հետո:

Ես այլևս չառակեցի, մտածելով՝ գլուխները քարը, գուցե այդպես ավելի ճիշտ է: Վճարեցի ընթիքի համար և բարձրացա սենյակ: Թարսի պես պատուհանից տեսա, թե ինչպես են նրանք խփում վրանը: Ավելի ճիշտ՝ փորձում խփել, որովհետև ուժեղ քամին ու անձրևը խանգարում էին, և նրանց մոտ ոչինչ չէր ստացվում: Մոտեցա հյուրանոցի աշխատակիցներին, և խնդրեցի նրանց իբր հյուրանոցի անունից մի սենյակ տրամադրել: Չգիտեմ ինչպես հաջողվեց նրանց համոզել տղային, բայց քիչ անց պատուհանից տեսա, որ զույգը չկա: Խիղճս հանգիստ ևս հարյուր գրամ «Մալինովիցա» պատվիրեցի ու շարունակեցի խմել: Դեռ չէի հասցրել կում անել, երբ սենյակի դուռը թակեցին: Օնան էր՝ կիթառն ուսից կախած:

— Ես միևնույն է պետք է նվագեմ Ձեզ համար,— ասաց նա այնպիսի տոնով, որ առարկություն չէր ընդունում,— Դուք չեք լսել իմ երգերը:

— Իսկ որտեղ է Վիտաուտասը:

— Նա քնեց:

Հանուն արդարության պետք է ասեմ, որ Օնայի երգերն ինձ դուր եկան: Չգիտեմ, իսկապես նա էր դրանց հեղինակը, թե՝ ոչ, բայց երգերն այնքան լավն էին, որ հաճույքով լսում էի բավականին երկար ու խմում վաթսուն աստիճանի թնդությամբ իմ «Մալինովիցան»: Չգիտեմ որքան ժամանակ անցավ, երբ կրկին թակեցին սենյակի դուռը: Բացեցի այն՝ մտածելով, որ Վիտաուտասն է վերջապես համարձակություն առել ու եկել՝ տանելու իր ընկերուհուն: Վիտաուտասն իսկապես եկել էր, բայց նա մենակ չէր: Նրա կողքին կանգնած էին երկու ոստիկաններ և հյուրանոցի ողջ աշխատակազմը:

— Դուք ճանաչու՞մ եք այս տղային,— հարցրին ոստիկանները,— նա թափառում էր ճանապարհին՝ անձրևի տակ, այստեղից հինգ կիլոմետր այն կողմ: Ասաց, որ գնում է Վիլնյուս:

Մենք զարմացած նայեցինք թրջված ու խեղճ Վիտաուտասին:

— Նա ասում է, որ իր հարսնացուն այս հյուրանոցում է,— շարունակեց ոստիկանը՝ զայրացած նայելով չգիտես ինչու հենց ինձ,— ո՞վ է նրա հարսնացուն:

— Դե ինչ,— հանգիստ ասացի ես,— մի բան կարող եմ հարյուր տոկոսով վստահեցնել՝ այդ հարսնացուն ես չեմ:

Թե ինչպես Մշկոյին բաց թողեցին Վիեննայի ոստիկանատնից

Առավոտյան ժամը վեցին ինձ արթնացրեց զարթուցիչը: Առաջին գործով զանգահարեցի Մշկոյի համարով: Զանգերը գնում էին, բայց նա չէր պատասխանում: Կարևորը, որ հեռախոսն անջատված չէ՝ մտածեցի ես, հավանաբար դեռ քնած է: Ձայն տվեցի ուղեկիցներիս, հնարավորինս արագ լողացա, և շարժվեցինք հյուրատնից: Նույնիսկ սուրճ չխմեցի:

Վիտաուտասին նստեցրի կողքիս և բարձրացրի ռադիոընդունիչի ձայնը: Օնան, միևնույն է, խոսում էր, բայց ես արդեն սովորել էի:

Նավիգատորը կարգավորեցի այնպես, որ այն տանի ոչ թե երկրորդական ճանապարհներով, ինչպես եկել էինք, այլ՝ մայրուղիներով: Մինչև Վիեննա ստացվեց երկու ժամ քառասունհինգ րոպե: Կհասնեմ երկու ժամում՝ որոշեցի ու սեղմեցի «Մինիի» գազի ոտնակը: Բայց պարզվեց, որ մոռացել եմ մի շատ կարևոր բան:

Եվրոպական մի շարք երկրներում մայրուղիներով վարելու համար պետք է վճարել նախապես: Եթե, ասենք՝ Ֆրանսիայում, Իսպանիայում կամ Իտալիայում վճարովի ճանապարհների համար գումարը գանձվում է տեղում, ապա, ասենք՝ Շվեյցարիայում, Չեխիայում կամ Բուլղարիայում անմիջապես երկիր մտնելուց հետո պետք է գնել այսպես կոչված vignette–ներ, կամ, ինչպես ասում են սլավոնական երկրներում՝ «վինետկաներ»: Իհարկե դա այն դեպքում, երբ դու ճամփորդելու ես մայրուղիներով, այլ ոչ՝ երկրորդական ճանապարհներով: Որոշ երկրներում այդ «վինետկաները» էլեկտրոնային են, որոշ երկրներում քեզ տալիս են թղթի մի կտոր, որը պետք է փակցնես մեքենայի դիմապակու վրա: Օրինակ, Շվեյցարիայում ես վճարել էի քառասուն ֆրանկ էլեկտրոնային «վինետկայի» համար: Այստեղ՝ Սլովակիայում դա շատ ավելի էժան էր՝ ընդամենը տասը եվրո, բայց ամբողջ խնդիրն այն էր, որ ես մոռացել էի այդ մասին: Հիշեցի միայն այն ժամանակ, երբ մայրուղի դուրս գալուց անմիջապես հետո հայելու մեջ տեսա լուսային թարթիչները միացրած ոստիկանական մեքենան:

Փաստորեն, ինչ մտել էի Արևելյան Եվրոպա, ոստիկաններից պրծում չկար: Սակայն, հանուն արդարության, պետք է ասել, որ սլովակ ոստիկանները շատ ավելի բարեհամբույր էին, քան լեհերը. նրանք ինձ հրաժեշտ տվեցին և բարի ճանապարհ մաղթեցին հարյուր քառասուն եվրո տուգանելուց հետո:

Ինչևէ, ավելորդ կես ժամ կորցնելով՝ ես շարունակեցի ճանապարհս՝ յուրաքանչյուր տասնհինգ րոպեն մեկ զանգահարելով Մշկոյանին: Բայց նա համառորեն չէր պատասխանում: Փոխարենը՝ րոպեն մեկ զանգում էր Փղիկը: Ես նրան նախորդ օրը պատմել էի Մշկոյի հերթական արկածների մասին, բնականաբար շատ չտրվելով մանրամասներին, ու հիմա տիկինը չափից ավելի անհամբեր էր: Նա վստահ էր, որ շուտով ես վերջապես գտնելու եմ մեր բարեկամին: Պետք է խոստովանեմ, որ ինքս էլ էի վստահ: Բայց, իհարկե, այդպես չեղավ, այլապես՝ Մշկոն Մշկո չէր լինի:

Արդեն հասել էի Բրատիսլավայի մատույցներին, երբ Մշկոյանի հեռախոսն անհասանելի դարձավ: Ինչ կարող էր պատահած լինել: Ես սարսափելի զղջում էի, որ նախորդ օրը ոստիկան Կատարինայից չէի ուզել նրա հեռախոսահամարը: Բայց, միևնույն է, պետք էր հասնել Վիեննա: Ոստիկանական բաժանմունքի հասցեն ես ունեի: Ու հանկարծ գլխումս մի միտք ծագեց: Իսկ ավելի լավ չէ համացանցում գտնել այդ բաժանմունքի հեռախոսահամարը, զանգահրել և խնդրել Կատարինային: Բայց դրա համար պետք էր մի տեղ կանգնել: Լավ կլիներ նաև wifi գտնել, իսկ էլ ավելի լավ կլիներ նաև սուրճ խմել: Մի խոսքով՝ որոշեցի մտնել Բրատիսլավա:

Նեղ սալահատակ փողոցներով, հոյակապ հնամյա տներով, սոցիալիստական շրջանից մնացած անճոռնի տիպային շենքերով ու անհասկանալի նորակառույցներով Բրատիսլավան ուներ

մի առանձնահատկություն ևս. այն իմ մեջ տպավորվեց իբրև մի քաղաք, ուր անհնար էր մեքենա կայանել: Ես չեմ չափազանցնում: Առավոտյան ժամը ութն անց կես էր և ոչ մի կանգնելու տեղ չկար: Ավելի ճիշտ տեղեր կային, բայց ամենուր արգելող նշաններ էին, իսկ ևս մեկ անգամ տուգանվել ես բոլորովին չէի ուզում: Այնպես որ ստիպված էի հմայվել այս քաղաքով մեքենայի պատուհանից ու… մնալ առանց սուրճի:

Վիեննայի ոստիկանական բաժանմունքի հեռախոսահամարը համացանցում գտնել խնդրեցի Օնային: Դրա համար նրանից պահանջվեց ընդամենը մեկ րոպե:

— Դե ի՞նչ,— հարցրեց նա՝ համարը թելադրելուց հետո,— մենք մնում ենք այստեղ, թե շարունակում ենք դեպի Վիեննա:

Ես խնդրեցի սպասել և զանգահարեցի նրա տված հեռախոսահամարով: Պատասխանեց հավանաբար հերթապահ ոստիկանը և ասաց, որ Կատարինա Շտեյները դեռ չի եկել աշխատանքի: Ես ուզեցի նրա անձնական համարը, բայց հերթապահը չտվեց: Խնդրեցի գոնե ասել, թե արդյո՞ք դեռ այդ բաժանմունքում է Մշկոյան ազգանվամբ Հայաստանի Հանրապետության մի քաղաքացի, ում նախորդ օրն են բերման ենթարկել, սակայն այս հարցին էլ շան որդին չպատասխանեց:

— Գնում ենք Վիեննա,— ասացի ուղեկիցներիս՝ անջատելով հեռախոսը:

Բայց այստեղ բախտս բերեց: Նրանք ինչ–որ բան քչփչացին իրենց լեզվով, ապա Օնան ասաց:

— Նա ուզում է մնալ այստեղ:

— Ուրեմն, մնացեք այստեղ,— ես չկարողացա թաքցնել ուրախությունս:

— Բայց ես չեմ ուզում,— տրտնջաց աղջիկը:

— Գիտես,— ասացի քիչ զայրացած,— բավական է նեղացնես ընկերոջդ. նա լավ տղա է, քեզ շատ է սիրում ու հաստատ դրան արժանի չէ:

— Հաստա՞տ,— կրկնեց Օնան:

— Այո, հաստատ:

Մենք բաժանվեցինք Բրատիսլավայի կենտրոնում. ես ստիպված էի կանգնել արգելող նշանի տակ, մինչ նրանք

բեռնախցիկից կհանեին իրենց ուսապարկերն ու բարեբախտաբար չտուգանվեցի:

Վիեննա հասա քառասունհինգ րոպեում, ևս մի կես ժամ փնտրեցի անհրաժեշտ ոստիկանական բաժանմունքը ու երբ գտա համարյա ժամը տասն էր: Այն խոտածածկ հարթակով շրջապատված ժամանակակից մի շինություն էր և ավել շատ նման էր հյուրանոցի, ուր, սակայն, մարդիկ իրենց կամքով են գալիս: Ներսում էլ՝ հյուրանոցային լոբբիի պես մի տեղ էր: Մոտեցա հերթապահներին և ասացի, որ ուզում եմ տեսնել Կատարինա Շտեյներին:

— Կատարինա Շտեյները քիչ առաջ գնաց,— պատասխանեցին ինձ:

— Իսկ ե՞րբ կգա,— հարցրի ես՝ մտածելով, որ նա գնացել է ինչ–որ գործով կամ հանձնարարությամբ:

— Քսանչորս օրից: Այսօրվանից նա արձակուրդում է:

Ջղայինությունից ուզում էի հայհոյել հերթապահ ոստիկանին: Կարծեմ անգամ հայհոյեցի, իհարկե՝ հայերենով: Հետո հավաքեցի ինձ և հարցրի.

— Ձեզ մոտ է Հայաստանի Հանրապետության մի քաղաքացի: Կարո՞ղ եմ նրան տեսնել:

— Ո՛չ,— չոր պատասխանեց ոստիկանը, ով հավանաբար հասկացել էր իմ հայերեն հայհոյանքը:

— Ինչո՞ւ:

— Որովհետև մենք բաց թողեցինք նրան:

— Բա՞ց թողեցիք: Եվ ո՞ւր գնաց նա:

— Դա մենք չենք կարող ասել: Սակայն կարող ենք ասել, որ նա գնաց տիկին Շտեյների հետ:

Ավելորդ է ասել, որ իմ բոլոր ջանքերը՝ իմանալու տիկին Շտեյների հասցեն կամ կոնտակտները, անցան ապարդյուն: Հերթապահ ոստիկանները հրաժարվեցին որևէ տեղեկություն տալ: Ես արդեն պատրաստվում էի հայհոյել անգլերեն, երբ լսեցի հեռախոսիս ձայնը: Փղիկն էր:

— Հենց նոր Մշկոյանը վճարում արեց Վիեննայի նավահանգստում:

— Ի՞նչ վճարում:

— Ես ինչ իմանամ:
— Եվ որքա՞ն վճարեց:
— Երկու հազար երկու հարյուր եվրո:

Ես այլևս ոչ մի բանի վրա չէի զարմանում: Մշկոն վաղուց արդեն դադարել էր ինձ զարմացնել:

Լրիվ մեխանիկորեն ոստիկանական բաժանմունքում հարցրի Վիեննայի նավահանգստի հասցեն, մեխանիկորեն անցկացրի այն նավիգատորի վրա և մեխանիկորեն գնացի այնտեղ: Բայց պարզվեց, որ հիմարները ինձ տվել են սխալ նավահանգստի հասցե: Այստեղ միայն բեռնատար նավեր էին: Մինչդեռ ուղևորատար նավերը շարժվում էին բոլորովին այլ տեղից, որն ուներ շատ բարդ անուն: Այն կոչվում էր Schifffahrtszentrum, ինչը թարգմանաբար նշանակում էր «կրուիզ կենտրոն»: Այստեղից իրականացվում էին ռոմանտիկ կրուիզներ Դանուբ գետի վրա գտնվող քաղաքներով և հենց այստեղից երկու ժամ առաջ շարժվել էր A Rosa Mia շոգենավը՝ Վիեննա–Բելգրադ և հակառակ ուղղությամբ: Կրուիզի տևողությունը հինգ օր էր, Premium all inclusive արժեքը կազմում էր հազար հարյուր եվրո: Հենց դրա կրկնակին, այսինքն՝ երկու հազար երկու հարյուր եվրո պակասել էր Փղիկի քարտից: Իսկ դա նշանակում էր, որ Մշկոն մեկնել էր ռոմանտիկ կրուիզի և մեկնել էր ոչ մենակ: Թե ում հետ՝ դժվար չէր գուշակել. ո՞վ էր ազատել նրան ոստիկանական բաժանմունքից և անսպասելի որոշել արձակուրդ վերցնել: Իհարկե, Կատարինա Շտեյնեը՝ ավստրուհի ոստիկանը: Ինչ կաներ Փղիկը, եթե իմանար, թե ինչի և ում վրա է ծախսում իր փողերը իր «փեսացուն»: Բայց ես, իհարկե, չէի պատրաստվում նրան ասել այդ մասին: Սակայն չգիտեի նաև, թե ինչ անել հիմա: Ամեն դեպքում էլի զանգեցի Մշկոյանի համարով, բայց այն անջատած էր:

Ունեի երկու ընտրություն. գնալ Բելգրադ, գտնել Մշկոյին, նրա հետ վերադառնալ Երևան ու այդպիսով քար գցել ավստրուհի ոստիկանի բախտին կամ գնալ Պրահա, հանձնել մեքենան, առանց Մշկոյի վերադառնալ Երևան և այդպիսով քար գցել Փղիկի բախտին:

Ես ընտրեցի առաջին տարբերակը. Փղիկն ինձ ավելի հարազատ էր:

-

Շտո դա նե կամ այն մասին, թե ինչպես ես վճարեցի գնչուների փոխարեն

Իր այս ուղևորության ընթացքում Մշկոն, փաստորեն, օգտվել էր բոլոր հնարավոր փոխադրամիջոցներից. օդանավ, գնացք, ավտոմեքենա, մոտոցիկլետ, ձի ու հիմա էլ՝ նավ: Նավ, որը պիտի կտրեր անցներ Դանուբ գետի գրեթե մեկ քառորդը և երկու օրում Վիեննայից հասներ Բելգրադ: Ես, ճիշտն ասած, մի քիչ նախանձում էի Մշկոյին, որովհետև պատկերացնում էի թե ինչ փառահեղ ճամփորդություն էր լինելու դա:

Ինչևէ, ինքս էլ ունեի երկու օր Բելգրադ հասնելու համար, կամ, ավելի ճիշտ կլինի ասել՝ երկու գիշեր ու որոշեցի այնպես պլանավորել ճանապարհս, որ գործին չխանգարելով՝ այն նաև հաճելի լինի: Փաստորեն Մշկոյին գտնելն ինձ համար դարձել էր գործ:

Վիեննա–Բելգրադ՝ վեց հարյուր տասնհինգ կիլոմետր և մոտ յոթ ժամ՝ ավետեց նավիգատորը: Առաջ ընկնելով ասեմ, որ ես չէի մտածել երկու բանի մասին: Առաջինը, որ A Rosa Mia շոգենավը, մինչև Բելգրադ հասնելը, կանգառներ ուներ Բրատիսլավայում, Նովի Սադում և Բուդապեշտում: Դա ես իմացա հետո, այլապես կարող էի շատ ավելի շուտ հասնել նավին: Իսկ երկրորդը… Բայց այդ մասին հետո:

Կեսօր էր, օրն՝ ուրբաթ: Եթե ես կիրակի կեսօրին հասնեի Բելգրադ՝ վստահաբար նավից շատ առաջ կընկնեի: Ուրեմն՝ ինչ կարելի էր անել այս երկու օրերին: Իմ ճանապարհին էր զվարճանքների քաղաք Բուդապեշտը, բայց ես այնտեղ շատ էի եղել: Կարելի էր մի քիչ շեղվել ճանապարհից, գնալ հունգարական Բալատոն լիճ, մի հյուրանոց վերցնել ափին ու երկու օր մարդավարի խմել: Դա, ինչ խոսք, հրաշալի տարբերակ էր, մանավանդ, որ ես չէի կարողացել ինչպես հարկն է վայելել Կոմո լիճը,

իսկ Բալատոնն իր գեղեցկությամբ ամենևին պակաս չէր: Եվ կար երրորդ տարբերակը. անմիջապես ուղևորվել Բելգրադ և այդ երկու օրն անցկացնել այնտեղ: Բելգրադում վերջին անգամ եղել էի երևի քսան տարի առաջ՝ իննսունականներին, հարավսլավական առաջին պատերազմի ժամանակ: Բացի այդ, այդպես ավելի ապահով էր՝ Մշկոյին դարձյալ բաց չթողնելու առումով:

Մի խոսքով, Բելգրադ՝ որոշեցի ես, բենզին լցրեցի մոտակա բենզակայանում, սուրճ ու բուտերբրոդներ գնեցի ու ճամփա ընկա:

Հունգարիայի հարավում՝ մի տեղ, երբ արդեն շատ քիչ էր մնացել Սերբիայի սահմանին, «Մինիի» ցուցատախտակին ինչ–որ լույս վառվեց: Համակարգիչը հուշում էր, որ կտրվել կամ մաշվել է գեներատորի գոտին: Դա նշանակում էր, որ մեքենայի մարտկոցը ընթացքի ժամանակ չի լիցքավորվում և շատ շուտով կարող էին լուրջ խնդիրներ առաջանալ: Դա իհարկե իմ մեղքը չէր, այլև՝ ավտովարձույթի ծառայության, և, նկատի ունենալով, որ այն լուրջ կազմակերպություն էր՝ չպետք է, որ նման բան լիներ, այսինքն՝ նրանց տված մեքենայի հետ տեխնիկական խնդիր առաջանալ: Նրանք, բնականաբար, հետո կփոխհատուցեին իմ ծախսերը, բայց հիմա պետք էր վերանորոգել մեքենան: Մի խոսքով՝ ավտոսերվիս էր հարկավոր: Ես նայեցի քարտեզին՝ մոտակա քաղաքը Սեգեդն էր: Այն մեծությամբ Հունգարիայի երրորդ քաղաքն էր և այնտեղ կար ընդամենը երեք ավտոսերվիս, համենայնդեպս՝ ըստ նավիգատորի: Մտա դրանցից առաջինը, սակայն ինձ չսպասարկեցին, բացատրելով, որ պիտի նախօրոք հերթագրվեմ: Երկրորդում նույն պատմությունն էր: Երբ մտա երրորդը, արդեն ժամը վեցի կողմերն էր և ինձ ասացին, որ իրենց աշխատանքային ժամն ավարտվում է և պետք է գամ երկուշաբթի: Ինչո՞ւ երկուշաբթի՝ զարմացա ես: Որովհետև շաբաթն ու կիրակին աշխատանքային օրեր չեն՝ բացատրեցին անգետիս: Բացատրողը բեղավոր մի վարպետ էր, ով այդ պահին ավարտում էր գործը հնամաշ մի «Ռենո» միկրոավտոբուսի վրա: Ես փորձեցի նրան համոզել. իհարկե, կարևոր բան է մարդկանց հանգիստը, բայց չէ՞ որ կարելի է օգնել ճանապարհին մնացած մարդուն՝ հատկապես հյուրին: Եթե Դո՛ւք լինեիք մեզ

մոտ՝ Հայաստանում, Ձեզ կօգնեին անգամ գիշերվա կեսին: Մի խոսքով ինձ հաջողվեց համոզել վարպետին: Նա փնթփնթալով պատվիրեց, որ կողքի ավտոպահեստամասերի խանութից գնեմ նոր գեներատորի գոտի: Ես այդպես էլ արեցի և երբ վերադարձա, տեսա որ վարպետը վիճում է ինչ–որ գնչուի հետ: Պարզվեց «Ռենո» միկրոավտոբուսի վարորդն էր: Վարպետը նրանից պահանջում էր վաթսուն եվրո իր արած գործի համար, իսկ գնչուն ասում էր, որ պայմանավորվել են՝ քառասուն: Ենթադրաբար նրանք խոսում էին սերբերեն, որովհետև շատ բառեր և հիմնականում թվեր ինձ հասկանալի էին: Ես նայեցի «Ռենոյի» համարանիշին՝ իսկապես, այն սերբական էր: Շուտով գնչուն անցավ հայհոյանքների, իսկ քիչ անց նրան միացավ նրա կինը, ով իջավ մեքենայից և սկսեց գոռալ վարպետի վրա: Ես չգիտեմ, թե նրանցից ով էր ճիշտ, ով՝ սխալ, բայց իրավիճակը դուրս էր գալիս վերահսկողությունից: Եվ, քանի որ դա ինձ ձեռնտու չէր, ես փորձեցի միջամտել: Բնականաբար պետք է պաշտպանեի վարպետին:

— Ինչո՞ւ եք վիճում քսան եվրոյի համար,— ասացի գնչուին բուլղարերենով:

Բուլղարերենը գրեթե նույն սերբերենն է, նման է նաև ռուսերենին, և այդ լեզվին ես որոշ չափով տիրապետում եմ:

Նրա փոխարեն պատասխանեց կինը.

— Լավ է անում: Գուցե մենք չունենք այդ քսան եվրոն:

— Կլինի ես ձեր փոխարեն վճարեմ այդ քսան եվրոն,— չգիտեմ ինչու ասացի ես:

— Շտո դա նե,— առանց վարանելու պատասխանեց գնչուհին, ինչը նշանակում էր՝ ինչու ոչ:

Նրանք նույնիսկ շնորհակալություն չհայտնեցին, նստեցին իրենց «Ռենոն» ու հեռացան՝ թարս հայացք նետելով վարպետի վրա:

Փոխարենը վարպետը շատ արագ և տեղը տեղին վերանորոգեց մեքենաս:

Ես շարունակեցի ճանապարհս ու քիչ անց հասա հունգարասերբական սահմանին, ուր ինձ նոր անակնկալ էր սպասվում: Այստեղ բավականին երկար հերթ էր: Սակայն դա չէր

անակնկալը: Կողքի շարքում կանգնած էր գնչուների «Ռենոն»: Սակայն դա էլ չէր անակնկալը: Անակնկալն այն էր, որ պարզվեց Չեխիայում վարձակալած այս մեքենայով ես իրավունք չունեմ դուրս գալ Եվրամիության սահմաններից:

Հունգար սահմանապահն ինձ խնդրեց դուրս բերել մեքենան շարքից, ապա մոտեցավ և հանգամանորեն բացատրեց օրենքը:

Ես ոչինչ անել չէի կարող և, փաստորեն, հայտնվել էի շատ տխուր վիճակում: Առանց մեքենա գնալ Սերբիա, իհարկե, կարելի էր, բայց գաղափարն ինձ առանձնապես դուր չէր գալիս: Ու մինչ ես մտածում էի, թե ինչպես վարվել, իսկ հունգար սահմանափահը, չգիտես ինչու, կողքիս կանգնած սպասում էր, հանկարծ տեսա, թե ինչպես է քայլելով դեպի ինձ գալիս գնչու տիկինը:

— Ի՞նչ է պատահել,— հանդիմանանքով դիմեց նա սահմանապահին:

Վերջինս նրան ևս ամենայն մանրամասնությամբ բացատրեց խնդիրը:

Հետո գնչուհին դիմեց ինձ:

— Դուք ո՞ւր եք գնում:

— Բելգրադ:

— Մենք գնում ենք Նովի Սադ: Այնտեղից Բելգրադ մեկ ժամվա ճանապարհ է: Կարող ենք քեզ տանել:

-

Այն մասին, թե ինչպես էի ես խմում իմ սիրելի մարդկանց կենացը Դանուբի ափին

Այստեղ՝ Դանուբ գետի ափին, սերբական Նովի Սադում, ինձ հետ պիտի լինեին իմ նկարիչ կամ ռեժիսոր ընկերները, որպեսզի նկարեին կտավ կամ ֆիլմ, որովհետև բառերով նկարագրելն այն հակապատկերները, որոնք այստեղ ամեն քայլափոխի են, պարզապես անհնար է:

Ուրեմն փորձեմ նկարագրել այն հակապատկերները, որոնք հնարավոր է նկարագրել բառերով:

Իհարկե, շատ ուրիշ տեղերում, անգամ համաշխարհային զբոսաշրջության կենտրոններում՝ այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Փարիզն ու Նյու Յորքը, Հռոմն ու Ռիո դե Ժանեյրոն, կողք կողքի կարելի է հանդիպել մաքրության ու աղբի, փայլի ու խավարի, նույնիսկ՝ ճոխության ու թշվառության: Դրանց թող անդրադառնան իմ նկարիչ ու ռեժիսոր բարեկամներն իրենց կտավներում ու ֆիլմերում:

Մինչդեռ տեսանելի այս հակապատկերների պատճառը տեսանելիությունից դուրս է: Ու այդ պատճառը դարձյալ հակապատկերներն են՝ մարդկային հակապատկերները: Մարդկային ապրելակերպի, բարքերի, մտածողության, անգամ՝ էության հակապատկերները:

Ինչպե՞ս է պատահում, որ հարուստ պատմությունից ժառանգություն ստացած չտեսնված ճարտարապետությամբ քաղաքը հյուրերին դիմավորում է ճարտարապետական աղբով:

Երբ ինչ–որ պատմամշակութային կոթողի հարևանությամբ գործող տաղավարներում մարդիկ վաճառում են այդ կոթողի մանրակերտերը, կամ այն խորհրդանշող հուշանվերներ, դեռ կարելի է հասկանալ՝ զբոսաշրջիկները չեն կարող իրենց հետ

որպես հուշ տանել կոթողը, բայց երբ վաճառվում է ամեն տեսակի աղբ, դա արդեն այլ բանի մասին է խոսում:

Ես ակամա հիշում եմ իմ հայրենի Երևանը, որի մուտքը «Զվարթնոց» օդանավակայանի կողմից սկսվում է իրար գլխի կառուցված անկանոն շինություններով ու դրանց առջև շարված տարատեսակ ապրանքներով:

Հիշում եմ իմ հայրենի Երևանից քիչ այն կողմ գտնվող Գառնու տաճարը, որի մուտքի մոտ վաճառում են աղվեսի մորթիներ:

Սրա պատճառը մարդկային չարչիությունն է: Այդ չարչիությունը հակապատկերն է մշակույթի՝ մարդկային մշակույթի: Այս հակապատկերները կողք կողքի դրսևորվում են հատկապես այնտեղ, ուր տասնամյակներով, դարերով իշխում է չարչիական մտածելակերպը, որովհետև իշխում է չարչիական տեսակը:

Այստեղ՝ Նովի Սադում չարչիական տեսակի տարածողները գնչուներն են: Իսկ ովքե՞ր են իմ հայրենիքում՝ Հայաստանում:

Ես ոչինչ չունեմ գնչուների դեմ, վստահ եմ, որ նրանց մեջ կան լավ մարդիկ: Ինչպես օրինակ՝ Յանկոն և Շոֆրանկան, ովքեր երեկ ինձ սահմանից հասցրին Նովի Սադ իրենց ջարդուխուրդ միկրոավտոբուսով:

— Ինչո՞վ ես զբաղվում,— հարցրի Յանկոյին:

— Այսի՞նքն,— նա երևի չհասկացավ իմ հարցը:

— Ի՞նչ ես աշխատում:

— Աշխատե՞լ,— զարմացավ նա,— ինչո՞ւ աշխատել. ես ութ երեխա ունեմ, թող նրանք էլ աշխատեն: Իսկ ես իմն արդեն աշխատել եմ:

— Իսկ որտե՞ղ են ձեր երեխաները:

— Մենք թողեցինք նրանց Բուդապեշտում: Նովի Սադում հիմա լավ սեզոն չէ և զբոսաշրջիկներ չկան:

Թե ինչով պիտի զբաղվեին նրա ութ գնչու երեխաները Բուդապեշտում, ես չհարցրի, բայց իհարկե կարելի էր կռահել:

Նովի Սադ հասանք ուշ երեկոյան, ես խնդրեցի ինձ իջեցնել մի հյուրանոցի մոտ, որպեսզի գիշերեմ այնտեղ և առավոտյան մեկնեմ Բելգրադ: Հյուրանոցի համարում հայտնաբերեցի, որ անհետացել է արևային ակնոցս, որը դրված էր բաճկոնիս գրպանում: Իսկ բաճկոնս հանել էի հագիցս ճանապարհին և դրել

Նկարը չկա

կողքս: Ակնոցն ինչ–որ հայտնի բրենդի էր, կարծեմ բավականին թանկ արժեր, և, գուցե դուք չհավատաք, բայց նվիրել էր ինձ իմ ընկեր Մշկոն:

Բելգրադ հասա ավտոբուսով: Ավտոկայանում տաքսի նստեցի և խնդրեցի տանել մի նորմալ հյուրանոց:

— Նորմալ ասելով՝ ինչ նկատի ունեք,— հարցրեց տաքսու վարորդը, ու մինչ ես կմտածեի, թե ինչպես բացատրել, շարունակեց,— կան նորմալ ու թանկ հյուրանոցներ և կան նորմալ ու էժան հյուրանոցներ:

Բայց ես արդեն գիտեի, թե ինչ եմ ուզում:

— Կարո՞ղ եք ինձ տանել հյուրանոց, որ անմիջապես Դանուբի ափին է:

— Թանկ, թե՞ էժան,— դարձյալ իրենը պնդեց տաքսիստը:

— Միջին:

Նա մի քիչ մտածեց ու ասաց.

— Ես գիտեմ մի այդպիսի հյուրանոց, բայց այն կենտրոնից մի քիչ հեռու է:

Հյուրանոցը, ուր ինձ տարավ սերբ տաքսիստը կոչվում էր «Գառնի»: Ես բնականաբար փորձեցի հայկական հետք գտնել այստեղ, բայց այն չկար: Ընդունարանում աշխատող աղջիկը այդպես էլ չհասկացավ, թե ես ինչ նկատի ունեմ ու ոչ էլ կարողացավ բացատրել անվան ծագումնաբանությունը: Ես, հիասթափված, խնդրեցի ինձ սենյակ տալ՝ գետի տեսարանով:

Հետո դուրս եկա, վերցրի քաղաքի քարտեզը ու գտա այնտեղ նավահանգիստը: Այն հյուրանոցից մոտ տասը կիլոմետր հեռու էր ու գտնվում էր Դանուբ և Սավա գետերի խառնարանի մոտ, հայտնի Պանչևյան կամրջի հարևանությամբ: Հասա այնտեղ ճանապարհի մի մասը քայլելով, հետո տաքսիով: Նավահանգստում փորձեցի ճշտել թե երբ է ժամանում A Rosa Mia նավը Վիեննայից, բայց ինձ ոչ ոք չկարողացավ որևէ տեղեկություն տալ: Մնում էր՝ կամ ոչ մի տեղ չգնալ նավահանգստից ու սպասել այստեղ կամ ապավինել սեփական հաշվարկներիս: Համաձայն դրանց՝ նավը պիտի ժամաներ հաջորդ օրը, կեսօրից ոչ շուտ: Նավահանգստում սպասելն անիմաստ էր:

Ամբողջ օրն անցկացրի քաղաքում ման գալով և ինձ համար վերստին բացահայտեցի, որ Բելգրադն իր գեղեցկությամբ գրեթե չի զիջում ո՛չ Պրահային, ո՛չ Բուդապեշտին: Միայն ավելի վատ է պահպանված ու խնամված:

Երեկոյան կողմ մի ձկնային ռեստորան գտա գետի ափին ու մի լավ ընթրիք կազմակերպեցի ինքս ինձ համար: Որոշել էի խմել այնքան, որ հաջորդ օրը Մշկոյին դիմավորեմ իր ոճով, այսինքն՝ խորը խումհարի մեջ: Ռեստորանից հետո շարունակեցի խմել մի քանի ուրիշ վայրերում, հետո վերադարձա հյուրանոց, տեղավորվեցի պատշգամբում ու էլի խմիչք պատվիրեցի:

Հիշում էի իմ սիրելի մարդկանց ու խմում նրանց կենացը: Ընտանիքիս, հարազատներիս, ընկերներիս: Խմեցի անգամ Մշկոյի կենացը: Հետո անցա հայրենիքիս, Երկիր մոլորակին ու տիեզերքին:

«Գառնի» հյուրանոցի լույսերը արտացոլվում էին Դանուբի ջրերում, իսկ հակառակ ափին թեթև քամուց օրորվում էր անտառը: Ես նայում էի փայլող գետին ու խորհրդավոր անտառին և մտածում, թե որքան դաժան է, որ իմ հայրենի Երևանում գետ ու անտառ չկա: Իմ այս ճամփորդության ընթացքում ես արդեն եղել էի ավելի քան տասը քաղաքներում, և ամենուրեք գետեր կային ու անտառներ, անգամ հինգ հազար բնակչություն ունեցող փոքրիկ Ցերմատում, ուր հոսում էր Մաթթեր Վիսպա չքնաղ գետակը, իսկ ալպիական անտառները բարձրից նայում էին քաղաքի սուր տանիքներին: Մինչդեռ Երևանը գետ չունի: Համենայնդեպս՝ գետավարի գետ: Կար մի առվանման բան, որ հոսում էր Խանջյան փողոցով, այն էլ ծածկվեց: Ու կանաչ չունի Երևանը գրեթե: Կար մի փոքրիկ անտառանման բան Սարի թաղում, այն էլ հատվեց: Հավանաբար սա է նաև պատճառներից մեկը, որ մենք չենք կարողանում մարդավարի շնչել՝ ոչ միայն թոքերով, այլև հայացքով ու մտքով: Չէ՞ որ հայացքն էլ շունչ ունի, և ո՞ւմ է պետք անշունչ միտքը: Մինչդեռ տպավորությունն այն է, որ մենք ինքներս չենք ուզում շնչել: Սարի թաղի անտառը մարդիկ հատեցին իննսունականների սկզբին, հատեցին ճարահատյալ, որովհետև պետք է մի կերպ տաքանային: Բայց չէ՞ որ հետո, երբ չկար այլևս տաքության խնդիր, կարելի էր վերականգնել այդ

անտառը: Երևանն ունի մեկ միլիոն բնակիչ. եթե նրանցից հարյուր հազարը մեկական ծառ տնկեր և հետո խնամեր իր տնկած ծառը, հիմա նրանք և Երևանը կշնչեին:

Մի նավ երևաց հեռվում, որն, ամբողջովին լուսավորված, լողում էր Դանուբի հոսանքն ի վար: Տեսնես որտեղի՞ց էր գալիս և ո՞ւր էր գնում: Տեսնես ես երբևէ կճամփորդե՞մ նավով:

Բարձրացրի գրաֆինը, որ օդի լցնեմ բաժակս, բայց այն դատարկ էր: Զանգեցի ներքև՝ բար ու պատվիրեցի ևս հարյուր գրամ: Հետո մտածեցի, որ հարյուրը քիչ է, դեռ էլի կենացներ կային խմելու: Պատվիրեցի երկու հարյուր հիսուն:

Քիչ անց մատուցողը բերեց նոր գրաֆինը, ես լցրեցի հերթական բաժակը, բայց չհասցրի ո՛չ կենաց մտածել, ո՛չ էլ՝ խմել: Դանուբի հոսանքն ի վար իջնող լուսավոր նավը հասել էր ուղիղ իմ պատշգամբի առջև:

Նավի քթի աջ հատվածում մեծ կարմիր տառերով գրված էր՝ A Rosa Mia:

Այն մասին, թե ինչպես Մշկոն կոտրեց ոստիկանուհու սիրտը

A Rosa Mia նավը Բելգրադի նավահանգիստ էր մտել և խարիսխ գցել ավելի շուտ, քան ես տեղ կհասնեի տաքսիով: Կամրջակ աստիճանի վրայով զբոսանավից դուրս էին գալիս երջանիկ դեմքերով ու երեկոյան հագուստներով ուղևորները՝ հավանաբար մոտակա բազմաթիվ ռեստորաններում ու ակումբներում շարունակելու իրենց երեկոն: A Rosa Mia–ն հանգրվանելու էր Բելգրադի նավահանգստում մինչև հաջորդ առավոտ, իսկ առավոտյան վերադառնալու էր Վիեննա՝ արդեն Դանուբի հոսանքն ի վեր: Այդ մասին ինձ տեղեկացրեց նավապետը՝ այն բանից հետո, երբ ես կառամատույցում կանգնած սպասեցի մինչև նավից դուրս կգա վերջին ուղևորը, այդպես էլ Մշկոյին չտեսա ու բարձրացա տախտակամած:

Նավապետը բոլորովին չէր համապատասխանում նավապետերի մասին ունեցած իմ պատկերացումներին: Հավանաբար գետային նավերի նավապետերը պարտադիր չէ, որ լինեն ճերմակ մազերով ու մորուքով, ծխացող ծխամորճով ու հզոր ձայնով հաղթանդամ տղամարդիկ, այլ կարող են լինել օսլայած մազերով, մաքուր ածիլված, կանացի դիմագծերով ու կանացի նուրբ ձայնով: Բայց Աստված նրա հետ:

— Ես փնտրում եմ իմ ընկերոջը,— ասացի նավապետին:

— Եթե չեմ սխալվում, բոլոր ուղևորները դուրս են եկել նավից, բացի մի կնոջից,— հայտնեց նա բավականաչափ բարեհամբույր:

Փաստորեն ես կրկին ուշացել էի: Ի՞նչ անել՝ մտածեցի, գնալ ու փնտրել Մշկոյանին Բելգրադի ժամանցային վայրերում, թե՞՝ սպասել այստեղ: Հավանաբար ճիշտը գնալ՝ փնտրելն էր ու, չգտնելու դեպքում, կրկին նավի մոտ վերադառնալը:

Շնորհակալություն հայտնեցի նավապետին, քայլեցի դեպի կամրջակ–աստիճանը ու հանկարծ մտքովս մի բան անցավ: Շրջվեցի ու հարցրի.

— Իսկ կարո՞ղ եմ տեսնել այն կին ուղևորին, որ մնացել է նավում:

— Բայց Դուք ասացիք, որ փնտրում եք Ձեր ընկերոջը:

— Այո, բայց իմ ընկերն իր ընկերուհու հետ է:

Նավապետը զարմացած հայացք ընդունեց, կարծես ինչ որ բան հիշեց ու իր կանացի ձայնով դիմեց ինձ:

— Սպասեք, չլինի՞ թե Ձեր ընկերն այն տարօրինակ ազգանունով տղամարդն է:

— Դուք նկատի ունե՞ք Մշկոյանը,— ոգևորված արձագանքեցի ես:

Բայց պարզվեց ոգևորությունս անտեղի էր:

— Այո, Մշկոյան,— հաստատեց նավապետը՝ մի կերպ արտաբերելով ընկերոջս ազգանունը,— բայց ստիպված եմ հիասթափեցնել Ձեզ:

— Ի՞նչ է պատահել,— անհանգստացա ես:

— Նա իջավ Բուդապեշտում և այլևս չվերադարձավ նավ:

Միակ ուղևորը, որ մնացել էր նավում, պարզվեց՝ Կատարինա Շտեյներն էր, ավստրուհի ոստիկանը, ով հանուն Մշկոյի չնախատեսված արձակուրդ էր վերցրել՝ հավանաբար հույս ունենալով իրականացնել իր կյանքի ամենառոմանտիկ ճամփորդությունը:

Կատարինան անշարժ պառկած էր իր խցի մահճակալին և սառած հայացքով նայում էր առաստաղին: Ամենայն հավանականությամբ նրա հասակը ավելի էր երկու մետրից, քանի որ ոտքերի մի զգալի հատված դուրս էր մնում մահճակալից: Ավստրուհին առանց շպարի էր, գզգզված մազերով ու թաց աչքերով:

Ես փորձեցի պատկերացնել նրա վիճակը: Կին ոստիկան, ով աշխատանքի բերումով ստիպված է օրվա ու կյանքի զգալի մասը մոռանալ իր կանացիության մասին, ստիպված է թաքցնել իր հույզերն ու երազները, հանկարծ, անսպասելի վերագտնում է այս ամենը և, դեռ ավելին՝ սիրահարվում: Բայց թարսի պես Ավստրիայի, Եվրոպայի ու աշխարհի բոլոր տղամարդկանցից նա վերցնում

ու սիրահարվում է հենց Մշկոյին: Հետևանքը՝ երեք օր երջանկությունը վայելելուց հետո տեղի է ունենում անխուսափելին:

Ես նայում էի ավստրուհու անկենդան կերպարանքին ու մտածում, թե ինչ սրիկա է Մշկոն. կարող էր, չէ՞, նա սպասել, մինչև կավարտվեր Կատարինայի արձակուրդը, կամ, առնվազն՝ այս կրուիզը ու նոր, սովորության համաձայն, անհետանար:

Բայց, այնուամենայնիվ, պետք էր հասկանալ, թե ինչ էր տեղի ունեցել:

— Բելգրադը հրաշալի քաղաք է,— ասացի,— ավելի լավ է դուրս գալ ու մի քիչ թարմանալ: Ես Ձեզ հավատացնում եմ՝ Ձեր կյանքում ամեն ինչ լավ է լինելու, Դուք շատ հմայիչ կին եք:

Կատարինան վեր կացավ. նախ նստեց մահճակալին, ապա կանգնեց, և նրա գլուխը համարյա կպավ խցի առաստաղին ամրացված լամպին:

— Խնդրում եմ գնացեք Ձեր գործին. ես կմնամ սենյակում, մինչ մենք կվերադառնանք Վիեննա:

Նա երևի մտածում էր՝ ես նավի անձնակազմից եմ:

— Ես Մշկոյանի ընկերն եմ,— մի կերպ արտաբերեցի՝ դույզն–իսկ կասկած չունենալով, որ տիկին ոստիկանը հենց հիմա կհանի ձեռնաշղթաները:

Նա իհարկե հանկարծակիի եկավ, զարմացավ, նույնիսկ, կարելի է ասել՝ ապշեց, բայց բանը կալանավորման չհասավ, գուցե որովհետև ծառայության մեջ չէր այդ պահին: Ատելությամբ լի հայացքով նայեց ինձ ու ասաց.

— Ինչո՞ւ է նա Ձեզ ուղարկել:

— Նա ինձ չի ուղարկել. ես նույնպես փնտրում եմ նրան:

Կատարինան էլ ավելի զարմացավ ու, չգիտես ինչու, ասաց.

— Դուք նման եք իրար:

— Գուցե, բայց հավատացնում եմ, որ ես երբեք Ձեզ հետ նման կերպ չէի վարվի,— փորձեցի արդարանալ ես:

— Ի՞նչ եք ուզում ինձանից:

— Մանրամասներ. ինչպես ասում են՝ սատանան մանրամասների մեջ է:

— Տարօրինակ է,— ոստիկանուհին փորձեց ժպտալ, բայց նրա մոտ դա չստացվեց,— սովորաբար ես եմ ուրիշներից

ճշտում մանրամասները: Բայց կարծես կյանքը կամ, Ձեր ասած սատանան, փոխում է ոչ միայն դերերը:

Ես խղճացի նրան: Պատկերացրի, թե Մշկոյանին հանդիպելուց հետո ինչ ակնկալիքներ է նա ունեցել կյանքից կամ, առնվազն՝ այս ճամփորդությունից ու մեղավոր ասացի.

— Ես նրան կնախատեմ:

— Պետք չէ ոչ մեկին նախատել: Ես եմ մեղավոր: Բայց Դուք ասացիք, որ Ձեզ մանրամասներ են հետաքրքրում:

Մանրամասները, որ պատմեց Կատարինան, առանձնապես մանրամասն չէին: Բուդապեշտի ակումբներից մեկում Մշկոյանն իրենց սեղանի մոտ է հրավիրել մի ռուս մերկապարուհու: Սկզբում դա Կատարինային անգամ զվարճալի է թվացել: Բայց Մշկոյանը մերկապարուհուն հրավիրել է ևս մեկ անգամ, ապա երրորդ և այդպես շարունակ: Երբ Կատարինան արդեն զայրացել է ու դիտողություն արել, Մշկոյանը վեր է կացել ու անհետացել: Անհետացել է նաև ռուս մերկապարուհին:

Բելգրադից մեկնեցի հաջորդ առավոտյան՝ տաքսիով, և Սերբիա–Հունգարիա սահման հասա երկու ժամում, նստեցի իմ կարմիր «Մինին» ու առանց շտապելու վերադարձա Պրահա՝ ճանապարհին հոգալով դեպի Երևան ավիատոմսի հարցը:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՄՇԿՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՄ «ՆԱ ՎՈԼԳԵ ՊՈ ՎՈԼԳԵ»

Այն մասին թե ինչպես փոխհատուցվեցին իմ ծախսերը և դեռ մի բան էլ ավելի

Մոսկվայի Վնուկովո օդանավակայանում վերջին անգամ եղել էի խորհրդային տարիներին, եթե չեմ սխալվում, կամ գուցե միության փլուզումից քիչ հետո՝ իննսունականների սկզբներին: Այդ ժամանակ միայն այս օդնավակայանն էր կապում Մոսկվան Երևանի հետ, և միայն ավելի ուշ սկսվեց Երևանից չվերթներ իրականացվել Մոսկվայի Շերեմետևո և Դոմոդեդևո օդանավակայաններ և հակառակը: Եվ գուցե խորհրդանշական էր, որ հենց այստեղից սկսվեց իմ ճամփորդությունը Ռուսաստանով, որովհետև այն խորհրդային շունչը, որ զգացի օդանավից դուրս գալուց անմիջապես հետո, ինձ պիտի ուղեկցեր ողջ այդ ճամփորդության ընթացքում:

Բայց, հավանաբար, պետք է նախ անդրադառնալ այն բանին, թե ինչո՞ւ ես հայտնվեցի Ռուսաստանում և ինչո՞ւ շարունակվեց այս պատմությունը:

Եվրոպաներում Մշկոյանին ապարդյուն փնտրելուց հետո, երբ վերադարձա Երևան, այնպիսի տպավորություն էր մոտս, կարծես տանը չեմ եղել մի ամբողջ տարի, մինչդեռ բացակայել էի ընդամենը երկու շաբաթ: Փղիկն ամեն օր զանգահարում էր ու խնդրում հանդիպել, ես ամեն անգամ ինչ–որ պատճառ էի մոգոնում՝ հետաձգելու: Եվ այդպես ևս երկու շաբաթ: Մշկոյից, սակայն, լուր չկար. այդ ընթացքում նա Սիրուշի քարտով ոչ մի գործարք չէր կատարել: Դա, իհարկե, զարմանալի էր, բայց ես այլևս չէի ուզում այդ մասին մտածել: Եվ ահա մի օր կրկին զանգահարեց Փղիկը և խոսեց այնպես, որ ինձ թվաց՝ խելագարվել է:

— Դու չես պատկերացնի, դու պարզապես չես պատկերացնի,— գոռում էր նա, և ես չէի հասկանում՝ դա անում էր ուրախությունից, տխրությունից, թե իսկապես ցնդել էր:

Ամեն դեպքում սպասեցի մինչև հանգստանա, ապա նոր փորձեցի ճշտել, թե ինչ է պատահել:

— Ես հենց նոր հաղորդագրություն ստացա իմ բանկից, որ քարտիս է փոխանցվել քսանհինգ հազար եվրո,— ասաց Փղիկը:

— Ինչպե՞ս թե,— չհասկացա ես,— ո՞վ է փոխանցել:

— Դե իհարկե Մշկոյանը:

— Այսինքն՝ նա վերականգնել է այն ինչ ծախսե՞լ է:

— Դեռ մի բան էլ ավելի:

— Իսկ վստա՞հ ես, որ փոխանցողը Մշկոն է: Գուցե դա արել է քո հիմնարկը կամ նախկին ամուսինդ:

— Իմ նախկին ամուսինը մահացել է:

Ահա այդպես: Ես իհարկե վստահ էի, որ իմ ընկերը ազնիվ մարդ է և վաղ թե ուշ կվերադարձնի Սիրուշին փողերը, միայն թե չէի մտածում՝ որ այսպես: Ամեն դեպքում փորձեցի հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել:

Մշկոն, ըստ ամենայնի, Բուդապեշտից մեկնել էր Մոսկվա, այնտեղ երկու շաբաթ չգիտես ինչ էր արել, այնուհետև հանդիպել էր եղբորը, նրանից փող վերցրել և վերականգնել էր իր չստացված հարսնացուի քարտային բալանսը: Մեծ էր հավանականությունը, որ նա շուտով կվերադառնար Երևան: Անգամ Մշկոյի պես անսպառ մարդը ժամանակ առ ժամանակ սպառվում է, և նրան մի պահ հանգստանալ է պետք:

Փղիկի հետ պայմանավորվեցինք հանդիպել երեկոյան նրա աշխատավայրի մոտ: Անձրև էր տեղում, և նստեցինք մեքենայիս մեջ: Ես հետաքրքրվեցի, թե որտեղից է արվել փոխանցումը, և նա ասաց, որ Մոսկվայի մի բանկից: Հետո փորձեց ինձ համոզել միասին մեկնել Մոսկվա և գտնել Մշկոյին: Ես, իհարկե, հրաժարվեցի և վստահեցրի նրան, որ շուտով իր «փեսացուն» կվերադառնա: Տարա Փղիկին տուն, նա մի քիչ էլ նստեց մեքենայիս մեջ, մի քիչ լաց եղավ, մի քիչ ծիծաղեց, հետո երբ իջավ, տեսա, որ ինչ–որ բան է մոռացել նստատեղին: Գոռացի նրա հետևից, բայց նա թափահարեց ձեռքը և մտավ շենքի մուտքը:

Նստատեղին ծրար էր. ծրարի մեջ՝ հինգ հազար եվրո: Առաջին բանը որ անցավ մտքովս՝ չգիտեմ ինչու, այն էր, թե որտեղից

է Փղիկը վերցրել գումարը՝ չէ՞ որ նրա քարտը, թեև վերականգնված բալանսով, բայց դեռ Մշկոյի մոտ էր: Երկրորդը՝ անդրադարձա, որ գումարը ուղիղ երկու հազար եվրոյով շատ էր Եվրոպայում իմ ծախսածից: Ոչինչ, մտածեցի, կվերադարձնեմ հետո, կամ էլ չեմ վերադարձնի՝ հերն էլ անիծած: Իսկ վերցրել էր երևի հիմնարկից կամ նախկին ամուսնուց՝ չնայած վերջինս մահացել էր, ու կրկին՝ հերն էլ անիծած:

Մտա առաջին իսկ պատահած սրճարանը ու պատվիրեցի Մշկոյի սիրած ֆրանսիական օղին: Իսկ կեսգիշերին զանգեց Մշկոն:

— Ինչ գործի ես,— հարցրեց նա այնպես՝ կարծես երկու ժամ առաջ էինք բաժանվել իրարից:

— Խմում եմ,— պատասխանեցի ես այնպես, կարծես հենց այդ ժամանակ էլ բաժանվել էինք:

— Վաղն արի Մոսկվա. մի մեքենա եմ գնել, միասին քշելով կգանք Երևան:

— Ինչ մեքենա:

— Գրանդիոզնի:

Եվ ահա ես եկել էի Մոսկվա ու Վնուկովո օդանավակայանում սպասում էի սահմանն անցնելու իմ հերթին: Հերթում հիմնականում հայեր էին ու տաջիկներ: Նրանց իննսուն տոկոսը եկել էր այստեղ արտագնա աշխատանքի: Այդ իննսուն տոկոսի մեծագույն մասն աշխատելու էր կոպեկների դիմաց, զրկանքներ էր կրելու, որպեսզի կարողանար գումար ուղարկել հայրենիքում մնացած իր հարազատներին: Այդ գումարը շատ դեպքերում չէր գերազանցելու ամսական մի քանի հարյուր դոլարը: Իսկ այն մարդիկ, ում բախտը կբերեր և կկարողանային նորմալ փող վաստակել, այլևս չէին վերադառնալու հայրենիք, կամ վերադառնալու էին տեսակցության, ինչպես տեսակցության են գնում հիվանդանոց կամ բանտ:

— Ինչ նպատակով եք այցելում Ռուսաստան,— հարցրեց սահմանապահը:

— Գուլյաժ,— պատասխանեցի ես՝ Մշկոյանի բառապաշարով:

Նա երևի չհավատաց լսածին կամ նրան դուր չեկավ, որ ես եկել եմ իր երկիր՝ զվարճանալու: Համենայնդեպս՝ չափազանց

երկար տնտղեց անձնագիրս՝ ամեն էջը թերթելուց հետո բաձրացնելով գլուխը և խեթ հայացք նետելով վրաս:

Երբ դուրս եկա սպասասրահ, սկսեցի հայացքով փնտրել Մշկոյին: Նա խոստացել էր դիմավորել ինձ իր նոր գնած «գրանդիոզնի» մեքենայով, որը մենք պիտի վարեինք մինչև Երևան: Բայց ընկերս չէր երևում: Փոխարենը ինձ էին մոտենում տաքսիստները:

Ցանկացած երկրի մասին կարելի է պատկերացում կազմել՝ երբ հենց նոր ես մտել այդ երկիրը: Եթե օդանավակայանի շենքում քեզ են մոտենում տաքսիստները, ուրեմն այդ երկրում արդեն իսկ ինչ–որ բան այն չէ: Բայց միայն մոտենալը չէ խնդիրը: Նայած՝ թե ինչպե՞ս են մոտենում և նայած՝ թե ի՞նչ տեսք ունեն նրանք: Դրանից կարելի է դատել, թե որքան վատ է այդ երկրի վիճակը: Չէ որ տհաճ է, երբ քեզ են մոտենում մարդիկ, ինչ–որ բան են առաջարկում, դու մերժում ես, հետո մոտենում են ուրիշները և այդպես շարունակ: Ու այս ամենը տեսնում են օդանավակայանի աշխատողները և ոստիկանները: Ու եթե ոչ մի բան չեն ձեռնարկում այս երևույթի դեմ՝ նշանակում է նրանց մատն էլ է խառը և գուցե նրանք էլ օգուտ ունեն: Այլ խոսքով՝ եթե երկրի հենց դարպասների մոտ բացակայում է կարգ ու կանոնը, հանրության շահերը բախվում են ինչ–որ խմբերի շահերի, ապա դու նորմալ երկիր չես եկել: Ավա՜ղ, իմ հայրենիքում էլ այս երևույթը լայնորեն տարածված է: Մինչդեռ նորմալ երկրի օդանավակայանում ոչ մի տաքսիստ չես տեսնի. նրանք դրսում են՝ իրենց մեքենաների մեջ սպասում են իրենց հերթին:

Ինչևէ, ես մերժում էի արդեն տասներորդ տաքսիստին, իսկ Մշկոն չկար ու չկար: Ստիպված էի զանգել նրան: Եվ երբ լսեցի ռոբոտ–հեռախոսավարուհու անտարբեր ձայնը, որը տեղեկացնում էր, որ «բաժանորդն անջատել է հեռախոսը կամ գտնվում է ռադիոծածկույթից դուրս», հասկացա, որ Մշկոյանի, բնականաբար՝ նաև իմ, արկածները շարունակվելու են նաև Ռուսաստանում:

Ո՞վ է այդ պոռնիկը

Մի անգամ Երևանում Մշկոն ինձ ծանոթացրեց մի ռուս դերասանուհու հետ: Դա կարծեմ այս պատմությունից մեկ տարի առաջ էր, կամ գուցե՝ երկու: Դերասանուհու անունն էր Նաստյա: Մշկոն, բնականաբար, նրան ներկայացրեց իբրև աշխարհահռչակ դերասանուհի՝ Ռուսաստանի ժողովրդական արտիստ: Բայց Նաստյան խաղացել էր միայն մի քանի սիրային սերիալներում, այն էլ՝ էպիզոդիկ դերերում, այն էլ, հավանաբար, իր տեսքի շնորհիվ: Նա տիպային ռուս գեղեցկուհի էր՝ լազուր աչքերով ու հյուսած շեկ մազերով: Մշկոն նրան հանդիպել էր Մոսկվայում, որոշ ժամանակ զվարճացել հետն այնտեղ, հետո՝ հրավիրել Երևան: Եվ ահա Նաստյան եկել էր:

Մենք նստած էինք Կասկադի մոտի ռեստորաններից մեկում և խմում էինք Մշկոյանի սիրած ֆրանսիական օղին: Նաստյան խմում էր մեզ հավասար: Մեզանից մի քանի սեղան այն կողմ երեք աղջիկ կոկտեյլ էին խմում: Նրանցից մեկին ես ճանաչում էի: Նա հայաստանյան շոու–բիզնեսի հայտնի ներկայացուցիչ էր և իր գեղեցկությամբ առնվազն չէր զիջում Նաստյային: Ցավոք, նրան ճանաչում էր նաև Մշկոն: Եթե չճանաչեր, այդ օրը մենք

Երևանով մեկ խայտառակ չէինք լինի: Բայց հանուն արդարության պետք է ասել, որ այս անգամ մեղավորը Մշկոն չէր: Այսինքն նա ոչ մի վատ բան չարեց, ընդամենը քաղաքավարական այց կատարեց ծանոթ աղջկա սեղանին: Եվ դարձյալ, եթե այդ այցը երկար չտևեր, այսինքն՝ Մշկոն սահմանափակվեր միայն բարևելով, գուցե ոչ մի սարսափելի բան տեղի չունենար: Սակայն Մշկոյին հրավիրեցին նստել, և նա նստեց: Գուցե կրկին ոչ մի սարսափելի բան տեղի չունենար, եթե վերոնշյալ գեղեցկուհին, չգիտես ինչո՞ւ, չորոշեր փարվել Մշկոյին:

— Ո՞վ է այդ պոռնիկը,— հարցրեց Նաստյան:

Ես ուզում էի ասել, որ ամբողջովին համաձայն չեմ նրա որակման հետ, բայց չհասցրի: Նաստյան հանեց կոշիկը և նետեց իր ակամա մրցակցի ուղղությամբ: Նետումը դիպուկ չստացվեց, և կոշիկը վայրէջք կատարեց կոկտեյլներից մեկի մեջ:

Այդ օրը ինքս ինձ խոստացա, որ Մշկոյի ու յուր ընկերուհիների հետ այլևս հանրային վայրեր չեմ գնա, բայց իհարկե՝ չպահեցի խոստումս: Սակայն դա չէ կարևորը: Նաստյան վերադարձավ Մոսկվա, և մի քանի օր անց ես նրանից ֆեյսբուքյան ընկերության առաջարկ ստացա: Ընդունեցի այն և դրանից հետո ֆեյսբուքիս պատը սկսեց հեղեղվել Նաստյայի լուսանկարներով՝ արված տարբեր վայրերում, տարբեր մարդկանց հետ:

Եվ ահա, Նաստյայի հերթական լուսանկարները տեսա, երբ Վնուկովո օդանավակայանում երկու ժամ Մշկոյին ապարդյուն սպասելուց հետո տաքսիով գնացի Մոսկվա, տեղավորվեցի հյուրանոցում ու որոշեցի բացել ֆեյսբուքը:

Առաջին լուսանկարը վերնագրված էր այսպես՝ «Պուշկինը, Մշկոյանը և ես»: Լուսանկարում իսկապես երեքն էլ կային. ամենայն ռուսաց պոետը՝ արձանի տեսքով, Նաստյան՝ սարսափելի կարճ շրջազգեստով, իսկ Մշկոյանը՝ դեմքի չափազանց գոհ արտահայտությամբ: Լուսանկարն արված էր Տվեր քաղաքում՝ Վոլգա գետի ափին:

Երկրորդ լուսանկարը վերնագրված էր այսպես՝ «Նա Վոլգե պո Վոլգե»: Այստեղ առաջին պլանում մի սպիտակ «Վոլգա ԳԱԶ–21» էր, որի աջ պատուհանից գլուխը հանել էր Նաստյան, ձախից՝ Մշկոն: Հետևի պլանում դարձյալ Վոլգա գետն էր:

Ահա թե որտեղ էր Մշկոյանը և ահա թե ինչու ինձ չէր դիմավորել: Եվ ահա թե որն էր այն «գրանդիոզնի» մեքենան, որը մենք պիտի վարեինք Երևան: «Վոլգա ԳԱԶ–21»՝ արտադրված մոտ հիսուն տարի առաջ:

Ավելորդ է ասել, որ ես զայրացած էի: Անգամ ինձ բռնացրի այն մտքի վրա, որ շատ ավելի զայրացած եմ հիմա, քան այն ժամանակ, երբ Մշկոն վերցրել էր Փղիկի քարտը ու փախել: Դե իհարկե, այստեղ նա խաբել էր անձամբ ինձ, բերել–հասցրել էր Մոսկվա, իսկ ինքը մի աղջկա հետ գնացել էր ճամփորդելու Վոլգայի ափերով: Վոլգայով՝ Վոլգայի ափերով: Հրաշալի միտք էր իհարկե, բայց մի՞թե կարելի էր այդպես վարվել ընկերոջ հետ:

Մշկոյի հեռախոսը շարունակում էր անջատված մնալ: Նաստյայի հեռախոսահամարը ես չունեի: Ստիպված էի գրել նրան ֆեյսբուքով: Սիրելի Նաստյա, խնդրում եմ ասա Մշկոյանին, թող շտապ զանգի ինձ. ես Մոսկվայում եմ: Բայց ոչ Նաստյան պատասխանեց, ոչ էլ, առավել ևս, Մշկոյանը զանգեց: Պարզ էր, որ Նաստյան նրան չի փոխանցել իմ ասածը, որովհետև ես կարող էի խանգարել նրանց ճամփորդությանը: Չնայած՝ եթե ասեր էլ, վստահ եմ, որ Մշկոն չէր զանգահարելու:

Ի՞նչ կարելի էր անել: Եթե այնպես է ստացվել, որ հայտնվել եմ Մոսկվայում, գուցե կարելի է մնա՞լ մի քանի օր, տեսնել ընկերներիս ու զվարճանալ մի քիչ: Չէ՞ որ, ես ասել էի ռուս սահմանապահին, որ եկել եմ այստեղ զվարճանալու:

Սկսեցի հաշվել բոլոր այն ընկերներիս ու մոտ բարեկամներիս, ովքեր ապրում էին այստեղ: Ստացվեց ավելի քան քսան հոգի: Նրանցից առանձնացրեցի նորմալ խմողներին: Ստացվեց տասից ավել: Հետո առանձնացրի լավ խմողներին. մնացին յոթը: Գրպանումս էր Փղիկի տված հինգ հազար եվրոն: Դրանից երկու հազարը, կարելի է ասել, երկնքից էր ընկել: Դե ինչ, մտածեցի, յոթ օր, յոթ ընկեր և երկու հազար եվրո: Վատ չէ: Առավել ևս, որ վստահ էի՝ յոթ ընկերներիցս առնվազն վեցը չէին թողնելու, որ փող ծախսեմ: Միայն մեկն էր, ում գործերը լավ չէին: Հենց նրանից էլ որոշեցի սկսել: Հեռախոսիս մեջ գտա Սուրենի համարը և զանգահարեցի:

Հայրենիքը հայրենիք է, երբ ոտքերիդ տակ է

Իմ ընկեր Սուրենը Մոսկվայում էր հազար ինը հարյուր իններորդ թվականից: Հիմա նրա գործերը լավ չէին, թեպետ ժամանակին գերազանց էին եղել: Ինչ-որ ֆուրգոն էր վարում և բեռներ տեղափոխում: Երկու որդիները ուսանող էին, և Սուրենը մի կերպ հասցնում էր հոգալ նրանց ուսման ծախսերը:

— Երբևէ մտածե՞լ ես հայրենիք վերադառնալու մասին,— հարցրի ընկերոջս:

— Հայրենի՞ք,— Սուրենը զարմացած նայեց աչքերիս,— իսկ մի՞թե ես հայրենիքում չեմ:

Հիմա արդեն ես զարմացած նայեցի նրան: Մենք նստած էինք հայկական ռեստորանում և արցախյան թթի օղի էինք խմում:

— Դու նկատի ունե՞ս այս ռեստորանը:

— Ոչ, ես նկատի ունեմ Մոսկվան:

— Եվ երբվանի՞ց է Մոսկվան դարձել քո հայրենիքը:

Սուրենը մի քիչ մտածեց ու ասաց.

— Նայիր շուրջդ, բոլոր այս մարդկանց, ովքեր այս ռեստորանում են:

Ես, անկախ ինձանից, հայացքով շրջեցի սրահով, կարծես այդպես կարող էի ստանալ իմ տված հարցի պատասխանը: Ռեստորանում, ուր մենք զրուցում էինք, ազատ սեղան չկար և այստեղ հիմնականում հայեր էին: Ոմանք ընտանիքներով են, ոմանք՝ ընկերներով, ոմանք՝ կոլեկտիվներով: Այնուամենայնիվ հարցիս պատասխանը չգտա:

— Բոլոր այս մարդիկ,— շարունակեց Սուրենը,— նախ ռուսաստանցիներ են, ավելի ճիշտ մոսկվացիներ, հետո նոր՝ հայեր: Նրանք խոսում են հայերեն, խոսում են Հայաստանի մասին, քննարկում են հայաստանյան իրադարձությունները, նրանցից շատերը տարին մեկ, երկու, երեք, գուցե տասն անգամ այցելում են Հայաստան, բայց միևնույն է, նրանք վաղուց արդեն մոսկվացիներ են:

— Իհարկե մոսկվացիներ են: Աշխարհում կան նաև լոսանջելեսցիներ, բեյրութցիներ ու սիդնեյցիներ, բայց չէ՞ որ նրանք հայրենիք ունեն:

— Հայրենի՞ք ունեն,— կրկնեց Սուրենը:

— Չունե՞ն:

— Երբ հայրենիքը քեզ համար ընդամենը վայր է, ուր կարելի է երբեմն այցելել, վայր, որտեղ մնացած հարազատներին կարելի է երբեմն գումար ուղարկել, վայր, ուր կարելի է ներդրումներ անել կամ մատուռներ ու անգամ եկեղեցիներ կառուցել, վայր, որի մասին կարելի է կենացներ ասել և անգամ այդ կենացները խմել հոտնկայս, դա՞ է հայրենիքը:

— Ես միևնույն է չեմ հասկանում քեզ:

— Կենացով հայրենիք չի լինում, ոչ էլ բարեգործությամբ ու ներդրումներով, եթե այդ կենաց ասողը, բարեգործություն ու ներդրումներ անողը ապրում է դրսում, մեռնում է դրսում ու պատգամում է իրեն թաղել «հայրենիքում»: Դա ձև է, ցուցամոլություն, պաթոս: Որովհետև հայրենիքը հայրենիք չէ այն դեպքում, եթե դու կարող ես վերադառնալ ու ապրել այնտեղ, բայց չես անում դա:

— Իսկ ի՞նչ է այն:

— Հայաստան: Վայր, ուր ծնվել ես դու կամ քո նախնիները: Որովհետև սրտում հայրենիք չի լինում, մտքում հայրենիք չի լինում. հայրենիքը հայրենիք է, երբ ոտքերիդ տակ է: Դու երբևէ մտածե՞լ ես, թե ի՞նչ կլիներ, ինչպիսի՞ն կլիներ Հայաստանը, եթե բոլոր այն մարդիկ ովքեր անկախությունից հետո հեռացան այնտեղից՝ չհեռանային:

— Բայց, չէ՞ որ այդ մարդկանցից մեկն էլ դու ես:

— Ես ընդամենը ձախողակի մեկն եմ: Իններորդին ես եկա այստեղ քսան օրով, բայց մնացի քսան տարի: Գուցե հիմա ես կարող եմ վերադառնալ: Բայց իմ որդիները երբեք չեն վերադառնա: Ես կարող եմ վերադառնալ ու իրավունք ունենալ

ասելու, որ Հայաստանն իմ հայրենիքն է: Բայց լինո՞ւմ է այդպիսի բան, որ քո հայրենիքը լինի մեկը, իսկ որդիներինդ՝ ուրիշը:

Ես գիտեի, որ Սուրենը անկեղծ էր: Գիտեի, որ նա ազնիվ մարդ է և գիտեի, որ հայրենասեր է: Իննսունչորսին նա Մոսկվա մեկնեց կարելի է ասել ուղիղ արցախյան ռազմաճակատից: Եվ գուցե բավակա՞ն էր քրքրել նրա հոգին, անկախ նրանից համաձայն էի նրա մտքերի հետ, թե՝ ոչ:

Ես երբեք չէի հետաքրքրվել, թե ինչո՞ւ և ինչպե՞ս Սուրենի գործերը ձախողվեցին: Հիմա հետաքրքրվեցի:

— Գիտե՞ս ինչ է ռուլետկան,— հարցրեց նա:

— Դու նկատի ունես խաղատա՞ն ռուլետկան:

— Այո:

— Խաղացել եմ մի երկու անգամ:

— Ահա,— շարունակեց է Սուրենը,— Մոսկվան նման է ռուլետկայի: Եթե բախտդ բերի և մի անգամ խաղադրույք կատարես ճիշտ թվի վրա, կդառնաս հարուստ մարդ: Մնացած բոլոր տեսակի խաղադրույքները կամ քեզ կպահեն հավերժ խաղի մեջ, կամ կտանեն կործանման: Դու հետաքրքրվում ես, թե ինչո՞ւ ես հաջողության չհասա: Հաջողության չհասա, որովհետև ես խաղադրույքներ էի կատարում սև ու կարմիրի կամ կենտ ու զույգի վրա, մեկումեջ հաջողում էի, մեկումեջ ձախողում, հետո սկսեցի ավելի ու ավելի հաճախ ձախողել և ի վերջո ստիպված էի ապավինել իմ ֆուրգոնին:

— Այսինքն բոլոր այն մարդիկ, ովքեր հարստացել են այստեղ, պարզապես նրանց բա՞խտն է բերել:

— Ես, իհարկե, նկատի ունեմ, այսպես կոչված, գործարարներին՝ նրանց, ովքեր բիզնեսով են զբաղվել, չնայած այստեղ՝ Մոսկվայում ամեն ինչն է բիզնես: Այո. նրանք գուշակել են ճիշտ թիվը:

— Իսկ մյուսնե՞րը, այսինքն՝ ոչ գործարարները:

— Նրանք շատ փոքր թիվ են կազմում: Այստեղ հաստատվածների իննսուն տոկոսը, կամ գուցե ավելին, զբաղվում են գործարարությամբ կամ առևտրով՝ հիմնականում՝ փոքր, երբեմն՝ միջին, հազվադեպ՝ մեծ մասշտաբներով:

— Բայց չէ՞ որ այստեղ են բազմաթիվ շինարարներ, արհեստագործներ, բանվորներ:

— Նրանք նման են թռչունների, որոնք ձմեռները թռնում են տաք երկրներ, ամառները վերադառնում տուն: Միայն թե այս դեպքում հակառակն է. քո ասած մարդիկ ամառներն են թռնում այստեղ, ձմեռները՝ վերադառնում տուն:

Սուրենի հետ մենք երկար չնստեցինք Մոսկվայի հայկական այդ ռեստորանում: Նա ասաց, որ շատ չի կարող խմել, որովհետև առավոտ շուտ պիտի դուրս գա աշխատանքի իր ֆուրգոնով, որը փաստորեն միակ բանն էր, որ նա կարողացել էր հետ գցել՝ Մոսկվայում բնակվելու քսան տարիների ընթացքում: Եվ հավանաբար այդպես ավելի լավ էր. չափից ավելի ծանր ստացվեց վաղեմի ընկերոջս հետ այս հանդիպումը:

Ոչինչ, դեռ կա վեց օր և վեց ուրիշ ընկերներ՝ մտածեցի ես ու գնացի հյուրանոց՝ քնելու:

Մերսեդեսով Վոլգայի հետևից

Սակայն մյուս ընկերներիս ես այդպես էլ չհանդիպեցի, որովհետև հաջորդ օրը մեկնեցի Մոսկվայից:

Արթնացա կեսօրին, իջա հյուրանոցի սրճարանը և սուրճ պատվիրեցի: Մի քիչ լուրեր նայեցի հեռախոսիս համացանցով, ապա բացեցի ֆեյսբուքը: Հենց այստեղ էլ հանդիպեցի Նաստյայի նախ ստատուսին, ապա՝ լուսանկարին: Ստատուսում գրված էր. «Նա Վոլգե պո Վոլգե. Կանգառ երկրորդ. Յարոսլավլ»: Նկարում Նաստյան էր՝ հենված սպիտակ «Վոլգա ԳԱԶ–21»–ի կապոտին: Մեքենան կայանած էր Յարոսլավլի խորհրդանիշերից մեկի առջև: Մշկոյանը չկար, սակայն դատելով նկարի որակից՝ այն արել էր հենց նա:

Ամենից շատ ինձ զայրացրեց «կանգառ երկրորդը»: Այսինքն՝ ամեն ինչ ճիշտ էր, դա կատակ չէր: Այսինքն նրանք իսկապես ճամփորդում էին Վոլգա գետի ափին ընկած քաղաքներով:

Պետք է ասեմ, որ մինչ այդ նկարը տեսնելը ես դեռ աղոտ հույսեր ունեի, որ ընկերս խելքի կգա, կհիշի, որ հրավիրել է ինձ այստեղ, որ մենք միասին ճամփորդենք, կբավարարվի միայն Տվերով ու կվերադառնա Մոսկվա: Բայց այդպես չէր լինելու: Նաստյան Փղիկ չէր: Նա կհաներ կոշիկը ու դրանով կսատկացներ Մշկոյանին, եթե վերջինս փորձեր թողնել իրեն:

Ինձ պետք էր հասկանալ, թե ինչ էր տեղի ունեցել այն բանից հետո, երբ Մշկոն զանգահարել էր ինձ ու առաջարկել գալ Մոսկվա: Ինչ էր տեղի ունեցել մինչև իմ Մոսկվա գալը ՝այդ մեկ գիշերվա ընթացքում, որ նա այդպես սրիկայաբար մոռացել էր ինձ, մեկնել ճամփորդության Նաստյայի հետ ու, սովորության համաձայն, անջատել հեռախոսը: Չէ՞ որ Մշկոն Մոսկվայում էր արդեն երկու շաբաթ, և եթե Նաստյան նրա հետ էր այդ

Նկարը չկա

ընթացքում, ապա ինչո՞ւ նրանք պետք է այդպես անակնկալ ձեռնարկեին իրենց ճամփորդությունը Վոլգայի ափերով հենց այն օրը, երբ Մշկոն պիտի դիմավորեր ինձ:

Հարցի պատասխանը ես գտա դարձյալ Նաստյայի ֆեյսբուքյան էջում: Այնտեղ տեղադրված լուսանկարները վկայում էին, որ վերջին երկու շաբաթները նա անցկացրել էր Եգիպտոսում և Մոսկվա էր վերադարձել ճիշտ այն օրը, երբ Մշկոյանը զանգահարել էր ինձ: Այսինքն՝ ինձ հետ պայմանավորվելուց հետո սրիկան հանդիպել էր Նաստյային, ման տվել նրան իր «գրանդիոզնի» «Վոլգայով», և նրանց մտքում ծագել էր այդ փառահեղ գաղափարը՝ «Նա Վոլգե պո Վոլգե»: Դա Մշկոյանի ոճով էր: Թքած, թե ընկերը չի գալու ու օդանավակայանում սպասի իրեն, որ միասին վերադառնան Երևան այդ նույն «գրանդիոզնի» «Վոլգայով»: Թքած, թե մինչ այդ՝ ընկերը երկու շաբաթ չի փնտրել նրան գրեթե ողջ Արևմտյան ու Արևելյան Եվրոպայում, թքած թե…

Ես կատաղած էի: Ընդ որում երկուսի վրա: Պետք էր պատժել: Երկուսին էլ:

Ինչ՞ եր ասես չանցան մտքովս: Անգամ պատրաստ էի խեղդել երկուսին Վոլգա գետում իրենց «Վոլգայի» մեջ: Այնքան որ կատաղած էի:

Բայց դրա համար պետք էր նախ գտնել նրանց:

Հեռախոսիս մեջ բացեցի Ռուսաստանի քարտեզը: Վոլգայի վրա գտնվող առաջին քաղաքը Տվերն էր, որին հաջորդում էր Ռիբինսկը, ապա՝ Յարոսլավլը: Ճանապարհորդները, հավանաբար, Ռիբինսկ չէին մտել և միանգամից քշել էին Յարոսլավլ: Բայց մի նրբություն կար, որ ինձ համար անհասկանալի էր: Տվերից Յարոսլավլ ավելի քան երեք հարյուր կիլոմետր ճանապարհ էր, որը կարելի էր անցնել ոչ շուտ, քան չորս ժամում: Հաշվի առնելով, որ կեսօրին նրանք արդեն Յարոսլավլում էին՝ ուրեմն Տվերից շարժվել էին ոչ ուշ քան առավոտյան ութին: Դա նման չէր Մշկոյանին: Այսինքն նա չէ՞ր խմել Տվերում:

Ինչևէ, պետք էր հասնել նրանց: Եվ որքան հնարավոր է՝ շուտ:

Ճշտեցի «Սիքսթ» ընկերության՝ քաղաքի կենտրոնում գտնվող վարձույթի սրահի հասցեն, հանձնեցի հյուրանոցիս

համարը, տաքսի պատվիրեցի ու գնացի այնտեղ: Նախորդ անգամ այս ընկերությունից մեքենա էի վարձել Պրահայում: Այն կարմիր «Մինին», որը փչացավ Սերբիայի սահմանին: Մեքենան վերադարձնելիս ես ներկայացրել էի վերանորգման համար արված իմ ծախսերը և հնարավորինս գունավոր նկարագրել, թե ի՞նչ անհանգստություններ է պատճառել ինձ մեքենայի խափանվելը: Ծախսերը փոխհատուցել էին, իսկ պատճառած անհանգստության համար՝ տվել մի սերտիֆիկատ, որը հավաստում էր, որ իմ հաջորդ վարձակալության ժամանակ ընկերությունը պարտավորվում է նույն գնով տրամադրել մեկ կարգ բարձր մեքենա:

Մոսկվայի կենտրոնում գտնվող «Սիքսթի» կայանատեղիում կային միայն ցածր դասի մեքենաներ և մի E դասի «Մերսեդես», որը ընկերության աշխատակիցը համառորեն չէր ուզում տրամադրել ինձ, չնայած համակարգում շատ լավ տեսնում էր իմ սերտիֆիկատը:

— Այն ոչ թե մեկ դաս է բարձր, այլ՝ երեք, հասկանո՞ւմ եք,— նրա սրտից արյուն էր կաթում:

— Դա ձեր խնդիրն է,— չոր նետեցի ես:

— Օդանավակայանի մասնաճյուղում մենք ունեք բազմաթիվ ուրիշ մեքենաներ, եթե Դուք սպասեք, ես կկազմակերպեմ, որ մոտեցնեն մեկ այլ մեքենա, դարձյալ շատ լավը, բայց ոչ այս դասի:

— Իսկ ինչո՞ւ պետք է ես սպասեմ,— էլ ավելի չոր ասացի ես,— ավելի լավ է զանգեմ ձեր գլխամասային գրասենյակ:

«Սիքսթի» գլխամասային գրասենյակը գտնվում էր Մյունհենի մոտակայքում, ես մի անգամ անցել էի դրա կողքով: Միայն թե զանգահարել այնտեղ բնականաբար չէի պատրաստվում, մանավանդ, որ հեռախոսահամարն էլ չունեի: Բայց մարտավարությունս աշխատեց, ու «Մերսեդեսն» ինձ տվեցին:

Այն սև գույնի էր և բոլորովին նոր՝ արագաչափի վրա գրված էր, որ մեքենան վազել է ընդամենը երկու հազար հինգ հարյուր կիլոմետր: Եվ, ի՞նչ եք կարծում, որքան ես վճարեցի այն տաս օրով վարձակալելու համար: Գրեթե նույնքան, որքան «Մինիի» համար՝ ընդամենը չորս հարյուր եվրո:

Այս փոքրիկ հաջողությունը թեև ոգևորեց ինձ, բայց զայրույթս դեռ չէր անցել: Պետք էր որպե առաջ գտնել Մշկոյին:

Մոսկվա–Յարոսլավլ՝ երեք հարյուր քառասուն երեք կիլոմետր և հինգ ու կես ժամ՝ ցույց տվեց նավիգատորը, և ես ճամփա ընկա:

Հե՜յ, ո՞վ կա այդտեղ, կամ այն մասին, թե ինչպես ես մնացի առանց բորշչի

Վերջին անգամ Ռուսաստանում մեքենայով ճամփորդել էի իննսունականների վերջին, հասել էի մինչև Սիբիր ու շատ լավ գիտեի, որ կա երեք Ռուսաստան. մեկը Մոսկվան է, մյուսը՝ Սանկտ Պետերբուրգը, իսկ երրորդը՝ այն ամենը ինչը դրանցից դուրս է: Երկու մայրաքաղաքների ճոխությանն ու հարստությանը հակադրվում է մնացած Ռուսաստանի թշվառությունն ու աղքատությունը, և որքան հեռանում ես մայրաքաղաքներից այնքան ավելի սահմռկեցուցիչ է դառնում պատկերը: Իհարկե, կան բազմաթիվ մեծ ու փոքր քաղաքներ, որոնք ըստ արժանվույնս ներկայանում են իրենց պատմամշակութային կերպարով ու ճարտարապետությամբ, բայց միայն այդքանը: Այս պատմության ընթացքում դեռ առիթ կլինի դրան անդրադառնալու, բայց հիմա ճիշտ ժամանակն է պատմելու, թե ինչ պատահեց ինձ՝ Մոսկվայից մոտ հարյուր հիսուն կիլոմետր հեռու, Շչելկանկա ավանի մոտ:

Այստեղ ես կանգ առա, որպեսզի մի բան ուտեմ, «Մինուտկա» կոչվող ճաշարանում: Ողջ օրը չէի սնվել ու սարսափելի քաղցած էի: Ճանապարհին բազմաթիվ ճաշարաններ, սրճարաններ ու չեբուրեկիանոցներ կային, բայց ես համառորեն չէի կանգնում՝ մտածելով, որ կդիմանամ մինչև Յարոսլավլ: Բայց, զգացի որ այլևս չեմ դիմանում: Իսկ գլխավորը՝ ճաշարանի անունն էր, «Մինուտկա», այսինքն՝ րոպե, այսինքն՝ կարելի էր արագ մի բան ուտել ու շարունակել ճանապարհս:

Երբ ներս մտա, անմիջապես հասկացա, որ սխալ տեղ եմ ընկել. նախ, հենց երկփեղկ դռների հետևում, հատակի շորին պառկած՝ ինձ դիմավորեց մի շուն: Այն մուգ շագանակագույն

մորթի ուներ, երկար ականջներ ու անտարբեր աչքեր: Հավանաբար ինչ–որ ցեղատեսակի ու թափառական շան խառնուրդ էր: Ինչևէ, շունն ինձ ճանապարհ չտվեց, և ես ստիպված էի անցնել նրա վրայով: Իսկ ճաշարանը մի տեսակ փնթի տպավորություն թողեց, բայց, որ կարևորն է՝ դատարկ էր: Արդեն ուզում էի դուրս գալ, երբ աչքիս ընկավ ճաշացանկը, որ դրված էր բուֆետի կանգնասեղանին: Ամեն դեպքում՝ աչքի անցկացրի ու տեսա, որ այստեղ բորշչ են տալիս: Ու, չգիտես ինչու, սիրտս ահավոր բորշչ ուզեց, թեկուզ այս անհյուրընկալ ու փնթի ճաշարանում:

— Հեյ, ո՞վ կա այդտեղ,— ձայնեցի ես:

— Մինուտկու,— արձագանքեցին բուֆետի հետևից:

Այնտեղից մի դուռ էր բացվում, որը, հավանաբար, տանում էր խոհանոց:

Ես սպասեցի մի րոպե, հետո երկու, հետո երեք, բայց ոչ ոք դուրս չեկավ: Ստիպված նորից ձայն տվեցի:

— Նստեք, հիմա կմոտենամ,— լսեցի պատասխանը:

Այդպես էլ արեցի, տեղավորվեցի մի սեղանի մոտ ու շարունակեցի սպասել: Անցավ ևս երեք կամ գուցե անգամ հինգ րոպե, մինչ ինձ կմոտենային: Մոտեցողը անհասկանալի տարիքի դեղին մազերով մի թմբլիկ կին էր: Աչքերն անկյուններում երկարացված էին սև մատիտով, իսկ վառ կարմիր շրթներկը տեղ–տեղ լղոզված էր:

— Ինչո՞ւ եք աղմկում,— ասաց նա՝ առանց բարևելու,— մի րոպե չե՞ք կարողանում սպասել:

Իհարկե ճիշտ կլիներ երկու բառ ասել նրան ու հեռանալ, բայց ես այդպես չարեցի:

— Բարև ձեզ, գեղեցկուհի,— ասացի փոխարենը:

— Դա ուրիշ բան,— փափկեց նա,— ի՞նչ եք ուզում:

— Բորշչ:

— Ուրի՞շ:

— Ուրիշ ոչինչ:

Նրան երևի դուր չեկավ, որ ընդամենը մի ամսան բորշչի համար իրեն անհանգստացրել եմ և, առանց որևէ բան ասելու, դժգոհ դեմքով շուռ եկավ ու գնաց՝ տարուբերելով հարուստ հետույքը:

Ես հանեցի հեռախոսս ու բացեցի ֆեյսբուքը: Ուզում էի տեսնել, թե արդյոք նոր նկար կամ ստատուս չկա Նաստյայից: Բայց ոչինչ չկար:

Բուֆետի հետևի դռնից մի տղամարդ հայտնվեց, մի պահ կանգնեց, հայացքով չափեց ինձ ու դուրս եկավ ճաշարանից: Ահա թե ինչու էր տիկնոջ շրթներկը լղոզված՝ մտածեցի ես: Եվ ահա թե ինչո՞ւ էր նա այդպես ջղային: Ես, վստահաբար, խանգարել էի ինչ–որ բանի: Դարձյալ մտքովս անցավ, վեր կենալ ու գնալ՝ նկատի ունենալով, թե տիկինը, որ պիտի ինձ ուտելիք տար, ինչով էր զբաղված եղել քիչ առաջ, բայց կրկին զսպեցի ինձ: Չափից ավելի քաղցած էի:

Նորից վերցրի հեռախոսս ու սկսեցի լուրեր նայել: Իմ հայրենիքում ոչ մի արտառոց բան չկար, Ռուսաստանում ու աշխարհում նույնպես: Վերադարձա ֆեյսբուքին ու տեսա, որ ծանոթներիցս մեկի շունը կորել է. նա տեղադրել էր շան նկարը՝ գտնողին խոստանալով դրամական խոշոր պարգև: Նկարից անտարբեր աչքերով ինձ էր նայում երկար ականջներով մի մուգ շագանակագույն շուն: Այն այնքան նման էր ճաշարանի դռան շեմին պառկած շանը, որ մի պահ ուզում էի զանգահարել ծանոթիս հաղորդել ուրախ լուրը և պահանջել դրամական պարգևը:

Բորշչս ուշանում էր. պատվիրելուս պահից անցել էր արդեն տասնհինգ րոպե: Ես մի քիչ էլ սպասեցի, ամեն դեպքում, հետո մոտեցա բուֆետին ու ձայն տվեցի կնոջը: Երբ նա դուրս եկավ, տեսա, որ շրթներկն այլևս լղոզված չէ:

— Ի՞նչ եք ուզում,— հարցրեց այնպես, կարծես նոր էր ինձ տեսնում:

— Բորշչ,— ասացի ես:

— Չեք կարող մի քիչ համբերել, սովից մեռնո՞ւմ եք, ինչ է,— զայրացավ նա ու կրկին մտավ խոհանոց:

Ես վերադարձա տեղս ու շարունակեցի խելոք սպասել: Անկեղծ ասած՝ վախենում էի նրան մի բան ասել, որովհետև այսքան սպասելուց հետո կարող էի զրկվել ճաշից: Որոշ ժամանակ հետո ճաշարան մտավ քիչ առաջվա տղամարդը: Անցավ շեմին պառկած շան վրայով ու մինչ կմտներ խոհանոց, ես տեսա, որ նրա ձեռքին ցելոֆանե տոպրակ է: Տոպրակի մեջ հավանաբար

էլի բաներ կային, բայց առաջինը իմ աչքին զարնեց կաղամբը: Չի՛ կարող պատահել. արդյո՞ք այս կինը նոր էր պատրաստվում բորշչը եփել:

Ես վեր կացա տեղիցս ու քայլեցի դեպի խոհանոցի դուռը: Երևի հասկանալի է, թե որքան կատաղած էի ու չգիտեմ, թե ինչ կլիներ, եթե մտնեի խոհանոց: Բայց, բարեբախտաբար, չմտա: Խոհանոցի դռան փականից դրսի կողմից կախված էր բանալին: Սեղմեցի դուռը ու պտտեցի բանալին երկու անգամ: Հետո վերցրի այն, հրաժեշտ տվեցի շանը, նստեցի մեքենաս ու հեռացա «Մինուտկա» ճաշարանից, ուր իմ բորշչին էի սպասել գրեթե մեկ ժամ ու այդպես էլ չէի կերել այն:

Ողջույն Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական դաշնային շրջանի դպրոցների ուսմասվարների կոնֆերանսի մասնակիցներին

— Բոլոր համարները զբաղված են, բայց ես կարող եմ Ձեզ քոթեջ տրամադրել նույն արժեքով,— ասաց Կոստրոմայի «Ազիմուտ» հյուրանոցի աշխատակցուհին:

— Եվ որքա՞ն է այդ արժեքը,— հարցրի ես:

— Հազար հինգ հարյուր ռուբլի:

Հազար հինգ հարյուր ռուբլին այդ ժամանակ կազմում էր մոտավորապես քսանհինգ ամերիկյան դոլար: Դա այն ժամանակ էր, երբ Ռուսաստանում ռուբլու փոխարժեքը կտրուկ նվազել էր, այսինքն դոլարի փոխարժեքը գրեթե կրկնակի աճել էր: Մինչդեռ ծառայությունների և ապրանքների գները մնացել էին գրեթե նույնը: Մի խոսքով, եթե դու նախկինում ռեստորանում երեք հազար ռուբլի հաշիվ էիր փակում և այն հարյուր դոլար էր, հիմա դու վճարում էիր նույն երեք հազար ռուբլին, և այն կազմում էր հիսուն դոլար: Դա, իհարկե, ինձ համար չափազանց լավ էր, միայն թե՝ երբեմն զարմանում էի:

— Իսկ ինչո՞ւ են բոլոր համարները զբաղված, այստեղ ինչ ո՞ր միջոցառում է,— հարցրի աշխատակցուհուն մեկնելով անձնագիրս ու քարտս:

— Այո,— ասաց աշխատակցուհին և մատով ցույց տվեց հյուրանոցի ֆոյեում տեղադրված հսկա ցուցապաստառը՝ շրջանակված կապույտ ու սպիտակ փուչիկներով:

«Ողջո՛ւյն, Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական դաշնային շրջանի դպրոցների ուսմասվարների կոնֆերանսի մասնակիցներին»՝ գրված էր պաստառին:

Միայն թե այստեղ սխալ կար. պետք է գրված լիներ ոչ թե «ուսմասվարների», այլ՝ «ուսմասվարուհիների»: Բայց այդ մասին հետո:

Մինչ այդ, երևի ճիշտ կլինի, որ բացատրեմ, թե ինչո՞ւ և ինչպե՞ս ես Յարոսլավլի փոխարեն հայտնվեցի Կոստրոմայում և հենց այ՛ս հյուրանոցում:

Այն բանից հետո, երբ «Մինուտկա» ճաշարանում ես մնացի առանց բորշչի, ստիպված էի քաղցս հագեցնել մեկ այլ վայրում, որտեղ, բարեբախտաբար, ամեն ինչ անցավ առանց էքսցեսների: Այնուհետև շարունակեցի ճանապարհս «Խոլմոգորի Մ–8» մայրուղով ու, երբ հասա Յարոսլավլ, արդեն մութն ընկել էր: Այստեղ նոր անդրադարձա այն հարցին, թե ինչպե՞ս և որտե՞ղ եմ փնտրելու ընկերոջս և յուր արբանյակին: Իհարկե կարելի էր հերթով մտնել Յարոսլավլի բոլոր հյուրանոցներն ու հարցնել Մշկոյանին: Իսկ եթե նրանք հյուրանոց վերցրած չլինեի՞ն, այլ վարձած լինեին բնակարան: Այդ դեպքում ստիպված պիտի լինեի փնտրել բոլոր ռեստորաններում ու գիշերային ակումբներում, իսկ եթե այնտե՞ղ էլ չգտնեի՞:

Եվրոպայում Մշկոյին փնտրելու ամբողջ ընթացքում ես էի գնում նրա հետևից, որովհետև չգիտեի, թե ո՞րն է լինելու նրա հաջորդ կանգառը: Մինչդեռ այստեղ՝ Ռուսաստանում, ես ունեի առավելություն՝ գիտեի նրանց երթուղին: Հստակ էր, որ եթե նրանք որոշել են ճամփորդել Վոլգայի քաղաքներով, ապա չեն կարող շեղվել այդ երթուղուց: Ուրեմն ինչո՞ւ նրանցից առաջ չընկնել և չսպասել ճամփորդներին հաջորդ քաղաքում: Այսինքն ոչ թե քաղաքում, այլ քաղաքի մուտքի մոտ: Չէ՞ որ նրանք ճամփորդում էին այնպիսի մեքենայով, որը չնկատել պարզապես հնարավոր չէր: Հաջորդ քաղաքը Կոստրոման էր, որը Յարոսլավլից հեռու էր ութսուն կիլոմետր:

Այդպիսով՝ ես կանգ չառա Յարոսլավլում և շարունակեցի մինչև Կոստրոմա: Որոշեցի գիշերել մի հյուրանոցում ու առավոտ ծեգին վերադառնալ քաղաքի մուտքի մոտ և սպասել նրանց:

Նոր էի մտել քաղաք, երբ մայրուղու ձախ կողմում տեսա «Ազիմուտ» հյուրանոցը: Սրանից էլ լա՛վ տարբերակ: Կմնամ այս հյուրանոցում և առավոտյան ինձ հարկ կլինի ընդամենը դուրս

գալ մայրուղի, մեքենաս կայանել աջ հատվածում ու սպասել սպիտակ «Վոլգայի» հայտնվելուն:

Եվ ահա «Ազիմուտ» հյուրանոցի բարում նստած հետևում էի Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական դաշնային շրջանի ուսմասվարների կոնֆերանսի մասնակիցների ժամանմանը: Ավելի ճիշտ՝ ոչ թե ուսմասվարների, այլ ուսմասվարուհիների: Կոնֆերանսի մասնակիցների մեջ, իսկ նրանք կլինեին մոտ հարյուր հոգի, կար ընդամենը երեք տղամարդ, որոնցից մեկը ուսմասվար չէր, այլ ինչ որ պաշտոնյանա՝ Ռուսաստանի Լուսավորության նախարարությունից:

Կենտրոնական դաշնային շրջանը, որի տարածքը քսան անգամ մեծ է Հայաստանի տարածքից իսկ բնակչությունը տասներկու անգամ շատ, իր մեջ ներառում է տասնյոթ մարզ և մայրաքաղաք Մոսկվան: Այս շրջանում կա ավելի քան քսան խոշոր քաղաք: Թե ինչո՞ւ էր Ռուսաստանի Դաշնության լուսավորության նախարարությունը որոշել կոնֆերանսն անցկացնել հենց Կոստրոմայում, ես չգիտեմ, բայց, կարծում եմ, նման բան այլևս չի անի:

Իրենց համարներում տեղավորվելուց հետո կոնֆերանսի մասնակիցներն իջան ընթրիքի՝ հյուրանոցի առաջին հարկում գտնվող ռեստորանում: Ես դեռ նստած էի բարում և արդեն խմել էի հինգ բաժակ օղի: Որոշեցի ինքս էլ ընթրել և բարմենից ուզեցի հաշիվը: Նա թղթի վրա ինչ–որ թիվ գրեց և թուղթը մեկնեց ինձ: Ես չհավատացի աչքերիս. հաշիվը կազմում էր ընդամենը երեք հարյուր ռուբլի, այսինքն՝ հինգ դոլար: Ստացվում էր, որ հիսուն գրամ օղին այստեղ արժեր վաթսուն ռուբլի, այսինքն՝ մոտ մեկ դոլար: Համեմատության համար ասեմ, որ եվրոպական քաղաքներում այն հինգ, որոշ տեղերում նույնիսկ տասն անգամ ավելի թանկ է: Ինչևէ, մի հազարանոց մեկնեցի բարմենին և խնդրեցի նույն օղուց ևս ևս մեկ շիշ ուղարկել ռեստորան՝ իմ սեղանին:

Ուսմասվարուհիները խմբվել էին ռեստորանի մուտքի մոտ և ինչ–որ բանի էին սպասում: Նրանք, գրեթե առանց բացառության, ընթրիքի էին եկել սպորտային համազգեստներով: Շատերի հագին հողաթափեր էին: Ես հիշեցի գերմանացի գեղջկուհիներին, ովքեր ամեն ուրբաթ ընթրիքի էին գնում երեկոյան զգեստներով՝ զուգված, զարդարված: Զարմանալի զուգադիպություն, այսօր ևս ուրբաթ էր:

Բայց ինչո՞ւ չէին նստում և ինչի՞ էին սպասում հարգարժան ուսմասվարուհիները: Պարզվեց՝ Լուսավորության նախարարության պաշտոնյային, որը եկավ քիչ ուշացումով: Պետք է ասել, որ նա պահել էր էթիկետը և հագել էր, ճիշտ է՝ հնաոճ, բայց կոկիկ արդուկված շագանակագույն կոստյում և կապել էր զոլավոր փողկապ:

— Լավրենտի Աֆանասևիչ,— նրան մոտեցավ մի փարթամ տիկին,— մեզ ասացին, որ ընթրիքին ձուկ է, իսկ ես ձուկ չեմ ուտում: Կարո՞ղ եմ ուրիշ բան պատվիրել:

— Կարող եք, բայց Ձեր հաշվին,— նետեց Լավրենտի Աֆանասևիչը և զբաղեցրեց իր տեղը:

Դատելով տարիքից՝ նա ստացել էր իր անունը ի պատիվ «մեծն» Բերիայի, հենց վերջինիս բուռն գործունեության տարիներին: Պետք է ասել, որ նման էլ էր. ճաղատ, խոշոր ճակատով ու կլոր ակնոցներով: Եվ, հավանաբար, իրենից գոհ էր, որ նման է:

Կոնֆերանսի մասնակիցները ևս շուտով տեղավորվեցին իրենց սեղանների շուրջ, և սկսվեց ընթրիքը:

Իսկ ես խմում էի իմ օղին ու մտածում, թե տեսնես ի՞նչ են սովորեցնում այս ուսմասվարները իրենց դպրոցների աշակերտներին: Ի՞նչ են տեսնում աշակերտները՝ նրանց, նրանց կեցվածքին, նրանց շարժուձևին նայելով:

Այս տեսակը ձևավորվել է վաղուց, դեռ խորհրդային տարիներից և փաստորեն ոչ մի նկատելի փոփոխության չի ենթարկվել: Ձևականորեն խիստ, իսկ իրականում՝ վախկոտ ու քծնող, նրանց ուժը պատում է միայն աշակերտների վրա: Այն էլ՝ ոչ բոլորի: Նայած, թե ովքե՞ր են աշակերտների ծնողները:

Ռուսաստանի Դաշնության Լուսավորության նախարարությունը հասկանալիորեն ալկոհոլ չէր նախատեսել կոնֆերանսի մասնակիցների ընթրիքի սեղաններին: Իսկ մասնակիցներն՝ իրենք հազիվ թե հանդգնեին պատվիրել: Եթե այստեղ լիներ Մշկոյանը, վստահ եմ, որ կուղղեր այդ սխալը և ամեն սեղանին առնվազն մի շիշ շամպայն կուղարկեր: Հետո իր սեղանի

մոտ կհրավիրեր Բերիային, կչեզոքացներ նրան մի քանի բաժակ օղիով, կուղարկեր քնելու և խրախճանքը կշարունակեր այն ուսմասվարուհիների հետ, ովքեր դեմ չէին լինի: Իսկ այդպիսիք՝ այստեղ, իհարկե, շատ էին: Ես երբեմն բռնացնում էի տիկնանց նախանձկոտ հայացքները, երբ ցուցադրաբար օղի էի լցնում բաժակս: Նրանցից մեկին, ով նստած էր կողքի սեղանի մոտ, նույնիսկ աչքով արեցի: Նրա գլխին ոսկեգույն կեղծամ էր, հագին բալագույն սպորտային համազգեստ: Տիկինը ժպտաց՝ ի պատասխան:

— Ինչպե՞ս կարելի է չխմել ընթրիքի ժամանակ,— հարցրի ես:

— Ձեր շուրթերից ճշմարտությունն է հնչում,— պատասխանեց նա:

Բայցևայնպես Մշկոյանի նման վարվել չէի կարող: Չափից ավելի շատ էին սեղանները, և հարգարժան տիկնայք էլ առանձնապես իմ ճաշակով չէին: Կամ, գուցե ես՝ նրանց ճաշակով:

Անշտապ ավարտեցի ընթրիքս, զուգահեռ՝ դատարկելով օղու շիշը և դուրս եկա: Չնայած բավականաչափ ցուրտ էր, բայց կարելի էր մի քիչ շրջել քաղաքում: Կենտրոնը հյուրանոցից ահագին հեռու էր, և զբոսանքս երկար տևեց: Երբ վերադարձա հյուրանոց ու մոտեցա բարին, չհավատացի տեսածիս: Բոլոր սեղանները զբաղված էին, հնչում էին Լյուբա Ուսպենսկայայի երգերը և հարգարժան ուսմասվարները քեֆ էին անում: Ոսկեգույն կեղծամով տիկինը ու էլի մի քանի հոգի պարում էին: Բերիան չկար: Երևի քնած էր կամ գնդակահարել էին:

-

Մշկոն կերակրում է շան արձանին

Երբ արթնացա, ժամը տասներկուսն էր: Նման դեպքերում ասում են՝ վերջին բաժակը խմել պետք չէր: Իսկ իմ պարագայում կարելի էր ասել՝ վերջին շիշ շամպայնը խմել պետք չէր:

Հստակ հիշում էի, որ զարթուցիչ էի դրել ժամը ութին: Ուրեմն ինչո՞ւ այն չէր աշխատել: Վերցրի հեռախոսս և տեսա, որ այն անջատված է: Հավանաբար մոռացել էի լիցքավորման դնել:

Ստացվում էր, որ ամեն ինչ ջուրն ընկավ: Եթե Մշկոն ու Նաստյան Յարոսլավլից շարժվել էին առավոտյան, ապա վաղուց արդեն անցել էին «Մագիստրալնայա» փողոցով, որի վրա իմ հյուրանոցն էր և որտեղ ես պատրաստվում էի դարանակալել նրանց: Յարոսլավլից Կոստրոմա մեկ ժամվա ճանապարհ էր, քիչ ավել: Իհարկե հնարավոր էր, որ նրանք շարժվեին ավելի ուշ, ասենք՝ ցերեկը, գուցե նույնիսկ՝ երեկոյան, բայց միևնույն է այս պարագայում քաղաքի մուտքի մոտ նրանց սպասելը սխալ էր: Ուրեմն, ի՞նչ անել: Փնտրել նրանց հյուրանոցներո՞ւմ: Խելամի՞տ էր արդյոք դա:

Ու հանկարծ մտքովս մի բան անցավ, ինչի մասին չգիտես ինչու չէի մտածել նախօրեին, երբ չէի մտել Յարոսլավլ և եկել էի այստեղ: Իսկ ինչո՞ւ փնտրել նրանց՝ այսինքն մտնել հյուրանոցներ ու հարցուփորձ անել, չէ՞ որ ավելի հեշտ է փնտրել սպիտակ «Վոլգան»: Կգտնեմ մեքենան՝ կգտնեմ նաև նրանց:

Հապճեպ հավաքեցի իրերս, և շտապեցի հյուրանոցի ֆոյե՝ դուրս գրվելու: Կոնֆերանսների սրահի դիմաց կատաղած այս ու այն կողմ էր քայլում Բերիան: Դե իհարկե, մասնակիցների մի մասը դեռ քնած էր գիշերվա խրախճանքից հետո: Պետք է ասեմ, որ իմ գլուխն էլ էր պայթում, բայց դրա ժամանակը չէր:

Նստեցի մեքենաս, կայանատեղիից դուրս եկա մայրուղի և սպասեցի մինչ հեռախոսս կլիցքավորվի այնքան, որ միանա:

Հետո բացեցի ֆեյսբուքն ու տեսա, որ Նաստյան նոր նկար է տեղադրել և մի ստատուս:

Ստատուսում գրված էր. «Երբ նույնիսկ շունը ձեռքիցդ հաց չի վերցնում»:

Իսկ նկարում Մշկոն էր և մի շուն, երկար մարմնով ու ականջներով տաքսա: Մշկոն կեր էր խոթում շան բերանը, կարծեմ՝ «չեբուրեկի»: Բայց շունը չէր ուտում: Եվ չէր էլ կարող , որովհետև ոչ թե իսկական շուն էր, այլ շան բրոնզե արձան:

Դե ինչ, Նաստյան հումորով աղջիկ էր, բայց դա չէր կարևորը, կարևորն այն էր, որ ես գիտեի, թե որտեղ է այդ արձանը. նախորդ օրը, Կոստրոմայի կենտրոնում զբոսնելիս, տեսել էի այն:

Նկարը տեղադրված էր ժամը տասին, այսինքն երկուս ու կես ժամ առաջ: Ուրեմն նրանք այստեղ են՝ Կոստրոմայում, և եթե ես նախորդ գիշեր հիմարություններով զբաղված չլինեի, բռնացրած կլինեի նրանց:

Մոտ մեկ ժամ վարեցի մեքենան քաղաքի կենտրոնական փողոցներով, հետո, համացանցից հանեցի Կոստրոմայի բոլոր քիչ թե շատ նորմալ հյուրանոցների հասցեները և հերթով անցա բոլորի մոտով: Բայց ապարդյուն, սպիտակ «Վոլգան» չկար ու չկար: Իսկ գլուխս շարունակում էր պայթել:

Հետո մտքովս մի բան անցավ. իսկ գուցե նրանք պարզապես շրջել են այստեղ մի քիչ ու շարունակել ճանապարհը: Չէ՞ որ Նաստյայի ստատուսում գրված չէր՝ «կանգառ երրորդ»:

Բայց ամենակարևոր հարցը, որն ինձ մտահոգում էր, այլ էր: Դատելով նրանց ճամփորդությունների գրաֆիկից՝ Մշկոն ու Նաստյան քաղաքներից դուրս էին գալիս վաղ առավոտյան: Այդպես էր եղել Տվերում և այդպես էր եղել Յարոսլավլում: Ի՞նչ էր դա նշանակում: Մի՞թե Մշկոյանը քիչ էր խմում կամ ընդհանրապես չէր խմում: Մի՞թե Նաստյան այնքան ազդեցություն ուներ նրա վրա որ կարողացել էր ստիպել գիշերային գինարբուքները փոխարինել ցերեկային այցերով տարբեր տեսարժան վայրեր և, գուցե անգամ, պատմամշակութային վայրեր ու թանգարաններ: Մշկոյանը դասական զբոսաշրջիկի կերպարո՞ւմ. դժվար էր պատկերացնել: Տեսարժան վայրերը նրա համար ռեստորաններն են ու գիշերային ակումբները:

Ժամը երեքն էր արդեն, երբ դադարեցրի որոնումներս ու մտա մի տեղ ճաշելու: Հավանաբար՝ բորշչ, չնայած՝ կարելի էր նաև սոլյանկա, նկատի ունենալով վերջինիս դրական ազդեցությունը խումհարի ժամանակ: Բայց մատուցողն ավելի լավ տարբերակ առաջարկեց:

— Ես Ձեզ բարեկամաբար մի խորհուրդ տամ. «ուխա» և հարյուր գրամ օղի: Բոլորովին նոր մարդ կդառնաք:

Փաստորեն խումհարս այդքան ակնհայտ էր, չնայած ոտքի վրա էի արդեն մի քանի ժամ:

— Բայց… ես մեքենայո՛վ եմ:

— Ինչպե՞ս թե մեքենայով եք,— մատուցողն այնպես զարմացավ, կարծես ես ասել էի, որ սուզանավով եմ:

Նա տարեց մարդ էր՝ կոկիկ սանրած ճերմակ մազերով ու մաքուր ածիլված դեմքով, մեկն այն մատուցողներից որ ողջ կյանքում նույն գործն են արել:

— Իսկ եթե Ձեզ կանգնեցնե՞ն,— շարունակեց նա:

— Բայց ես երեկ եմ խմել:

Մատուցողի մաքուր ածիլված դեմքին հեգնական ժպիտ հայտնվեց.

— Ես ձեզ բարեկամաբար մի բան ասեմ. կարևոր չէ, թե ե՞րբ եք խմել, կարևոր է, թե որքա՞ն եք խմել:

— Այսի՞նքն,— հետաքրքրվեցի ես:

— Մի որպե:

Նա հեռացավ և քիչ անց վերադարձավ ձեռքին մի մաշված թուղթ, որ հավանաբար ժամանակին պոկել էր ինչ–որ ամսագրից ու պահել:

— Ահա,— ասաց նա՝ իրենից գոհ,— ծանոթացեք:

Ու շարունակեց կանգնած մնալ գլխավերևումս, մինչ ես կծանոթանամ:

Իսկ ամսագրից պոկված էջի վրա մանրամասն ներկայացված էր, թե որքա՞ն է մնում ալկոհոլը մարդու արյան մեջ: Զարմանալի է, իմ քառորդդարյա խմելու կենսագրության ընթացքում ես երբեք չէի իմացել այն, ինչ իմացա այդ օրը:

Եվ այսպես. եթե դուք կշռում եք ութսուն կիլոգրամ և խմել եք հինգ հարյուր գրամ գարեջուր, ապա այն ձեր արյան միջից

ամբողջովին դուրս կգա երեք ժամ տասնհինգ րոպեում: Նույնքան շամպայնը՝ վեց ժամ հիսուն րոպեում, օղին՝ քսանմեկ ժամ քառասունհինգ րոպեում:

Նախորդ օրը ես խմել էի առնվազն երկու շիշ օղի և նույնքան շամպայն: Թե որքան ժամանակում է դուրս գալիս այդ քանակի ալկոհոլը մարդու արյան միջից, մատուցողի տված թղթի վրա գրված չէր:

— Իսկ ի՞նչ կլինի, եթե ինձ կանգնեցնեն ոստիկանները:

— Առանձնապես ոչինչ, Ձեզ կտուգանեն երեսունից երեք հարյուր հազար ռուբլով և կզրկեն վարելու իրավունքից մեկ ու կեսից երկու տարով,— ասաց մատուցողն այնպիսի տոնով, կարծես ինքն էր սահմանել այդ կարգը, ապա շարունակեց,— ես Ձեզ բարեկամաբար մի խորհուրդ տամ՝ խմած մի նստեք մեքենայի ղեկին, եթե անգամ խմել եք նախորդ օրը:

Ես սուսուփուս կերա «ուխան» ու դուրս եկա ռեստորանից: Քայլում էի գետի ափով ու մտածում՝ ի՞նչ անել: Հետո հենվեցի բազրիքին ու նորից բացեցի ֆեյսբուքը: Նաստյան նոր նկար էր դրել ու նոր ստատուս:

Ստատուսում գրված էր. «Նա Վոլգե պո Վոլգե. կանգառ երրորդ. Լուկինո»: Իսկ նկարում դարձյալ երեքով էին՝ ինքը, Մշկոյանը և ճերմակ «Վոլգան»՝ Վոլգա գետի ափին:

Բայց որտե՞ղ էր այդ Լուկինոն և ի՞նչ էր իրենից ներկայացնում:

Ես փորձեցի այս մասին տեղեկություն ստանալ համացանցից, որպեսզի հասկանամ, թե ինչո՞ւ էին մեր ճանապարհորդները որոշել գնալ այնտեղ: Պարզվեց, որ Լուկինո անունով ոչ ավել, ոչ պակաս՝ ութսուն բնակավայր կա Ռուսաստանում: Մոսկվայից մինչև Պերմ: Իզուր չէ, որ ռուսներն այդքան սիրում են սոխը: Մոտակայքում գտնվող գյուղերը նույնպես շատ էին՝ երեք գյուղ Յարոսլավլի մարզում, տասնչորս՝ Տվերի, երեքը՝ Իվանովոյի, երեքը Նիժնի Նովգորոդի և չորսը՝ Կոստրոմայի: Որտե՞ղ փնտրել ճամփորդներին: Լավ, եթե նույնիսկ հանեինք Յարոսլավլի ու Տվերի Լուկինոները, որովհետև այս մարզերով նրանք արդեն անցել էին և գնում էին գետն ի վար, մնում էին դեռ Իվանովոյինը, Կոստրոմայինը և Նիժնի Նովգորոդինը՝ թվով տասը Լուկինոներ:

Նկարում «Վոլգան» կանգնած էր Վոլգա գետի ափին, ուրեմն պետք էր հասկանալ թե այս տասը Լուկինոներից որոնք էին գետի ափին և էլ ավելի նեղացնել շրջանը: Բարեբախտաբար, գետին մոտ կար ընդամենը մեկ Լուկինո՝ Նիժնի Նովգորոդի մարզի Բալախինյան շրջանում: Այն անմիջապես գետի ափին չէր, բայց որ մեր բարեկամներն հենց այս Լուկինոյում էին, կասկած չկար: Գյուղատիպ ավանից մի քանի կիլոմետր այն կողմ, հենց Վոլգայի ափին, տեղակայված էր «Պարկ Վոլգա» պանսիոնատը, որի տարածքում էր գտնվում հեքիաթային «Լուկոմորյե» անունը կրող հանգստի գոտին: Սա արդեն Մշկոյանի ոճով էր:

Այն մասին թե ինչու են այդքան լավը Ռուսաստանի ճանապարհները

Կոստրոմա–Լուկինո՝ երկու հարյուր իննսունչորս կիլոմետր և չորս ժամ՝ ցույց տվեց նավիգատորը:

Բայց ես ավելի ուշ տեղ հասա, «Մերսեդեսի» հերն անիծելով Պովոլժիեի քարուքանդ ճանապարհներին:

Ասել, որ Ռուսատանում ճանապարհները չեն նորոգում, իհարկե՝ սխալ կլինի: Այստեղ ոչ միայն նորոգում են ճանապարհները, այլև նորոգում են չափազանց ինտենսիվ և միշտ: Դիցուք, եթե դուք պետք է անցնեք ասենք չորս հարյուր կիլոմետր ռուսական որևէ գուբերնիայով, այդ չորս հարյուր կիլոմետրի առնվազն մեկ երրորդին կհանդիպեք ճանապարհաշինարարական աշխատանքների: Խոսքը մեծ քաղաքներն իրար կապող գլխավոր մայրուղիների մասին է, որովհետև դրանցից դուրս, որևէ երկրորդական քաղաք տանող ճանապարհները քարուքանդ են, իսկ եթե դուք պիտի հասնեք մայրուղիներից հեռու ընկած ինչ–որ ավան կամ գյուղ՝ պատրաստ եղեք էքստրիմի:

Ուրեմն ինչո՞ւ են գլխավոր ճանապարհները այդքան ինտենսիվ նորոգում, իսկ անկարևոր ճանապարհներն աչքաթող անում: Բաց դա դեռ մի կողմ, ինչո՞ւ են տարին մեկ հիմնանորոգված ճանապարհները դարձյալ քանդվում:

Այս հարցի պատասխանը ես գտա, երբ հանդիպեցի հարգարժան Սպիրիդոն Իվանիչին՝ Ֆիլյատա ավանի մոտ իրականացվող շինարարական աշխատանքների աշխղեկին:

Էքսկավատորը շուռ էր եկել հենց ճանապարհի մեջտեղում ու խցանում առաջացրել: Մոտ երկու տասնյակ մեքենաներ պարզապես չէին կարողանում առաջ շարժվել: Հասկանալով, որ սա երկար է տևելու, ես անջատեցի մեքենայի շարժիչն ու քայլելով մոտեցա դեպքի վայրին: Այն, ինչի ականատես եղա,

պարզապես անհավատալի էր: Ճանապարհաշինարարները թողել էին շուռ եկած էքսկավատորը և ճաշում էին ճանապարհամերձ ծառերի տակ:

Ես մոտեցա նրանց ու հարցրի.

— Ո՞վ է ձեր ղեկավարը:

— Սպիրիդոն Իվանիչը,— պատասխանեց բանվորներից մեկը՝ երշիկով բուտերբրոդից մի մեծ կտոր կծելով:

— Իսկ որտե՞ղ է նա:

Բանվորը մատով ցույց տվեց քիչ այն կողմում քայլող ու հեռախոսով խոսող մի մարդու: Նրա շուրջը հավաքված էին մի քանի վարորդներ և սպասում էին մինչ նա կավարտեր խոսակցությունը: Ես մոտեցա նրանց:

— Դեռ որքա՞ն ենք սպասելու, հարցրեց վարորդներից մեկը, երբ աշխղեկը անջատեց հեռախոսը:

— Չգիտեմ,— զայրացած պատասխանեց Սպիրիդոն Իվանիչը:

— Ինչպե՞ս թե, չգիտեք:

— Վերամբարձ կռունկ է պետք, առանց վերամբարձ կռունկի չի լինի:

— Իսկ ինչո՞ւ չեք կանչում վերամբարձ կռունկ,— հարցրեց մեկ այլ վարորդ:

— Փորձում ենք, երիտասարդ, փորձում ենք,— այնպես արդարացավ աշխղեկը, կարծես խոսքը ոչ թե վերամբարձ կռունկի, այլև ուղղաթիռի մասին էր:

Հետո, երևի դրանով թեման սպառված համարեց և ուզում էր հեռանալ: Բայց նրան չթողեցին:

— Որտեղի՞ց է գալու կռունկը:

— Որտեղից–որտեղից, իհարկե Նիժնի Նովգորոդից:

— Բայց Նիժնի Նովգորոդից մինչև այստեղ մեկ ու կես ժամվա ճանապարհ է,— համառեց երիտասարդը:

— Մեկ ու կես ժամվա՞մ,— ծիծաղեց Սպիրիդոն Իվանիչը,— մեկ ու կես ժամում հազիվ մարդատար մեքենան հասնի, իսկ վերամբարձ կռունկին երեք ժամ է հարկավոր:

— Եվ Դուք դա այդպես հանգիստ ասո՞ւմ եք:

— Իսկ ինչպե՞ս ասեմ:

Այստեղ ես ուզում էի միջամտել, բայց իմ փոխարեն դա արեց հենց նոր մոտեցած մեկ այլ վարորդ: Նա նորաձև մոխրագույն վերարկուով էր, իսկ շարֆի տակից երևում էր փողկապը:

— Հիմա ի՞նձ լսեք,— ասաց նա հրամայական տոնով:

Տեսնելով սոլիդ տեսքով այս մարդուն աշխղեկը անմիջապես զգաստացավ ու ասաց.

— Ես ի՞նչ մեղք ունեմ, որ ոչխար Տոլիկը շուռ տվեց էքսկավատորը, իսկ բազայում ասում են, որ վերամբարձ կռունկ չունեն…

Բայց այս արդարացումը տղամարդուն չբավարարեց.

— Հենց հիմա ոտքի հանեք ձեր բանվորներին, ասեք, թող մի ամուր մալուխ վերցնեն ու էքսկավատորը կապեն ԿՌԱԶ–ին: Ես կասեմ, թե որտեղից և ինչպես:

Տասնհինգ րոպեից ճանապարհը բաց էր: Եթե չլիներ փողկապով այս պարոնը, մենք սպասելու էինք՝ Աստված գիտի, թե որքան: Ահա թե ինչպե՞ս էին աշխատում ճանապարհաշինարարները Ռուսաստանում և ահա թե ինչո՞ւ էին ճանապարհներն այստեղ այս վիճակում:

Բայց, իհարկե, դա չէր հիմնական պատճառը: Հիմնական պատճառը կոռուպցիան էր, որի մեջ մինչև գլուխը թաղված էր երկիրը: Ճանապարհաշինական աշխատանքների պատվերները տրվում էին բացառապես այն կազմակերպություններին, որոնք, այսպես ասած՝ «սվոյ» էին և որոնք իրենց եկամուտից բաժին էին հանում համապատասխան մարմիններին: Այս պարագայում, բնականաբար, ձեռնտու էր, որ ամեն տարի ճանապարհը քանդվի և ամեն տարի նոր պատվեր իջեցվի:

Երբ նավիգատորը ինձ բերեց Լուկինո ավան, պարզվեց, որ շատ եմ եկել և «Վոլգա պարկ» պանսիոնատ հասնելու համար պիտի ճանապարհից շեղվեի ավելի վաղ: Այնտեղ նույնիսկ ցուցանակ կար, որը ես չէի նկատել: Հետ դարձա, գտա ցուցանակը, ու ճանապարհն ինձ մտցրեց անտառ: Մի քանի հարյուր մետրից ասֆալտն ավարտվեց, և սկսվեց գրունտային ճանապարհը՝ ամբողջովին ցեխի մեջ կորած: Ոչ մի լուսավորություն չկար, ու ես մի կերպ էի տեսնում դիմացս: Նույնիսկ մտածում էի, որ սխալ ուղղությամբ եմ գնում, բայց ճանապարհը մեկն էր և

աջ ու ձախ թեքվելու տեղ չկար: Ու այդպես մի քանի կիլոմետր, որն անցնելու համար ինձանից պահանջվեց ավելի քան կես ժամ: Վերջապես խիտ ծառերի արանքից լույս նշմարվեց, գնալով ավելի ու ավելի պայծառացավ, ճանապարհը լայնացավ ու դիմացս երևացին «Վոլգա պարկ» պանսիոնատի պարիսպները: Սակայն դարպասը փակ էր: Ես իջա մեքենայից ու սկսեցի մարդ փնտրել: Բայց ոչ ոք չկար: Թակեցի պահակակետի լուսամուտը՝ ոչ մի արձագանք: Ստիպված էի երկար ազդանշան տալ, մինչ կհայտնվեր պահակը:

Նա մոտեցավ չափազանց դժգոհ ու ասաց.

— Ինչո՞ւ եք աղմկում, այստեղ մարդիկ հանգստանում են:

— Չեմ աղմկում,— հանգիստ պատասխանեցի ես,— ազդանշան եմ տալիս, որովհետև դուք ձեր տեղում չեք:

Վստահ եմ, նա պատրաստվում էր լեզվակռվի մեջ մտնել, բայց իմ հետևում տեսավ սև «Մերսեդեսը» և ընդամենը քթի տակ հոխորտաց.

— Սնվելու իրավունք էլ չունեմ:

Հետո խելոք բացեց դարպասը, և ես ներս մտա: Ճանապարը՝ արդեն ասֆալտապատ, մի քիչ էլ շարունակվեց, մինչև երևաց պանսիոնատի շենքը: Այն նման էր լուսավոր կրուիզային նավի՝ մութ օվկիանոսի մեջ:

Պանսիոնատի մուտքի առջև ավտոկայանատեղին էր, ուր մի քանի այլ մեքենաների մեջ շողում էր ճերմակ «Վոլգա ԳԱԶ–21»–ը:

-

Այն մասին, թե ինչպես Մշկոն հրդեհեց «Վոլգա պարկ» պանսիոնատի վրան–ռեստորանը

Ահա և բռնվեցիք՝ մտածեցի ես: Որքա՞ն էիք ուզում այդպես փախչել: Մկան խաղը մինչև կատվի մարագն է՝ ասվում է:

«Մերսեդեսը» կայանեցի այնպես, որ «Վոլգան» տեղաշարժվելու հնարավորություն չունենա, բայց պանսիոնատ չմտա: Քայլեցի գետի ուղղությամբ՝ մթության մեջ մի կերպ նշմարելով ճանապարհը:

Վոլգան դեռ տեղ–տեղ սառած էր, ու սառցաբեկորների վրա լուսնի արտացոլանքը, չգիտես ինչու, կապույտ էր, թեպետ լուսինն՝ ինքը ճերմակ էր:

Նստեցի մի քարի ու սիգարետ վառեցի: Պետք էր մտածել, ինչ անել: Ինչպե՞ս պատժել Մշկոյանին: Ու չնայած հիմա, երբ գտել էի նրանց, զայրույթս գրեթե անցել էր, բայց միևնույն է՝ վիրավորվածության նստվածքը դեռ կար: Մի խոսքով՝ խեղդել նրանց այլևս չէի ուզում:

Կար ավելի հետաքրքիր տարբերակ: Ես սկսեցի մտքումս գծել Մշկոյին ու յուր արբանյակին պատժելու մի անհավանական սցենար, որը եթե աշխատեր, լիովին կփարատեր իմ վիրավորվածությունն էլ, զայրույթն էլ ու դեռ մի բան էլ ավելի:

Իսկ սցենարը հետևյալն էր. նախ պետք էր տեսնել Մշկոյին ու Նաստյային, իսկ նրանք հիմա պիտի լինեին ռեստորանում կամ բարում, որպեսզի ամեն ինչ բնական լինի՝ մի լավ նախատել նրանց, հետո՝ իբր հաշտվել ու մոռանալ: Խմացնել երկուսին էլ այն աստիճանի, որ կորցնեն վերահսկումը բոլոր զգայարանների վրա, հետո վերցնել Մշկոյի դրամապանակը, «Վոլգայի» բանալիները ու հենց «Վոլգայով» էլ վերադառնալ Մոսկվա՝ նրան թողնելով առանց փող ու առանց մեքենա:

Դաժան էր: Գուցե: Բայց միթե նա ինձ հետ ավելի դաժան չէր վարվել: Միթե նա՛ չէր ինձ հրավիրել Մոսկվա ու թողել այնտեղ միայնակ: Իսկ, եթե ինձ մոտ փող չլիներ, եթե այնտեղ ընկերներ չունենայի: Ի՞նչ էի անելու: Ինչպե՞ս էի վերադառնալու տուն: Միթե մարդու, առավել ևս՝ ընկերոջ հետ նման կերպ կվարվեն:

Մի խոսքով ամենևին էլ դաժան չէր իմ մտածածը: Միայն թե ինչպե՞ս հասցնել անհրաժեշտ կոնդիցիայի Նաստյային, և ի՞նչ անել «Մերսեդեսի» հետ: Առաջին խնդիրը ենթադրենք շատ բարդ չէր լուծելը, բայց երկրորդը...

Ես հիշեցի, որ մի անգամ նման բան արել եմ, երբ Կիևից վարձած մեքենայով գնացել էի Յալթա, այնուհետև Յալթայում որոշել էի Կիև վերադառնալ օդանավով: Մեքենան թողել էի Սիմֆերոպոլի օդանավակայանում ու ավտովարձույթի ընկերության հետ պայմանավորվել, որ նրանք ինքները հոգան մեքենայի տեղափոխումը: Դա իհարկե բավականին թանկ հաճույք էր, բայց որ կարևորն է՝ պրակտիկորեն ընդունված էր: Այդպես էլ կվարվեմ՝ մտածեցի: «Մերսեդեսի» բանալին կթողնեմ պահակի մոտ, առավոտյան կկապվեմ «Սիքսթի» գրասենյակի հետ և կկարգավորվեմ բոլոր հարցերը: Նրանք իմ քարտի վրա սառեցրել էին մոտ հազար դոլար, թող այդտեղից էլ հանեին ծախսերը:

Մնում էր լուծել առաջին խնդիրը, և ես՝ գոհ իմ մտածած սցենարից, տեղափոխեցի «Մերսեդեսը» առանձին կայանատեղի: Դատելով այստեղ կայանած մեքենաների քանակից՝ պանսիոնատում շատ քիչ հանգստացողներ կային: Դա ինձ ձեռնտու էր՝ ավելի քիչ խանգարողներ կլինեին: Ապա պանսիոնատի կրկնակի դռների մեջ տեղադրված սարքով մաքրեցի տեղը տեղին ցեխոտված կոշիկներս ու հաղթական կեցվածքով մտա ներս:

Ինձ դիմավորեց ժպտերես մի աղջիկ՝ պայծառ, կանաչ աչուկներով ու շեկ գանգուրներով, որոնք չափազանց սազում էին մուգ կանաչ կոստյումի հետ: Պիջակին ամրացված կրծքանշանի վրա գրված էր՝ «Միլա, պորտյե»:

— Բարի երեկո,— զրնգուն ձայնով ասաց նա,— բարի գալուստ «Վոլգա պարկ»:



— Միլայա Միլա,— ժպտացի ես,— չգիտեմ, կհավատաք, թե ոչ, բայց Դուք ամենասիրուն պորտյեն եք, ում տեսել եմ երբևէ, իսկ ես շատ պորտյեներ եմ տեսել:

— Օ՜յ,— բացականչեց նա՝ չափազանց շոյված,— շնորհակալ եմ:

— Ասեմ ավելին,— օգտվելով առիթից՝ շարունակեցի ես,— Ձեզ շատ շուտով պաշտոնի բարձրացում է սպասում, և Դուք կդառնաք աշխարհի ամենասիրուն հյուրանոցի մենեջերը:

Այստեղ նրա դեմքի արտահայտությունը փոխվեց, և նա մատը տարավ շուրթերին.

— Շը22… Լիդիա Մատվեևնան կնեղանա:

— Ո՞վ է Լիդիա Մատվեևնան,— 22նջացի ես:

— Հյուրանոցի մենեջերը,— 22նջաց նա, հետո արդեն բարձրաձայն հարցրեց,— Դուք ուղեգիր ունե՞ք:

— Իսկ դա պարտադի՞ր է:

— Սովորաբար այստեղ ուղեգրերով են գալիս, բայց դա կարևոր չէ,— նա կրկին անցավ 22նջալու.— ես կարող եմ Ձեզ տեղավորել նաև առանց ուղեգիր:

— Միլայա Միլա,— ասացի ես,— ի՞նչ հրաշալի աղջիկ եք: Միայն թե մինչ տեղավորվելը ես կուզեի գտնել ընկերներիս. կարծում եմ նրանք հոգացել են իմ կեցության հարցերը:

— Ձեր ընկերների՞ն,— զարմացավ նա,— իսկ ովքե՞ր են նրանք:

— Նրանք այստեղ են եկել մի շատ հին սպիտակ «Վոլգայով»:

— Դուք նկատի ունեք մեր սիրելի դերասանուհի՞ն,— ուրախացավ Միլան,— Դուք նրան ճանաչում եք:

Ես ուզում էի երկու բառ ասել «սիրելի դերասանուհու հասցեին», բայց փոխարենը ընդամենը գլխով արեցի:

— Նրանք «Լյուքս» քոթեջում են, այն քիչ այն կողմ է հիմնական մասնաշենքից:

— Դուք կուղեկցե՞ք ինձ,— հարցրի:

Բայց նա չհասցրեց պատասխանել: Այդ պահին ինչ որ տեղից հայտնվեց Լիդիա Մատվեևնան՝ սևահեր, նորաձև սանրվածքով ու սլացիկ կազմվածքով չափազանց էլեգանտ մի տիկին, ով ըստ ամենայնի լսել էր մեր խոսակցությունը կամ դրա վերջին մասը:

— Դուք հյուր եք եկել մեր Նաստենկայի՞ն,— սիրալիր ասաց «Վոլգա պարկ» հյուրանոցի մենեջերը:

Փաստորեն Նիժեգորոդսկայա մարզում կամ, առնվազն, Լուկինոյում մեր դերասանուհին բավականին պոպուլյար էր:

— Ավելի ճիշտ կլինի ասել, որ հյուր եմ եկել պարոն Մշկոյանին,— ես փորձեցի էլ ավելի բարձրացնել նշաձողը,— դուք նրան չե՞ք ճանաչում, ինչ է:

— Ինչպե՞ս թե, իհարկե լսել ենք մեր հարգարժան մեդիամագնատի մասին,— մեղավոր տոնով արդարացավ Լիդիա Մատվեևնան, ապա դիմեց պորտյեին,— Միլոչկա, գնա գործիդ, ես ինքս կզբաղվեմ մեր հյուրով:

Միլան ինչ–որ բան էր ուզում ասել, բայց շեֆը խիստ հայացք նետեց վրան ու նա դժկամորեն հեռացավ:

Ես, իհարկե, հասկանում էի, որ այս գեղեցկուհիներին ես հետաքրքրում էի այնքանով, որ ծանոթ էի «սիրելի դերասանուհու» ու «հարգարժան մեդիամագնատի» հետ, հետո ի՞նչ, որ այստեղ էր ոչ թե ինքը մեդիամագնատը, այլ նրա եղբայրը, ով ողջ կյանքում մսխել ու շարունակում էր մսխել ավագ Մշկոյանի փողերը:

— Ես Ձեզ կուղեկցեմ,— առարկություն չընդունող տոնով հայտարարեց Լիդիա Մատվեևնան:

Դա ինձ ձեռնտու էր. կարևոր չէր՝ Լիդիա Մատվեևնան կուղեկցեր ինձ, թե միլայա Միլոչկան, կարևորն այն էր, որ փախստականներին հանդիպելիս ես մենակ չէի լինի, և անակնկալ հանդիպման առաջին պահի կրքերն ավել մեղմ կլինեին կամ ընդհանրապես չէին լինի:

Դուրս եկանք շենքից, ես ցուցադրաբար սեղմեցի առջևում կայանած իմ «Մերսեդեսի» պուլտը, ու բեռնախցիկից վերցրի ճամպրուկս:

«Լյուքս» դասի քոթեջը գտնվում էր հիմնական մասնաշենքից ոչ թե մի քիչ, այլ բավականին հեռու: Ճանապարհին Լիդիա Մատվեևնան ինձ հասցրեց պատմել իրենց պանսիոնատի հակիրճ պատմությունը, ներկայացրեց իր կապերը մոսկովյան բոհեմի հետ ու խնդրեց իրեն դիմել անունով:

Երբ հասանք քոթեջին, նա ինձանից առաջ ընկավ և թակեց դուռը: Ներսից չարձագանքեցին: Հետո թակեց ավելի ուժեղ, բայց կրկին՝ ոչ մի ծպտուն:

— Գուցե քնած են,— տարակուսանքով ասաց Լիդիան:

— Իսկ գուցե ռեստորանում են,— հարցրի ես,— կամ մեկ այլ տեղ:

— Ոչ,— վստահ ասաց նա,— ռեստորանում ուրիշ մարդիկ էին, բարում ոչ ոք չկար, իսկ ՍՊԱ–ն այս ժամին փակ է: Գուցե զանգահարեք Ձեր ընկերոջը:

Ինչպես բացատրեի նրան, որ ընկերոջս զանգահարելն անիմաստ է, որովհետև եթե նույնիսկ նրա հեռախոսը միացած լինի, նա, միևնույն է, չի պատասխանի իմ զանգերին, որ Նաստյայի համարը չունեմ, և որ ընդհանրապես նրանք ինձ չեն սպասում: Դրա համար էլ ոչինչ չասացի, փոխարենը մոտեցա դռանը և սեղմեցի բռնակը:

Պարզվեց դուռը բաց է: Ես շինծու ինքնավստահությամբ ներս մտա ու գլխով հրավիրեցի Լիդիային անել նույնը:

Քոթեջը երկհարկանի էր: Նախասրահից աստիճաններ էին բարձրանում երկրորդ հարկ, իսկ ձախի վրա հյուրասենյակն էր:

— Քաղաքացի Մշկոյան,— ձայն տվեցի ես:

Բայց պատասխան չեղավ:

Հյուրասենյակի բուխարում բոցկլտում էր կրակը, իսկ սեղանին դրված էին փառահեղ նախուտեստներ և մի շիշ օղի: Մշկոյանի սիրածը:

— Իսկ ինչ է վերևում,— հարցրի Լիդիային, ով կանգնել էր քոթեջի դռան շեմին ու չէր համարձակվում ներս մտնել:

— Ննջասենյակներ,— պատասխանեց նա:

Ես բարձրացա աստիճաններով ու կրկին ձայն տվեցի: Այստեղից նույնպես արձագանք չեղավ: Վառեցի լույսերը՝ երկու ննջասենյակներն էլ դատարկ էին: Ճամպրուկս դրեցի պահարանը, կարծես այդ սենյակը հատուկ ինձ համար էր նախատեսված, հանգցրի լույսերը, նորից իջա ներքև ու դիմեցի Լիդիային.

— Դե ներս եկեք, նրանք երևի գնացել են ման գալու:

Լիդիան անվստահ քայլերով առաջ եկավ ու հիմա էլ կանգնեց հյուրասենյակի դռան շեմին: Իսկ ես մոտեցա սեղանին վերցրի օղու շիշը ու առանց մտածելու բացեցի այն:

— Ժամը քանիսն է:

— Տասը:

— Ես չեմ խմել ուղիղ տասնութ ժամ: Իսկ դա մի ամբողջ հավերժություն է:

Լցրեցի բաժակները ու նորից ներս հրավիրեցի Լիդիային:

— Բայց գուցե անհարմար է,— կմկմաց նա:

— Հավատացնում եմ Ձեզ, որ սա միակ շիշը չէ: Սառնարանում կա ևս մի քանիսը:

— Ես դա նկատի չունեմ…

Նա, այնուամենայնիվ, չդիմացավ գայթակղությանը ու խմեց ինձ հետ: Իսկ երբ տեսավ թե ինչպես եմ ախորժակով ուտում կարմիր խավիարը հենց ափսեի միջից, նրա երկյուղածությունն անմիջապես անցավ: Տնավարի տեղավորվեց բազկաթոռի մեջ ու մենք շարունակեցինք խմել: Ես թարմացրի բուխարու կրակը, անգամ երաժշտություն միացրի: Անցավ կես ժամ, կամ գուցե ավելի, իսկ Մշկոյենք չկային ու չկային: Բայց ես անհանգիստ չէի. նրանց իրերն այստեղ էին, մեքենան կանգնած էր կայանատեղիում, հետևաբար ոչ մի տեղ չէին կարող կորել և վաղ թե ուշ պիտի հայտնվեին: Իսկ Լիդիա Մատվեևնան ընդհանրապես մոռացել էր, որ մենք հյուր ենք եկել: Արդեն բոլորովին անկաշկանդ ուտում էր, խմում ու անեկդոտներ պատմում: Ես անեկդոտների սիրահար չեմ և սովորաբար դրանք չեմ մտապահում, բայց այս մեկն իսկապես լավն էր.

— Գնում է մուժիկը հարևան գյուղի շուկան ու առնում երկու հավ, մի սագ և մի դույլ: Հետո մտածում է՝ ոնց է դրանք տանելու: Որոշում է հավերին տեղավորել կռնատակերին, մի ձեռքով բռնել դույլը, մյուսով՝ սագին: Այդպես էլ անում է ու քայլում է դեպի տուն: Ճանապարհն անցնում է անտառով: Այստեղ մուժիկը հանդիպում է մի մոլորված կնոջ ու առաջարկում նրան ընկերակցել իրեն: «Բա որ բռնաբարեմ ինձ անտառում»՝ ասում է կինը: «Ինչպե՞ս կարող եմ բռնաբարել, երբ այս հավերը կռնատակերիս են, բադն ու դույլը՝ ձեռքերիս. չէ՞ որ եթե թռչուններին ցած դնեմ,

կփախչեն»՝ հարցնում է մուժիկը, ինչին կինը պատասխանում է. «շատ հեշտ. հավերին կդնես գետնին ու կծածկես դույլով, որ չփախչեն»: «Իսկ սմ՞գը»՝ տեղի չի տալիս մուժիկը: «Դե սագին էլ, ինչ արած, ես կբռնեմ»՝ ասում է կինը:

Եվ այս ոճի՝ էլի բազմաթիվ անեկդոտներ: Ընդ որում՝ յուրաքանչյուր անեկդոտն ավարտելուց հետո նա երկար քրքջում էր ու նոր անցնում մյուսին:

Անցել էր արդեն մեկ ժամ, երբ ես խնդրեցի Լիդիային զանգահարել և ճշտել, թե արդյոք Մշկոյենք չեն երևացել բարում կամ ռեստորանում: Պարզվեց, որ երևացել են:

— Ինձ ասացին, որ քիչ առաջ նրանք մի քանի կտոր խոզի մատներ ու կարտոֆիլ են ուզել խոհարարից, ինչպես նաև շամփուրներ:

— Եվ խոհարարը տվե՞լ է:

— Ինչպե՞ս կարող էր չտալ:

— Ամեն ինչ պարզ է,— վստահ հայտարարեցի ես,— Մշկոյանը որոշել է խորոված անել այս բուխարու մեջ: Նրանք ուր որ է կգան:

— Խորովա՞ծ,— ոգևորվեց Լիդիան,— ի՞նչ լավ գաղափար է:

Նա դեռ չգիտեր, թե այդ գաղափարը ինչ հետևանքներ է ունենալու իր և՝ ընդհանրապես «Վոլգա պարկ» պանսիոնատի համար:

Նա պատմում էր հերթական անեկդոտը ռուս մուժիկի մասին, երբ զանգեց հեռախոսը:

— Հրդե՞հ,— բացականչեց Լիդիա Մատվեևնան,— որտե՞ղ է հրդեհ:

Չգիտեմ նրան ինչ պատասխանեցին, բայց նա վեր թռավ տեղից:

— Ի՞նչ է պատահել,— հարցիր ես:

— Վառվում է «Լուկոմորիեի» «Պրեմիում շատյորը»,— ասաց նա ու դուրս վազեց քոթեջից:

— Ի՞նչ «Լուկոմորիե», ի՞նչ «Պրեմիում շատյոր»,— գոռացի նրա հետևից, բայց Լիդիա Մատվեևնան արդեն հեռու էր:

«Վոլգա պարկ» պանսիոնատը կառուցվել էր դեռևս Խորհրդային Միության ժամանակ և դարձել էր ոչ միայն մարզի, այլև

շատ մոսկվացիների սիրելի վայրը: Այն տեղակայված էր Վոլգայի ափերի ամենագեղատեսիլ հատվածներից մեկում և շրջապատված էր հնամյա հսկա կաղնիներով ու սոճիներով: Խորհրդային Միության փլուզումից հետո պանսիոնատը մասնավորեցվել էր ու նորովի վերանորոգվել: Հիմա այն ուներ ութսունմեկ համար հիմնական մասնաշենքում, տասնյոթ համար «Անտառային» կոչվող մասնաշենքում և վեց լյուքս դասի քոթեջ: Ուներ նաև հսկայական փակ լողավազան, մարզասրահ, թուրքական բաղնիք, սաունա և ուրիշ նման բաներ: Պանսիոնատի ներսում գործում էին երկու բար, դիսկոտեկ և երկու ռեստորան: Իսկ պանսիոնատից դուրս՝ գետի ափին, «Լուկոմորիե» հանգստի գոտին էր, ուր և գտնվում էր «Պրեմիում շատյոր» կոչվող սրճարան–ռեստորանը: Այն չափազանց ճոխ ձևավորված մեծ ու բազմապրոֆիլ մի սպիտակ վրան էր, որի անմիջապես մեջտեղում շրջանաձև բուխարին էր: Հենց այստեղ էլ մեր բարեկամները որոշել էին անել իրենց խորոված:

Մինչև հրշեջների ժամանելը, իսկ նրանք ժամանեցին մեկ ժամից, հրդեհի մարման գործին լծվել էին Լիդիա Մատվեևնան, Միլան, երկու մատուցողուհի, պահակը, մի քանի հանգստացողներ և ես: Ջուրը մենք վերցնում էին դույլերով՝ անմիջապես գետից և վազում դեպի վրանը՝ ճանապարհին թափելով դույլի պարունակության կեսը: Հրդեհը մարել մեզ իհարկե չէր հաջողվում, բայց գոնե չէին թողնում, որ կրակը տարածվի: Հրդեհաշիջման աշխատանքը ղեկավարում էր Լիդիա Մատվեևնան և, պետք է ասել, որ շատ լավ էր ղեկավարում: Նա անողոքաբար գոռում էր բոլորի, այդ թվում և ինձ վրա՝ օգտագործելով ռուսական ժարգոնի ողջ ծաղկաբույլը:

Հետո եկան հրշեջները և հրահանգեցին մեզ մի կողմ քաշվել: Ես ոտքից գլուխ ջուր էի ու քանի դեռ զբաղված էի այս ու այն կողմ վազելով, ցուրտը չէի զգում, մինչդեռ հիմա հասկացա, որ սառում եմ: Շտապեցի քոթեջ՝ շորերս փոխելու ու երբ ներս մտա, տեսա, որ բոլոր լույսերը վառ են, այդ թվում՝ երկրորդ հարկում գտնվող ննջասենյակներում: Փաստորեն այստեղ են վնասատուները՝ մտածեցի ես: Մեր հանդիպումն, իհարկե, ես այսպես չէի պատկերացնում, բայց ոչինչ անել չէի կարող:

Հյուրասրահում մարդ չկար: Բարձրացա երկրորդ հարկ և տեսա, որ ննջասենյակները նույնպես դատարկ են: Բացեցի պահարանը՝ ճամպրուկս տեղում էր: Բայց մյուս ննջարանում չկային Մշկոյի և Նաստյայի իրերը: Հենց այդպես, թրջված շորերով դուրս թռա քոթեջից ու վազեցի դեպի ավտոկայանատեղի: Սպիտակ «Վոլգան» այնտեղ չէր:

Յոշկար Օլա

Իմ ընկեր Մշկոն տիրապետում է չափազանց օրիգինալ բառապաշարի, և որպեսզի սովորես դրան և հասկանաս ամբողջությամբ, պիտի շփվես հետը երկար ժամանակ: Բանն այն է, որ նա ունի իր հորինած բառերը, որոնք կարող է օգտագործել տարբեր իմաստներով: Օրինակ, երբ նա ասում է «տու–տու–տու–տու», կարող է նկատի ունենալ, որ սեղանի վրա վերջացել է խմիչքը, կամ վերջացել են փողերը, կամ ինչ–որ բանից հավեսը փախել է: Երբ ասում է «գուլյած»՝ հակառակը, նկատի ունի, որ գրպանները լիքն են և տրամադրությունը՝ հրաշալի, կամ ինչպես ինքն է դարձյալ ասում՝ «գրանդիոզնի»: Երբ մեկին ասում է «Շուռա», նկատի ունի՝ միամիտ, հիմար, իսկ «Պետյան», ավելի խիստ ձևն է և նշանակում է՝ ապուշ: Երբ Մշկոյին հարցնում ես, թե ուր է այդ պահին, և նա պատասխանում է «Յոշկար Օլա», նշանակում է հեռու մի տեղ է, ասենք՝ Նորքի իններորդ զանգվածում: Այսինքն՝ Յոշկար Օլան նրա մոտ ասոցացվում է հեռավորության հետ:

Մի անգամ Մշկոյին հարցրի, թե գոնե գիտի՞ որտեղ է այդ քաղաքը:

— Ինչպե՛ս թե,— նեղացավ նա,— իհարկե Ղազախստանում. ես այնտեղ ծառայել եմ երկու տարի՝ դեսանտային զորքերում:

Չնայած ես գիտեի, որ Մշկոյանը երբեք չի ծառայել, առավել ևս՝ դեսանտային զորքերում, այնուամենայնիվ մեջս տպավորվել էր, որ Յոշկար Օլան իսկապես Ղազախստանում է:

Ու երբ այդ օրը՝ Լուկինոյից շարժվելիս, բացեցի Ռուսաստանի քարտեզն ու տեսա, որ այն ոչ միայն Ղազախստանում չէ, այլև ինձ չափազանց մոտ է, չհավատացի աչքերիս: Իսկ քարտեզը բացեցի, որովհետև քիչ առաջ տեսել էի Նաստյայի ֆեյսբուքում

հրապարակած հերթական նկարը և ստատուսը, որտեղ գրված էր. «Նա Վոլգե պո Վոլգե. կանգառ չորրորդ՝ քաղաք–հեքիաթ Յոշկար Օլա»: Նկարում ահավոր կեղտոտ «Վոլգան» կանգնած էր քաղաքի անունը կրող արձան–ցուցանակի տակ: Հետին պլանում երևում էին եռանկյունի տանիքներով, տարբեր գույների, չափազանց սիրուն շենքեր՝ հար և նման Աստերդամի շենքերին ու մի գետ, որը սակայն Վոլգան չէր: Գետը կոչվում էր Մալայա Կոկշագա և ընկած էր Մատուշկա Վոլգայից հարյուր կիլոմետր հյուսիս:

Ես վստահ չէի, արդյո՞ք ճանապարհորդները տեղյակ էին, որ գետը, որի ափին իրենք նկարվել են, ամենևին էլ Վոլգան չէ, բայց մոտավորապես հասկանում էի, թե ինչպես և ինչու են նրանք հայտնվել քաղաք–հեքիաթ Յոշկար Օլայում՝ հեքիաթային Լուկոմորիեից սրիկայաբար ծլկելուց հետո:

Բայց դրանից առաջ մի քանի հետաքրքիր դրվագներ էին եղել, որոնց, հավանաբար, արժե անդրադառնալ:

Մշկոն, իհարկե, ոչ մի միտում չէր ունեցել Լուկինոյի «Վոլգա պարկ» պանսիոնատի «Պրեմիում շատյորը» հրդեհելու: Նա պարզապես որոշել էր օգտվել այստեղի բուխարուց ու խորոված անել: Անտառից ցախ էր հավաքել, բայց հավանաբար, նրան չէր հաջողվել կրակ վառել, որովհետև փայտը թաց էր եղել: Ստիպված բենզին էր քաշել «Վոլգայի» բակից. պանսիոնատի պահակը խոստովանեց, որ փողրակն ինքն է տվել Մշկոյանին: Թե ինչպես էր վերջինս հաջողացրել հրդեհ սարքել, պարզ չէր, բայց բարեբախտաբար հրկիզվել էր վրան–ռեստորանի միայն մեկ երրորդը: Պատճառված վնասը հետագայում պիտի գնահատվեր հինգ հարյուր հազար ռուբլի՝ տասը հազար դոլարից մի քիչ պակաս:

Երբ հրշեջները մարել էին կրակը, հայտնվել էին ոստիկանները, որոնք դեպքի մանրամասներին ծանոթանալով՝ որոշել էին քրեական գործ հարուցել, սկզբում «կանխամտածված հրկիզում», հետո երբ իմացել էին, որ հրդեհի հեղինակները «հարգարժան պարոն Մշկոյանն» ու «մեր սիրելի դերասանուհն» են, կանգ էին առել «չկանխամտածված հրկիզման» վրա, իսկ երբ ես նրանց հյուրասիրել էի Մշկոյի կողմից մեծահոգաբար



սառցարանում թողած ֆրանսիական օղին ու կարմիր խավիարը՝ դա էլ էին մոռացել: Մանավանդ, որ պանսիոնատի ադմինիստրացիան՝ հանձին Լիդիա Մատվեևնայի, ոչ մի բողոք չուներ: Վերջինիս ես վստահեցրել էի, որ Մշկոյանը կփոխհատուցի ծախսերը և դեռ մի բան էլ ավելի:

Ահա այսպես: Հետո արդեն, երբ նրանք իրենց «Վոլգայով» ծլկել էին պանսիոնատից, ենթադրաբար գիշերել էին Նիժնի Նովգորոդում, իսկ հաջորդ առավոտյան, երբ բացել էին քարտեզը՝ իրենց հետագա երթուղին կառուցելու համար, հանդիպել էին Մշկոյի սիրելի Յոշկար Օլային, որը փաստորեն ամենևին էլ Ղազախստանում չէր, ու որոշել էին գնալ այնտեղ:

Երբ ես տեսա Նաստյայի ֆեյսբուքյան հրապարակումը՝ ցերեկվա ժամը երկուսն էր: Մեկ անգամ էլ վստահեցրի Լիդիա Մատվեևնային, որ իրենց վնասը առավելագույնը քսանչորս ժամվա ընթացքում կփոխհատուցվի ու հրաժեշտ տվեցի նրան՝ խոստանալով մոտ ժամանակներս հրավիրել Երևան:

Լուկինո–Յոշկար Օլա երեք հարյուր յոթանասուն կիլոմետր և հինգ ժամ՝ ազդարարեց նավիգատորը, ու ես ճամփա ընկա:

Մարիյ Էլ հանրապետության մայրաքաղաք հասա երեկոյան ժամը ութին: GPS–ը ինձ բերեց քաղաքի կենտրոնում գտնվող ճիշտ այն արձան–ցուցանակի մոտ, որի տակ նկարվել էին Մշկոն և Նաստյան:

Հիմա նրանք, իհարկե, այստեղ չէին և պետք էր հասկանալ, թե ո՞ւր կարող են լինել: Կրկին շրջել քաղաքով ու փնտրե՞լ սպիտակ «Վոլգան»: Թերևս դա էր միակ տարբերակը: Բայց նախ պետք էր տեսնել, թե այս ի՞նչ ամստերդամ է Յոշկար Օլայի կենտրոնում:

Մարիէլցի ճարտարապետներն իհարկե ջանք չէին խնայել, որ իրենց մայրաքաղաքի կենտրոնը նմանվի Նիդերլանդների մայրաքաղաքի կենտրոնին և պետք է խոստովանել, դա նրանց հաջողվել էր: Այստեղ իսկապես ամեն ինչ շատ սիրուն էր, մաքուր ու տպավորիչ, միայն թե ցանկացած բանի կրկնօրինակ, միևնույն է, մնում է կրկնօրինակ:

Իսկ այն ինչ կար Յոշկար Օլայի կենտրոնից դուրս, պարզապես անհնար է նկարագրել՝ դա պետք էր տեսնել: Ավելի ճիշտ՝

ամենևին էլ պետք չէ տեսնել, եթե դուք իհարկե չեք ուզում քայլել ջրափոսերի միջով, ոտքից գլուխ կորել ցեխի մեջ և շնչել չգիտես որտեղից եկող գարշահոտը: Իսկ եթե դուք մեքենայով եք, հազիվ թե կարողանաք հաջողացնել չջարդել ընթացային մասերի առնվազն կեսը և մի քանի տեղ չթաղվել ցեխակույտերի մեջ: Իսկ եթե որոշեք շրջանցել ցեխակույտերը ստիպված պիտի լինեք մտնել ջրափոսերը, որտեղից սեփական ընթացքով դուրս գալը նույնպես երաշխավորված չէ:

Մի խոսքով, երբ կանգնեցի հերթական հյուրանոցի առջև և ապարդյուն անցկացրած չափից ավելի տհաճ օրվանից հետո որոշեցի գիշերել, այնպիսի տեսք ունեի, որ վախենում էի ինձ չընդունեն: Կոշիկներիցս մինչև բաճկոն ցեխոտ էի՝ տանջված ու ճմրթված:

Հյուրանոցը գտնվում էր Գոգոլի փողոցում և կոչվում էր «Ռեվիզոր»: Սարսափելի անճաշակ, ոսկեգույն պաստառներով ու ջահերով զարդարված ֆոյեում կանգնած էր դարձյալ ոսկեգույն մի հովազի արձան, որը հավանաբար պիտի պաշտպաներ հյուրանոցը «ռեվիզորներից», կամ հակառակը՝ խորհրդանշում էր հենց «ռեվիզորին»:

Այնուամենայնիվ, ինձ ընդունեցին հավուր պատշաճի և առաջարկեցին երրորդ հարկում գտնվող լյուքսը, որտեղ, ասացին՝ կա ջակուզի ու հիդրոմերսում: Թերևս պատճառը «Մերսեդեսն» էր, որը կայանել էի անմիջապես հյուրանոցի մուտքի առջև: Այն, իհարկե, նույնպես ցեխի մեջ կորած էր, բայց «Մերսեդեսը» մնում է «Մերսեդես»:

Ջակուզիով ու հիդրոմասաժով լյուքսից ես հրաժարվեցի, բայց փոխարենը խնդրեցի, որ լվանան ու արդուկեն շորերս: Ընդ որում բոլորը, այն ամենը, ինչ բերել էի հետս: Բանն այն է, որ երբ գալիս էի Ռուսաստան, հաշվարկել էի, որ մեզանից երեք օր կպահանջվի մեքենայով Երևան հասնելու համար և վերցրել էի համապատասխան քանակի հագուստ: Իսկ այսօր ճամփորդությանս չորրորդ օրն էր, ու ես հասել էի ոչ թե Երևան, այլ՝ գրողի ծոցը ու մաքուր շոր այլևս չունեի: Ներողություն եմ խնդրում մանրամասների համար՝ անգամ ներքնաշոր:

Աղախնին դիմավորեցի հյուրանոցային ցամքոց–խալաթով ու ցույց տվեցի մահճակալին թափված կեղտոտ շորերս: Նա դժկամությամբ հավաքեց դրանք՝ մերթընդմերթ գլուխը շրջելով և ուսերի վրայով զարմանքով նայելով վրաս: Կարծես փորձում էր հասկանալ՝ որսից եմ գալիս, թե կարտոֆիլ հավաքելուց:

— Ինչո՞ւ է ձեր քաղաքն այսքան կեղտոտ,— հարցրի ես իբրև արդարացում և մի սիգարետ հանեցի, բայց չհասցրի վառել:

— Այս ի՞նչ եք անում,— բացականչեց աղախինը,— այստեղ ծխել չի կարելի:

— Իհարկե չի կարելի,— հաստատեցի ես ու մի թղթադրամ խոթեցի նրա գոգնոցի գրպանը:

Նա հանեց այն, նայեց ու անամոթաբար ասաց.

— Սա լվացքի և արդուկի համար, իսկ ծխելու համար պետք է ավելացնել:

Մի քանի ամիս առաջ Ռուսաստանում ուժի մեջ էր մտել հասարակական վայրերում ծխելն արգելելու մասին օրենքը և պետք է ասել, որ, ի տարբերություն շատ այլ օրենքների, խստորեն պահպանվում էր: Անշուշտ այնքան ժամանակ, քանի դեռ դու լռության համար չէիր վճարում հյուրանոցի աղախնին, սրճարանի մատուցողին կամ օդանավակայանի արտաքնոցի հավաքարարին:

— Բացի այդ,— շարունակեց աղախինը,— եթե ուզում եք ծխել, ապա միայն՝ բաց պատուհանի առջև, այլապես կաշխատի հրդեհային ահազանգը, կգան հրշեջները և ստիպված կլինեք իբրև տուգանք վճարել հինգ հազար ռուբլի:

Հակահրդեհային համակարգեր տեղադրված էին ոչ միայն Յոշկար Օլայի «Ռեվիզոր» հյուրանոցում: Ես այդպիսիք տեսել էի թե՛ Մոսկվայի, թե՛ Կոստրոմայի, թե՛ Լուկինոյի հյուրանոցներում: Բայց քանի որ թվարկված բոլոր վայրերում ես հանգիստ ծխել էի ու ոչ մի ազդանշան չէր միացել, ինձ թույլ եմ տալիս մտածել, որ դրանք ընդամենը մուլյաժներ էին:

Ինչևէ, երկրորդ թղթադրամը խցկեցի անհագուրդ աղախնի գրպանը, խնդրեցի շորերս վերադարձնել վաղ առավոտյան ու նրա հետևից փակեցի դուռը: Հետո մոտեցա պատուհանին և, այնուամենայնիվ, բացեցի այն:

Ապրիլյան սառը, անձրևոտ երեկո էր, Յոշկար Օլան պատրաստվում էր քնել կիրակնօրյա հանգստից հետո, որպեսզի առավոտյան սկսեր աշխատանքային շաբաթը: Աշխուժություն գրեթե չկար, միայն հյուրանոցից քիչ վերև վառվում էր գունագեղ մի ցուցանակ, որի տակ թեթև անցուդարձ կար: Այն արտացոլվում էր թաց ասֆալտին և կարդացվում էր ցուցանակի միայն առաջին հատվածը, որտեղ լատինատառ գրված էր՝ Café Malenkoye...: Թե «փոքրիկ» ինչ էր սրճարանի անունը չէր երևում:

Դե ինչ, ես ո՛չ սրճարանի տրամադրություն ունեի, ո՛չ էլ շոր՝ այնտեղ գնալու համար, հետևաբար որոշեցի մի անգամ էլ բացել ֆեյսբուքս ու քնել: Նաստյայից ոչինչ չկար: Փակեցի պատուհանը, պառկեցի ու հոգնածությունից անմիջապես քնեցի: Միայն թե ոչ երկար: Քիչ անց իրար հետևից ստացա երկու զանգ. առաջինը՝ Լիդիա Մատվեևնայից:

— Ձեր ընկերը ազնվագույն մարդ է,— ասաց նա հևալով,— ասենք՝ ես չէի էլ կասկածում:

— Ի՞նչ է պատահել,— հետաքրքրվեցի ես:

— Նա մեր հաշվին է փոխանցել պատճառած վնասի չափով գումարը: Դեռ մի բան էլ ավելի:

— Տեսնո՞ւմ եք,— ուրախացա ես,— չէ՞ որ ես Ձեզ ասում էի:

— Այո, շնորհակալ եմ: Ի դեպ, ե՞րբ եք ինձ հրավիրելու Երևան:

Երկրորդ զանգահարողը Փղիկն էր:

Նրա հետ չէի խոսել Ռուսաստանում գտնվելուս ողջ ընթացքում ու կարելի է ասել, որ ընդհանրապես մոռացել էի նրա գոյության մասին, թեպետ դա արդար չէր, որովհետև այս ճամփորդությանս համար պարտական էի նրան: Չէ՞ որ նրա հաշվին էի ես վճարել թե՛ «Մերսեդեսի», թե «Ռեվիզոր» հյուրանոցի, թե վերջինիս աղախնի լռության համար: Իհարկե ճիշտ կլիներ գոնե մեկ–մեկ զանգահարել նրան, բայց ես անամոթաբար դա չէի արել:

Նա նույնիսկ չգիտեր, որ ես Ռուսաստանում եմ և վերստին փնտրում եմ իր «փեսացուին», ով չպետք է մոռանալ, դեռ չէր վերադարձրել նրա քարտը:

Ինչևէ, վերցրի հեռախոսը ու լսեցի Սիրուշի՝ իր մարմնի պես փափլիկ ձայնը:

— Կներես, որ նորից անհանգստացնում եմ քեզ, բայց Մշկոյանը նորից հայտնվել է:

— Ինչ է նշանակում հայտնվել է,— չհասկացա ես:

— Նա նորից օգտագործել է իմ քարտը,— բացատրեց Փղիկը,— իսկ ես հույս ունեի, որ…

— Մի րոպե,— ընդհատեցի նրան, վեր կացա անկողնուց ու մի սիգարետ վառեցի,— որտե՞ղ է օգտագործել քարտը:

— Դու գուցե չհավատաս, բայց նա գնացել է այնտեղ, ուր անցկացրել է իր բանակային ծառայությունը. նա հիմա Ղազախստանում է՝ Յոշկար Օլա քաղաքում:

Փղիկն այնքան վստահ ասաց, որ ինձ մի պահ թվաց, թե ինքս էլ Ղազախստանում եմ:

Ստիպված էի բացել նրան ամբողջ ճշմարտությունը: Կամ, ոչ ամբողջ: Համենայնդեպս այն մասը, որը վերաբերում էր Մշկոյանի ծառայությանը, Յոշկար Օլայի տեղակայմանը, ու նաև նրան, թե որտեղ եմ ես գտնվում հիմա և ինչ եմ անում: Նաստյայի և «Վոլգայի» մասին լռեցի:

— Իսկ ինչո՞ւ չէիր ասում,— արդարացիորեն վրդովվեց Փղիկը:

— Ուզում էի անակնկալ անել,— արդարացա ես:

Հետո մոտեցա պատուհանին, բացեցի այն, մի պահ մտածեցի ու շարունակեցի.

— Լավ, այդ մասին հետո, իսկ հիմա ասա, թե ինչի՞ համար և որքա՞ն է վճարել Մշկոյանը:

— Վճարել է հարյուր ութ եվրո, թե ինչի համար՝ չգիտեմ, բայց վայրը որտեղ արել է վճարումը կոչվում է Café Malenkoye Chikago:

Եթե ինձ ճանաչող իմ սիրելի ընթերցողներից մեկն ինձ տեսներ Յոշկար Օլայի կենտրոնական Գոգոլի փողոցում հյուրանոցի ցամքոց–խալաթով վազելիս… Բայց հերն էլ անիծած, թող տեսնեին, միայն թե հասնեի ու բռնացնեի Մշկոյին: Եվ դա հնարավոր էր անել, եթե կես րոպե շուտ դուրս գայի հյուրանոցից:

Malenkoye Chikago–ն գտնվում էր հիսուն մետր վերև: Գովազդային լույսերն հիմա արտացոլվում էին մասամբ թաց ասֆալտի, մասամբ դիմացը կայանած սպիտակ «Վոլգայի» վրա: Ես տեսա, թե ինչպես Մշկոն ու Նաստյան նստեցին մեքենան. ընդ որում ղեկին նստեց Նաստյան, իսկ Մշկոն, ում ձեռքին շամպայնի շիշ էր, տեղավորվեց կողքի նստատեղին: Որքան հնարավոր է բարձր գոռացի նրա անունը, բայց սրիկան չլսեց: Այդպես գոռալով շարունակեցի վազել և համարյա հասել էի մեքենային, երբ այն շարժվեց:

Հիմա էլ դեռ ամեն ինչ կորած չէր լինի, եթե ես վերցրած լինեի «Մերսեդեսի» բանալին: Բայց թողել էի այն սենյակում: Երևի տևեց երկու րոպե, մինչ շնչակտուր մտա հյուրանոց, խելապատառ բարձրացա աստիճաններով, վերցրի բանալին ու հասա մեքենայիս:

Վոլգան չէր կարող շատ հեռու լինել: Եթե բախտս բերեր, պետք է որ հասնեի նրան: Իսկ եթե ոչ՝ արդեն դժվար չէր լինի գտնելը. նրանք պիտի գնային կամ ինչ–որ տեղ շարունակելու, կամ որևէ հյուրանոց: Բայց, իհարկե, ավելի լավ էր հասնել:

Պետք էր շրջել նախ մեծ փողոցներով. խելակորույս արագությամբ մտա նախ Սովետսկայա փողոց, հետո խաչմերուկում թեքվեցի Լենինի պողոտա, ապա Կոմսոմոլսկայա փողոց, հետո Կրասնոարմեյսկայա: Ողջ այս «Խորհրդային Միությունում» Վոլգան չերևաց, մինչդեռ ես արդեն հեռացել էի կենտրոնից և հասել քանդուքարափ ճանապարհներին:

Արդեն ուզում էի շրջվել ու հետ գնալ, երբ քիչ առջևում, կարմիր լույսի տակ կանգնած տեսա սպիտակ Վոլգան: Ճիշտ է, մինչև իմ խաչմերուկ հասնելն այն շարժվեց և թեքվեց դեպի ավելի նեղ մի փողոց, բայց ես վստահ էի, որ փախնելու շանս նրանք այլևս չունեն, եթե անգամ որոշեին այդպես վարվել:

«Վոլգա ԳԱԶ–21»–ը արտադրվել է Խորհրդային Միությունում 1956–1970 թվականներին և համարվել է ժամանակի լավագույն մեքենան՝ խորհրդային մարդու ողջ կյանքի երազանքը: Իհարկե, խորհրդային մարդկանց մի չնչին մասի մոտ է այդ երազանքը իրականություն դարձել՝ ասենք բարձրաստիճան պաշտոնյաների, աշխատանքի հերոսների, փառապանծ սպորտսմենների, ընդհատակյա ցեխավիկների, հանցավոր հեղինակությունների և այլն, իսկ մնացածը բավարարվել են

կողքից զմայլվելով: Ողջ այդ ժամանակահատվածում Գորկու ավտոմոբիլաշինական գործարանում թողարկվել է մոտ յոթ հարյուր հազար «Վոլգա ԳԱԶ–21»: Թե դրանցից քանիսն է պահպանվել հիմա, հայտնի չէ, բայց որ դրանցից մեկը, ըստ ամենայնի, բավականին լավ վիճակում, այս պահին փորձում էր ինձանից, ավելի ճիշտ՝ իմ Մերսեդեսից խուսանավել, փաստ էր:

Թե ինչու էր փորձում խուսանավել, անհասկանալի էր: Վստահ եմ՝ նրանք չգիտեին, որ իրենց հետևող և հեռահար լույսերով անընդհատ թարթող մեքենայի ղեկին ես եմ: Գուցե մտածում էին ինչ–որ խուլիգաններ են:

Ինչևէ. Վոլգա ԳԱԶ–21–ի շարժիչը ուներ յոթանասունհինգ ձիաուժ, այն կարող էր զարգացնել ժամում առավելագույնը հարյուր երեսուն կիլոմետր արագություն, իսկ զրոյից հարյուր կիլոմետր արագությանը հասնում էր քսանհինգ վայրկյանում: Իմ Mercedes E 300–ը ուներ երկու հարյուր հիսուն ձիաուժ, առավելագույն արագությունը կազմում էր երկու հարյուր հիսուն կիլոմետր՝ մեկ ժամում, իսկ զրոյից հարյուր կիլոմետր ժամի հասնում էր յոթ վայրկյանում:

Մի խոսքով, ինչպես արդեն ասվեց, իմ բարեկամներն ինձանից փախչելու ոչ մի շանս չունեին, եթե… Եթե Յոշկար Օլայի քաղաքային իշխանությունները նորմալ ասֆալտապատեին ոչ միայն կենտրոնական, այլև մյուս փողոցները, կամ կարկատեին, կամ առնվազն լցնեին փոսերը: Կամ գոնե կես մետրից ավել խորություն ունեցող փոսի առջև նշան դնեին: Բայց քաղաքային իշխանությունները հավանաբար զբաղված էին ավելի կարևոր գործերով և փոսն էլ, որի մեջ ես հայտնվեցի, ավելի ճիշտ՝ հայտնվեց իմ Մերսեդեսը, ոչ թե կես մետր էր, այլև ամբողջ մեկ:

Պայթեցին առջևի երկու անիվները, իսկ սպիտակ «Վոլգան» հանգիստ հեռացավ, մի հրաժեշտի արհամարհական շչակ արձակելով:

Բայց դա չէր ամենասարսափելին:

Ամենասարսափելին այն էր, որ ես հյուրանոցում էի թողել փաստաթղթերս և դրամապանակս, և երբ քիչ անց հայտնվեցին ոստիկաններն ու տեսան ինձ խալաթով ու ամբողջովին ցեխի մեջ կորած, ես ոչինչ չունեի նրանց ներկայացնելու:

— Ներկայացրեք փաստաթղթերը,— ասաց ուղտի կեցվածքով մի ավագ լեյտենանտ՝ լապտերը պահելով չգիտես ինչու ոչ թե իմ, այլ իր վրա:

— Գուցե նախ օգնեք մեքենան հանենք փոսից:

— Ինչ,— զարմացավ ոստիկանը և արդեն լապտերը պահեց իմ ուղղությամբ,— ինչ ասացիք:

— Ասացի, որ հրաշալի քաղաք է ձեր քաղաքը, մանավանդ փողոցները:

Բայց ուղտն ուշադրություն չդարձրեց իմ ասածին, հիմա էլ լապտերը պահեց Մերսեդեսի վրա, մի լավ տնտղեց ու հարցրեց.

— Ո՞ւմն է այս մեքենան:

— Մեքենան «Սիքսթինն» է,— բացատրեցի ես,— խնդրում եմ քարշակ կանչեք, հանենք այն փոսից ու տեղափոխենք ավտոսպասարկման կայան:

Ոստիկանը, սակայն, անդրդվելի էր:

— Ո՞վ է Սիքսթը,— ասաց նա,— դու գողացե՞լ ես այս այս մեքենան:

Ես մի անգամ էլ փորձ արեցի խաղաղ և քաղաքավարի լուծել խնդիրը:

— Ես ապրում եմ «Ռեվիզոր» հյուրանոցում, իմ բոլոր փաստաթղթերը մնացել են այնտեղ, որովհետև հապճեպ դուրս եկա համարից: Կարող ենք գնալ հյուրանոց, և դուք կհամոզվեք: Իսկ մեքենան ես վարձակալել եմ Մոսկվայում:

Պետք է խոստովանել, որ ոստիկանը՝ նկատի ունենալով նրա ուղտ տեսակը, իրավունք ուներ ինձ չհասկանալու: Լավ, ենթադրենք, ես ճիշտ էի ասում, բայց այդ դեպքում ինչո՞ւ էի ես խալաթով, ինչո՞ւ էի հայտնվել հյուրանոցից այսքան հեռու և ինչո՞ւ էի ընկել այս անիծյալ փոսը: Եվ ուղտը, բնականաբար, չհասկացավ ու ինքնավստահ տոնով ասաց:

— Այսինքն մեքենան գողացել եք Մոսկվայում: Ես այդպես էլ գիտեի:

Ոստիկանական բաժանմունքում, որքան էլ որ տարօրինակ թվա, ես մտածում էի բոլորովին այլ բանի մասին: Հերթապահ մայորը խոստացել էր կապվել «Ռեվիզոր» հյուրանոցի հետ և արդեն մեկ ժամ է՝ կապվում էր: Երևի հեռագիր էր ուղարկել:

Միակ լավ բանն այն էր, որ Մերսեդեսը ոստիկանության քարշակով տեղափոխել էին այստեղի տուգանային հրապարակ, և ես հանգիստ էի դրա համար:

Իսկ մտածում էի հետևյալի մասին. ինչ է տեղի ունեցել, որ Մշկոն վերստին անցել էր Սիրուշի քարտի փողերը ծախսելուն: Չէ՞ որ արդեն մոտ մեկ ամիս նա հանգիստ էր թողել այդ քարտը և դեռ մի բան էլ վերականգնել էր դրա բալանսը՝ հավելավճարով: Քսանհինգ հազար եվրո: Վոլգայի համար նա ամենայն հավանականությամբ վճարել էր տասը հազար եվրո, ես համացանցում նայել էի գները և դրանք մոտավորապես այդքան էին: Կարելի էր ենթադրել, որ Լուկինոյի պանսիոնատի վնասի հատուցումը կազմել էր նույնքան: Եվս հինգ հազար, հավանաբար, նա ծախսել էր այս ճամփորդության ընթացքում: Այդ դեպքում ամեն ինչ պարզ էր դառնում.Եվրոպայից Մոսկվա վերադառնալով Մշկոն որոշ ժամանակ իրեն խելոք էր պահել, հետո եղբորից վերցրել էր հիսուն հազար եվրո ու կրկին սկսել չարություններ անել:

Այսինքն՝ ամեն ինչ սկսվում էր նորից, կամ, ինչպես կասեր ինքը՝ Մշկոն՝ «ջրիկ ճաշից»: Նա դարձյալ ծախսելու էր Փղիկի փողերը, Փղիկը դարձյալ ոոպեն մեկ զանգահարելու էր ինձ, «ջրիկ ճաշին» հաջորդելու էր երկրորդ ճաշատեսակը, հետո՝ երրորդ, հետո կոմպոտը... Բայց մյուս կողմից դա ինձ ձեռնտու էր. ես այլևս ստիպված չէի լինի հույս դնել միայն Նաստյայի ֆեյսբուքյան նկարների ու ստատուսների վրա, որովհետև Մշկոյի յուրաքանչյուր հերթական վճարման ժամանակ ինձ կզանգահարեր Փղիկը, և ես կիմանայի ընկերոջս տեղակայման վայրը:

— Դուք պետք է բերեք Ձեր փաստաթղթերը հյուրանոցից, ինչպես նաև վճարեք քարշակի համար,— ասաց մայորը,— ծառայության գումարը կազմում է տասը հազար ռուբլի:

Շան որդին, իհարկե, ստում էր: Աշխարհում ոչ մի քարշակի ծառայութուն մեքենան ընդամենը մեկ կիլոմետր տեղափոխելու համար տասը հազար ռուբլի, այսինքն՝ մոտ երկու հարյուր դոլար, չի կարող կազմել:

— Իմ դրամապանակը մնացել է հյուրանոցում,— ասացի,— բացի այդ, ինչպես տեսնում եք ես խալաթով եմ ու իմ մեքենայի առջևի անիվները պայթել են ու այն կանգնած է ձեզ մոտ:

Մայորը ինչ որ թուղթ էր լրացնում հերթապահ մասի պատուհանի հետևում:

— Ինչ եք առաջարկում,— հարցրեց նա՝ առանց գլուխը բարձրացնելու:

— Գուցե Դուք առաջարկեք:

— Գիտեք, մենք կարող ենք ձեզ պահել մինչև առավոտ: Բայց դա չենք անում և բաց ենք թողնում, իսկ դուք ինչ–որ պահանջներ եք ներկայացնում:

— Դուք բարի մարդ եք երևում, ընկեր մայոր, և ես իհարկե շնորհակալ եմ, որ ինձ մինչև առավոտ չեք պահում: Բայց էլ ավելի շնորհակալ կլինեմ, որ ինձ հասցնեք հյուրանոց: Հենց այնտեղ էլ կներկայացնեմ փաստաթղթերը և կվճարեմ քարշակի համար: Իսկ առավոտյան կգամ մեքենայիս հետևից:

— Բարդ բան եք ասում,— մայորը վերջացրեց գրագրությունը և ոտքի ելավ,— բոլոր աշխատակիցները ծառայության մեջ են:

Նա դարձյալ ստում էր. աշխատակիցները նստած էին հարևան սենյակում և օղի էին խմում:

— Լավ,— ասացի ես,— եկեք այսպես պայմանավորվենք. ես տաս հազարից բացի վճարում եմ ևս հինգը, իսկ դուք հիմա ինձ օգնում եք քանդել «Մերսեդեսի» պայթած անիվները, տանել արհեստավորի մոտ ու վերանորոգել:

— Բարդ բան եք ասում,— կրկնեց շան որդին՝ քորելով գլուխը,— արհեստանոցները հիմա փակ են: Կավելացնեք տասը հազար և նույն բանը կանենք առավոտյան:

— Լավ, իսկ հյուրանոց ինձ կհասցնե՞ք:

— Հյուրանոց կհասցնենք:

Հյուրանոց ինձ հասցրեց ուղտը: Բարձրացավ հետս սենյակ, նայեց փաստաթղթերը, հետո ես նրան տվեցի քսան հազարը: Բայց նա հապաղում էր հեռանալ: Սեղանի վրա դրված էր երկու տուփ ծխախոտ՝ մեկը բացված, մեկը փակ:

— Դուք այստեղ ծխո՞ւմ եք,— ոգևորված հարցրեց, կարծես ինձ բռնել էր հերթական հանցանքի պահին:

— Ինչպե՞ս կարող եմ այստեղ ծխել,— ես մատնացույց արի առաստաղից կախված հակահրդեհային ինդիկատորը,— եթե ծխեմ, սա կմիանա և ինձ կտուգանեն:

— Իսկ ի՞նչ սիգարետներ են սրանք,— տեղի չտվեց ուղտը:

— Հայկական,— ասացի ես ու փակ տուփը մեկնեցի նրան,— սա ձեզ նվեր Մերսեդես առևանգողի կողմից: Ի դեպ, առավոտյան ժամը քանիսին պայմանավորվենք:

— Ինչի՞ համար պայմանավորվենք,— հարցրեց նա՝ գրպանը դնելով սիգարետի տուփը:

— Մերսեդեսի անիվները վերանորոգելու,— մի՞թե ընկեր մայորը ձեզ տեղյակ չի պահել:

— Դա բարդ հարց է,— ծամծմելով ասաց ուղտը:

— Որոշ ժամանակ անցկացնելով ձեր և ձեր ղեկավարության ընկերակցությամբ, ես հասկացա, որ բոլոր բարդ հարցերն, այնուամենայնիվ, ունեն լուծում:

Նա երևի հասկացավ, թե ինչ նկատի ունեմ ու հարցական նայեց ինձ:

— Ես մի առաջարկ ունեմ,— շարունակեցի ես,— հուսով եմ այն ձեզ դուր կգա:

— Ի՞նչ առաջարկ:

— Ես կտամ ևս երեք հազար ռուբլի, եթե առավոտյան վերանորոգեք իմ մեքենան ու բերեք այն այստեղ:

— Հինգ,— ասաց ուղտը՝ առանց մտածելու:

Երբ նա հեռացավ, ես վերջապես հանեցի ցեխոտ խալաթս, ամբողջովին մերկ կանգնեցի բաց լուսամուտի առջև, մի սիգարետ վառեցի ու սկսեցի գունավոր հայհոյանքներ հղել Յոշկար Օլայի ոստիկանության, քաղաքային իշխանությունների, ինչպես նաև Մշկոյի ու Նաստյայի հասցեին:

-

Սրտերը երբեմն սխալ են վկայում

Քաղաքացին կարող է իրեն ապահով ու պաշտպանված զգալ երկու դեպքում: Երբ պետությունն ունի ուժեղ բանակ և արդար ոստիկանություն: Մեկն առանց մյուսի չի աշխատի. երբ պետությունն ունի ուժեղ բանակ, ինչպես, օրինակ, Ռուսաստանը, բայց անարդար ոստիկանություն, քաղաքացին կարող է վստահ լինել, որ թեև դրսից իրեն վտանգ չի սպառնում, բայց ներսից իրեն կարող են անհանգստացնել: Երբ պետությունն ունի արդար ոստիկանություն, ինչպես օրինակ Կիպրոսը, բայց չունի ուժեղ բանակ, քաղաքացին կարող է վստահ լինել, որ իրեն չեն անհանգստացնի ներսում, բայց երբեք չգիտի, թե ինչի կհանգեցնեն սպառնալիքները դրսից:

Անշուշտ, շատ ավելի դժվար է ունենալ ուժեղ բանակ, քան արդար ոստիկանություն: Որովհետև ուժեղ բանակը միայն զինվորի ու սպայի հայրենասիրությունը, կարգապահությունն ու պատասխանատվությունը չէ, եթե անգամ այն կա ու կա լիարժեք: Ուժեղ բանակը նախևառաջ ուժեղ ու ժամանակակից սպառազինություն է, որն, ավա՜ղ, ամեն պետություն չէ, որ կարող է ունենալ:

Իսկ ի՞նչն է խանգարում ունենալ արդար ոստիկանություն: Միայն մեկ բան՝ օրվա իշխանությունը: Եթե իշխանության ղեկին արդար մարդիկ են, առողջ քաղաքական ուժ, որն այդ իշխանությունը ստացել է առանց կեղծիքների, ուժի ու խաբեության, այն անպայմանորեն ամեն ինչ կանի, որ ոստիկանությունը առանց կեղծիքների ու խաբեության կատարի իր անմիջական գործառույթները, այն է՝ պաշտպանի ժողովրդին հանցագործներից և ոչ թե պաշտպանի իշխանությանը ժողովրդից: Եվ ուժ կիրառի միայն ու միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է: Մինչդեռ երբ իշխանությանը անհրաժեշտ է ոստիկանությունը ինքզինքը

պաշտպանելու համար, ապա ոստիկանությունը, ինքնաբերաբար, ստանում է արտոնություններ և, առանց վարանելու, խախտում է այն օրենքները, որոնք պաշտպանելուն է կոչված: Եվ այդպիսով համակարգը գնալով փտում է և դառնում վտանգավոր: Ոստիկանը հանցագործին բռնելու փոխարեն գումար է շորթում նրանից և ազատ արձակում՝ այդպիսով վտանգելով օրինապաշտ քաղաքացու կյանքը: Օրինապաշտ քաղաքացին էլ ավելի հաճախ ձեռնպահ է մնում ոստիկանին դիմելուց, քանի որ կորցրել է վստահությունը:

Այդպես եղել է ողջ խորհրդային դարաշրջանում և նախկին խորհրդային որոշ պետություններում՝ շարունակվել միության փլուզումից հետո: Որովհետև համակարգում աշխատող մարդիկ մնացել են իրենց տեղում: Որովհետև, ասենք հազար ինն հարյուր ութսունինը թվականին ոստիկանության կրտսեր կամ ավագ լեյտանանտ աշխատած մեկը, ով կաշառք է վերցրել հանցագործից ու նրան բաց թողել, երկու հազար երկու թվականին լինելով արդեն փոխգնդապետ կամ գնդապետ, դարձյալ անելու է նույնը: Իսկ ոստիկանություն ընդունված նոր աշխատակիցը սովորելու է այն, ինչ տեսնելու է:

Ինչպես Յոշկար Օլայի ոստիկանության ավագ լեյտենանտ ուղտը, ով առավոտյան բերեց իմ մեքենան, և ես նրան տվեցի խոստացած հինգ հազարը:

— Ես ևս հազար ռուբլու բենզին եմ լցրել,— ասաց նա,— Ձեր մեքենայի բակը դատարկ էր:

Նա, իհարկե, ստում էր, բայց ես տվեցի այդ հազար ռուբլին ևս: Միայն թե մեկնելուց դիտմամբ այնպես արեցի, որ թղթադրամը գետնին ընկնի: Ուղտը խելոք կռացավ, վերցրեց այն ու հեռացավ:

Ժամը ինն էր: Իհարկե, ճիշտ կլիներ գնալ այն վայրը, ուր երեկ պայթել էին մեքենայիս անիվները և կորցրել էի փախստականներին ու փնտրել նրանց մոտակայքում, իսկ չգտնելու դեպքում՝ գնալ ու սպասել քաղաքի ելքի մոտ: Բայց կար մի խանգարող հանգամանք՝ շորերես դեռ չէին բերել: Զանգահարեցի հերթապահին, և նա խոստացավ, որ շուտով կբերեն: Միայն թե այդպես էլ չիմացա, թե երբ և ինչպես բերեցին, որովհետև

պառկեցի մահճակալին, ու տանջալից գիշերվանից հետո կիսատ մնացած քունս ինձ այնպես կլանեց, որ չզգացի աղախնի ներս մտնելը:

Արթնացա ժամը մեկին, սուրճ պատվիրեցի ու բացեցի քարտեզը: Այստեղ ինձ նոր անակնկալ էր սպասվում. Վոլգայի ափին ընկած հերթական քաղաքը Չեբոկսարն էր, հաջորդը՝ Կազանը: Բայց խնդիրն այն էր, որ Յոշկար Օլան այդ քաղաքների հետ կապում էին երկու տարբեր ճանապարհներ՝ առաջինը՝ P176, երկրորդը՝ A195 մայրուղիները: Թե այդ երկու մայրուղիներց և քաղաքներից որոնք կնախընտրեին փախստականները՝ միայն իրենք գիտեին ու իրենց սատանան:

Այնուամենայնիվ, տրամաբանորեն ինձ համար ճիշտ էր ընտրել երկրորդը, որովհետև, եթե նրանք նույնիսկ որոշեին գնալ Չեբոկսար, միևնույն է, հետո անցնելու էին Կազանով, իսկ հակառակ դեպքում Չեբոկսարը կմնար հետևում և անիմաստ կլիներ այնտեղ վերադառնալը: Բայց կար նաև երրորդ տարբերակը. Կազանին հաջորդող քաղաքը Ուլյանովսկն է, նախկին Սիմբիրսկը, իր՝ Վլադիմիր Իլյիչ Ուլյանով–Լենինի ծննդավայրը: Այս քաղաքը շրջանցել Մշկոյանը պարզապես չէր կարող: Ուրեմն ճիշտը այնտեղ գնալ ու նրանց սպասելն էր, որովհետև, եթե նույնիսկ նրանք որոշեին այցելել նախորդ երկու քաղաքը, միևնույն է՝ վաղ թե ուշ կհայտնվեին Ուլյանովսկում: Գոհ իմ տրամաբանական վերլուծությունից՝ հավաքեցի լվացած և արդուկած շորերս, հանձնեցի սենյակս ու դուրս եկա: Երբ նստեցի մեքենաս, հայտնաբերեցի, որ գրպանիկից անհետացել են ծխախոտներս: Դեռ Երևանից գնած տասը տուփից պետք է որ մնացած լինեին առնվազն երկուսը, բայց դրանք չկային: Ուղտի գործերն էին, ինչ խոսք:

Յոշկար Օլա–Ուլյանովսկ՝ երեք հարյուր քսան կիլոմետր և չորս ժամ քսան րոպե՝ ցույց տվեց նավիգատորը: Նոր էի դուրս եկել մայրուղի, երբ զանգահարեց Փղիկը: Տեսնելով նրա անունը հեռախոսիս էկրանին, ես, ճիշտն ասած, ուրախացա՝ մտածելով, որ նորություն կասի Մշկոյի տեղաշարժից: Բայց խնդիրն այլ էր:

— Նա նոր ընկերուհի՞ ունի,— հացրեց Սիրուշը,— խնդրում եմ ճիշտն ասա:

Ես անակնկալի եկա ու փորձեցի հասկանալ, թե արդյո՞ք նա ինչ–որ բան գիտի:

— Ինչի՞ց ենթադրեցիր,— հարցին պատասխանեցի հարցով:

Բարեբախտաբար ոչ մի լուրջ բան չկար:

— Պարզապես սիրտս է վկայում,— թախծոտ ձայնով ասաց նա, հետո մի պահ մտածեց և ավելի աշխույժ շարունակեց,— եթե իմանամ, որ աղջկա հետ է՝ կարգելափակվեմ քարտս: Հոգնել եմ արդեն:

Այստեղ ես անհանգստացա և քանի որ չգիտեի ինչ ասել՝ պարզապես ասացի:

— Սրտերը երբեմն սխալ են վկայում:

— Ես հույս ունեի, որ նա գնացել է Յոշկար Օլա, բայց հետո տեսա, որ այն իսկապես Ռուսաստանում է և ոչ Ղազախստանում ու քանի որ դու ասում ես, որ նա երբեք չի ծառայել…

— Մի րոպե,— ընդհատեցի նրան ես,— այն որ Յոշկար Օլան Ռուսաստանում չէ, և որ նա չի ծառայել բանակում, դեռ չի նշանակում, որ նա նոր ընկերուհի ունի:

— Այդ դեպքում ի՞նչ է անում այդտեղ և ո՞ւմ հետ է:

— Հենց դա էլ փորձում եմ ես պարզել, բայց դրա համար նախ պետք է գտնել նրան: Իդեպ, դու նոր հաղորդագրություն չե՞ս ստացել:

— Ոչ:

— Խնդրում եմ տեղյակ պահիր, երբ ստանաս, ինչպես առաջ: Միայն այդ դեպքում ես կարող եմ գտնել նրան:

— Չգիտեմ, ամեն դեպքում սիրտս վկայում է, որ…

Ես կրկին ընդհատեցի նրան:

— Սպասիր ևս մի քանի օր և խոստանում եմ, որ ես նրան ողջ–առողջ ու առանց որևէ ընկերուհու կհասցնեմ Երևան:

— Խոստանո՞ւմ ես,— կրկնեց նա:

— Խոստանում եմ,— վստահեցրի ես:

Ու բոլորովին էլ չէի խաբում, որովհետև շատ լավ հասկանում էի, որ ավելի շատ ինքս ինձ եմ խոստանում գտնել այդ սրիկային:

Նոստալգիայի օր Լենինի ծննդավայրում

Երբ գրում էի իմ նախորդ գիրքը, ուր ստիպված էի ժամանակ առ ժամանակ անդրադառնալ Վլադիմիր Իլյիչ Լենինին, որովհետև գրքի հերոսները փնտրում էին նրա ոսկյա կիսանդրին, մտքովս անգամ չէր անցնի, որ որոշ ժամանակ անց գրելու եմ նաև այն քաղաքի մասին, ուր ծնվել է Իլյիչը: Ինչո՞ւ է ծնվել, արժե՞ր որ ծնվեր, նրա ծնունդը ավելի շատ վնա՞ս, թե՞ օգուտ տվեց իր հայրենիքին և ողջ աշխարհին՝ հետաքրքիր հարցեր են, բայց արժե՞ արդյոք դրանց անդրադառնալ այս գրքում: Հավանաբար՝ այո՛, որովհետև հենց այստեղից՝ նախկին Սիմբիրսկից, իսկ հիմա՝ Ուլյանովսկ կոչվող այս քաղաքից է սկսվել այն շրջադարձը, որը քսաներորդ դարը վերածեց աշխարհի ծայրահեղ բևեռացման, իրական և անիրական արժեքների անիմաստ բախման, մարդկության զարգացմանը խոչընդոտման ժամանակաշրջանի, ինչի հետևանքներն, ավա՜ղ, առկա են մինչև օրս: Ինչ խոսք, չծնվեր Ուլյանովն այստեղ՝ Ուլյանովսկում, կծնվեր ինչ որ Իվանով Իվանովոյում, ինչպես՝ չլիներ Ալեքսանդր Մակեդոնացին՝ կլիներ մեկ այլ Կոնստանդին Մակեդոնացի, կամ՝ չլիներ Չինգիզ խանը կլիներ մեկ այլ Բայար խան, ովքեր իրենց ժամանակին իրենց ծնվելով լրջորեն կազդեին աշխարհի ու մարդկության զարգացման վրա՝ դրականորեն կամ բացասականորեն:

Մարդկությունն, անշուշտ, ժամանակի ընթացքում ուղղում է անձերի գործած սխալները, միայն թե այդ ժամանակը չափազանց թանկ է նստում մարդկության վրա: Ժողովուրդներն իրենք նույնպես ուղղում են իրենց անհաջող առաջնորդների թույլ տված սխալները, բայց որքա՜ն տառապանքների և ողբերգությունների գնով: Իսկ ամենակարևորը՝ աղավաղվում են արժեքները: Մարքսի ուսմունքները, որոնք Իլյիչը իբր փորձեց կյանքի

կոչել, որքան էլ որ ուտոպիստական՝ չէ՞ որ իսկապես լավն են, եթե մնան ընդամենը ուսմունքներ, համենայնդեպս այնքան ժամանակ, քանի դեռ մարդկությունը պատրաստ չէ դրանք կյանքի կոչելու: Ի՞նչ սոցիալական հավասարության մասին կարող է խոսք լինել, եթե ժողովրդի մեծամասնությունը ծակ կոշիկներով է ու կիսաքաղց: Նա ընդամենը պիտի մտածի իր կոշիկները փոխելու և օրվա հաց ունենալու մասին: Իսկ եթե ոչ, ապա բոլորը թող լինեն ծակ կոշիկներով ու կիսաքաղց: Սրան է հանգեցնու սոցիալական հավասարությանն ուղված պայքարը, եթե այն ժամանակից շուտ է և իրականացվում է իլյիչների կողմից: Վկան խորհրդային իշխանության յոթանասուն տարիները, որոնց ընթացքում տասնյակ ժողովուրդներ տեսան ամեն ինչ, բացի սոցիալական հավասարությունից ու արդարությունից: Եվս ութ արևելաեվրոպական երկրներ առնվազն կես դար հետ ընկան իրենց բնականոն զարգացումից: Իսկ առաջադեմ զարգացման ծրագրեր ունեցող պետությունները ստիպված եղան իրենց ռեսուրսների մի ահռելի մասն ուղղել աշխահի այն հատվածի դեմ, որը կարող էր խոչընդոտել առողջ զարգացման իրենց այդ ծրագրերը:

Ահա այն մարդու թողած ժառանգությունը, ում ծննդավայրը, սակայն, պիտի խոստովանեմ, ինձ դուր եկավ բոլոր այն ռուսական քաղաքներից առավել, ուր հասցրել էի լինել այս ճամփորդության ընթացքում:

— Իսկ չե՞ք ուզում այցելել այն տունը, ուր ծնվել է Վլադիմիր Իլյիչը,— հարցրեց «Վենեց» հյուրանոցի պորտյեն, ում ես հարցրել էի, թե ի՞նչ հետաքրքիր բաներ կան Ուլյանովսկում:

Բայց ես բացատրեցի, որ հետաքրքիր բաներ ասելով բոլորովին այլ բաներ նկատի ունեմ:

— Հասկանալի է,— ժպտաց նա,— դա շատ հեշտ է կազմակերպել. հավատացնում եմ Ձեզ՝ Ուլյանովսկի աղջիկներն ամենասիրունն են:

— Հրաշալի է,— բայց առայժմ ինձ ասեք, թե որտեղ կարող եմ լավ ձուկ համտեսել:

— Հյուրանոցի առաջին հարկում գործում է «Վենեց» ռեստորանը, հյուրանոցի հետևի կողմում «Օբլոմով» ռեստորանը,



իսկ քսաներկուերորդ հարկում, անմիջապես տանիքին «Օլիմպ» բարն է, այնտեղից երևում է ամբողջ քաղաքը և Վոլգա գետը: Դուք կարող եք ընտրել դրանցից յուրաքանչյուրը, և ես աղջիկներին կուղարկեմ այնտեղ:

Ես շնորհակալություն հայտնեցի, խնդրեցի, որ աղջիկներին առայժմ չանհանգստացնի, վերցրի բանալին ու բարձրացա իմ համարը, որը գտնվում էր քսանմեկերորդ հարկում, ուղիղ «Օլիմպ» բարի տակ:

Ի դեպ, մոռացա ասել, թե ինչու էի ես հայտնվել հենց այս հյուրանոցում: Բանն այն է, որ քաղաքի կենտրոնում այն ամենաբարձր շենքն էր և անհնար էր չնկատել, իսկ երբ նկատեցի, մտածեցի, որ այլևս կարիք չկա ուրիշ տեղ փնտրել:

Մինչև ուլյանովսկյան գեղեցկուհիներ ինձ առաջարկելը պորտյեն ներկայացրել էր հյուրանոցի պատմությունը: Այն բացվել էր հազար ինն հարյուր յոթանասուն թվականին՝ Վլադիմիր Իլյիչ Լենինի հարյուրամյա հոբելյանի առթիվ և երկար ժամանակ եղել էր Ուլյանովսկի հպարտությունը: Միայն թե կառուցման պահից հետո հյուրանոցի քսաներկու հարկերից տասնյոթը՝ իրենց բոլոր համարներով, վերանորոգման չէին ենթարկվել և պահպանել էին նույն տեսքն, ինչ ունեցել էին շահագործման հանձնվելու պահին: Սենյակների կահույքը, մանրահատակն ու մի կերպ բացվող պատուհանները, բաղնիքի սալիկները ցնցուղն ու զուգարանակոնքը, անգամ եղջուրիկը՝ կոշիկ հագնելու համար նախատեսված մետաղական կիսաժանգոտած թիակը, մի խոսքով՝ ամեն ինչ այստեղ խորհրդային էր:

Այնուամենայնիվ, չգիտեմ ինչու ես չափազանց սիրեցի այս հյուրանոցը: Գուցե նոստալգիան էր պատճառը, գուցե պատուհանից բացվող տեսարանը, որտեղից երևում էր Վոլգա գետը կարծես ողջ երկայնքով՝ ակունքերից սկսած: Իսկ վերևում գտնվող «Օլիմպ» բարից հնչում էին Վիսոցկու երգերը:

Բարը զբաղեցնում էր հյուրանոցի գրեթե ողջ քառակուսի տանիքը և չորս կողմից ապակեպատ էր, այնպես որ այստեղից շատ ավելի լայն տեսարան էր բացվում, քան իմ սենյակից: Ժամանակին Երևանում էլ կար մի այսպիսի բար՝ հայտնի «Կուկուռուզնիկի»՝ Երիտասարդական պալատի տանիքին, որը

նաև պտտվում էր: Երիտասարդական պալատը չգիտես ինչու քանդեցին, ինչպես իմ երկրում քանդվեցին շատ այլ բաներ՝ առանց հիմնավոր բացատրության, հավանաբար ինչ–որ մարդկանց շահերի համար:

«Օլիմպ» բարը գրեթե դատարկ էր՝ զբաղված էին միայն երկու սեղաններ: Մեկի մոտ նստած էին տղամարդ ու կին և ապուր էին ուտում, իսկ մյուսի մոտ՝ կարճ զգեստով երկու աղջիկներ սուրճ էր խմում:

Երբ մատուցողուհին բերեց ճաշացանկը, ու ես սկսեցի ուսումնասիրել այն, ինձ մի պահ թվաց, թե հետս չար կատակ են անում: Այն ամենը, ինչ կար ճաշացանկում կարելի էր պատվիրել ընդամենը երեք հազար ռուբլով, այսինքն՝ մոտ հիսուն դոլարով: Սալաթներն արժեին, հիսունից հարյուր ռուբլի, տաք ճաշատեսակները՝ երկու հարյուրից երեք հարյուր, հիսուն գրամ օղին՝ երեսուն ռուբլի:

Ես պատվիրեցի ապխտած լեզու, «խոլոդեց», թթու վարունգ ու կաղամբ, չորս տեսակի սալաթ, գյուղական կարտոֆիլ ու լցոնած շուկա:

— Դուք էլի մ՚ոդ եք սպասում,— զարմացած հարցրեց մատուցողուհին:

— Ոչ, բայց այսօր հայտարարում եմ «Նոստալգիայի օր» և պատրաստ եմ հյուրասիրել բոլոր նրանց, ովքեր որ կուզենան խմել հետս:

— Իսկ ի՚նչի կապակցությամբ է «Նոստալգիայի օրը»:

— Խորհրդային ժամանակների:

— Պրիկոլնո,— ասաց նա,— միայն թե Դուք խմիչք չեք պատվիրել…

Մատուցողուհին հումորով աղջիկ էր: Նա հեռացավ ու քիչ անց վերադարձավ՝ ձեռքին մի ձեռագիր ցուցանակ՝ «Նոստալգիայի օր. օղի՝ առանց փողի» վերտառությամբ, փակցրեց այն գլխավերևումս՝ ապակու վրա, ապա կրկին գնաց, չգիտես որտեղից գտավ ու բերեց խորհրդային ժամանակաշրջանը խորհրդանշող տարատեսակ ատրիբուտներ ու շարեց դրանք սեղանին: Հետո նոր բերեց իմ պատվիրած ուտեստների մի մասը, մեծ գրաֆինով օղի և մի քանի բաժակ:

Նոր էի սկսել համտեսել «խոլոդեցը», երբ ներս մտավ մի տղամարդ՝ նիհարակազմ, բարձրահասակ, խոշոր օպտիկական ակնոցներով ու այծի դնչով: Կողքովս անցնելիս նա նկատեց ցուցանակը, մի քանի անգամ կարդաց ու զարմացած նայեց ինձ.

— Սա լո՞ւրջ է,— հարցրեց:

Պատասխանելու փոխարեն ես լցրեցի մի բաժակ: Բայց նա շարունակում էր կասկածել. պտտվեց, նայեց շուրջը, կարծես վախենում էր, որ իրեն նկարում են թաքնված տեսախցիկով, հետո նկատեց մատուցողուհուն, ով քիչ այն կողմ կանգնած ծիծաղում էր և նույն հարցը տվեց նրան:

— Ամեն ինչ ճիշտ է,— հաստատեց մատուցողուհին:

Բայց այծը շարունակում էր երկմտել: Այդ պահին դարձյալ բացվեց մուտքի դուռը, և հայտնվեցին երկու ուրիշ տղամարդ: Դատելով նրանց ահռելի փորերից՝ եկել էին գարեջուր խմելու, սակայն տեսնելով ցուցանակը և իմ սեղանին շարված օղու բաժակները, նրանք ևս կանգ առան ու նայեցին իրար:

— Այստեղ կոմունի՞զմ է,— հարցրեց նրանցից մեկը:

— Մոտավորապես,— պատասխանեցի ես՝ լցնելով նրանց բաժակները ևս:

Ի տարբերություն այծի՝ այս երկու ցմփորները մի վայրկյան անգամ չտատանվեցին ու ոտքի վրա կուլ տվեցին օղին:

— Մենք կարո՞ղ ենք վերադառնալ,— հարցրեց նրանցից մեկը:

— Դուք կարող եք մնալ:

Ցմփորները հանեցին բաճկոնները և հարմար տեղավորվեցին փափուկ նստատեղերին՝ իրենց փորերին հարմարեցնելով սեղանը: Մինչդեռ այծը շարունակեց մնալ կանգնած, վախվորած վերցրեց գրաֆինը և սկսեց հոտ քաշել: Հետո, համոզվելով, որ այնտեղ օղի է՝ տարակուսանքով դիմեց ինձ.

— Իսկ Դուք ինչո՞ւ եք որոշել բոլորին հյուրասիրել:

Բայց ես չհասցրի պատասխանել, որովհետև ցմփորներից մեկը նրա ձեռքից վերցրեց գրաֆինը և ասաց.

— Լսիր, մուժիկ, չես ուզում, մի խմի:

Հետո մինչև պռունկները լցրեց մեր բաժակները և հայտարարեց.

— Սովետական Միության կենացը:

Այստեղ մեր սեղանին մոտեցավ տղամարդը, որ այստեղ էր կնոջ հետ, կարդաց ցուցանակը և ասաց.

— Ես եղել եմ Կույբիշևի երկաթուղային տրանսպորտի ինժեներների ինստիտուտի կոմսոմոլի քարտուղարը:

Կարծես ուզում էր ճշտել՝ արդյո՞ք դա իրեն իրավունք է տալիս միանալ մեր միջոցառմանը:

— Ձեր ինստիտուտը պատրաստել է Սովետական Միության լավագույն երկաթուղային տրանսպորտի ինժեներներին,— ասացի ես ու լցրեցի նրա բաժակը, չնայած առաջին անգամ էի լսում Կույբիշևի այդ բարձրագույն ուսումնական հաստատության մասին:

— Շնորհակալ եմ,— հուզվեց նախկին կոմսոմոլի քարտուղարը ու ձայն տվեց կնոջը,— Վարվարա Միխայլովնա, եկեք այստեղ:

Վարվարա Միխայլովնան պարզվեց կազմ ու պատրաստ սպասում էր այդ հրավերին: Նա լայն ժպիտով մոտեցավ մեր սեղանին, իր խոշոր հետույքով մի կողմ հրեց այծին ու նստեց իմ կողքը:

— Ի՞նչ հաճելի գաղափար է,— ասաց նա ու ամուսնու ձեռքից վերցրեց բաժակը, քանի որ ուրիշ բաժակ չկար:

Սակայն դա միակ խնդիրը չէր. սեղանը նախատեսված էր չորս հոգու համար և նստելու տեղ այլևս չկար, մինչդեռ նրա ամուսինը և այծը մնացել էին ոտքի վրա:

Դա իհարկե լուծելի խնդիր էր. ցմփորները մեկ այլ սեղան միացրին, մատուցողուհին բերեց նոր բաժակներ ու նոր գրաֆինով օղի, և դա արվեց ճիշտ ժամանակին, որովհետև սրահ մտան նոր հաճախորդներ:

Երրոդ սեղանը միացվեց և երրորդ գրաֆինը բերվեց կես ժամից, չորրորդը՝ մեկ ժամից և այդպես, նույն հաճախականությամբ, մինչև կեսգիշեր: «Նա խալյավու» խմելուց ոչ ոք չհրաժարվեց: Վերջիվերջո, համոզվեց նաև այծը, և մեզ միացան կարճ շրջազգեստով երկու աղջիկները, ովքեր երևի հասկացան, որ այդ երեկո իրենց բոլոր պոտենցիալ հաճախորդներն այստեղ են լինելու: Խորհրդային Միության և դրա հետ ասոցացվող

ամեն ինչի կենացը խմվեց առնվազն տասն անգամ, նույնքան անգամ հայ ժողովրդի կենացը, նույնքան անգամ հայ և ռուս ժողովուրդների բարեկամության կենացը:

Այն մասին, թե ինչպես ես սամովար գնեցի

Առավոտյան արթնացա դռան թակոցից: Մտածեցի հավաքարարն է և ձայն տվեցի՝ ասելով, որ հետո գա: Բայց թակոցները շարունակվեցին, և ստիպված էի վեր կենալ:

— Գլուխդ չի՞ ցավում,— հարցրեց սենյակիս դռան հետևում կանգնած մի տղամարդ:

Նրա դեմքը չափազանց ծանոթ էր, հավանաբար նախորդ օրվա միջոցառման մասնակիցներից էր:

— Ժամը քանի՞սն է,— հարցրի:

— Ութը,— պատասխանեց տղամարդը,— ներքևի ռեստորանն արդեն բացվել է:

— Իսկ վերևի՞նը:

— Վերևինը դեռ ոչ:

— Այդ դեպքում, կներեք, իմ գլխացավը բուժվում է միայն բարձր տեղերում:

— Իսկ գուցե...— նա ուզում էր ինչ-որ բան առաջարկել, բայց ես փակեցի դուռը:

Հիմարին թվացել էր, որ ոչ միայն կարող է իմ հաշվին խմել երեկոյան, այլև բուժել գլխացավն՝ առավոտյան: Տեսնես միջոցառման մասնակիցներից քանի՞սն էին սրա խելքին: Իդեպ, պետք էր նայել, թե որքա՞ն փող էի ծախսել «Նոստալգիայի օրը» նշելիս: Հանեցի դրամապանակս ու հաշվեցի փողերս: Հստակ հիշում էի, որ նախորդ օրը, մանրել էի երեք հարյուր դոլար, այսինքն մինչ «Օլիմպ» ռեստորան գնալս ունեի տասնութ հազար ռուբլի: Դրամապանակումս կար տասներկու հազար: Դե ի՞նչ, այնքան էլ վատ բան չէ նոստալգիան:

Նորից քնեցի ու քիչ անց նորից թակեցին դուռս: Այս անգամ ցմփորներն էին:

— Գարեջուր չխմե՞նք,— հարցրեց նրանցից մեկը,— մենք հյուրասիրում ենք:

Սրանց ծրագիրն էլ պարզ էր. գուցեև հյուրասիրեին մի քանի շիշ գարեջուր՝ վստահ, որ հետո կանցնենք օղու, և արդեն հյուրասիրողը կլինեմ ես:

Ամեն դեպքում ցմփորներին նույնպես մերժեցի ու կրկին քնեցի: Բայց դուռս կրկին թակեցին: Ամուսիններն էին:

— Մենք իջնում ենք «Օբլոմով» ռեստորան՝ ճաշելու: Կմիանա՞ք մեզ,— առաջարկեց տիկինը:

— Եվ, իհարկե, մի գրաֆին խմելու,— հավելեց ամուսինը:

Հանուն ճշմարտության պիտի ասեմ, որ իմ օրգանիզմը նույնպես դեմ չէր հարյուր գրամ խմելուն, բայց դա հոլի էր որոշակի վտանգներով: Ինչպես ասում էր Մշկոն՝ անզգույշ «պոխմելյան» հանգեցնում է երկարատև «զապոյի»: Այնպես որ՝ստիպված էի մերժել ամուսիններին ևս:

Ի դեպ, ի՞նչ կար Մշկոյից:

Իսկ Մշկոն, պարզվեց, Չեբոկսարիում էր: Այդ մասին ես իմացա Նաստյայի ֆեյսբուքյան էջից, ուր տեղադրված էր մի լուսանկար, որի տակ գրված էր. «Երկու Չապաև և ոչ մի Անկա»: Լուսանկարում կարմիր բանակի լեգենդար հրամանատար Չապաևն էր՝ ձիու վրա և Մշկոյանը՝ առանց ձիու: Անկան և Նաստյան իսկապես չկային:

Որեմն իմ հաշվարկները ճիշտ էին: Փախստականները Յոշկար Օլայից ուղևորվել էին Չեբոկսարի:

Սակայն կար մի խնդիր. լուսանկարը նախորդ օրվա էր: «Օլիմպում», փաստորեն, այնպես էի տարվել նոստալգիայով, որ անգամ չէի բացել ֆեյսբուքը:

Ժամը տասն էր: Ամենայն հավանականությամբ փախստականները արդեն պետք է լքած լինեին Չապաևի հայրենիքը:

Ես նայեցի քարտեզը: Վոլգայի ափին հաջորդ քաղաքը Կազանն էր, հետո նոր Ուլյանովսկը: Եթե անգամ նրանք որոշեին շրջանցել Կազանը, Ուլյանովսկ կհասնեին երեք ժամից ոչ շուտ: Ընդունենք, որ նրանք շարժվել էին յոթին: Դեռ կարելի էր հասցնել: Այսինքն՝ գնալ ու սպասել նրանց քաղաքի մուտքի մոտ:



Ես հապճեպ հավաքեցի իրերս, նույնիսկ չհանձնեցի սենյակս, վազեցի դեպի մեքենան ու սլացա քաղաքից դուրս տանող ճանապարհով՝ հետևելով դիմացից եկող մեքենաներին:

Երբ հասա Ուլյանովսկի ցուցանակին, շրջադարձ արեցի ու կանգնեցի: Կսպասեմ այնքան մինչև նրանք հայտնվեն, կամ որևէ ազդակ ստանամ Նաստյայից կամ Փղիկից՝ որոշեցի: Ազդակը բարեբախտաբար շատ չուշացավ: Սպասեցի ընդամենը երեք ժամ, կամ գուցե՝ չորս, բայց ոչ ավելի, քան՝ հինգ: Սարսափելի քաղցած էի, իսկ որ գլխավորն է՝ ծարավ: Բայց ինքս ինձ խոստացել էի՝ ոչ մի դեպքում չլքել դիրքս:

Ու անհնար է պատկերացնել, թե որքան ուրախացա, երբ զանգեց հեռախոսս, ու էկրանին տեսա Փղիկի անունը:

— Ի՞նչ լուր ունես,— հարցրի առանց բարևելու:

— Մշկոյանը Կազանում է, նա հենց նոր վճարում արեց ինչ որ հյուրանոցում:

Դե ինչ, կարելի էր հանգիստ լքել դիրքս: Եթե նրանք Կազանում էին, առավել ևս, եթե հյուրանոց էին վերցրել, ապա այդ օրը հաստատ չէին գա:

Վերադարձա քաղաք ու մի տեղ ճաշեցի: Հետո ուզում էի գնալ հյուրանոց և քնել, բայց Երևանից զանգեց ընկերս: Խնդրեց իր համար ինքնաեռ գնել:

— Բայց՝ որ սիրուն լինի. շատ սիրուն: Իսկական ռուսական «սամովար»:

Խոստացա գտնել: Նախ սկսեցի շրջել տնտեսական ապրանքների խանութներով: Ոչ մի տեղ ինքնաեռ չկար: Հետո գնացի հանրախանութ. դարձյալ անարդյունք: Ինչ–որ մեկն ինձ խորհուրդ տվեց նայել հուշանվերների խանութներում: Լավ միտք էր: Գնացի քաղաքի կենտրոն, կայանեցի մեքենան մի տեղ ու սկսեցի հերթով մտնել հուշանվերների խանութները: Այստեղ ինքնաեռներ կային՝ տարբեր չափերի, ոճերի ու գույների: Բայց դրանք շատ թանկ էին: Ամենաէժանն արժեր քսան հազար ռուբլի: Արդեն ուզում էի զանգահարել ընկերոջս և ասել, որ Ռուսաստանում դադարել են «սամովարներ» արտադրել և ընդհանրապես՝ թեյ խմել, երբ գլխումս մի միտք ծագեց: Կարելի էր փնտրել համացանցում՝ հայտարարությունների կայքերում:

Բարեբախտաբար այստեղ կային բազմաթիվ տարբերակներ, և գներն անհամեմատ ավելի ցածր էին: Զանգահարեցի մի քանի տեղ ու կանգ առա հին, բայց չօգտագործված մի ինքնաեռի վրա, որն արժեր ընդամենը չորս հազար ռուբլի:

— Այն մեզ նվիրել էին մեր հարսանիքին, բայց մենք ոչ մի անգամ չենք օգտագործել,— ասաց տղամարդու մի խռպոտ ձայն,— տուփի մեջ է, չբացված, կա նույնիսկ անձնագիրը:

Ես սակարկեցի ևս հազար ռուբլի ու խնդրեցի տալ հասցեն: Պարզվեց խռպոտ ձայնով մարդն ապրում էր Ուլյանովսկից դուրս՝ ինչ որ Զարյա գյուղում, կամ Նոր Զարյա կամ Կարմիր Զարյա, հիմա ճիշտ չեմ հիշում:

— Այն շատ մոտ է Ուլյանովսկին, ընդամենը քսանհինգ կիլոմետր,— հուսադրեց ինձ խռպոտ ձայնով մարդը, ում անունը Ալեքսեյ էր:

Եվ պետք է ասել, որ դույզն–իսկ չէր չափազանցրել. Ուլյանովսկից մինչև այդ գյուղը իսկապես քսանհինգ կիլոմետր էր: Միայն թե այդ քսանհինգ կիլոմետրից միայն տասնհինգն էր անցնում մայրուղով, իսկ մնացած տասը…

Ինչևէ, ես երկրորդ անգամ այդ օրը դուրս եկա Ուլյանովսկից, անցա նույն այն տեղի մոտով, ուր սպասել էի մի քանի ժամ և ուր նորից պիտի վերադառնայի հաջորդ առավոտյան, որպեսզի բռնացնեմ Մշկոյանին, հետո գնացի ևս տասնհինգ կիլոմետր, և նավիգատորը ցույց տվեց, որ պետք է թեքվեմ աջ: Այստեղից սկսվեց մի ճանապարհ, որպիսին ես չէի տեսել նույնիսկ Յոշկար Օլայում: Ավելի ճիշտ, ճանապարհ, որպես այդպիսին, չկար, կար տրակտորի կամ բեռնատարի անիվների թողած մի հետագիծ, որը տեղ–տեղ մտնում էր ահռելի ջրափոսերը, իսկ տեղ–տեղ՝ դեռ չհերկված արտերը: Եթե «Սիքսթ» ընկերությունում իմանային, թե ինչ կտտանքների եմ ենթարկել իրենց շքեղ «Մերսեդեսն» իմ այս ճամփորդության ընթացքում, վստահ եմ՝ ինձ այլևս երբեք մեքենա չէին տա:

Նոր կամ Կարմիր Զարյա գյուղում առաջինն ինձ դիմավորեցին մի քանի սպիտակ սագեր, որոնք սակայն ոչ մի տեղեկություն չտվեցին, թե որտե՞ղ է Ալեքսեյի տունը: Ստիպված էի զանգել նրան:

— Կենտրոնական փողոցով արի այնքան, մինչև կհասնես խանութին, այնուհետև թեքվիր աջ և արի այնքան, մինչև կտեսնես կապույտ տրակտորը: Մենք դրսում ենք:

Ես չհարցրի, թե ովքե՞ր են «մենքը», բայց հետևեցի ուղղորդմանը և բավական ժամանակ գնացի կենտրոնական փողոցով, ոչ թե որովհետև այն երկար էր, այլ այստեղ նույնպես ճանապարհ չկար: Հետքաքրքիր է, եթե կենտրոնական փողոցն էր այս վիճակում, ապա ի՞նչ վիճակում էին մյուս փողոցները:

Հատուկենտ գյուղացիները, որ այդ պահին դրսում էին, այնպիսի զարմանքով էին նայում իմ մեքենային, կարծես այն ոչ թե «Մերսեդես» էր, այլ՝ «Սոյուզ» տիեզերանավը, որն ավարտել էր իր առաքելությունը տիեզերքում և հայտնվել իրենց գյուղում: Բայց նրանց զարմանքը կարելի էր հասկանալ: Հավանաբար լավագույն մեքենան, որ եղել էր այստեղ, «Մոսկվիչ 412»–ն էր, որի կմախքն ահա ընկած էր խրճիթներից մեկի առջև:

Երբ վերջապես հասա խանութին ու թեքվեցի աջ, քիչ այն կողմ տեսա կապույտ տրակտորը: Այն կանգնած էր կապույտ խրճիթի առջև, որի դռան մոտ, կապույտ նստարանին նստած էին մի քանի կանայք: Երբ իջա մեքենայից, նրանք, կարծես ինչ–որ մեկի հրահանգով, միահամուռ ոտքի ելան, բարևեցին ինձ ու ցրվեցին տարբեր ուղղություններով: Ես զարմացած նայեցի նրանց հետևից, բայց չհասկացա, թե ի՞նչ տեղի ունեցավ, որովհետև այդ պահին տրակտորի տակից հառնեց Ալեքսեյը՝ հաղթանդամ, շեկ բեղմորուքով մի տղամարդ, մոտեցավ ինձ ու մեկնեց յուղից սևացած ձեռքը:

— Գնաք ներս, կինս սեղան է դրել:

Ճիշտն ասած որոշել էի մի երկու քաղցր խոսք ասել այս մարդուն՝ ինձ այստեղ հասցնելու ու մեքենայիս հերն անիծելու համար, բայց նա չափից ավելի բարի աչքեր ուներ: Ու ես բավարարվեցի ասելով.

— Տվեք ինքնաեռս, ես գնամ:

Բայց տրակտորիստը չհամաձայնեց.

— Այդպես չի լինի. չփորձարկե՞նք մի հատ:

Իսկապես, պետք էր համոզվել, որ ինքնաեռն աշխատող է, այլապես ինչի նման կլիներ, եթե այսքանից հետո հասցնեի Երևան, ու պարզվեր, որ անսարք է:

Ես սպասեցի, մինչ Ալեքսեյը հավաքեց գործիքները, հետո լվաց ահռելի թաթերը տան պատին մեխած լվացարանում, որի տակը՝ տաբուրետի վրա տաշտակ էր դրված: Նման բան մեկ էլ տեսել էի հարյուր տարի առաջ, գյուղում: Հիշում եմ, ով վերջինն էր լվացվում, պիտի դույլով ջուր բերեր–լցներ: Ու միշտ ստացվում էր այնպես, որ ես վերջինն էի լինում:

Տունն, ուր ապրում էր տրակտորիստը, իսկական ռուսական փայտաշեն խրճիթ էր՝ կավե վառարանով, ծաղկավոր վարագույրներով և թթու դրած կաղամբի հոտով: Հենց այդ կաղամբն էլ դրված էր սեղանին՝ նոր թխած կարկանդակների, ապխտած ձկների և հինգլիտրանոց ահռելի շշով «սամոգոնի» հարևանությամբ:

«Այս ի՞նչ եք անում»՝ քիչ էր մնում բացականչեի: Բայց փոխարենը ասացի.

— Իսկ որտե՞ղ է ինքնաեռը:

Արձագանքեց տիկինը, որը պարզվեց տան առջև նստած կանանցից մեկն էր. նա՝ ամբողջովին զուգված, դուրս եկավ ննջասենյակից, և ասաց.

— Ինքնաեռը չի փախչի, համեցեք սեղանի մոտ:

Ես դիմեցի ավելի շատ նրան, քան Ալեքսեյին:

— Հասկանու՞մ եք, դժվար է դիմանալ Ձեր այս փառահեղ նատյուրմորտի գայթակղությանը: Եթե ես նստեմ՝ պիտի խմեմ, իսկ եթե խմեմ՝ ոչ մի կերպ չեմ բավարարվի երկու կամ երեք բաժակով, իսկ եթե…

— Ի սեր Աստծո,— ընդհատեց ինձ տիկինը,— խմեք թեկուզ ամբողջը:

— Բայց այդ դեպքում չեմ կարող մեքենա վարել:

Այստեղ միջամտեց տանտերը.

— Կողքի տունը աներձագիս տունն է, կարող ես մնալ այնտեղ: Աներձագս արդեն հինգ տարի է՝ այստեղ չէ: Գնացել է Բայկանուր:

— Եվ ի՞նչ է անում Բայկանուրում,— հարցրի ես՝ ավելի շատ ժամանակ ձգելու համար, որպեսզի կարողանամ կողմնորոշվել:

— Ի՞նչ պիտի անի. տրակտորիստ է:

Թե ի՞նչ գործ ունի տրակտորիստը Բայկանուրի տիեզերակայանում, որն ի դեպ գտնվում է Ղազախստանում, ես այդպես էլ չիմացա, ինչպես նաև չասացի, որ մոտավորապես մի այդպիսի աներձագ էլ ես ունեմ, որը սակայն ոչ թե տիեզերակայանում է, այլ ընդհանրապես թռել է տիեզերք, որովհետև այդ պահին ներս մտան երեք կին և մի տղամարդ: Կանայք, չգիտեմ ինչու ինձ թվաց, թե կթվորուհիներ են: Նույն նրանք էին, ովքեր իմ ժամանելու պահին տանտիրուհու հետ նստած էին կապույտ տան առջևի կապույտ նստարանին: Նրանց բոլորի շուրթերին հիմա փայլում էր ալ կարմիր շրթներկը, իսկ ուսերին ծաղկավոր շալեր էին: Իսկ տղամարդը, ում վզից կախված էր փողկապ հիշեցնող ինչ որ բան, ինձ թվաց ժամանակին եղել է կոլխոզի նախագահը: Բայց, որ գլխավորն է, նա ձեռքին բռնել էր նախշազարդ մի հարմոն:

Այս նոր գայթակղություններին, անկեղծորեն պիտի ասեմ, դիմանալ չէի կարող:

Կթվորուհիները սիրունիկ էին, համենայնդեպս նրանցից երկուսը: Միայն թե նրանց գեղջկական պարզ գեղեցկությունն աղավաղում էր անշնորհք շպարը, որն հավանաբար արել էին շատ հապճեպ: Երրորդը՝ կրկնակի կզակով ու ահռելի կրծքերով մի նատաշա, կարծում եմ, Կարմիր կամ Նոր Զարյա գյուղի կթվորուհիների ընկերակցության նախագահն էր կամ բրիգադիրը:

Հիմա ճիշտ չեմ հիշում՝ ժամը քանիսն էր, երբ ավարտվեց հինգլիտրանոց 22ի պարունակությունը, չեմ հիշում՝ փորձարկեցի՞նք ինքնաեռը, էլի շատ բաներ չեմ հիշում, բայց հստակ հիշում եմ, որ Ալեքսեյի աներձագի խրճիթ ինձ ուղեկցեց հենց բրիգադիրը:

Ո՞ւր է ուղղված հայրենիքի կարոտը

Ուլյանովսկ–Սարատով՝ չորս հարյուր վաթսուն կիլոմետր և վեց ժամ… Ես հատուկ ընտրել էի այն ճանապարհը, որը, գրեթե ողջ երկայնքով, անցնում էր գետի կողքով:

Ռուսական «Պովոլժիեն» աստիճանաբար թոթափում էր ձմեռն իր ծուռ ու երկար ափերից, իսկ գետի սառույցները կարծես հալվում էին աչքի առջև: Վոլգան կերպարանափոխվում էր, ձուլվում շրջակա անտառներին ու մարգագետիններին և չքնաղ այդ տեսարանն անընդհատ ուղեկցում էր ինձ:

Ես բախտ եմ ունեցել ճամփորդել շատ գետերի հովիտներով՝ Դանուբի, Հռենոսի ու Սենայի, Վիսլայի, Օդրի ու Դնեպրի, Միսիսիպիի, Ռիո Գրանդեի ու Կոլորադոյի, ու պիտի խոստովանեմ, որ Վոլգայի հովիտն իր անտարբեր հանգստությամբ թերևս ամենագրավիչն է:

Ու երբեք չեմ ճամփորդել իմ հայրենիքի Մայր Արաքսի ափերով…

Բայց մինչ հայրենիքիս կարոտին տրվելը, պատմեմ, թե ինչպես եղավ, որ հերթական անգամ բաց թողեցի Մշկոյին բռնացնելու հնարավորությունը:

Հավանաբար ավելորդ է ասել, որ տրակտորիստ Ալեքսեյի հինգլիտրանոց 22ով սամագոնը խմելուց հետո անհնար է արթնանալ ոչ առավոտ շուտ, ոչ էլ կեսօրին: Կեսօրից քիչ ուշ հնարավոր է, եթե զանգահարում է Փղիկը: Զանգահարում է և ասում, որ արդեն մեկ օր է՝ ոչ մի լուր չունի «փեսացուից»:

Նովայա կամ Կարմիր Զարյայից ինձ ճանապարհեցին նախորդ օրվա խնջույքի բոլոր մասնակիցները: Բրիգադիր Նատաշան խնդրում էր մնալ ևս մի քանի օր, իսկ Ալեքսեյն ինձ առաջարկում էր ընդհանրապես ապրել իրենց գյուղում՝ խոստանալով իմ տրամադրության տակ թողնել աներձագի խրճիթը և տալ մի տրակտոր:

Բայց ես այլ առաքելություն ունեի Ռուսաստանում:

Իսկ թե ինչո՞ւ ճամփա ընկա հենց Սարատով, ստիպված պիտի լինեմ մի քիչ երկար բացատրել: Բանն այն է, որ Կազանից, ուր, ըստ Փղիկի, վերջին անգամ Մշկոն կենդանության նշան էր ցույց տվել, այսինքն՝ փող ծախսել, մինչև Սարատով, Վոլգայի ափին կա առնվազն երեք քաղաք, որոնք արժե տեսնել: Դրանք են Ուլյանովսկը, Սամարան և Սիզրանը: Չորրորդը՝ Տոլյատին, հայտնի է միայն իր ավտոգործարանով, որտեղ խորհրդային տարիներին արտադրվում էին «Ժիգուլի» մեքենաները, և ուրիշ հետաքրքիր բան այստեղ, կարծեմ, չկա: Մինչդեռ մնացած երեք քաղաքը հարուստ պատմություն ու հրաշալի տեսարժան վայրեր ունեն: Եթե Մշկոյանը մենակ լիներ, նրան, բնականաբար, այդ հարուստ պատմությունն ու տեսարժան վայրերը չէին հետաքրքրի, մինչդեռ Նաստյան, ինչպես առիթ էի ունեցել համոզվելու այս պատմության ընթացքում, դրանց հանդեպ անտարբեր չէր: Միայն թե, այս քաղաքներից ո՞րը նրանք կմտնեին, որտե՞ղ որքան կմնային, որտե՞ղ կգիշերեին և որտե՞ղ՝ ոչ, դժվար էր պատկերացնելը: Բացի այդ, այս երեք քաղաքները, չնայած գետի ափին էին, բայց մի գծի վրա չէին ու կազմում էին մի յուրատեսակ եռանկյունի, մինչդեռ Կազան–Սարատով մայրուղին գնում էր ուղիղ՝ մտնելով Ուլյանովսկ ու Սիզրան, սակայն շրջանցելով Սամարան: Ու քանի որ ես ոչ մի լուր չունեի Մշկոյենցից ու չգիտեի վերոնշյալ քաղաքներից որտեղ կարող են լինել, որոշեցի առաջ անցնել ու մեկնել Սարատով, ուր վաղ թե ուշ պիտի հայտնվեին նրանք:

Իսկ հայրենիքի կարոտը ես չգիտեմ ինչ միջոցով է չափվում: Գիտակցությա՞մբ, թե՝ հոգով: Եվ ո՞րն է չափման միավորը: Հայրենիքը կարող է կարոտել հնգօրյա գործուղման մեկնած մեկը և մեկ ուրիշը՝ ով մեկնել է ընդմիշտ: Եվ բոլորովին պարտադիր չէ, որ վերջինի կարոտն ավելի մեծ լինի:

Ես նաև չգիտեմ, ուր է ուղղված այդ հայրենիքի կարոտը: Ընտանիքի՞ն, ընկերների՞ն, ժողովրդի՞ն, փողոցի՞ն, քաղաքի՞ն, երկրի՞ն: Գուցե այս ամենի ընդհանրությո՞ւնն է այն: Բայց չէ՞ որ այդ դեպքում գլենդեյլցի հայը, որ եկել է Հայաստան, կարող է նույնկերպ կարոտել Գլենդեյլում ապրող իր ընտանիքին, իր

ընկերներին, իր ժողովրդին, իր Ուիլսոն փողոցը, իր Գլենդեյլը, իր Ամերիկան:

Ի սեր Աստծո, թող կարոտեն. թող կարոտեն՝ ինչքան ուզում են, ինչը՝ ուզում են: Թող իրենք գտնեն չափման միավորն ու կարոտի առարկան: Միայն թե անկեղծ լինեն:

Դժվար է հավատալ այն մարդկանց, ովքեր հայկական անվանմամբ մի քաբաբանոց են բացել Մոսկվայում կամ Սարատովում, նույն փութաջանությամբ լավաշի մեջ են փաթաթում այդ քաբաբն ու հրամցնում հային ու ադրբեջանցուն, հետո երեկոյան հարևանի հետ խմում են հայրենիքի կենացն ու ասում, որ կարոտել են այն: Դժվար է հավատալ այն մարդկանց, ովքեր գնում են Ստամբուլից ապրանք բերելու Հայաստան ու վերադարձին՝ ավտոբուսի մեջ, միմյանց ասում են, որ կարոտել են հայրենիքը: Դժվար է հավատալ ասենք Գլենդեյլում կամ Միտիշիում ապրող այն մարդկանց, ովքեր առավոտից երեկո փորում են իրար տակ, նախանձում ու անիծում միմյանց, հետո երոկոյան զանգում են Երևանում կամ Աշտարակում ապրող բարեկամներին ու հուզվում՝ հայրենիքի կարոտից:

Իսկ ես կարոտել եմ Արաքս գետը, որի ափերով երբեք չեմ ճամփորդել:

Այստեղ Ռուսական Պովոլժիեում առավել հեշտ է հասկանալ, թե ինչո՞ւ են իմ հայրենակիցները այսքան սերտորեն կապված ռուս ազգին:

Ռուս ազգը, իհարկե, հրաշալի ազգ է, ինչպես աշխարհում բոլոր ազգերը՝ բացառությամբ մի քանիսից, և ընդհանրության մեջ՝ շատ ավելի հրաշալի ազգ է, քան շատ այլ ազգեր, բայց ռուս ազգը երբեք չի կարողանա ապրել իրապես ազատ ու արարել իրապես բարին և իմ ազգին էլ չի թողնի ապրել՝ իրապես ազատ ու արարել իրապես բարին, քանի դեռ իր մեջ վերջնականապես չի հաղթահարել ցարապաշտությունը ու վախը՝ հերթական ցարերի հանդեպ:

Ու ամենացավալին այն է, որ մենք՝ հայերս, ոչինչ չենք կարող անել, քանի դեռ կան այն մի քանի բացառություն ազգերը, որոնց դարավոր ծրագրերը դեռ ավարտին չեն հասել, ու մենք էլ սոսկալի խանգարում ենք այդ ծրագրերի իրագործմանը: Ու

ստիպված ենք համակերպվել այս ամենի հետ, ու ինքներս էլ վախենալ մեր ցարերից ու պաշտել նրանց:

Բայց միթե ելք չկա: Ելքը, իհարկե, շատերն են փնտրել, փնտրել են տարբեր ժամանակներում, երբեմն անգամ բարենպաստ ժամանակներում, բայց, դժբախտաբար, միշտ սխալվել են: Սխալվել են, որովհետև այդ ելքը փնտրել են ուրիշ տեղերում:

-

Այն մասին, թե ինչպես ես խմեցի գերեզմանատան պահակի հետ

Եթե մեկն ինձ տեսներ Սարատովի «Վոսկրեսենսկոյե» գերեզմանատանը մթնշաղին, ձեռքիս երկու կարմիր մեխակ՝ այս ու այն կողմ վազելիս, անտարակույս, կմտածեր՝ խելագարվել եմ: Բայց, վստահեցնում եմ, ինձ հետ ամեն ինչ կարգին էր:

Ո՛չ, ո՛չ, Մշկոյի հետ նույնպես ամեն ինչ կարգին էր, խնդիրն այլ էր:

Բանն այն է, որ դեռ ճանապարհին զանգահարել էր կինս և, իմանալով, որ ուղևորվում եմ Սարատով, խնդրել էր մի բան, որը չէի կարող չանել: Իսկ խնդրանքը հետևյալն էր. այցելել իր մոր պապի գերեզմանին, ով զոհվել էր Երկրորդ աշխարհամարտի ժամանակ և թաղված էր այստեղ՝ Սարատովի «Վոսկրեսենսկոյե» գերեզմանատանը:

Սարատով էի հասել երեկոյան յոթի կողմերը ու որոշել՝ առաջին գործով գնալ գերեզմանատուն, որովհետև հաջորդ օրը կարող էի ժամանակ չունենալ. ինչ իմանայի, թե ինչ կբերեր գլխիս Մշկոն: Նախ մեկ ժամ ծախսել էի գերեզմանատունը փնտրելիս, որովհետև հասցեն, որ տվել էր կինս, պարզվել էր՝ սխալ է: Հետո, երբ վերջապես գտել էի, պարզվել էր, որ դա դեռ գործի կեսն է, որովհետև պետք էր գտնել նաև հարգարժան ապուպապի գերեզմանաքարը:

— Անմիջապես մուտքի մոտ Չեռնիշևսկու արձանն է, այնտեղից քիչ հեռու՝ «Հայրենական մեծ պատերազմի» հերոսների արահետը,— տեղեկացրել էր կինս:

Ու հիմա՝ վախենալով, որ մութը կընկնի ու իմ փնտրտուքներն անիմաստ կդառնան, վազում էի այդ արահետով, որը թարսի պես շրջանաձև էր ու անընդհատ բերում հասցնում էր

Չեռնիշևսկուն: Վերջինս, ինչպես պիտի իմանայի հետո, եղել է ռուս հեղափոխական, ուտոպիստական սոցիալիզմի տեսաբան, ում աշխատություններից լայնորեն օգտվել է Վլադիմիր Լենինը: Խորհրդային գլխապտույտը շարունակվում էր բառի փոխաբերական և բուն իմաստով:

Հերթական պտույտի ժամանակ արդեն որոշել էի մեխակները դնել Չեռնիշևսկու արձանի տակ ու հեռանալ, երբ ինձ մոտեցավ ալեհեր մի մարդ՝ շան հետ: Շունը կաղ էր, ինքը՝ ձեռնափայտով: Պարզվեց՝ գերեզմանատան պահակն է: Փնտրտուքները շարունակեցինք երեքով ու քիչ անց, բարեբախտաբար, գտանք, ինչ փնտրում էինք:

Ես վիդեո զանգ արեցի կնոջս, հանդիսավոր տեղադրեցի ծաղիկները և մեկ րոպե լռությամբ հարգեցի լուսահոգի ապուպապի հիշատակը: Ինձ միացավ նաև պահակը, մինչդեռ շունն անամոթաբար հաչում էր...

Հետո, պարտքի կատարման լիակատար զգացումով հանգիստ վերադարձանք գերեզմանոցի մուտքի մոտ, որտեղ կայանել էի մեքենաս և որտեղ պահակի կացարանն էր:

— Համեցեք ներս,— ասաց ծերուկը,— ես լավ սամագոն ունեմ:

Սամագոնի անունը լսելով՝ ուզում էի նստել մեքենաս ու բառացիորեն փախչել, անգամ շնորհակալություն չհայտնելով պահակին՝ բայց այդ պահին զանգեց հեռախոս: Փղիկն էր:

— Մշկոյանն Ուլյանովսկում է,— հայտարարեց նա:

Ես կատաղությունից ուզում էի գետնին տալ հեռախոսը, բայց դա դեռ ամբողջը չէր.

— Նա տեղավորվել է ինչ որ «Վենեց» հյուրանոցում,— շարունակեց Փղիկը:

Հեռախոսն, այնուամենայնիվ, ափսոսացի: Փոխարենը հարցրի ծերուկին:

— Այդ ինչ սամագոնի մասին էիք ասում:

Եթե մեկն ինձ տեսներ Սարատովի «Վոսկրեսենսկոյե» գերեզմանատանը՝ պահակի հետ հաց, երշիկ ու սոխ ուտելիս և սամագոն խմելիս, անտարակույս, կմտածեր, թե խելագարվել եմ: Իսկ գուցե այդպես էլ կամ:



Փաստորեն, եթե ես մնայի Ուլյանովսկում՝ Մշկոն իր ոտքով կգար մոտս՝ ուղիղ «Վենեց» հյուրանոց:

— Դուք ճանաչո՞ւմ եք Մշկոյանին,— հարցրի ծերուկին:

— Ոչ,— ասաց նա՝ բաժակները լցնելով:

— Մշկոյանի...— ասացի ես՝ բաժակս բարձրացնելով,— Մշկոյանի կենացը:

Ու գլուխս քաշեցի սամագոնը:

Բայց սա էլ դեռ ամբողջը չէր. երբ արդեն հարմար տեղավորվել էի գերեզմանատան պահակի կացարանում, կերել նրա գրեթե ողջ երշիկը, խմել սամագոնը ու քննարկել Ռուսաստանի բոլոր վերջին ներքաղաքական իրադարձությունները, որոշեցի բացել ֆեյսբուքը: Եվ, ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ տեսա այնտեղ:

Հերթական նկարը, որը տեղադրել էր Նաստյան՝ վերնագրված էր՝ «Նոստալգիայի օր»: Նկարում Նաստյան էր, Մշկոն, այծը, ցմփորները, ամուսիններն ու ևս մի քսան հոգի՝ նստած Ուլյանովսկի «Վենեց» հյուրանոցի «Օլիմպ» բարի նույն այն տեղում, որտեղ երկու օր առաջ նստած էի ես, իսկ պատուհանին փակցված էր նույն ցուցանակը՝ «Նոստալգիայի օր, օղի՝ առանց փողի»:

Ծերուկի սամագոնը վերջացել էր: Ես ուզում էի գնալ խանութ ու սովորական օղի առնել, բայց, չգիտեմ ինչու, չգնացի: Պետք էր վերադառնալ իրականություն: Նախ մտածեցի, որ կարելի էր հետ գնալ Ուլյանովսկ, բռնացնել Մշկոյին «Վենեց» հյուրանոցի քսաներկուերորդ հարկում ու հենց այդտեղից էլ նետել ցած: Բայց դրա համար ես ստիպված պիտի լինեի քշել մոտ վեց ժամ, իսկ որ գլխավորն է, արդեն խմել էի: Հետո անդրադարձա, որ, քանի որ խմած եմ, չեմ կարող մեքենա վարել նաև այստեղ՝ Սարատովում, թեկուզ մինչև հյուրանոց: Իհարկե, կարելի էր գիշերել գերեզմանատան պահակի կացարանում, կարելի էր ընդհանրապես շարունակել խմել ու մեռնել ու վերջին հանգրվանս գտնել կնոջս ապուպապի կամ Չեռնիշևսկու կողքին, բայց ես կիսատ գործեր ունեի:

— Մոտակայքում ի՞նչ հյուրանոց կա,— հարցրի ծերուկին:

— Կա դիմացը մի հյուրանոց,— ասաց նա վերջին կտոր երշիկը նետելով շանը,— բայց այն հարուստների հյուրանոց է:

— Ի՞նչ է նշանակում հարուստների հյուրանոց,— հետաքրքրվեցի:

— Ես դրա դիմաց տեսել եմ գեներալների, օլիգարխների, մի անգամ տեսա անգամ վիցեգուբերնատորին,— բացատրեց գերեզմանատան պահակը:

«Հարուստների հյուրանոցն» իսկապես գերեզմանատան մուտքի դիմացի մայթին էր, միայն թե, այն ոչ թե հյուրանոց էր, այլ՝ սաունա, կամ էլ ավելի ստույգ՝ բորդել, ուր կարելի էր գալ թե սեփական «ընկերուհիների» հետ, թե՝ տեղում «ընկերուհիներ» պատվիրել: Իսկապես, ավելի լավ տեղ, քան գերեզմանոցի հարևանությամբ, դրա համար, դժվար էր մտածել: Ո՞վ պետք է երեկոյան ժամերին կամ, առավել ևս, գիշերը գար գերեզմանոց տեսնելու, թե ինչպես են բորդել հաճախում գեներալներն ու վիցեգուբերնատորը:

Իդեպ՝ վերջիններիս կամ այդ կարգի մի քանիսի հետ ես ծանոթացա, շոգեհարվեցի, խմեցի նրանց հետ բավականին երկար ու խոսեցի քաղաքականությունից:

— Իսկ ինչո՞ւ են ամերիկացիները քիթը խոթում մեր գործերի մեջ:

— Իսկ Եվրոպա՞ն՝ ամեն տեսակ եվրոմիությունները, եվրախորհուրդներն ու էլի չգիտես ինչերը՝ ի՞նչ են ուզում մեզանից:

— Մեր նախագահը մտածում է իր ժողովրդի ու պետության մասին և ինչ որ անում է՝ լավ է անում:

— Այո՛, մեր նախագահը խիստ է, սակայն նա ուժեղ է, արդար ու հայրենասեր:

— Իսկ ուկրաինացիները դավաճան են:

Մոտավորապես այսպես:

Այն մասին, թե ինչի կարող է բերել անտարբերությունը

— Մենք գերադասում ենք խոսել երաժշտությունից:
— Ու կինոյից:
— Ու նոր տեխնոլոգիաներից:
— Մեր ինչի՞ն է պետք քաղաքականությունը:
— Մենք նույնիսկ ընտրությունների չենք մասնակցում:
— Ի՞նչ իմաստ ունի:

Մոտավորապես այսպես:

Սարատովցի այս երիտասարդների մեջ ես հայտնվել էի պատահաբար:

Քայլում էի քաղաքի զբոսայգիներից մեկում, երբ տեսա խոտերի մեջ նստած մի քանի տղաների ու աղջիկների, ովքեր գինի էին խմում, կիթառ նվագում ու երգում ինձ անծանոթ երգեր:

Վոլգայի ափերով կատարած ճամփորդության ընթացքում այնպես էր ստացվել, որ շփվել էի տարատեսակ մարդկանց հետ՝ մատուցողների, ոստիկանների, սպասուհիների, պահակների ու տրակտորիստների, գեներալների ու չինովնիկների, որոնց մի մասը լավ մարդիկ էին, մի մասը՝ ոչ այնքան, որոնք պարկեշտորեն էին անում իրենց գործը կամ՝ սրիկայաբար, որոնք սիրում էին իրենց գյուղն ու քաղաքը կամ չէին սիրում, որոնք ունեին հետաքրքրությունների լայն կամ նեղ շրջանակ, կամ ոչ մի շրջանակ էլ չունեին: Բոլոր այդ մարդիկ սակայն մեծահասակներ էին, այսպես ասած՝ «խորհրդային մարդիկ»: Եվ բոլոր այդ մարդիկ գիտակցաբար կամ իրենց կամքից անկախ այնպես էին անում, որ Ռուսաստանը շարունակեր մնալ «խորհրդային» երկիր:

Մինչդեռ, հիմա ես զրուցում էի տասնութ–քսան տարեկան ռուս տղաների ու աղջիկների հետ, ու ամենացավալին այն էր, որ նրանք էլ, հիմնականում իրենց կամքից անկախ, անում էին

նույնը, այսինքն՝ այնպես էին անում, որ Ռուսաստանը մնար «խորհրդային» երկիր:

Այս գրքում ես առիթ ունեցել եմ խոսելու այն մասին, թե ո՞րն է կայացած պետությունը: Ըստ իս, դա այն պետությունն է, որտեղ քաղաքացիների, հատկապես երիտասարդների մասնակցությունը քաղաքական կյանքին սահմանափակվում է ընտրություններին նրանց մասնակցությամբ: Չորս կամ հինգ տարին մեկ նրանք ընտրում են իրենց նախընտրած քաղաքական ուժին, իհարկե՝ ցանկալի է, նախապես ծանրութեթև անելով իրենց ընտրությունը, ու քաշվում են մի կողմ՝ մինչև հաջորդ ընտրություններ: Եթե այդ չորս կամ հինգ տարիների ընթացքում հասկանում են, որ իրենց ընտրությունը սխալ է եղել, ապա այն շտկում են հաջորդ ընտրությունների ժամանակ, իսկ եթե ոչ, ապա՝ ոչ: Այսքանը: Մնացած ժամանակ քաղաքացիները զբաղվում են իրենց գործով՝ օրենքների ընդունումը և պետության կառավարումը թողնելով նրանց, ում ընտրել են:

Սա է կայացած պետության մոդելը, որն, ավա՜ղ, մեծ տոկոս չի կազմում աշխարհում: Պետությունները, որոնք հասել են սրան, անշուշտ դժվարին, երկար ու ձիգ ճանապարհ են անցել, շատ պետություններ դեռ ճանապարհի կեսին են, շատերը սկզբին, որոշներն էլ դեռ ճամփա չեն ընկել: Բայց բոլոր այդ պետություններում ապրում են ժողովուրդներ, ովքեր իրենք են տնօրինում իրենց ու իրենց պետության ճակատագիրը: Իհարկե ամբողջության մեջ, ոչ՝ առանձին–առանձին: Իսկ առանձին–առանձին իրենց և իրենց պետության ճակատագիրը պիտի տնօրինեն մարդիկ՝ քաղաքացիները, որոնցից՝ հատկապես երիտասարդները, ոչ մի դեպքում իրավունք չունեն անտարբեր լինելու ու մի կողմ քաշվելու:

Ինչպես սարատովցի այս տղաներն ու աղջիկները, ովքեր համոզված են, որ ընտրություններին իրենց մասնակցությամբ ոչինչ չի փոխվի:

Ես հարցնում եմ նրանց, թե ի՞նչ են մտածում այն մասին, որ իրենց թոշակառու պապիկ–տատիկները արժանապատիվ թոշակ չեն ստանում, որ իրենց ինժեներ կամ մանկավարժ ծնողները՝ արժանապատիվ աշխատավարձ չեն ստանում, որ իրենց

գործարար քեռիներին կամ հարևաններին շորթում են ոստիկաններն ու քրեական տարրերը:

Ես հարցնում եմ նրանց՝ արդյո՞ք կարող են ազատորեն ասել այն՝ ինչ մտածում են, եթե իրենց այդ ասածը կարող է վտանգավոր լինել իշխանությունների համար:

Ես հարցնում եմ նրանց՝ արդյո՞ք գիտեն, որ տարբեր բաներ են պետությունն ու օրվա իշխանությունները, երկիրն ու մարդիկ՝ ովքեր կառավարում են այն:

— Շը՛շշ…— պատասխանում են ինձ:

Ու շարունակում գինի խմել ու երգել ինձ անծանոթ երգեր:

Ու ես հասկանում եմ, որ հաջորդ անգամ էլ, երբ գամ Ռուսաստան, լինի դա մեկ, հինգ, թե տասը տարի հետո, այստեղ ամեն ինչ դարձյալ «խորհրդային» է լինելու, որովհետև սերունդները շարունակում են ապրել ու մտածել այնպես՝ ինչպես ապրում ու մտածում էին նախորդ սերունդները:

Ու ակամա մտածում եմ, թե որքա՜ն ափսոս են հրաշալի այս տղաներն ու աղջիկները, որքա՜ն բան կարող էին փոխել իրենց ժողովրդի ու երկրի կյանքում, եթե չլիներ անտարբերության վերածված բնազդային վախը, որը ներարկվել և շարունակում է ներարկվել իմ ժողովրդի մեծ բարեկամ ռուս ժողովրդի մեջ:

Լիտվացիներն ու էստոնացիները, ռումինացիներն ու սլովակները կարողացան հաղթահարել այդ վախը, կարողացան թոթափել անտարբերությունը, որովհետև նրանց հանդեպ դրսևորված պատմական անարդարությունը կարճ էր տևել: Իմ ժողովուրդը ևս կարողացավ, սակայն դա շատ կարճ տևեց, որովհետև իր հանդեպ պատմական անարդարությունը շատ ավելի խորը արմատներ ուներ, շատ ավելի դաժան դերակատարներ ու շատ ավելի երկար պատմություն:

Ու այդ պատմական անարդարությունը հավանաբար դեռ երկար կշարունակվի ու դերակատարներն էլ կմնան նույնը:

Այն մասին, թե ինչպես ավարտվեց փախստականների ճամփորդությունը

Ինչ–որ բան այն չէր: Արդեն երկրորդ օրն էր Մշկոյից ոչ մի լուր չկար: Ես արդեն անգիր էի արել Վոլգոգրադի բոլոր կենտրոնական փողոցները, գետափնյա բուլվարը, երեք անգամ զբոսանավ էի նստել ու ծայրից ծայր չափել «Մամաև Կուրգանը»:

Բայց ձեզ հավանաբար կհետաքրքրի, թե ինչու և ինչպես էի ես Սարատովից հասել Վոլգոգրադ, և ե՞րբ էի վերջին անգամ տեղեկություն ստացել Մշկոյի գտնվելու վայրի մասին:

Երկու օր առաջ, երբ վերջապես առիթ էր ստեղծվել ռուսաստանյան իմ ողջ ճամփորդության ընթացքում առաջին անգամ երիտասարդների հետ շփվելու, նրանց լսելու ու հասկանալու, մի շատ անհարմար բան էր ստացվել: Երբ նոր–նոր էր սկսվել մեր զրույցը, ես նկատել էի, որ երիտասարդների գինին վերջացել է, խնդրել էի նրանց սպասել ու գնացել էի գինի բերելու: Բայց մոտակայքում խանութ չկար, իսկ ես մեքենան թողել էի հյուրանոցի մոտ: Քայլել էի բավականաչափ երկար, մինչև որ մի կրպակ էի գտել, բայց առևտուր անել չէի հասցրել, որովհետև այդ պահին զանգահարել էր Փղիկը: Նա տեղեկացրել էր, որ իր քարտն աշխատել է ինչ–որ բենզակայանում, որը գտնվում է ինչ–որ Կամիշինում: Հետո, նույն այդ Կամիշինում Մշկոն բանկոմատից կանխիկացրել էր քսան հազար ռուբլի: Ես սկզբում ուրախացել էի՝ մտածելով, որ Մշկոյենք Ուլյանովսկից գալիս են Սարատով, բայց անմիջապես էլ՝ հիասթափվել, երբ բացել էի քարտեզը: Պարզվել էր, որ Կամիշինը գտնվում է ոչ թե Ուլյանովսկ–Սարատով, այլ՝ Սարատով–Վոլգոգրադ ճանապարհին: Իսկ դա նշանակում էր, որ փախստականներն անցել էին Սարատովը և մոտենում էին Վոլգոգրադին՝ նախկին Ստալինգրադին,

Մատուշկա Վոլգայի վրա գտնվող հերթական և ամենահանրահայտ քաղաքին:

Եվ ահա ես այստեղ էի, Վոլգոգրադի «Մամաև կուրգան» բարձունքում, Վոլգա գետի ափին, ուր յոթ տասնամյակ առաջ տեղի էր ունեցել Ստալինգրադի ճակատամարտը և ուր նահատակվել էին երեսունհինգ հազար զինվորներ, այդ թվում՝ բազմաթիվ իմ հայրենակիցներ:

Ես խոնարհվում եմ նրանց բոլորի՝ թե՛ ռուսների, թե՛ ուկրաինացիների, թե՛ հայերի հիշատակի առջև: Սակայն չեմ հասկանում՝ հանուն ինչի են զոհվել իմ հայրենակիցները: Հանուն ինչի՞ են կռվել՝ հասկանում եմ. կռվել են, որ պաշտպանեն իրենց Հայրենիքը՝ թե՛ ֆաշիստներից, թե՛ թուրքերից: Բայց հանուն ինչի՞ են զոհվել՝ չեմ հասկանում: Կհասկանայի, եթե նրանց զոհվելուց, Ստալինգրադի վճռորոշ ճակատամարտը հաղթելուց ու պատերազմում բեկում մտցնելուց հետո, բանակը, որի կազմում նրանք կռվում էին, այսինքն՝ սովետական բանակը, պետությունը, որի համար կռվում էին, այսինքն՝ Սովետական Միությունը, և այդ պետության ղեկավարը, այսինքն՝ Ստալինը, փորձեին ուղղել նրանց հայրենիքի, այսինքն՝ Հայաստանի հանդեպ գործած պատմական անարդարությունը: Բայց Սովետական Միությունը Սովետական Միություն չէր լինի և Ստալինը Ստալին չէր լինի, եթե այդպես վարվեին:

Թող ներեն ինձ պատմաբանները և բոլոր նրանք, ովքեր ինձ հետ համաձայն չեն:

«Մամաև կուրգանի» բարձունքում վեր խոյացող ութսունհինգ մետրանոց արձանը, որ կոչվում է «Մայր հայրենիքը կանչում է», շատ նման է Երևանի «Հաղթանակ» զբոսայգու բարձրունքում վեր խոյացող «Մայր Հայաստան» արձանին: Եվ ոչ միայն տեսքով. առաջինը տեղադրված է մի քաղաքում, որը ժամանակին կոչվում էր Ստալինգրադ, երկրորդը՝ մի վայրում, ուր ժամանակին Ստալինի արձանն էր: Մինչդեռ իմ հայրենիքում չկա արցախյան պատերազմում տարած հաղթանակին նվիրված լուրջ արձան: Ստալինգրադն իսկապես հերոս քաղաք է, այստեղ տեղի ունեցած ճակատամարտը, կռիվներն, իրենց յուրաքանչյուր դրվագով՝ հերոսության հանրագիտարան, բոլոր

զինվորները՝ հերոսներ, բայց մի՞թե այդպիսիք չեն արցախյան ազատագրական պատերազմն ու հայ ազատամարտիկները: Սովետական Միությունը արժևորում ու փառաբանում էր իր զինվորին ու իր վետերանին՝ իր հերոսին, իսկ ի՞նչ է անում անկախ Հայաստանը: Չէ՞ որ հերոսությունը իրապես չարժևորելով կարելի է կորցնել հաղթանակը:

Ամեն դեպքում տպավորիչ է «Մամաև Կուրգանը»: Սակայն ես հիշում եմ իմ ազատամարտիկ ընկերներին, նրանց, ովքեր այլևս չկան, և նրանց, ովքեր, փառք Աստծուն, կենդանի են ու պատրաստ են նորից կռվելու անկախ որևէ արժևորման ու փառաբանման:

Խմել է պետք: Մի լավ խմել ու վերադառնալ տուն:

«Մերսեդեսի» վարձակալության ժամկետի ավարտին մնում էր մեկ օր: Ես այն վերցրել էի տասն օրով, անցել ավելի քան երկու հազար կիլոմետր, հերն անիծել ու հաջորդ օրը պիտի վերադարձնեի «Սիքսթի» մոսկովյան մասնաճյուղին: Կարող էի, իհարկե, երկարացնել վարձակալության ժամկետը ևս մի քանի օրով, բայց այդ դեպքում ընկերության ինձ տրամադրած զեղչն այլևս չէր աշխատի, ու ստիպված կլինեի վճարել եռակի, իսկ ուշացնելու համար նախատեսված տուգանքներն էլ հաշված՝ գուցե քառակի ավելի շատ: Դա էլ կարելի էր անել, եթե լուր ունենայի Մշկոյից, գեթ մի լուր:

Բայց արդեն երկրորդ օրն էր, Նաստյան ոչ մի ակտիվություն չէր ցուցաբերում Ֆեյսբուքում: Փղիկն, իհարկե, ակտիվորեն զանգում էր, սակայն ընդամենը ճշտելու, թե ինչ նորություն կա Մշկոյից, ով, իր հերթին, այս ընթացքում համառորեն չէր օգտագործում քարտը:

Ինչ–որ բան այն չէր: Պետք էր որոշում կայացնել:

Իմ ճամփորդության իններորդ օրվա առավոտյան ժամը տասն էր: Մեքենան պետք է վերադարձնեի հաջորդ օրը՝ երեկոյան հինգին, այսինքն՝ ունեի մոտ քսան ժամ: Վոլգոգրադից Մոսկվա կարելի էր հասնել տասը–տասներկու ժամում, հետևաբար դեռ ժամանակ կար:

Ես որոշեցի մի վերջին փորձ անել՝ մինչև հանձնվելս ու մի հուզական նամակ գրեցի Նաստյային՝ խնդրելով բացահայտել

իրենց գտնվելու վայրը կամ միանալ ինձ Սարատովում: Դա իսկապես վերջին ճիգն էր ու, անկեղծ ասած, ոչ մի հույս չունեի, որ Նաստյան կպատասխանի: Ու, գուցե դուք չհավատաք, բայց նա պատասխանեց: Այդ պատասխանը մինչև հիմա կա իմ ֆեյբուքյան նամակագրության բաժնում և կմնա այնքան ժամանակ, քանի դեռ կա Ֆեյսբուքը:

Ուրիշների նամակներն հանրայնացնելն իհարկե վատ բան է, բայց եթե դրանք վերաբերում են Մշկո Մշկոյանին, ապա, կարծում եմ՝ սարսափելի բան չկա: Կարող եք ճշտել մարդու իրավունքների պաշտպանության բոլոր ատյաններից:

Եվ այսպես, Նաստյան գրում էր. «Մշկոյանը (տու–տու–տու)… Ես Մշկոյանի (տու–տու–տու)… Նա (տու–տու–տու)… Ես նրա (տու–տու–տու)… Ինքը (տու–տու–տու)… Ես իր (տու–տու–տու)… Այդ (տու–տու–տու)… Ես դրա (տու–տու–տու)…»:

«Այդ ամենը հասկանալի է, իսկ ի՞նչ է պատահել»՝ գրեցի ես:

Բայց նա ոչ թե գրեց, այլ զանգահարեց: Եվ համոզված եմ, զանգահարեց, ոչ թե նրա համար, որ օգտակար լինի ինձ, այլ՝ որ լիցքաթափի կատաղությունը: Բանավոր խոսքով դա ավելի հեշտ է անել:

Ֆեյսբուքյան զանգերը, այսինքն՝ բանավոր խոսակցությունը, ցավոք, չի պահպանվում կամ գուցե ավելի լավ, որ չի պահպանվում: Համենայնդեպս Մշկոյանի հասցեին հնչած փառահեղ հայհոյանքներին զուգահեռ ես լսեցի և իմացա հետևյալը. Ուլյանովսկի «Վենեց» հյուրանոցի «Օլիմպ» բարում «Նոստալգիայի օր» կազմակերպելուց հետո զույգն իջել է քսաներկուերորդ հարկում գտնվող իրենց համարը, քնել, իսկ առավոտյան նրանց միջև վեճ է ծագել ճամփորդության հետագա երթուղու վերաբերյալ: Բանն այն է, որ վաղ առավոտյան Նաստյային զանգահարել են Մոսկվայից և հերթական սերիալում նկարահանվելու առաջարկ արել: Նաստյան չափազանց ուրախացել է ու խնդրել Մշկոյանին ընդհատել ճամփորդությունը և Ուլյանովսկից ուղևորվել Մոսկվա, ինչին Մշկոյանը չի համաձայնել: Մեկնիր գնացքով՝ ասել է նա, ես գնում եմ Հայաստան: Ինքդ մեկնիր գնացքով՝ ասել է Նաստյան: Ռուսաստանից Հայաստան գնացքներ չեն մեկնում՝ հանգիստ բացատրել է Մշկոյանը: Ուրեմն մեկնիր

օդանավով՝ հակադարձել է Նաստյան ու մտել բաղնիք լողանալու: Երբ դուրս է եկել բաղնիքից, Մշկոյանն իսկապես մեկնած է եղել, բայց ոչ թե օդանավով կամ առավել ևս՝ գնացքով, այլ՝ սպիտակ Վոլգայով:

Ահա այսպես: Ահա այսպես էր ավարտվել փախստականների համատեղ ճամփորդությունը Վոլգայի ափերով:

Մշկոն հավանաբար իսկապես գնում էր Հայաստան: Սակայն ինչո՞ւ, գրողը տանի, չէր միացնում հեռախոսը, եթե արդեն բաժանվել էր Նաստյայից և մենակ էր: Ես նրան ամեն ինչ կներեի, կթողնեի «Մերսեդեսը» Վոլգոգրադում, ու մենք միասին կվերադառնայինք տուն:

Նա պետք է, որ հիմա Հյուսիսային Կովկասում ինչ–որ տեղ լիներ՝ ասենք Վլադիկավկազում: Վոլգոգրադից Երևան մոտ հազար երեք հարյուր կիլոմետր է: Առանց կանգառների ընթանալու դեպքում այդ ճանապարհը կարելի է անցնել քսան ժամում: Միայն թե, առանց կանգառների Մշկոն չէր գնա, և հնարավոր էլ չէ գնալ:

Ըստ Փղիկի՝ Վոլգոգրադի մոտակայքում Մշկոն լիցքավորել էր մեքենան երկու օր առաջ՝ ցերեկը: Եթե նա վարեր օրեկան հինգ–վեց ժամ, ապա երկու օրում կանցներ ոչ ավել, քան ութ հարյուր կիլոմետր՝ նկատի ունենալով Վոլգայի կարողությունները և ռուսաստանյան ճանապարհները: Հենց այդքան էր Վոլգոգրադից Վլադիկավկազ:

Ամեն դեպքում, եթե Մշկոն իսկապես ուղևորվում էր Երևան, նրա գտնվելու վայրի մասին ստույգ տեղեկություն ես այլևս չէի ունենա, որովհետև Կամիշինում մեքենան լիցքավորելուց բացի, նա նաև կանխիկացրել էր բավական գումար, հետևաբար ճանապարհին քարտը գործածելու անհրաժեշտություն չէր լինի:

Ուրեմն ի՞նչ էր մնում անել ինձ: Հավանաբար ճիշտը հանձնվելն էր:

Հաջորդ երեկոյի համար Մոսկվա–Երևան օդանավի տոմս գնեցի, կապվեցի «Սիքսթի» գրասենյակի հետ, տեղեկացրի, որ մեքենան կվերադարձնեմ «Շերեմետևո» օդանավակայանի իրենց մասնաճյուղում ու ճանապարհ ընկա Ռուսաստանի մայրաքաղաք:

Թե ինչպես ես, այնուամենայնիվ, խմեցի բժշկուհուս հետ

Երբ տեղի ունենցավ այս պատմությունը, ես քառասուն տարեկան էի: Հնարավոր է՝ քառասունմեկ: Կամ գուցե՝ քառասուներկու: Ճիշտը չեմ հիշում: Բայց վստահաբար ոչ ավել, քան քառասուներեք: Համապատասխանաբար, չեմ կարող հստակ ասել, թե ո՞ր թվականն էր. գուցե՝ երկու հազար տասներեք, գուցե՝տասնչորս, բայց ոչ ուշ, քան՝ տասնհինգ:

Համենայնդեպս, հենց այդ ժամանակ էր, որ սկսվել էր հիշողությանս հետ ինչ–որ բան կատարվել: Տեսնում էի փողոցում մեկին, գրկախառնվում հետը, համբուրվում, խոսում երկար–բարակ, հրաժեշտ տալիս՝ կրկին գրկախառնվում ու համբուրվում, ու այդպես էլ չէի հիշում՝ թե նա ով էր: Մտածում էի՝ երևի մի տեղ խմել եմ հետն ու այդպես մխիթարում ինձ:

Բժիշկն, ավելի ճիշտ՝ բժշկուհին, ինձ խորհուրդ էր տվել որոշ ժամանակով բացառել խմելը, ու ես խոստացել էի այդպես էլ անել: Բայց չէի արել, որովհետև հայտնվել էր Մշկոն՝ իր այս պատմությամբ:

Արդ, այս պատմության մեջ հնարավոր է, որ ամեն ինչ ճիշտ չլինի, թեպետ կարծում եմ, որ այդպես չէ: Բոլոր այն մարդկանց, ում հանդիպել եմ այս պատմության ընթացքում, իսկապես հանդիպել եմ, և չեմ հանդիպել գեթ մեկին, ում պիտի հանդիպեի և ում էլ նվիրված էր այս պատմությունը՝ Մշկո Մշկոյանին:

Ու հիմա Մոսկվայի «Շերեմետևո» օդանավակայանի սպասասրահի սրճարաններից մեկում նստած՝ ես խմում էի ընկերոջս սիրած ֆրանսիական օղին:

Երեկոյան ժամը ութն էր, թռիչքին դեռ մեկ ժամ կար, ու չնայած ես սոսկալի հոգնած էի, ջարդված, հիասթափված ու զզված, կամ գուցե հենց դրա համար, որոշել էի խմել:

Խմում էի ու հատ–հատ հիշում բոլոր այն վայրերը, ուր եղել էի իմ այս ճամփորդության ընթացքում: Գուցե արժե դրա մասին մի գիրք գրել՝ մտածում էի:

Բայց այդ պահին զանգեց Փղիկը: Վերջին անգամ նրա հետ խոսել էի ժամեր առաջ, երբ ռուսաստանյան M4 մայրուղով սլանում էի Մոսկվա, որպեսզի հասցնեմ ժամանակին հանձնել վարձակալած մեքենան և չուշանամ թռիչքից: Փղիկը, չափազանց տխուր, ասել էր, որ դեռ ոչ մի լուր չունի Մշկոյից և հետաքրքրվել էր, թե ի՞նչ ծրագրեր ունեմ ես: Վերադառնում եմ Հայաստան՝ ասել էի կարճ:

Մինչդեռ հիմա նրա ձայնը ինձ ուրախ թվաց: Հատկապես ոչինչ չասաց, միայն հարցրեց, թե երբ եմ վերադառնում: Բայց միևնույն է, նրա ձայնն ինձ ուրախ թվաց: Հենց հիմա՝ կարճ կապեցի ես ու շարունակեցի խմել օղիս:

Խմում էի ու մեկ առ մեկ հիշում բոլոր այն մարդկանց, ում հանդիպել էի իմ այս ճամփորդության ընթացքում: Գուցե իսկապե՞ս արժե այդ մասին մի գիրք գրել:

Ու հանկարծ մի ծանոթ դեմք տեսա քիչ այն կողմ: Օդանավակայանի ճեմասրահով քայլում էր մի կին՝ աննկարագրելի սիրուն, նուրբ ու սլացիկ: Բժշկուհիս էր:

Ես ձեռքով արեցի: Նա ինձ նկատեց, որքան էլ, որ զարմանալի է՝ ճանաչեց և մոտեցավ:

— Խմում եք,— ասաց:

— Համեցեք,— ասացի ես ի պատասխան:

Բայց նա քմծիծաղ տվեց ու հեռացավ:

Խմեցի այնքան, մինչև սկսվեց ու գրեթե ավարտվեց իմ չվերթի ուղևորների նստեցումը, հասցրի Duty free–ից ևս մի շիշ օղի գնել, բարձրացա օդանավ, զբաղեցրի տեղս ու շարունակեցի խմել:

Խմում էի ու դրվագ առ դրվագ հիշում այն ամենը, ինչ տեղի ունեցավ այս ճամփորդության ընթացքում: Անպայման պետք էր այդ մասին մի գիրք գրել:

Բժշկուհին նստած էր ինձանից քիչ առաջ, մերթընդմերթ շրջվում էր ու նայում ինձ: Ես նրան գլխի շարժումով հրավիրում էի խմելու, ու նա արդեն ոչ թե քմծիծաղում, այլ ժպտում էր: Կամ ինձ էր այդպես թվում:

Երբ մեր օդանավը վայրէջք կատարեց Երևանում, ես անցա անձնագրային ստուգումը ու դուրս եկա «Զվարթնոց» օդանավակայանի շենքից, կեսգիշեր էր: Հազիվ էի կանգնում ոտքի վրա: Պետք էր տաքսի նստել ու տուն գնալ:

Ու հանկարծ այնտեղ, ուր շարված էին տաքսիները, արգելված վայրում կայանած՝ տեսա մի սպիտակ Վոլգա: Ես ոչ մի դեպքում չէի հավատա, որ դա նույն Վոլգան էր, որը տեսել էի Լուկինոյի «Վոլգա պարկ» պանսիոնատի և Յոշկար Օլայի «Ռևիզոր» հյուրանոցի առջև, ինչպես նաև Նաստյայի ֆեյսբուքյան բազմաթիվ լուսանակարներում, եթե մեքենայի կապոտի առջև չտեսնեի Փղիկին ու Մշկոյին: Փղիկի ձեռքին ծաղկեփունջ էր, Մշկոյի՝ վեր պարզած ձեռքերին՝ մի պաստառ, վրան գրված «Բարի գալուստ» և իմ անունը: «Վոլգայի» կապոտին սփռոց էր փռած՝ վրան աղ ու հաց և նրա սիրած ֆրանսիական օղու շիշը:

Ես մոտեցա, ոչինչ չասացի, հենց 22ից խմեցի մի մեծ կում, ու անուշ արեցի աղուհացով: Ու հենց այդ պահին դարձյալ տեսա բժշկուհուս, ով դուրս էր եկել օդանավակայանի շարժական դռների միջից, կանգնել ու նայում էր ինձ:

Վերցրի ծաղկեփունջը Փղիկի ձեռքից ու տվեցի նրան:

— Վերջապես կխմե՞ք ինձ հետ:

— Կխմեմ, եթե խոստանաք, որ այսուհետ կբացառեք խմելը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ՄՇԿՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 7

Այն մասին, թե ինչպես ես բժշկուհուս հրավիրեցի խմելու 9
Խմելու ուղեցույց 13
Մշկոյի փողերն ու հարսնացուները 15
Այն մասին, թե որքան գումար կար Սիրուշի քարտին 18
Վեցերորդ քոթեջ կամ գետաձին ու ջրահարսերը 22
Այն մասին, թե որքան էր սիրում Սիրուշը Մշկոյին 27
Իմ գրող բարեկամները 33
Այն մասին, թե ինչպես ստացվեց առաջին տեղեկությունը Մշկոյի գտնվելու վայրի մասին 36
Իմ առաջին ծանոթությունը Ջուլիկի հետ ու Գեորգիի պրոստատիտը 41
Շվեյցարական դեկորներ 44
Այն մասին, թե ինչու էր հեռացել Մշկոն Բադ Ռագացից 50
Տորթի միջի աղջիկը 53
Այն մասին, թե ինչպես էր Մշկոյի ձին կեղտոտել Ցերմատի կենտրոնում 60
Ինչո՞ւ եք աղջիկներ բերել, այստեղ աղջիկներ կան 66
Նկարիչ Զավոյի հայրենիքն ու այծերը 70
Թե ինչպես Մշկոն տասը հազար դոլար տվեց ակորդեոնահար ծերուկին 74
Արժեքներն ու արժեքները 78
Այն մասին, թե ինչ է հարկավոր լավ լոլիկով ձվածեղ պատրաստելու համար 81
Փարիզի մոտոցիկլետները 84

Այն մասին, թե ինչպես կարելի է խթանել արվեստները 88
Մշկոյի չափազանցությունները կամ հոգնա արեք աղջկան 96
Այն մասին, թե ինչու են մեր գործարարները
գործարանների փոխարեն բացում պոռնկանոցներ 100
Ուրվականներ ու տեսիլքներ կամ ինչպես ես կորցրի Ջուլիկին
Ամստերդամի Կարմիր լապտերների թաղամասում 105
Ինձ նման էժան մասնավոր խուզարկու դեռ պետք է գտնել 110
Իմ «Hitchhiker»-ները կամ այն մասին, թե ինչպես կարելի է
փրկել աշխարհը 114
Այն մասին, թե ինչպես ես խմեցի գերմանացի
թոշակառուների հետ կամ երջանիկ է այն պետությունը,
ուր երջանիկ են ծերերը 123

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՄՇԿՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 129

Այն մասին, թե ինչու KLM-ի օդանավը հարկադիր
վայրէջք կատարեց Բեռլինում 131
Ինչո՞ւ են բժիշկները հեռանում հայրենիքից կամ այն մասին,
թե ինչպես Մշկոն ծլկեց հիվանդանոցից 134
Երբ այլևս չկա տրամաբանություն 142
Լեհ ոստիկանները կամ պարտադրանքը երբեք լավ տեղ
չի տանում. 145
Ինչ-որ տեղ Արևելյան Եվրոպայում 149
Օնան կիթառ է նվագում 155
Թե ինչպես Մշկոյին բաց թողեցին Վիեննայի
ոստիկանատնից 162
Շտո դա նե կամ այն մասին, թե ինչպես ես վճարեցի
գնչուների փոխարեն 167
Այն մասին, թե ինչպես էի ես խմում իմ սիրելի մարդկանց
կենացը Դանուբի ափին. 171
Այն մասին, թե ինչպես Մշկոն կոտրեց ոստիկանուհու սիրտը 177

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ
ՄՇԿՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՄ
«ՆԱ ՎՈԼԳԵ ՊՈ ՎՈԼԳԵ» 181

Այն մասին թե ինչպես փոխհատուցվեցին իմ ծախսերը
և դեռ մի բան էլ ավելի 183
Ո՞վ է այդ պոռնիկը 187
Հայրենիքը հայրենիք է, երբ ոտքերիդ տակ է 190
Մերսեդեսով Վոլգայի հետևից 194
Հեյ, ո՞վ կա այդտեղ, կամ այն մասին, թե ինչպես ես մնացի
առանց բորշչի. 199
Ողջույն Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական
դաշնային շրջանի դպրոցների ուսմասվարների կոնֆերանսի
մասնակիցներին 204
Մշկոն կերակրում է շան արձանին 209
Այն մասին թե ինչու են այդքան լավը Ռուսաստանի
ճանապարհները 215
Այն մասին, թե ինչպես Մշկոն հրդեհեց «Վոլգա պարկ»
պանսիոնատի վրան-ռեստորանը 219
Յոշկար Օլա 229
Սրտերը երբեմն սխալ են վկայում. 243
Նոստալգիայի օր Լենինի ծննդավայրում 247
Այն մասին, թե ինչպես ես սամովար գնեցի 255
Ո՞ւր է ուղղված հայրենիքի կարոտը 263
Այն մասին, թե ինչպես ես խմեցի գերեզմանատան
պահակի հետ 267
Այն մասին, թե ինչի կարող է բերել անտարբերությունը 272
Այն մասին, թե ինչպես ավարտվեց փախստականների
ճամփորդությունը 275
Թե ինչպես ես, այնուամենայնիվ, խմեցի բժշկուհուս հետ 280

ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Մշկո Մշկոյանի ԱՐԿԱԾՆԵՐԸ